ԻՐԱԶԵԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ
UNION OF INFORMED CITIZENS

PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NGO

ԱՍՊԱՐԵԶ

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Հայաստանի Հելսինկյան Կոմիտե
Helsinki Committee of Armenia

HELSINKI CITIZENS ASSEMBLY

OPEN SOCIETY FOUNDATIONS ARMENIA

NED National Endowment for Democracy
Supporting freedom around the world

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-30

Սույն զեկույցի պատրաստումը հնարավոր է դարձել իրականացնել «Բաց հասարակության հիմնադրամներ»-Հայաստան և «Ժողովրդավարության ազգային հիմնադրամ» կազմակերպությունների աջակցությամբ:

Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետները, կարծիքները պատկանում են զեկույցը պատրաստած հասարակական կազմակերպություններին և հնարավոր է, որ չհամընկնեն «Բաց հասարակության հիմնադրամներ» Հայաստան և «Ժողովրդավարության ազգային հիմնադրամ» կազմակերպությունների տեսակետների հետ:

Զեկույցը կազմել են

Իրազեկ քաղաքացիների միավորում ՀԿ-ն

Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ-ն

Խոսքի Ազատության Պաշտպանության Կոմիտե ՀԿ-ն

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը

Հայաստանի Հելսինկյան Կոմիտե ՀԿ-ն

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ ՀԿ-ն

ԵՐԵՎԱՆ, 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 10

2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի ԴԵՊՔԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ և ՀԱՋՈՐԴՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ 13

Հավաքների ազատության վերաբերյալ ներպետական և միջազգային իրավական կարգավորումները 14

Ոստիկանության գործողությունների իրավական կարգավորումները խաղաղ հավաքների ժամանակ 15

Խախտումների նկարագրությունը 17

Բռնություններ, անմարդկային վերաբերմունք 18

Հետապնդումները որպես հավաքի մասնակցությունը սահմանափակելու և խափանելու միջոց 20

Անձանց ազատազրկումները և հավաքների ազատության իրավունքի այլ խախտումներ 22

Տեղի ունեցած հավաքների ազատության խախտումների և միջամտությունների տեսակները 24

Ընդհանուր խախտումների և միջամտությունների քանակը ըստ խախտումն իրականացնողի 25

Տեղի ունեցած խախտումների վերաբերյալ իրավապահ մարմինների և այլ գնահատականներ 25

Քննության ընթացք և արդյունքներ 26

Եզրակացություն 27

Առաջարկություններ 28

Հավելված 1. Հավաքների ընթացքը և միջամտություններն ըստ օրերի, վայրերի 28

2016 Թ. ՀՈՒԼԻՍԻ 17-30-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒԺԻ և ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ ... 39

Ծանոթություն 39

ՀՀ ոստիկանության և ոստիկանության զորքերի կողմից 2016 թվականի հուլիսի 20-ին և 29-ին կիրառված հատուկ միջոցների իրավաչափությունը և համաչափությունը ... 39

2016 թվականի հուլիսի 17-30-ը ոստիկանության կողմից կիրառված ուժը և հատուկ միջոցները ներպետական և միջազգային իրավական կարգավորումների համատեքստում 55

Հատուկ միջոցների գործադրման առանձնահատկությունների ներպետական օրենսդրական կարգավորումների խնդիրներ 62

ՀՀ ոստիկանության կողմից հուլիսի 17-30-ը ընկած ժամանակահատվածում ուժի կիրառում 67

Եզրակացություն 76

2016 Թ. ՀՈՒԼԻՍԻ 17-ԻՑ 30-Ը ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ և ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ 79

Ծանոթություն 79

2016 թվականի հուլիսի 17-30-ը լրագրողների նկատմամբ թույլ տրված խախտումները ներպետական և միջազգային իրավական կարգավորումների համատեքստում 79

2016 թվականի հուլիսի 17-30-ը լրագրողների նկատմամբ թույլ տրված խախտումները 82

Ֆիզիկական բռնություն 83

Լրագրողական տեխնիկայի վնասում եւ լրագրողական նյութերի ոչնչացում 94

Լրագրողների բերման ենթարկում 97

Հետապնդում 99

Սպառնալիք 100

2016 թվականի հուլիսյան իրադարձությունների ժամանակ լրագրողների իրավունքների խախտումներին վերաբերող նախաքննության ընթացքն ու քրեական գործից անջատված մասերով դատական վճիռները 101

Տեղական լրագրողական հանրության և միջազգային կազմակերպությունների արձագանքը 111

Եզրակացություն 113

Հավելված 1 Հուլիսյան իրադարձությունների ընթացքում տուժած լրագրողների ու օպերատորների ցանկը, նրանց իրավունքների խախտումների ամսաթիվը, տեսակը եւ հեղինակը 115

2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-30 ԱՆՁՆԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ և ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ 120

Ծանոթություն 120

Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտումները 2016 թվականի հուլիսի 17-30-ը տեղի ունեցած իրադարձությունների ընթացքում 121

2016 թվականի հուլիսի 17-30 տեղի ունեցած ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտումները միջազգային և ներպետական իրավական կարգավորումների համատեքստում 123

Բերման ենթարկում 128

Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի խախտումներ 138

Կալանավորումներ 138

Տեղական և միջազգային կառույցների արձագանքը տեղի ունեցած խախտումների վերաբերյալ 142

Եզրակացություն 144

Հավելված 1 2016 թ. հուլիսի 17-30-ը բերման ենթարկված քաղաքացիների թիվը՝ ըստ պաշտոնական տվյալների 145

Հավելված 2 2017 թ.-ի հուլիսի 17-ին բերման ենթարկված անձանց ցուցակը 148

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 180

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցն անդրադառնում է Հայաստանի Հանրապետությունում 2016 թվականի հուլիսի 17-30-ը տեղի ունեցած դեպքերին՝ դրանք ներկայացնելով բացառապես մարդու իրավունքների խախտումների տեսանկյունից և մանրամասներ տրամադրելով խախտումների հանգամանքների, հետևանքների վերաբերյալ:

2016թ. հուլիսի 17-ին վաղ առավոտյան իրեն «Սասնա Ծռեր» կոչող 31 անձից բաղկացած խումբը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում հարձակվել է ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի (ՊՊԾ գունդ-հասցե ք. Երևան Մովսես Խորենացի 158) շենքի վրա և գրավել այն:

Խումբը այդ գործողության շարժառիթը բացատրել է 2016 թվականի հուլիսի 17-ին առավոտյան 05:29 րոպեին Facebook սոցիալական ցանցով տարածված հայտարարության մեջ: Ըստ ներկայացված հիմնավորման՝ իշխանությունների կողմից տարվող ներքին և արտաքին քաղաքականությունը, մեծամասշտաբ արտագաղթը պայքարի այլընտրանքային հնարավորություն չեն ընձեռում:

> «…Տարիների դառը փորձն ի վերջո մեզ համոզեց, որ կառավարող վարչախումբն այն աստիճանի է կեղեքել, իրավազրկել և ուժասպառ արել մեր ժողովրդին, որ նա այլևս չունի երկարատև ու զանգվածային խաղաղ պայքարի համար անհրաժեշտ ռեսուրս: Դրան գումարվում է աղետալի չափերի հասնող արտագաղթը, որը կայուն կերպով քայքայում է մեր դիմադրողականության վերջին մնացորդները: Այդ ամենի հետ մեկտեղ՝ Սերժ Սարգսյանի աթոռը պահելու համար պայմանավորված պատերազմի միջոցով Արցախի ազատագրված տարածքները հանձնելու դավաճանությունը կդառնա մեր պետականության դագաղի վերջին մեխը: Ուստի ազգի և Հայրենիքի ապագան փրկելու միակ տարբերակը զինված ապստամբության ձևով իրականացվող ժողովրդային ընդվզումն է:
>
> … Մեր հիմնական պահանջն է. Ժողովրդի իշխանությունը յուրացրած և նրա ֆիզիկական անվտանգությունն ու պետության տարածքը վտանգի ենթարկող Սերժ Սարգսյանը պետք է իր վարչախմբի հետ միասին հրաժարական տա և իշխանությունը փոխանցի Ժողովրդի վստահության կառավարությանը:

Հակառակ պարագայում ապստամբությունը կծավալվի և նշված պահանջը կկատարվի ժողովրդի պարտադրանքով[1]»:

Զինված խմբի անդամները հայտարարել են միաժամանակ, որ իրենք զենք կգործադրեն միայն այն դեպքում, երբ իրենց նկատմամբ իշխանությունը գրոհ կազմակերպի կամ զենք օգտագործի[2]:

Զինված խմբի հարձակումից անմիջապես հետո՝ 2016 թվականի հուլիսի 17-ին, ոստիկանությունը, առանց նախապես հայտարարություն տարածելու, շրջափակեց գրավված շենքի հարակից փողոցները[3]: Հարակից թաղամասերում (Սարի Թաղում), իշխանությունը, առանց բնակչությանը տեղեկացնելու, դադարեցրեց գազամատակարարումը, ինչպես նաեւ՝ այդ թաղամասերին հասանելի հանրային տրանսպորտի աշխատանքը:

Զինված խմբի հարձակման և Երևանում տիրող իրավիճակի վերաբերյալ պարզաբանում տրամադրող պաշտոնական որևէ տեղեկատվություն չի տարածվել, պաշտոնատար որևէ անձ հանրության առջև հանդես չի եկել:

Հասարակությունը կատարվածի վերաբերյալ հնարավորություն է ունեցել տեղեկություն ստանալ միայն Facebook սոցիալական ցանցից, սակայն 2016 թվականի հուլիսի 16-ին ժամը 10:00-ի սահմաններում, Հայաստանի տարածքից օգտատերերի համար Facebook սոցիալական ցանցի հասանելիությունը մոտ 40 րոպեով արգելափակվել է[4]: Ավելի ուշ Facebook սոցիալական ցանցի ադմինիստրացիան պաշտոնական տեղեկություն է տարածել՝ նշելով, որ կայքի հասանելիության կասեցումը պայմանավորված է եղել ՀՀ Կառավարության պահանջով և հիմնավորվել է 2016 թվականի հուլիսին տեղի ունեցած ցույցերով[5]:

2016 թվականի հուլիսի 17-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, ՀՀ Ազգային Անվտանգության ծառայությունը հայտարարություն է տարածել այն մասին, որ պետական իշխանության մարմինները գործում են բնականոն ռեժիմով, իսկ

---

[1]Civilnet.am, Զինված միջադեպ Երևանում. Թարմացվող, 17 հուլիս, 2016 11:27, goo.gl/yYOmRG

[2]BBC.com, Armenia police station stormed in Yerevan with hostages taken, 17 July 2016, http://www.bbc.com/news/world-europe-36818929

[3]Hetq.am, Զինված պայքարի 15 օրերը. Ամփոփում, 1 օգոստոսի, 2016, 17:50, http://hetq.am/arm/news/69457/zinvats-payqari-15-orery-ampopum.html

[4]Media.am, Նախադեպ. արգելափակված ֆեյսբուք, Գեղամ Վարդանյան, http://www.media.am/facebook-blocked-in-armenia

[5]Facebook, Армения Июль 2016 г. - Декабрь 2016 г. Армения Internet Disruptions, https://govtrequests.facebook.com/country/Armenia/2016-H2/?attachment_canonical_url=https%3A%2F%2Fgovtrequests.facebook.com%2Fcountry%2FArmenia%2F2016-H2%2F

իրավապահ մարմինները հավուր պատշաճի իրականացնում են օրենքով իրենց վերապահված հասարակական կարգի պահպանության և պետական անվտանգության ապահովման գործառույթները[6]:

2016 թվականի հուլիսի 17-ին հանրությունը ևս հանդես է եկել հրապարակային դիրքորոշմամբ և առաջադրել է հնարավոր բոլոր տեսակի բռնությունները[7] կանխելու պահանջ:

Այս գործողությունը քաղաքացիների կողմից գործող իշխանության անարդյունավետ քաղաքականության, երկրի սոցիալ տնտեսական վիճակից իրենց բողոքները հրապարակայորեն արտահայտելու առիթ հանդիսացավ հանրապետության տարբեր քաղաքներում և հատկապես մայրաքաղաք Երևանում: Հանրապետությունում բազմամարդ հավաքներ, երթեր իրականացվեցին, որոնք ձևավորեցին իշխանություններից դժգոհության և խմբի առաջադրած պահանջների[8] կատարմանը սատարելու հանրային շարժում[9]:

2016 թվականի հուլիսի 17-ից մայրաքաղաք Երևանում բազմամարդ հավաքներ իրականացվեցին Ազատության հրապարակում (Օպերայի տարածքում), ինչպես նաև գրավված ՊՊԾ գնդի տարածքից մոտ 5 կմ հեռավորության վրա՝ 20-25 մետր հեռավորության տարածքում: Այնուհետև, Օպերայի տարածքի հավաքներին զուգահեռ հավաքներ կազմակերպվեցին Խորենացի փողոցի ոստիկանական արգելապատնեշից մոտ: Հավաքների, երթերի մասնակիցներն հիմնականում իրենց դժգոհությունն էին արտահայտում և քննադատում գործող իշխանությանը, ինչպես նաև պահանջում առանց արյունահեղության և բռնության լուծում տալ[10] զինված խմբի հարձակման հետևանքով առաջացած իրավիճակին:

Հավաքները շարունակվեցին ամեն օր՝ մինչև 2016 թվականի օգոստոսի 4-ը:

---

[6] Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ Ազգային անվտանգության ծառայության հայտարարությունը, 17 հուլիս 2016, http://www.sns.am/index.php/am/news/317-17072016

[7]Մենք ենք տերը մեր երկրի քաղաքացիական նախաձեռնություն, Facebook, 17 հուլիսի 2016, https://www.facebook.com/groups/SocialAllianceUnion/permalink/1358823450798686/

[8]Ոստիկանության ՊՊԾ գնդի վրա հարձակումից հետո զինված խումբը հայտարարություն էր տարածել, որտեղ որպես հիմնական պահանջ ներկայացվում է «...Ժողովրդի իշխանությունը յուրացրած և նրա ֆիզիկական անվտանգությունն ու պետության տարածքը վտանգի ենթարկող Սերժ Սարգսյանը պետք է իր վարչախմբի հետ միասին հրաժարական տա և իշխանությունը փոխանցի Ժողովրդի վստահության կառավարությանը»: Civilnet.am, Զինված միջադեպ Երևանում. Թարմացվող, 17 հուլիս, 2016 11:27, goo.gl/yYOmRG

[9]Human Rights Watch, Armenia: After Yerevan Protests, Detentions Under Scrutiny Activists in Unjustified Pretrial Detention, September 6, 2016 6:21PM EDT, https://www.hrw.org/hy/news/2016/09/08/293943

[10]ՀՀ քաղաքացիների հանրային քննարկում, 18 հուլիսի 2016 թվական, https://www.facebook.com/events/298448137169966

2016 թվականի հուլիսի 17-30-ը տեղի ունեցած ինքնաբուխ հավաքներն ու երթերը միաժամանակ ուղեկցվեցին մարդու իրավունքների աննախադեպ խախտումներով, որոնք հիմանկանում իրականացվեցին իրավապահ մարմինների կողմից: Խախտումները դրսևորվել են ոչ միայն հավաքի, երթերի մասնակիցների նկատմամբ, այլ նաև վերջիններիս ընտանիքի անդամների, ինչպես նաև հավաքներին, երթերին չմասնակցող քաղաքացիների նկատմամբ: Նույն ժամանակահատվածում լայնածավալ բռնություններ և խախտումներ են դրսևորվել նաև զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների նկատմամբ:

2016 թվականի հուլիսի 17-30-ն ընկած ժամանակահատվածում ոստիկանության կողմից բերման են ենթարկվել շուրջ 726 քաղաքացիներ, այդ թվում, հավաքի վայրին հարող փողոցներում երթևեկող պատահական անցորդներ, անձինք, ովքեր օգնություն էին տրամադրում ոստիկանության կողմից կիրառված հատուկ միջոցների արդյունքում տուժածներին: Ավելի քան 60 մարդ ձերբակալվել է 2016 թվականի հուլիսի 17-30-ը զանգվածային անկարգությունների, անօրինական հավաքներ կազմակերպելու և մասնացելու շինծու մեղադրանքի ներքո[11]:

2016 թվականի հուլիսի 20-ին և հուլիսի 29-ին ոստիկանության կողմից կիրառված հատուկ միջոցների, ինչպես նաև ոստիկանության բռնությունների հետևանքով պատճառված վնասվածքների համար Երևանի բժշկական հաստատություններ է դիմել 140 անձ, որից 82 քաղաքացիական անձ, 51 ոստիկան և «Սասնա Ծռեր» զինված խմբի 7 անդամ: Հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում է ստացել 41 անձ:

[11] Այս տվյալները տրամադրվել են Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Զեկույցը կազմելու համար օգտագործվել և համադրվել են տեղեկատվության հավաքագրման տարբեր միջոցներ, տեղեկատվությունը ստացվել է տարատեսակ աղբյուրներից, ինչպիսիք են անհատական հաղորդումները, մամուլի հրապարակումները, տեղում ընթացող գործողությունների անմիջական դիտարկումները և այլն:

Դիտարկումներ

2016 թվականի հուլիսի 17-ից զեկույցի կազմմանը մասնակից հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվել է հավաքների, երթերի դիտարկում, որի ընթացքում տեսաձայնագրվել, լուսանկարահանվել են տեղի ունեցող գործողությունները, գրանցվել են հավաքի մասնակիցների և ոստիկանության ծառայողների գործողությունները: Հավաքագրված տեղեկատվությունն, այնուհետև ամփոփվել է ըստ օրերի:

Քաղաքացիների հաղորդումներ

2016 թ. հուլիսի 17-ից զեկույցի կազմմանը մասնակից հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպվել է քաղաքացիների խորհրդատվություն և իրավական աջակցություն՝ կապված հավաքների ազատության, անձնական անձեռնմխելիության և ազատության, ինչպես նաև քաղաքացիների այլ իրավունքի խախտումների առնչությամբ: Ընդունելությունների ընթացքում քաղաքացիներից ստացված անհատական հաղորդումների տվյալները համադրվել են տեղեկատվության մյուս աղբյուրների տվյալների հետ՝ տեղի ունեցած խախտումների վերաբերյալ ամբողջական պատկեր ստանալու նպատակով:

Զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներ

Տեղեկատվությունն հավաքագրելու համար ուսումնասիրվել են 2016 թ. հուլիսի 17-30 տեղի ունեցող իրադարձությունների լուսաբանում իրականացնող տարբեր լրատվամիջոցների հրապարակումները, քաղաքացիական ակտիվիստների նկատմամբ իրականացված հետապնդումների, բռնությունների վերաբերյալ սոցիալական մեդիայով տարածված նյութերը:

Բացի այդ, Google.am որոնողական համակարգի միջոցով բանալի բառերի օգնությամբ, ինչպիսիք են «Սարի թաղ», «Խորենացի», «ՊՊԾ», «լրագրող», «օպերատոր», «բռնություն», «պայթյուն», «հուլիսի 29» եւ այլ բառերը, դուրս են բերվել հիշյալ իրադարձություններն առավել ակտիվ լուսաբանող ԶԼՄ-ների հրապարակումները: Այնուհետև՝ այդ հրապարակումներում զետեղված փաստերն ու տեղեկություններն, ըստ իրավունքի խախտումների, ստուգվել և համադրվել է այլ տեղեկությունների հետ:

Պաշտոնական տեղեկատվական կայքեր

Տեղեկատվություն է հավաքվել Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքից (www.yerevan.am), որը հանդիսանում է մայրաքաղաքաում անցկացվող հավաքների իրազեկումները քննարկող լիազոր մարմին, ինչպես նաև ՀՀ ոստիկանության (www.police.am) և ՀՀ Հատուկ քննչական ծառայության (www.ccc.am), ՀՀ քննչական կոմիտեի (www.investigative.am) ՀՀ Գլխավոր դատախազության (www.prosecutor.am), ՀՀ Ազգային Անվտանգության (www.sns.am), պաշտոնական կայքերից:

Datalex.am դատական տեղեկատվական համակարգից դուրս են բերվել ՀՀ դատարանների կողմից 2016 թվականի հուլիսի խախտումների առնչությամբ քննված քրեական գործերի վերաբերյալ տեղեկությունները: Այդ տեղեկատվությունը հավաքագրվել է ըստ ՀՀ Քրեական օրենսգրքի նախատեսված համապատասխան հոդվածների:

Տեղեկատվություն ստանալու հարցումները

Տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ պաշտոնական տեղեկատվության ստացման նպատակով զեկույցի կազմմանը մասնակից հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվել են տարբեր պաշտոնական հարցումներ:

ՀՀ ոստիկանություն
ՀՀ առողջապահության նախարարություն
ՀՀ գլխավոր դատախազություն,
ՀՀ հատուկ քննչական ծառայություն,
ՀՀ քննչական կոմիտե
և այլն:

Դեպքերի ուսումնասիրություն

Վնասվածքներ ստացած անձանց դեպքերի ուսումնասիրության միջոցով դուրս են բերվել ոստիկանության կողմից ուժի և հատուկ միջոցների կիրառման հանգամանքները, անձանց ստացած վնասվածքները, որոնք այնուհետև գնահատվել են ըստ հատուկ միջոցների օրենսդրությամբ սահմանված ցուցումների:

Հանդիպումներ եւ հարցազրույցներ հուլիսյան իրադարձությունների ընթացքում տուժածների հետ

Ուսումնասիրվող ժամանակահատվածում խախտումների, դրանց տեսակների, հետևանքների, խախտումն իրականացրած անձանց, հարուցված քրեական գործերի ու դրանց զարգացումների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով հարցազրույցներ են իրականացվել դեպքերի ականատեսների և տուժածների հետ:

2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի ԴԵՊՔԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ և ՀԱՋՈՐԴՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Պատրաստել է «Հայաստանի Հելսինկյան Կոմիտե» ՀԿ-ն

Ներածություն

Սույն զեկույցը ներկայացնում և վեր է լուծում Երևան և Գյումրի քաղաքաներում 2016 թվականի հուլիսի 17-ից մեկնարկած հավաքները (հավաքները շարունակվել են մինչև 2016 թականի օգոստոսի 4-ը), դրանց նկատմամբ իշխանությունների և հատկապես ոստիկանության վերաբերմունքը, հավաքների ընթացքում դրսևորված խախտումները, ինչպիսիք են հավաքի մասնակիցների նկատմամբ ֆիզիկական ուժի, բռնությունների և հատուկ միջոցների կիրառումը, բերման ենթարկելու և ձերաբակալման կարգով անձանց ազատազրկումը, այլ միջամտություններ:

Հավաքների ազատության վերաբերյալ ներպետական և միջազգային իրավական կարգավորումները

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից հրապարակված «Խաղաղ հավաքների ազատություն» ուղեցույցով[12] սահմանվում են հիմնական սկզբունքներ՝ հավաքների ազատությանը վերաբերող օրենսդրության մշակման, մեկնաբանման և կիրառման բոլոր փուլերի համար:

1. *Կանխավարկած հօգուտ հավաքների* – հավաքների ազատությունը որքանով հնարավոր է, պետք է իրականացվի առանց կարգավորման, այսինքն՝ եթե հավաքը չի արգելվում օրենքով, ապա այն պետք է ենթադրվի որպես թույլատրելի և նշված դրույթը պետք է ամրագրվի օրենքով:
2. *Խաղաղ հավաքները պաշտպանելու պետության պարտավորություն* - այս սկբունքի ապահովման գործում պետությունը ունի պոզիտիվ պարտականություն՝ ակտիվորեն պաշտպանելու հավաքները, որը պետք է հստակորեն ամրագրվի ներպետական իրավական ակտերով: Նշված սկբունքը ենթադրում է հավաքների ժամանակ իրավապահ մարմինների աշխատակիցների գործելակերպի պատշաճ ուսուցում այնպիսի մշակույթի ձևավորմամբ, որի արդյունքում առաջնահերթությունը կտրվի մարդու իրավունքների պաշտպանությանը: Սկզբունքի պահանջներից է նաև, որ պետությունը խաղաղ հավաքների մասնակիցներին պետք է պաշտպանի ցանկացած անձից և խմբից (ներառյալ սադրիչներից և հակընդդեմ հավաքի մասնակիցներից):
3. *Համաչափություն* - Ընդունելով, որ պիտանելիության տեսանկյունից առկա է միջամտությունների լայն շրջանակ, միշտ պետք է նախապատվությունը տրվի նվազագույն միջամտությանը՝ իշխանությունների հետապնդած օրինական նպատակին հասնելու համար:

Հավաքների ազատության ներպետական իրավակարգավորումները ներառնված են ՀՀ Սահմանադրության մեջ, ինչպես նաև օրենքներում: «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքը տարբերակում է իրազեկում պահանջող, ինչպես նաև ինքնաբուխ, շտապ և մինչև 100 մասնակից ունեցող

[12] ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, «Խաղաղ հավաքների ազատություն» ուղեցույց, հրատարակվել է ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից, 2009, հղում՝ http://armhels.com/wp-content/uploads/2012/06/790arm-Xaxax__havaqneri__azatutyun1.pdf

հավաքներ: Ընդ որում, օրենքը լիազոր մարմնին հնարավորություն է տալիս համապատասխան հիմքերի առկայության դեպքում սահմանափակումներ առաջադրել այն հավաքների նկատմամբ կամ արգելել այն հավաքները, որոնց անցկացման համար պահանջվում է իրազեկում (հոդված 18, 19):

Օրենքի ընդհանուր տրամաբանությունը վկայում է, որ իրազեկում չպահանջող հավաքն արգելելու օրենսդրական հնարավորությունը բացակայում է: Նույնիսկ այն դեպքում, երբ հավաքն իրականացվում է օրենքի խախտումով, բայց այն կրում է խաղաղ բնույթ, հավաքը չի կարող դադարեցվել (հոդված 32), սակայն այդպիսի հավաքի մասնակիցները կարող են ենթարկվել օրենքով նախատեսված պատասխանատվության: Նշված դրույթը նախատեսված է նաև ԵԱՀԿ «Խաղաղ հավաքների ազատություն» ուղեցույցում[13]: Խաղաղ հավաքի դադարեցումը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ հավաքի հետևանքով առաջացել է այլ անձանց սահմանադրական իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակում, որն այլ կերպ հնարավոր չէ կանխել: Այս դեպքում ոստիկանության ներկայացուցիչը ոչ պակաս, քան երկու անգամ բարձրախոսով մասնակիցներից պահանջում է դադարեցնել հավաքը՝ սահմանելով ողջամիտ ժամկետ: Այն դեպքում, երբ հավաքի վայրում արդեն սկսվել են զանգվածային անկարգությունները, նշված պահանջը չի գործում (հոդված 33):

Հավաքների դիտարկումները ցույց են տալիս, որ օրենքի նշված ձևակերպումները ոստիկանության կողմից հաճախ ենթարկվում է կամայական մեկնաբանության և խաղաղ հավաքները դադարեցվում են անկախ վերոնշյալ հիմքի առկայության[14]:

Ոստիկանության գործողությունների իրավական կարգավորումները խաղաղ հավաքների ժամանակ

Հավաքների ազատության մասին ՀՀ օրենքով սահմանված են ոստիկանության պարտականությունները հավաքի ընթացքում՝ ոստիկանությունը, ի թիվս այլ գործառույթների, պարտավոր է ապահովել իր

[13]ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, «Խաղաղ հավաքների ազատություն» ուղեցույց, հրատարակվել է ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից, 2009, կետ 132, հղում՝ http://armhels.com/wp-content/uploads/2012/06/790arm-Xaxax__havaqneri__azatutyun1.pdf

[14] Հայաստանի Հելսինկյան կոմիտեի զեկույցը Երևանում 22.04.16 թ. տեղի ունեցած հավաքի վերաբերյալ: Հայաստանի Հելսինկյան կոմիտե, http://armhels.com/2016/04/24/hayastani-helsinkyan-komitei-zekujcy-22-04-16-havaki-veraberyal/

ներկայացուցչի ներկայությունը հավաքին, հավաքի անցկացման վայրից հեռացնել այն անձանց, ովքեր կոպտորեն խախտում են հավաքի խաղաղ և բնականոն ընթացքը, ինչպես նաև, եթե հավաքն անցկացվում է իրազեկմանը վերաբերող պահանջների խախտմամբ, հավաքի մասնակիցներին բարձրախոսով տեղեկացնել, որ հավաքն անօրինական է և մասնակիցները ենթակա են օրենքով սահմանված պատասխանատվության: «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանը պարտավոր է մշտապես կրել համազգեստ և նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշաններ: Սահմանված կարգով համազգեստ կամ տարբերանշաններ չկրելը կարող է խոչընդոտել ոստիկանի նույնականացմանը՝ վերջինիս գործողությունների օրինականությունը հետագայում գնահատելու համար:

2016 թվականի հուլիսի 17-ից օգոստոսի 4-ն ընկած ժամանակահատվածում իրականացված հավաքների վայրերում ծառայություն իրականացնող ոստիկանության աշխատակիցների համազգեստին բացակայել են նույնականացման հնարավորություն տվող տարբերանշանները, իսկ համազգեստ չկրող ոստիկաններ ներկա են գտնվել գրեթե բոլոր հավաքների ընթացքում՝ 2016 թվականի հուլիսի 20-21-ին և 29-ին տեղի ունեցած հավաքների ընթացքում մասնակցելով հավաքները դադարեցնելու և հավաքի մասնակիցներին բերման ենթարկելու գործողություններին: Հավաքի մասնակիցների նկատմամբ առավել հաճախ կիրառվող ներգործության միջոցներից է վարչական կարգով բերման ենթարկումը, որի համար օրենքով նախատեսված են որոշակի հիմքեր՝ պետք է կատարված լինի վարչական իրավախախտում, որի վերաբերյալ արձանագրություն կազմելը տեղում հնարավոր չլինի և տվյալ արձանագրության կազմումը լինի պարտադիր (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք հոդված 258): Հավաքների դիտարկումները ցույց են տալիս, որ հավաքի մասնակիցների բերման ենթարկումը ոստիկանության կողմից չարաշահվում է և օգտագործվում որպես անձի մասնակցությունը հավաքին սահմանափակելու և հավաքները դադարեցնելու միջոց:

Խախտումների նկարագրությունը

2016 թվականի հուլիսի 17-ից օգոստոսի 4-ը ընկած ժամանակահատվածում անցկացվել է 17 հավաք, որոնցից առնվազն 7 հավաքի ընթացքում ոստիկանությունը բերման է ենթարկել հավաքի մասնակիցների, ընդ որում՝ 5 հավաքի դեպքում դադարեցնելով դրանք: Բացի անցկացված հավաքներից, 3 հավաքի անցկացումը խափանվել է ոստիկանության կողմից՝ հավաքի ենթադրյալ մասնակիցներին բերման ենթարկելու պատճառով: Ոստիկանության բաժիններ բերման ենթարկված հավաքի մասնակիցները բաժիններում պահվել են մինչև 17 ժամ, նրանց նկատմամբ դրսևորվել է դաժան վերաբերմունք: Ոստիկանությունը սպառազինության հատուկ միջոցներ կիրառել է հավաքներից 3-ի ընթացքում, բռություններ՝ 4-ի ընթացքում:

Տարբեր օրերին հավաքի մասնակիցների թիվը տատանվել է 700-4000-ի միջև, իսկ հուլիսի 25-26-ը անցկացված երթերի ընթացքում հասել 9000-ի: Համադրելով լրատվամիջոցներից, դիտորդների հաշվետվություններից և պաշտոնական հայտարարություններից ստացված տեղեկությունները՝ 2016 թվականի հուլիսի 17-ից օգոստոսի 4-ը կազմակերպված հավաքների վայրերում տեղի է ունեցել բերման ենթարկելու առնվազն 726 դեպք[15]:

2016թ հուլիսի 17-30 տեղի ունեցած հավաքների համար բնութագրական է այն, որ հավաքների օրինականության վերաբերյալ քաղաքապետարանի որևէ հայտարարություն չի տարածվել: Առանձին օրերին հավաքների առնչությամբ ոստիկանությունը հաղորդագրություն է տարածել՝ որակելով այն որպես անօրինական և պահանջելով տեղափոխել այլ վայր:

Միայն 2016 թվականի հուլիսի 17-ից 21-ն ընկած ժամանակահատվածում ավելի քան 300 քաղաքացի[16] փողոցներից, իրենց տներից ոստիկանության կողմից բռնությամբ տեղափոխվել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքում և քաղաքից դուրս տեղակայված բաժանումնքներ, ոստիկանության ներքին զորքերի ակադեմիայի վարչական շենք[17]:

---

[15]Առավել մանրամասն տես սույն զեկույցի 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-30 ԱՆՁՆԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ և ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ բաժնում

[16]Ազատություն ռադիոկայան, Ոստիկանություն. Բերման է ենթարկվել 136 քաղաքացի, հուլիսի 21, 2016, http://www.azatutyun.am/a/27871508.html

[17]Hetq.am, 12 ձերբակալվածներ ազատ արձակվեցին, 24 հուլիսի, 2016, 12:15, http://hetq.am/arm/news/69387/12-dzerbakalvatsner-azat-ardzakvecin.html

Բռնություններ, անմարդկային վերաբերմունք

2016 թվականի հուլիսի 17-ից օգոստոսի 4-ն ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած հավաքներին միջամտելու և հավաքները ցրելու նպատակով բազմաթիվ դեպքերում ոստիկանությունը հավաքի մասնակիցների նկատմամբ դրսևորել է դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք: Նման վարքագծի դրսևորման հաճախականությունը, դրսևորումները թույլ են տալիս եզրակացնել, որ հավաքի մասնակիցների նկատմամբ բռնության կիրառումը նպատակ է հետապնդել ինչպես խափանել ընթացող հավաքները, այնպես էլ կանխել մասնակիցների կողմից հետագա հավաքներին մասնակցությունը:

Հավաքի մասնակիցների նկատմամբ բռնությունների ու անմարդկային վերաբերմունքի դրսևորումները շարունակվել են նաև ոստիկանական մեքենաներում և բերման ենթարկման վայրերում: Բռնության ենթարկված հավաքի մասնակիցների վկայությունների համաձայն, նշված գործողությունները ուղեկցվել են ուղղակի սպառնալիքներով և պահանջներով, որպեսզի իրենց կողմից հավաքի մասնակցությունը դադարեցվի:

Հավաքի մասնակիցներ Դ. Սանասարյանին, Ա. Սարգսյանին և Ա. Ասլանյանին հուլիսի 18-ին Ազատության հրապարակում անցկացվող հավաքի վայրից բերման են ենթարկել Դավիթաշենի ներքին զորքերի զորամաս: Ոստիկանական մեքենայում ոստիկանները նրանց ծեծել են, թքել Դ. Սանասարյանի վրա, պահանջել լիզել կոշիկները[18]:

Բերման ենթարկվածներից Ա.Հ.-ն պատմել է, որ իրեն 2016 թ. հուլիսի 17-ին և բազմաթիվ այլ քաղաքացիների տեղափոխել են ՀՀ Ոստիկանության ակադեմիայի դահլիճներից մեկը, անցկացնելով ոստիկանների երկու շարքերի արանքով, երկու կողմերից ենթարկել են ծեծի: Դահլիճում գտնվելու ընթացքում ոստիկանության աշխատակիցները նրանց պարբերաբար սպառնացել են ինքնաձիգներով, արգելել ջուր խմել, զուգարան գնալ կամ խոսել մյուս բերման ենթարկվածների հետ՝ ողջ ընթացքում նրանց պահելով ձեռնաշղթաներով: Այն անձանց, ովքեր չեն ենթարկվել, փորձել են տեղաշարժվել կամ խոսել ուրիշների հետ, տեղափոխել են շինության այլ սենյակ, ծեծել և հետ բերել մարզադահլիճ:

[18] Թքել են ինձ վրա-Դավիթ Սանասարյան, armtimes.com, հրապարակված է 2016 թ. հուլիսի 19-ին, https://www.youtube.com/watch?v=JpzegoJCzm0

2016 թվականի հուլիսի 20-ի երեկոյան Խորենացի փողոցի արգելափակված հատվածի մոտ՝ հավաքի առջևի շարքում կանգնած անձինք մոտեցել են ոստիկանության պատնեշին, սկսել քաշքշել ոստիկաններին, այնուհետև հարվածել նրանց, քարեր նետել ոստիկանների ուղղությամբ: Ոստիկանության կողմից միջոցներ չեն ձեռնարկվել այդ անձանց հավաքի վայրից հեռացնելու կամ մեկուսացնելու համար, փոխարենը՝ մոտ 7 րոպե անց ոստիկանությունը ցրել է հավաքը, կիրառելով հատուկ միջոցներ, բռնություններ, բերման ենթարկել հավաքի մասնակիցներին[19]: Ոստիկանության գործողություններին մասնակցում էին նաև համազգեստ չկրող ոստիկաններ: Ըստ ականատեսների՝ հավաքի վայրում գտնվող շտապօգնության մեքենաների անձնակազմը առաջնահերթորեն բուժօգնություն էին տրամադրում ոստիկաններին:

Ա. Թադևոսյանին ոստիկանները բերման ենթարկելու ընթացքում դաժան ծեծի են ենթարկել, որի հետևանքով կոտրվել է ծնոտը, այնուհետև 4 ժամ պահվել ոստիկանությունում և զրկված եղել բժշկական օգնությունից:

Ոստիկանության կողմից հավաքի ընթացքում զանգվածային բռնություններ են տեղի ունեցել 2016 թվականի հուլիսի 29-ին Սարի թաղ կոչվող թաղամասում անցկացվող հավաքի ընթացքում: Հավաքի վայրում ներկա գտնվող մի խումբ անձինք սկսել են քարեր նետել ոստիկանության պատնեշի ուղղությամբ, որից հետո, ոստիկանության շարքերի միջով անցնելով, միացել են վերջիններիս: Այնուհետև, ոստիկանությունը հատուկ միջոցներ է կիրառել հավաքի մասնակիցների նկատմամբ, վերջիններիս ենթարկել հետապնդման: Հավաքի մասնակիցների նկատմամբ բռնություններ են կիրառվել նաև քաղաքացիական հագուստով անձանց կողմից, որոնք զինված են եղել մահակներով և մետաղյա ձողերով, սակայն տեղում ծառայություն իրականացնող ոստիկանությունը չի միջամտել և չի կանխել վերջիններիս կողմից բռնության իրականացումը: Ավելին՝ նշված անձինք անմիջականորեն ուղղորդվել են ոստիկանների կողմից[20]:

Ականատեսներից Լ.Ա.-ը պատմել է, որ բախման ժամանակ մի խումբ քաղաքացիների հետ պատսպարվել է խանութներից մեկում, երբ մոտեցել է քաղաքացիական հագուստով անձանց խումբը, հայհոյելով դուրս քաշել հավաքի մասնակիցներից մեկին

[19]Գիշերը մի քանի տասնյակ մարդ բերման ենթարկվեց Խորենացի փողոցից, Ազատություն, հրապարակված է 2016 թ. հուլիսի 21-ին, https://www.youtube.com/watch?v=AWxb5eBC6ZM

[20]Ոստիկանների գրոհը Սարի թաղում, CivilNet TV, հրապարակված է 2016 թ. հուլիսի 29-ին, https://www.youtube.com/watch?v=Risy6Yl3taU

և սկսել ծեծել, սպառնալով, որ կրկին հաշվեհարդար կտեսնեն, եթե հետագայում մասնակցի որևէ հավաքի: Սպառնալիքներ և հայհոյանքներ հնչեցրած անձը զինված է եղել ատրճանակով:

2016 թվականի հուլիսի 29-ին Խորենացի փողոցում և Սարի թաղում ոստիկանության գործողությունների անմիջական թիրախ են դարձել նաև հավաքի լուսաբանում իրականացնող զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները: Նշված անձանց օրինական մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու, բռնություն կիրառելու, մասնագիտական տեխնիկան վնասելու, հափշտակելու և տեսագրությունները ոչնչացնելու դեպքերը հիմք են տալիս եզրակացնել, որ ոստիկանությունը նպատակ է հետապնդել ոչնչացնել ապացույցները՝ իր կողմից իրականացված ոչ օրինական գործողությունները քողարկելու միտումով: Բացի հավաքի լուսաբանում իրականացնող զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներից, խոչընդոտվել է նաև Հայաստանի Հելսինկյան կոմիտեի դիտորդի աշխատանքը՝ նրա տեսախցիկը վերցվել է համազգեստ չկրող ոստիկանի կողմից և վերադարձրել միայն վերադաս ոստիկանության ծառայողի հրահանգից հետո:

Հետապնդումները որպես հավաքի մասնակցությունը սահմանափակելու և խափանելու միջոց

2016 թվականի հուլիսի 17-ից օգոստոսի 4-ը իրավապահ մարմինների կողմից հետապնդումների են ենթարկվել քաղաքացիական և քաղաքական նախաձեռնությունների տասնյակ անդամներ *(«Ո՛չ թալանին», «Դե՛մ եմ», «Էլեկտրիկ Երևան», «Մենք ենք տերը մեր երկրի», «Հիմնադիր խորհրդարան»)*[21]:

Իրավապահ մարմինների աշխատակիցները այցելել են նրանց բնակարաններ, բերման ենթարկել մերձավոր ազգականներին, նպատակ ունենալով խափանել ակտիվիստների կողմից մասնակցությունը անցկացվող հավաքներին: Հետապնդումների են ենթարկվել ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում բնակվող անձինք:

- *2016 թվականի հուլիսի 17-ին առավոտյան «Հիմնադիր խորհրդարանի» նախկին անդամ Մ. Նազարյանի հորը և եղբորը տարել են ոստիկանություն՝ ճշտելու իր գտնվելու վայրը: Մ. Նազարյանի կողմից ոստիկանություն ներկայանալուց հետո նրան առանց դատավարական կարգավիճակի պահել են 32 ժամ, թույլ չեն տվել*

[21]Հայաստանի Հելսինկյան Կոմիտե, Զեկույց 2016 թ. հուլիսի 17-ից օգոստոսի 5-ը Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ, բաժին Հետապնդումներ, goo.gl/6AcvgT

հանդիպել փաստաբանի հետ և պահանջել են «չգնալ Երևան և չխառնվել իրավիճակին[22]»:

- *2016 թվականի հուլիսի 20-ին բերման է ենթարկվել «Դե՛մ եմ» շարժման ակտիվիստ Ս. Ծատուրյանի եղբայրը, ով բաց է թողնվել միայն Ս. Ծատուրյանի կողմից ոստիկանության բաժանմունք ներկայանալուց հետո:*
- *2016 թվականնի հուլիսի 20-ին Տավուշի մարզի Բաղանիս գյուղի բնակչուհի Վ. Հարությունյանի հորը ԱԱԾ աշխատակիցները հրավիրել են նշված գյուղի գյուղապետարան զրուցելու նպատակով, պարզելու համար արդյո՞ք Վ. Հարությունյանը մասնակցելու է Երևանում անցկացվող հավաքներին:*
- *2016 թվականի հուլիսի 22-ին Արմավիրի մարզի բնակչուհի Թ. Ղազարյանի հորն ու եղբորը տարել են Վաղարշապատի ոստիկանության բաժին՝ պահանջելով Թ. Ղազարյանի ներկայանալը՝ անցկացվող հավաքներին նրա մասնակցությունը խափանելու համար:*

2016 թ. հուլիսի 18-ին Շիրակի մարզի Անիի տարածաշրջանի ոստիկանապետը զանգահարել է ակտիվիստ Մնացական Ալեքսանյանին և հորդորել՝ որևէ ցույցի չմասնակցել, հասարակական ակտիվություն չցուցաբերել: Այնուհետև, զանգահարել է Մնացականի հորը և ասել՝ «…եթե մեկ ժամվա ընթացում, առավելագույնը մինչ օրվա ավարտը, Մնացականը Երևանը չլքի մոր հետ, հատուկ ջոկատայինները գալու են և Մնացականին մոր հետ Երևանից դուրս տանեն»[23]:

2016 թվականի հուլիսի 20-ին, ՀՔԱ Վանաձորի գրասենյակ են ահազանգել քաղաքական ակտիվիստներ «Հիմնադիր խորհրդարանի» ներկայացուցիչ Ռազմիկ Էվոյանը և Ժառանգություն կուսակցության ներկայացուցիչ Գևորգ Քոթանջյանը՝ հայտնելով, որ 2016 թվականի հուլիսի 19-ին Վանաձորի Հայքի հրապարակում տեղի ունեցած հանրային քննարկման մասնակիցների նկատմամբ հետապնդումներ են սկսվել քաղաքացիական հագուստով ոստիկանների կողմից: Հիմնադիր խորհրդարանի ներկայացուցչի պնդմամբ՝ հետապնդումներ են իրականացվել, մասնավորապես, այն անձանց նկատմամբ, ովքեր 2016 թվականի հուլիսի 17-ին տարվել են Վանաձոր քաղաքի ոստիկանության Բազումի բաժին:

[22] Ակտիվիստին 32 ժամ պահել են ոստիկանությունում, armtimes.com, հրապարակված է 2016 թ. հուլիսի 19-ին, հղում՝ https://www.youtube.com/watch?v=VdKghVn3xNw

[23] Մարալիկի ոստիկանապետը սպառնացել է Մնացական Ալեքսանյանին: http://hetq.am/arm/news/69234/maraliki-ostikanapety-sparnacel-e-mnacakan-aleqsanyanin.html

Քաղաքացիները լուսանկարել են իրենց հետևող քաղաքացիական հագուստով ոստիկանին և ավտոմեքենան և մտավախություն են հայտնել, որ հետապնդող անձինք կարող են վնասել իրենց[24]:

Անձանց ազատազրկումները և հավաքների ազատության իրավունքի այլ խախտումներ

2016 թվականի հուլիսի 17-ից օգոստոսի 4-ը Հայաստանի Հանրապետությունում ոստիկանության կողմից բերման է ենթարկվել և անազատության մեջ պահվել առնվազն 726 քաղաքացի: Ազատությունից զրկված գրեթե բոլոր անձինք հանդիսացել են հավաքի մասնակիցներ և վերջիններիս հավաքից մեկուսացնելով ոստիկանությունը նպատակ է ունեցել խափանել հավաքն ընդհանուր առմամբ: Նման կերպ 2016 թվականի հուլիսի 17-ին ոստիկանությունը խափանել է «Մենք ենք տերը մեր երկրի» քաղաքացիական նախաձեռնության կողմից կազմակերպված շտապ հավաքի անցկացումը: Ոստիկանները բերման են ենթարկել հավաքի ենթադրյալ մասնակիցներին, արգելել նկարահանել իրենց գործողությունները: Ոստիկանության կողմից հավաքի մասնակիցների նկատմամբ բացասական վերաբերմունքը առկա է եղել անցկացվող բոլոր հավաքների ընթացքում, ինչը էապես դժվարացրել է հավաքների ղեկավարների և ոստիկանության ներկայացուցիչների միջև ընթացող բանակցությունները և երկխոսությունները: 2016 թվականի հուլիսի 29-ին տեղի ունեցած հավաքի ընթացքում ոստիկանության ներկայացուցիչը հավաքի մասնակիցներին ընդամենը 5 րոպե ժամանակ հատկացրեց հավաքի վայրից հեռանալու համար:

Հայաստանի Հելսինկյան կոմիտեի դիտորդը արձանագրել է, որ 2016 թվականի հուլիսի 29-ին «Սարի թաղ» կոչվող թաղամասում անցկացվող հավաքը դադարեցնելու ընթացքում հավաքի վայրում ներկա ոստիկանության ներկայացուցիչ, ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Լ. Երանոսյանը բացականչել է «սրանց պետք է սատկացնենք» և հայհոյել հավաքի մասնակիցներին:

2016 թվականի հուլիսի 26-ին ոստիկանությունը տարածեց հայտարարություն[25], որով պահանջվում էր անցկացվող հավաքները Խորենացի փողոցի արգելափակված հատվածից տեղափոխել այլ վայր: Հաջորդ օրը

[24]Քաղաքացիական հագուստով ոստիկանները հետապնդում են քաղաքացիներին: Հասանելի է http://hcav.am/events/20-07-2016-055963/

[25] ՀՀ ոստիկանության հայտարարությունը հետևյալ հղումով http://www.police.am/news/view/hj2607.html

ոստիկանության ներկայացուցիչը հայտարարեց, որ նշված տարածքում հավաք անցկացնելն արգելվում է և օրվա ընթացքում բերման ենթարկվեցին ինչպես հավաքի ենթադրյալ մասնակիցները, այնպես էլ հարակից շենքերի բնակիչներ[26]: Երևանի քաղաքապետարանի կողմից հավաքների անցկացումն արգելելու վերաբերյալ հայտարարություն տարածեց միայն 2016 թվականի հուլիսի 30-ին, համաձայն որի արգելվում էր հանրային որևէ միջոցառման անցկացումը Էրեբունի վարչական շրջանում և հարակից փողոցներում[27]:

2016 թվականի հունիսի 29-ին Գյումրի քաղաքի Թատերական հրապարակում անցկացվող հավաքին միջամտել են քաղաքացիական հագուստով անձինք, հայհոյել, վիրավորել հավաքի մասնակիցներին, բռնության ենթարկել լրագրողներին: Հավաքի վայրում ներկա չեն եղել համազգեստով ոստիկաններ, իսկ ոստիկանության 1-02 հեռախոսահամարով զանգերին ոստիկանությունը չի պատասխանել:

2016 թվականի հուլիսի 31-ին «Սասնա ծռեր» զինված խմբի անդամների՝ իրավապահ մարմիններին հանձնվելուց հետո տեղի ունեցած հավաքներն անցել են հարաբերականորեն խաղաղ: 2016 թվականի օգոստոսի 4-ին Ազատության հրապարակում անցկացվող հավաքի մասնակիցներին, ինչպես նաև պատահական անցորդներին հավաքի ավարտից անմիջապես հետո առանց որևէ հայտարարության կամ պատճառաբանության ոստիկանները բերման ենթարկվեցին: Հատկանշական է, որ հավաքն իրազեկված էր և ի գիտություն ընդունված[28]:

---

[26] Ուղիղ միացում Խորենացի փողոցից 27.07.16 15:30-ից, Ազատություն, հրապարակված է 2016 թ. հուլիսի 27-ին, հղում՝ https://www.youtube.com/watch?v=jdM0o2aflx0

[27] Երևանի քաղաքապետարանի հայտարարությունը հետևյալ հղումով https://www.yerevan.am/am/announcement/erevani-k-aghak-apetarani-haytararowt-yowne/

[28] Երևանի քաղաքապետարանի որոշումը հետևյալ հղումով https://www.yerevan.am/am/public-meeting/hh-k-aghak-ats-i-varowzhan-avetisyani-s-t-ogostosi-4-in-havak-ew-ert-ants-kats-nelow-masin-irazekman/

Տեղի ունեցած հավաքների ազատության խախտումների և միջամտությունների տեսակները[29]

Խախտումների և միջամտությունների քանակը ըստ 2016 թվականի հուլիսի 17-ից օգոստոսի 4-ը իրականացված հավաքների

Խախտման և միջամտության բնույթը	**Հավաքների թիվը**
Բռնություններ հավաքի մասնակիցների նկատմամբ	4 հավաքի ժամանակ
Բռնություններ լրագրողների նկատմամբ	3 հավաքի ժամանակ
Հավաքի վայրում իրականացվող դիտորդների և լրագրողների մասնագիտական գործունեության խոչընդոտում	2 հավաքի ժամանակ
Հավաքի մասնակիցների բերման ենթարկում/ձերբակալություն	7 հավաքի ժամանակ
Հավաքի դադարեցում	2 հավաքի ժամանակ
Հավաքի անցկացման կանխում	3 հավաքի ժամանակ
Երթի արգելում, երթուղու սահմանափակում	5 հավաքի ժամանակ

[29] Նկարագրված խախտումների առանձնացումը պայմանական է: Որպես առանձնացման հիմք են ընդունվել խախտումը կատարողի կողմից մեկ ընդհանուր դիտավորության կամ մեկ գործողության մեջ ներառելը:

Ընդհանուր խախտումների և միջամտությունների քանակը ըստ խախտումն իրականացնողի[30]

Խախտման հեղինակը	Խախտումների թիվը
ՀՀ ոստիկանություն	22
Համազգեստ չկրող ոստիկաններ	4
Հավաքի մասնակիցներ	1
Անհայտ անձինք	5

Տեղի ունեցած խախտումների վերաբերյալ իրավապահ մարմինների և այլ գնահատականներ

ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպան Ռիչարդ Միլսը՝ իր մտահոգությունն է հայտնել ոստիկանների կողմից խաղաղ ցուցարարների և իրենց աշխատանքային պարտականությունները կատարող լրագրողների դեմ հուլիսի 29-ի գիշերը գործադրված ուժի մասին արժանահավատ հաղորդումների, ինչպես նաև մտահոգիչ տեսանյութերի կապակցությամբ[31]: ԵԱՀԿ-ի մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչ Դունյա Միյատովիչը ՀՀ կառավարությանը կոչ արեց ապահովել քաղաքացիական անհնազանդությունները լուսաբանող լրագրողների պաշտպանությունը[32]: ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը կոչ արեց պետական իրավասու մարմիններին՝ իրենց իրավասության սահմաններում, գործադրել բոլոր ջանքերը հավաքների ընթացքում, ոստիկանության բաժիններում քաղաքացիների, ինչպես նաև լրագրողների իրավունքների խախտման դեպքերը բացահայտելու ուղղությամբ[33]: Օգոստոսի 1-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, խոսելով զինված խմբի կողմից ոստիկանության զորամասի գրավման շուրջ ծավալված դեպքերի մասին, ներողություն խնդրեց լրագրողներից, կոչ անելով

[30]Հավաքների ընթացքի նկատմամբ խախտումների և միջամտությունների բնութագրումը ըստ օրերի, վայրերի և հեղինակի տե՛ս հավելված 1-ում

[31] ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատան հայտարարությունը https://armenia.usembassy.gov/news073016.html

[32] Դունյա Միյատովիչ. Իշխանությունները պետք է գործնական քայլեր կատարեն, www.a1plus.am

[33]ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունը հետևյալ հղումով՝ http://www.ombuds.am/media/ombudsmani-ditarkumnery.html

լրագրողներին, բայց ոչ՝ իրավապահներին, մոռանալ կատարվածի մասին, հավաստիացնելով, որ նման դեպք այլևս չի կրկնվի[34]:

Քննության ընթացք և արդյունքներ

Սարի թաղ կոչվող թաղամասում տեղի ունեցած դեպքերի առթիվ ՀՀ ՔԿ հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում 2016 թվականի հուլիսի 30-ին հարուցվել է քրեական գործ՝ զանգվածային անկարգություններ կազմակերպելու և ոտիկանության ծառայողների նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ: 2016 թվականի հուլիսի 23-ին Հատուկ քննչական ծառայությունը ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, բռնության գործադրմամբ զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու, լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու և փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու դեպքերի առթիվ հարուցել է քրեական գործ[35]: Քրեական գործի նախաքննությունը 2017 թ. հունվարին ժամանակավորապես դադարեցվել է այն պատճառաբանությամբ, որ առաջ են եկել կարևոր քրեական գործեր[36]: Ոստիկանությունում իրականացվող ծառայողական քննության արդյունքում 2016 թ. օգոստոսի 5-ին կարգապահական պատասխանատվության ենթարկվեցին մի շարք ոստիկաններ[37]՝ որոնցից 5-ի լիազորությունները դադարեցվեցին, 3-ը պաշտոնից ազատվեցին: 2016 թվականի օգոստոսի 8-ին, ՀՀ ոստիկանության պետի հրամանով պաշտոնից ազատվեց նաև ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետ Աշոտ Կարապետյանը[38]:

2016 թվականի հուլիսի 27-ին օրենքով սահմանված կարգի խախտմամբ հավաքը դիտավորությամբ կազմակերպելու և անցկացնելու, հավաքը դադարեցնելու վերաբերյալ ոստիկանության ներկայացուցչի օրինական

---

[34] Սերժ Սարգսյան. «Եկել է եզրակացություններ կատարելու ժամանակը», Ազատություն, հրապարակված է 2016 թ. օգոստոսի 1-ին, https://www.youtube.com/watch?v=FueK2voXVpM

[35] ՀՔԾ-ի հայտարարությունը հրապարակված է 2016 թ. հուլիսի 23-ին, http://www.ccc.am/hy/1428493746/3/5280

[36] ՀՔԾ-ն ժամանակավորապես դադարեցրել է Սարի թաղում բռնության դեպքերով քրեական գործերի նախաքննությունը. Սերժ Սարգսյանի խոսքերը սխալ են ընկալել, հրապարակված է 2017 թ. հունվարի 20-ին, http://armlur.am/640297/

[37] ՀՀ ոստիկանության հայտարարությունը հրապարակված է 2016 թ. օգոստոսի 8-ին, http://www.police.am/news/view/hy05058.html

[38] ՀՀ ոստիկանության հայտարարությունը հետևյալ հղումով հրապարակված է 2016 թ. օգոստոսի 8-ին http://www.police.am/news/view/%D5%BC%D5%BF%D5%A88.html

որոշմանը չենթարկվելուն ուղղված կոչեր հնչեցնելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 1-ին (օրենքով սահմանված կարգի խախտմամբ հավաքը դիտավորությամբ կազմակերպելը և անցկացնելը) և 2-րդ (հավաքը դադարեցնելու վերաբերյալ ոստիկանության ներկայացուցչի օրինական որոշմանը չենթարկվելուն ուղղված կոչերը) մասերով հարուցվել է թիվ 59104816 քրեական գործը: 2016 թվականի հուլիսի 30-ին ՀՀ քրեական օրենսգրքի 225.1 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հանցագործություն կատարելու կասկածանքով ձերբակալվել են Հայկ Մանուկյանը, Արթուր Ռաթևոսյանը, Դավիթ Սանասարյանը և Պարսամ Այվազյանը: Հետագայում՝ 2016 թվականի դեկտեմբերի 20-ին որոշում է կայացվել գործով վարույթը կարճելու մասին:

Եզրակացություն

2016 թվականի հուլիսի 17-ից օգոստոսի 4-ն ընկած ժամանակահատվածում, Երևանում և Գյումրիում կազմակերպված հավաքների նկատմամբ տեղի են ունեցել բազմաթիվ ոչ իրավաչափ միջամտություններ և բռնություններ: Չեն պահպանվել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, հավաքների նկատմամբ ներգործությունների համար սահմանված կարգը: Հավաքների ընթացքի նկատմամբ տեղի են ունեցել չարդարացված և ոչ համաչափ միջամտություններ: Բազմաթիվ քաղաքացիական ակտիվիստներ ենթարկվել են հետապնդումների՝ կապված իրենց կողմից հավաքների ազատության իրավունքի իրականացման հետ:

Ոստիկանության կողմից հավաքների անցկացման արգելումը, հավաքների անցկացման վայրերի չհիմնավորված սահմանափակումները կրել են կազմակերպված բնույթ: Նման սահմանափակումներ կարող են նախատեսվել միայն «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում և կարգով, սակայն, նշված օրերին Հայաստանի Հանրապետության որևէ հատվածում արտակարգ դրություն չէր հայտարարվել: Լրագրողների նկատմամբ տեղի ունեցած բռնությունները և սպառնալիքները, բացի անձնական ֆիզիկական և բարոյական վնասներից, վտանգի տակ են դրել խաղաղ հավաքների ընթացքի լուսաբանումը և խոչընդոտել հավաքների ազատության իրավունքի իրականացմանը հավաքի մասնակիցների կողմից: Բազմաթիվ քաղաքացիների բերման են ենթարկել և

ժամեր շարունակ անհիմն պահվել ինչպես ոստիկանության բաժիններում, այնպես էլ ոստիկանության զորքերի զորամասերում: Ճնշումների և բռնությունների զոհ են դարձել հավաքների մասնակից չհանդիսացող անձինք, ինչպես նաև հավաքի մասնակիցների ընտանիքի անդամներ: Խախտումներ կատարող որոշ ոստիկաններ թեև ստացել են կարգապահական տույժեր, սակայն բռնություններ իրականացրած որևէ իրավապահ մարմնի աշխատակից կամ այլ անձ քրեական պատասխանատվության դեռևս չի ենթարկվել:

Հավելված 1. Հավաքների ընթացքը և միջամտություններն ըստ օրերի, վայրերի

2017 թվականի հուլիսի 17	
Հավաքի վայրը, ժամը	*Համաձայն «Ֆեյսբուք» սոցիալական կայքում տարածված գրառման՝ հավաքը նախատեսված էր սկսել Ազատության հրապարակում ժամը 12:00-ին:*
Ոստիկանների թիվը	*Ազատության հրապարակում՝ մինչև 40 (առնվազն 8-ը սպայական կազմից), հարակից տարածքներում՝ մինչև 80:*
Ընդհանուր նկարագրությունը Ժամը 12:00-ից մինչև 12:30-ը Երևան քաղաքի Օպերայի շենքի և Մաշտոցի պողոտայի միջև ընկած տարածքում ոստիկանության ծառայողները Ազատության հրապարակից, դրա հարակից տարածքներից բերման ենթարկեցին հավաքի ենթադրյալ մասնակիցներին, որի պատճառով հավաքը չկայացավ: Բերման ենթարկելու ժամանակ ոստիկանները կիրառում էին ձեռնաշղթաներ: Բերման էին ենթարկվում նաև այն անձինք, ովքեր փորձում էին նկարահանել ոստիկանների գործողությունները, ոստիկանները վերջիններիս քաշքշելով. Նրանց ձեռքից խլում էին բջջային հեռախոսները:	

2017 թվականի Հուլիսի 18	
Հավաքի վայրը, ժամը	*Ազատության հրապարակ/Հյուսիսային պողոտա (ժամը 19:00-ից մինչև 23:30),* *Երթ Ազատության հրապարակ - Հյուսիսային պողոտա - Աբովյան*

	փողոց - Հանրապետության հրապարակ - Ամիրյան փողոց - Մաշտոցի պողոտա - Ազատության հրապարակ (ժամը 20:30-ից մինչև 22:00):
Մասնակիցների թիվը	*Հավաքի տարբեր ժամերին՝ 150-800 մարդ, Երթի ընթացքում՝ 800-1500 մարդ, Հավաքի ավարտին՝ մոտ 100 մարդ:*
Ոստիկանների թիվը	*Ազատության հրապարակում՝ 200-250 (շատերի մոտ առկա էին մահակներ), հարակից տարածքներում՝ 300-400 (սպառազինությունը՝ մահակներ, վահաններ, զրահներ և սաղավարտներ), առնվազն 22 ոստիկան առանց համազգեստի:*

Ընդհանուր նկարագրությունը

Հավաքը սկսվեց ժամը 19:10-ին: Կազմակերպիչները հայտարարեցին հավաքի նպատակի մասին և մասնակիցներին հրավիրեցին մասնակցել քննարկմանը և առաջարկություններ ունենալու դեպքում հանդես գալ հայտարարությամբ: Հայտարարությամբ հանդես եկավ «Ժառանգություն» կուսակցության անդամ Դավիթ Սանասարյանը, հետո վերջինիս մոտեցավ ոստիկանության աշխատակիցը և ուղեկցեց ոստիկանության գեներալ Հունան Պողոսյանի մոտ: Այնուհետև, երբ Դ. Սանասարյանը կրկին միացավ հավաքի մասնակիցներին, ոստիկանության մոտ 50 ծառայողներ մասնակիցների միջով մոտեցան Դ. Սանասարյանին և ուժի գործադրմամբ, քաշքշելով բերման ենթարկեցին, Դ. Սանասարյանի հետ միասին բերման ենթարկվեցին ևս 2 հավաքի մասնակիցներ: Հավաքի մասնակիցները փորձեցին Հյուսիսային պողոտայով երթ կազմակերպել դեպի ՀՀ ոստիկանության Էրեբունու պարեկապահակային ծառայության (ՊՊԾ) գնդի զորամաս, սակայն ոստիկանությունը շղթա կազմելով փակեց նրանց ճանապարհը: Մասնակիցների և ոստիկանության միջև մոտ 20 րոպե բանակցություններից հետո ոստիկանները բացեցին դեպի Ազատության հրապարակ տանող ճանապարհը, թույլ տալով հավաքի մասնակիցներին վերադառնալ Ազատության հրապարակ: Ժամը 20:00-ի սահմաններում մասնակիցները գտնվում էին Ազատության հրապարակում, Օպերայի շենքի առջևի բեմահարթակում ընթանում էին բանակցություններ հավաքի մասնակիցների և ոստիկանության ներկայացուցչի միջև ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Հունան Պողոսյանի հետ ձեռք բերվեց համաձայնություն, ըստ որի ոստիկանները չեն խոչընդոտի հավաքի մասնակիցներին, ազատ կարձակեն բոլոր բերման ենթարկվածներին և թույլ կտան մասնակիցներին երթ անցկացնել: Երթը սկսվեց ժամը 21:00-ի սահմաններում: Երթի ուղեկցում էին մոտ 150 ոստիկան: Ժամը 21:45-ին երթի մասնակիցները Մաշտոց – Թումանյան փողոցների խաչմերուկում հայտարարեցին նստացույց, որը պետք է շարունակվեր մինչև բեման ենթարկված հավաքի մասնակիցների ազատ արձակումը: Ժամը

22:00-ին, հավաքի կազմակերպիչները հեռախոսով կապ հաստատեցին բերման ենթարկված մասնակիցների հետ և, համոզվելով որ նրանք ազատ են արձակվել, շարունակեցին երթը և վերադարձան Ազատության հրապարակ: Հավաքի մասնակիցների մի մասը կրկին փորձեցին երթով շարժվել դեպի ՊՊԾ գնդի զորամաս, սակայն հրապարակից երթով դուրս գալու փորձը խափանվեց ոստիկանության ծառայողների կողմից, որոնք, շղթա կազմելով, շրջանաձև փակեցին Ազատության հրապարակի մերձակա տարածքը:

2017 թվականի հուլիսի 19	
Հավաքի վայրը, ժամը	*Ազատության հրապարակ (ժամը 19:00-ից մինչև 21:30), Խորենացի և Քրիստափորի փողոցների խաչմերուկի մոտ (ժամը 21:45-ից):*
Մասնակիցների թիվը	*Ազատության հրապարակում՝ 100-130 մասնակից, Էրեբունու ոստիկանության զորամասի մոտ՝ տարբեր ժամերին 300-2000 մասնակից:*
Ոստիկանների թիվը	*Ազատության հրապարակում՝ մինչև 50 (մի մասի մոտ եղել են ատրճանակներ), Էրեբունու ոստիկանության զորամասի մոտ՝ առնվազն 300 ոստիկան (հատուկ ստորաբաժանումից, հատուկ գումարտակից և պարեկային ծառայությունից, շատերի մոտ առկա էին մահակներ, հատուկ գումարտակի ծառայողները կրում էին զրահ, սաղավարտ և վահաններ) և մինչև 30 համազգեստ չկրող ոստիկան:*
Ընդհանուր նկարագրությունը Մասնակիցները քննարկում էին իրենց հետագա քայլերը, մի մասը ցանկանում էր միանալ Էրեբունու ոստիկանական զորամասի մոտ անցկացվող հավաքին, իսկ որոշ մասնակիցներ ցանկանում էին մնալ հրապարակում, արդյունքում տեղի ունեցան բազմաթիվ վիճաբանություններ: Ժամը 20:20-ից մինչև 21:45 հավաքի մասնակիցները փոքր խմբերով տեղափոխվեցին Խորենացի փողոցի արգելափակված հատվածի մոտ:	

2017 թվականի հուլիսի 20	
Հավաքի վայրը, ժամը	*Խորենացի-Քրիստափորի փողոցների խաչմերուկի մոտ (ժամը 19:00-ից)*
Մասնակիցների թիվը	*Մինչև 1000*

Ոստիկանների թիվը	*Առնվազն 500*
Ընդհանուր նկարագրությունը Ժամը 22:00-ի սահմաններում հավաքի մասնակիցների մոտ սկսեցին դժգոհություններ, երբ հայտարարվեց, որ «Սասնա ծռեր» խմբի անդամներին սնունդ չի տրամադրվել: Քաղաքացիների մի մասը դատարկ պլաստմասե շշեր էին նետում ոստիկանների ուղղությամբ, քաշքշում ոստիկանների վահաններից, իսկ ոստիկաններն իրենց վահաններով հարվածում էին հավաքի մասնակիցներին: Շուտով հավաքի որոշ մասնակիցներ ոստիկանների ուղղությամբ նետեցին քարեր, որից հետո ոստիկանությունը սկսեց հավաքի մասնակիցների նկատմամբ կիրառել հատուկ միջոցներ՝ լուսաձայնային նռնակներ, արցունքաբեր գազ: Բազմաթիվ հավաքի մասնակիցներ, ինչպես նաև ոստիկաններ ստացան մարմնական վնասվածքներ: Ժամը 22:30-ի սահմաններում քաղաքացիները կրկին վերադարձան Խորենացի փողոցի նախկին հատվածը, Տիգրան Մեծ-Քրիստափորի փողոցների խաչմերուկը փակեցին աղբապարկերով, աղբամաններով և տարածքում գտնվող նստարաններով: Իրավիճակը մնաց հարաբերականորեն խաղաղ մինչև 2016թվականի հուլիսի 20-ի հուլիսի 21-ի գիշերը ժամը 04:00-ը, երբ ոստիկանության աշխատակիցները, հայտարարելով, որ հավաքն անօրինական է, դադարեցրեցին հավաքը՝ բերման ենթարկելով հավաքի մի քանի տասնյակ մասնակիցների:	

2017 թվականի հուլիսի 21	
Հավաքի վայրը, ժամը	*Խորենացի-Քրիստափորի փողոցների խաչմերուկի մոտ (ժամը 18:00-ից)*
Մասնակիցների թիվը	*Հավաքի սկզբում՝ մոտ 200, ավարտին՝ մոտ 1200*
Ոստիկանների թիվը	*Առնվազն 250*
Ընդհանուր նկարագրությունը Հավաքն ընդհանուր առմամբ խաղաղ էր, տեղի ունեցան քննարկումներ, ելույթներ: Ոստիկանության կողմից էական միջամտություններ չեն եղել:	

2017 թվականի հուլիսի 22	
Հավաքի վայրը, ժամը	*Խորենացի-Քրիստափորի փողոցների խաչմերուկի մոտ (ժամը 19:00-ից)*
Մասնակիցների թիվը	*Մոտ 1500*
Ոստիկանների թիվը	*Առնվազն 120-150*
Ընդհանուր նկարագրությունը Հավաքն ընդհանուր առմամբ խաղաղ էր, տեղի ունեցան քննարկումներ, ելույթներ: Ոստիկանության կողմից էական միջմտություններ չեն եղել:	

2017 թվականի հուլիսի 23	
Հավաքի վայրը, ժամը	*Խորենացի-Քրիստափորի փողոցների խաչմերուկի մոտ (ժամը 20:00-ից)*
Մասնակիցների թիվը	*1800-ից մինչև 2000*
Ոստիկանների թիվը	*Մինչև 100 ոստիկան*
Ընդհանուր նկարագրությունը Հավաքն ընդհանուր առմամբ խաղաղ էր, տեղի ունեցան քննարկումներ, ելույթներ: Ոստիկանության կողմից էական միջմտություններ չեն եղել:	

2017 թվականի հուլիսի 24	
Հավաքի վայրը, ժամը	*Խորենացի-Քրիստափորի փողոցների խաչմերուկի մոտ (ժամը 20:00-ից):*
Մասնակիցների թիվը	*1500-ից մինչև 1600*
Ոստիկանների թիվը	*Մինչև 400*
Ընդհանուր նկարագրությունը Հավաքն ընդհանուր առմամբ խաղաղ էր, տեղի են ունեցել ելույթներ, որոշ հավաքի	

մասնակիցների միջև՝ վիճաբանություններ: Ժամը 20:00-ին ճանապարհային ոստիկանության երկու մեքենա փակեցին Խորենացի փողոցի արգելափակված հատված տանող ճանապարհը՝ արգելելով մեքենաների մուտքը: Ոստիկանության կողմից այլ միջմտություններ չեն եղել:

2017 թվականի հուլիսի 25	
Հավաքի վայրը, ժամը	*Խորենացի-Քրիստափորի փողոցների խաչմերուկի մոտ (ժամը 20:00-ից մինչև 21:30), երթ Նար-Դոսի փողոց – Վարդանանց փողոց - Սախարովի հրապարակ – Նալբանդյան փողոց - Աբովյան փողոց - Տիգրան Մեծի պողոտա - Քրիստափորի փողոց երթուղով (ժամը 21:30-ից մինչև 23:30)*
Մասնակիցների թիվը	*800-ից մինչև 1500*
Ոստիկանների թիվը	*Մինչև 100՝ հավաքի վայրում* *Մինչև 200՝ երթի ժամանակ:*
Ընդհանուր նկարագրությունը Հավաքն ու երթը ընդհանուր առմամբ խաղաղ են եղել: Ոստիկանության կողմից էական միջմտություններ չեն եղել:	

2017 թվականի հուլիսի 26	
Հավաքի վայրը, ժամը	*Խորենացի-Քրիստափորի փողոցների խաչմերուկի մոտ (ժամը 20:00-ից մինչև 22:00), երթ Նար Դոս փողոց - Չարենց փողոց – Նալբանդյան փողոց - Տիգրան Մեծ պողոտա – Խորենացի փողոց երթուղով (ժամը 22:00-ից մինչև 24:00)*
Մասնակիցների թիվը	*3500-ից մինչև 4000*
Ոստիկանների թիվը	*Մինչև 300՝ հավաքի վայրում* *Մինչև 200՝ երթի ժամանակ ոստիկանները:*
Ընդհանուր նկարագրությունը Հավաքն ու երթը ընդհանուր առմամբ խաղաղ են եղել, տեղի են ունեցել քննարկումներ,	

ելույթներ: Ոստիկանությունը հայտարարությամբ էր հանդես եկել՝ առաջարկելով Խորենացի փողոցի հավաքը տեղափոխել մեկ այլ վայր, այլապես այն կդադարեցվի: 2016 թվականի հուլիսի 26-ի լույս 27-ի գիշերը ժամը 01:30-ին ոստիկանությունը բերման ենթարկեց հավաքի մասնակիցներին՝ դադարեցնելով հավաքը:

2017 թվականի հուլիսի 27	
Հավաքի վայրը, ժամը	*Ազատության հրապարակ (ժամը 18:00-ից մինչև 23:00), Խորենացի-Քրիստափորի փողոցների խաչմերուկի մոտ (ժամը 23:00-ից):*
Մասնակիցների թիվը	*Մինչև 3000*
Ոստիկանների թիվը	*Տարբեր ժամերին 400-ից մինչև 800 ոստիկան*
Ընդհանուր նկարագրությունը Առավոտյան ոստիկանությունը հայտարարեց, որ Խորենացու փողոցի արգելափակված հատվածում արգելվում է հավաք անցկացնել և օրվա ողջ ընթացքում բերման ենթարկեց հավաքի ենթադրյալ մասնակիցներին ինչպես Խորենացի փողոցի արգելափակված հատվածից, այնպես էլ հարակից տարածքներից: Ժամը 23:00-ին Ազատության հրապարակում տեղի ունեցած հավաքի մասնակիցները երթով տեղափոխվեցին Խորենացի-Քրիստափորի փողոցների խաչմերուկի մոտ: Ժամը 01:30-ին (հուլիսի 28) հավաքն ավարտվեց:	

2017 թվականի հուլիսի 28	
Հավաքի վայրը, ժամը	*Ազատության հրապարակ և Ֆրանսիայի հրապարակ (ժամը 19:00-ից մինչև 23:30)*
Մասնակիցների թիվը	*Հավաքի սկզբում՝ 100 մարդ, ժամը 20:00-ին՝ 1500-2000 մարդ*
Ոստիկանների թիվը	*Մոտ 200* *19 ոստիկանական մեքենաներ*
Ընդհանուր նկարագրությունը	

Հավաքը ընդհանուր առմամբ խաղաղ են եղել: Ժամը 20:00-ին հավաքի մասնակիցները ցանկացած երթ անցկացնել: Ոստիկանությունը փորձեց կանգնեցնել երթը, սակայն հավաքի մասնակիցներին հաջողվեց դուրս գալ Ֆրանսիայի հրապարակ, որտեղ նրանք 2 ժամ տևողությամբ նստացույց անցկացրեցին, այնուհետև վերադարձան Ազատության հրապարակ:

2017 թվականի հուլիսի 29	
Հավաքի վայրը, ժամը	*Ազատության հրապարակ (ժամը 18:30-ից մինչև 20:40), երթ Թումանյան փողոց – Աբովյան փողոց – Պուշկին փողոց – Վարդանանց փողոց - Սարի թաղ երթուղով (ժամը 20:40-ից մինչև ժամը 21:20), Սարի թաղ (ժամը 21:20-ից):*
Մասնակիցների թիվը	*Հավաքի սկզբին՝ մոտ 30 (Ազատության հրապարակում),* *21:30-ին՝ մոտ 3000, ժամը 21:30-ին՝ մոտ 700:*
Ոստիկանների թիվը	*Ազատության հրապարակում՝ մոտ 200 ոստիկան* *27 ոստիկանական մեքենաներ,* *Երթի ընթացքում՝ 100-120 ոստիկան,* *Սարի թաղում՝ մոտ 400*

Ընդհանուր նկարագրությունը

Ազատության հրապարակից մեկնարկած երթի մասնակիցների մի մասը, մոտենալով Նար-Դոս և Խորենացի փողոցների խաչմերուկին, անակնկալ կերպով թեքվեցին դեպի Սարի թաղ և մոտեցան այն հատվածին, որտեղից երևում է ՊՊԾ գնդի տարածքը (երթի մասնակիցների մյուս մասը գնաց դեպի Խորենացի փողոցի արգելափակված հատվածը): Ոստիկանության ներկայացուցիչները, որոնց թվում էր փոխոստիկանապետ Լևոն Երանոսյանը, մասնակիցներից պահանջեցին հեռանալ տարածքից՝ դրա համար տալով 5 րոպե ժամանակ:

Երթի մասնակիցների միջից մի խումբ անձինք սկսեցին քարեր նետել ոստիկանության ծառայողների ուղղությամբ, այնուհետև անցան ոստիկանների շարքերով և միացան նրանց: Անմիջապես ոստիկանները հավաքի մասնակիցների ուղղությամբ նետեցին լուսաձայնային նռնակներ, արցունքաբեր գազ, քարեր և սկսեցին հետապնդումը: Նրանց միացան համազգեստ չկրող ոստիկանները, որոնք զինված էին մետաղյա ձողերով և մահակներով: Նշված անձինք ծեծի ենթարկեցին բազմաթիվ հավաքի մասնակիցների, հայ և օտարերկրյա

լրագրողների, կոտրեցին նրանց տեսախցիկները: Փոխոստիկանապետ Լ. Երանոսյանը ուժեղացնում էր լարվածությունը ոստիկանների և հավաքի մասնակիցների միջև, հնչեցնելով հայհոյանքներ, և բացականչում՝ «սրանց պետք է սատկացնենք»: Հավաքի մասնակիցների մի մասը դիմեց փախուստի, շատերը բերման ենթարկվեցին կամ տեղափոխվեցին բժշկական հաստատություններ: Նշված գործողություններին զուգահեռ ոստիկանությունը սպառազինության հատուկ միջոցներ կիրառեց նաև Խորենացի փողոցի արգելափակված հատվածում՝ բերման ենթարկելով բազմաթիվ մասնակիցներին:

2017 թվականի հուլիսի 29	
Հավաքի վայրը, ժամը	*Ք. Գյումրի, Թատերական հրապարակ (ժամը 18:00 –ից մինչև 21:00)*
Մասնակիցների թիվը	*100-ից մինչև 150*
Ոստիկանների թիվը	*Մոտ 10*
Ընդհանուր նկարագրությունը Հավաքի վայրում գտնվող անհայտ անձինք սկսեցին հայհոյել, վիրավորել հավաքի մասնակիցներին և նրանց հետ մտան վիճաբանության մեջ: Վիճաբանության ընթացքում բռնության ենթարկվեցին հավաքի վայրում գտնվող լրագրողներ: Հավաքի մասնակիցները զանգահարեցին ոստիկանություն, սակայն 1 02 հեռախոսահամարով զանգերին ոստիկանությունը չպատասխանեց: Հավաքի մասնակիցները փակեցին Սայաթ-Նովա փողոցի երթևեկությունը: Անմիջապես հավաքի վայրում հայտնվեցին ոստիկաններ և հավաքի մասնակիցներին ուժի գործադրմամբ տեղափոխեցին փողոցի ոչ երթևեկելի հատվածներ և մասնակիցներից շատերին բերման ենթարկեցին:	

2017 թվականի հուլիսի 30	
Հավաքի վայրը, ժամը	*Ազատության հրապարակ (ժամը 18:00-ից մինչև 19:00), երթ Մաշտոցի պողոտա – Ամիրյան փողոց – Հանրապետության հրապարակ – Նալբանդյան փողոց - Սայաթ-Նովա պողոտա - Բաղրամյան պողոտա երթուղով (ժամը 19:00-ից մինչև ժամը 00:30)*
Մասնակիցների թիվը	*Մինչև 8000 մասնակից*

Ոստիկանների թիվը	*Մինչև 400 ոստիկան* *32 ոստիկանական մեքենաներ*
Ընդհանուր նկարագրությունը Հավաքն ու երթը ընդհանուր առմամբ խաղաղ են եղել: Բաղրամյան պողոտայում երթը կանգնեցվեց ոստիկանության կողմից՝ փշալարային պատնեշով: Ժամը 23:20-ին հավաքի մասնակիցներից մեկը ինքնահրկիզում կատարեց, այնուհետև տեղափոխվեց բժշկական հաստատություն: Ոստիկանությունը հավաքի մասնակիցներից պահանջեց հավաքը տեղափոխել այլ վայր, հայտարարելով, որ պահանջը չկատարելու դեպքում հավաքը կդադարեցվի: Հավաքի մասնակիցները մինչև 2016 թվականի հուլիսի 31-ը 00:30 վերադարձան Ազատության հրապարակ:	

2017 թվականի օգոստոսի 1	
Հավաքի վայրը, ժամը	*Ազատության հրապարակ (ժամը 13:00-ից մինչև 21:30), երթ Սայաթ-Նովա պողոտա – Աբովյան փողոց - Հանրապետության հրապարակ - Տիգրան Մեծի պողոտա – Խանջյան փողոց - Արշակունյաց պողոտա երթուղով (ժամը 21:30-ից մինչև 23:30):*
Մասնակիցների թիվը	*Հավաքի սկզբում՝ մոտ 100, ժամը 20:00-ին՝ 500-700*
Ոստիկանների թիվը	*Մոտ 100* *9 ոստիկանական մեքենաներ*
Ընդհանուր նկարագրությունը Հավաքն ու երթը ընդհանուր առմամբ խաղաղ են եղել: ՀՀ ԱՆ Դատապարտյալների հիվանդանոցի մոտ ոստիկանները շղթա կազմելով թույլ չտվեցին հավաքի մասնակիցներին մոտենալ շինությանը: Որոշ ժամանակ անց հավաքի մասնակիցները վերադարձան Ազատության հրապարակ:	

2017 թվականի օգոստոսի 3	
Հավաքի վայրը, ժամը	*Ազատության հրապարակ (ժամը 20:00-ից մինչև 21:30), երթ Թումանյան փողոց – Աբովյան փողոց - Հանրապետության հրապարակ – Ամիրյան փողոց – Մաշտոցի պողոտա – Բաղրամյան պողոտա երթուղով (ժամը*

	21:30-ից մինչև ժամը 22:40)
Մասնակիցների թիվը	*Հավաքի ընթացքում՝ մոտ 700, երթի ընթացքում՝100-ից մինչև 1200*
Ոստիկանների թիվը	*Մոտ 150* *6 ոստիկանական մեքենաներ*

Ընդհանուր նկարագրությունը

Հավաքն ու երթը ընդհանուր առմամբ խաղաղ են եղել: Երբ երթի մասնակիցները մոտեցան Բաղրամյան պողոտային, ոստիկանության ներկայացուցիչը պահանջեց երթը շարունակել պողոտայի ձախ մայթով (Ազգային ժողովի մայթ) Բաղրամյան մետրոյի կայարանի մոտ երթի մասնակիցները կանգ առան, տեղի ունեցավ ելույթ, որից հետո հավաքն ավարտվեց:

2017 թվականի օգոստոսի 4	
Հավաքի վայրը, ժամը	*Ազատության հրապարակ (ժամը 18:50-ից մինչև 21:30), երթ Հյուսիսային պողոտա - Աբովյան փողոց - Հանրապետության հրապարակ - Ամիրյան փողոց - Մաշտոցի պողոտա երթուղով (ժամը 21:30-ից մինչև ժամը 23:00)*
Մասնակիցների թիվը	*Հավաքի ընթացքում՝ մոտ 300,* *Երթի ընթացքում՝մինչև 500*
Ոստիկանների թիվը	*Մոտ 50*

Ընդհանուր նկարագրությունը

Հավաքի ավարտից քիչ անց, «Ազատություն ռադիոկայան» լրատվամիջոցի հաղորդմամբ, ոստիկանության հատուկ գումարտակի ծառայողները Ազատության հրապարակից սկսեցին բերման ենթարկել դեռևս այնտեղ գտնվող հավաքի մասնակիցներին: Ոստիկանությունը երկու անգամ փորձեց բերման ենթարկել «Հայկական ժամանակ» լրատվամիջոցի աշխատակցին, իսկ բերման ենթարկված անձանցից ոմանք հայտարարեցին, որ չեն հանդիսանում հավաքի մասնակիցներ:

2016 Թ. ՀՈՒԼԻՍԻ 17-30-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒԺԻ և ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

Պատրաստել է «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ն

Ծանոթություն

Սույն բաժնում ներկայացնում է 2016 թ. հուլիսի 17-30-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում ոստիկանության կողմից կիրառված ուժի և հատուկ միջոցների օգտագործման պրակտիկան, և գնահատում է դրանց իրավաչափությունն ու համաչափությունը մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշներին համապատասխան:

Այն ներկայացնում է նաև հատուկ միջոցների և ուժի կիրառման ներպետական օրենսդրական կարգավորումները, դրա հարաբերակցությունը միջազգային ստանդարտների հետ:

ՀՀ ոստիկանության և ոստիկանության զորքերի կողմից 2016 թվականի հուլիսի 20-ին և 29-ին կիրառված հատուկ միջոցների իրավաչափությունը և համաչափությունը

2016 թվականի հուլիսի 20-ին Խորենացի փողոցում և հուլիսի 29-ին Սարի Թաղ թաղամասում, ինչպես նաև նույն օրը՝ 2016 թվականի հուլիսի 29-ին Խորենացի փողոցում ոստիկանության կողմից հավաքի մասնակից քաղաքացիների նկատմամբ կիրառվել են հատուկ միջոցներ, որոնց ազդեցության արդյունքում մեծ թվով քաղաքացիներ ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ, ներառյալ լսողության վատթարացում և աչքի կորուստ, բեկորային վնասվածքներ, տարբեր աստիճանի այրվածքներ և այլն:

ՀՀ ոստիկանության կողմից կիրառված հատուկ միջոցների կիրառման համար փաստական հիմք է հանդիսացել ոստիկանության զորքերի մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետում նշված իրավիճակը, ըստ որի ոստիկանության զորքերի զինծառայողն անձամբ կամ ստորաբաժանման կազմում հատուկ միջոցներ գործադրելու իրավունք ունի «տրանսպորտի, կապի հիմնարկների, կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) աշխատանքները

խանգարող, ինչպես նաև զանգվածային անկարգությունները և խմբակային գործողությունները խափանելիս»[39]:
ՄԱԿ-ի «Իրավապահ մարմինների կողմից ուժի և հրազենի կիրառման հիմնարար սկզբունքներ»-ի 13-րդ կետով ամրագրված է, որ անօրինական, սակայն խաղաղ հավաքները ցրելու դեպքում իրավապահ մարմինները պետք է խուսափեն ուժի կիրառումից, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա պետք է ուժի կիրառումը լինի առավելագույնս նվազ և համապատասխանի անհրաժեշտությանը:
«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է հատուկ միջոցներ գործադրել «… խաղաղ առանց զենքի և օրենքով սահմանված կարգի խախտմամբ անցկացվող հավաքները և հանրայիին միջոցառումները դադարեցնելու ժամանակ…»: Ավելին, ՀՀ ոստիկանության զորքերի մասին ՀՀ օրենքով արգելվում է խաղաղ, առանց զենքի հավաքները կամ հանրային միջոցառումները կանխելու նպատակով ոստիկանության զորքերի միջամտությունը[40]:
ՀՀ ներպետական օրենսդրությունը սահմանում է, որ ոստիկանության, ինչպես նաև ոստիկանության զորքերի հարկադրական բնույթի լիազորությունների իրականացումը պետք է ուղղված լինի ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակներին, իսկ դրանց հասնելու միջոցները պետք է լինեն օրինական, անհրաժեշտ և չափավոր[41]*:*

Փաստացի, ՀՀ օրենսդրությունը պարզորոշ և հստակորեն ամրագրում է, որ նույնիսկ այն դեպքերում, երբ հավաքն անց է կացվում օրենքով սահմանված կարգի խախտմամբ, սակայն խաղաղ է, անզեն, ապա հատուկ միջոցների գործադրումն արգելվում է:

Ավելին, նույնիսկ այն դեպքերում, երբ հավաքը խաղաղ չէ հատուկ միջոցների կիրառումը պետք է լինի համաչափ հետապնդվող նպատակին: Մասնավորապես, ցանկացած դեպքում կոնկրետ անձի նկատմամբ կիրառված հատուկ միջոցը պետք է պայմանավորված լինի կոնկրետ անձի վարքագծով[42]: Այսինքն՝ ոստիկանության ներկայացուցիչները պետք է տարբերակեն խաղաղ և ոչ խաղաղ ցուցարարներին՝ բացառելու անկարգությունների մեջ չներգրավված

[39]«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ հարցմանը ՀՀ ոստիկանության պատասխան՝ 2017 թվական մարտի 14-ի, թիվ 582 գրություն:
[40] Ոստիկանության զորքերի մասին ՀՀ օրենք, հոդված 14, մաս 3:
[41] Ոստիկանության մասին ՀՀ օրենք, հոդված 3, հոդված 4, մաս 3:
[42] Abdullah Yaşa and Others v. Turkey, No 44827/08, 16.07.2013

անձանց նկատմամբ ուժի կամ հատուկ միջոցների կիրառման հնարավորությունը[43]:

ՀՀ Ոստիկանության պետի կողմից ընդունված «Հասարակական կարգի պահպանության մեջ ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, զանգվածային անկարգությունների ժամանակ նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման ուղեցույցի» (հետայսու տեքստում Ուղեցույց)[44] համաձայն՝ գործադրվող ուժի համաչափությունը՝ ոստիկանության կողմից ուժային միջամտությունը (արձագանքը) պետք է առավելագույնս համարժեք և համաչափ լինի ստեղծված իրադրությանը և առկա վտանգին՝ ապահովելով հասցվող վնասի նվազագույն աստիճան:

2016 թվականի հուլիսի 20-ին հատուկ միջոցների կիրառման արդյունքում տուժած քաղաքացիների վկայություններ

«2016 թվականի հուլիսի 20-ին Խորենացի փողոց էի գնացել, որ միանայի որդուս ու իր ընկերոջը, ով մասնակցում էր հավաքին: Ժամը 9:30 էր, կանգնել էին ծառի տակ՝ ոստիկաններից մոտ 35-40 մետր հեռավորության վրա, իսկ ընդհանուր առմամբ ոստիկանական պատնեշի ու հավաքին մասնակցող մարդկանց միջև հեռավորությունը մոտ 20 մետր էր: Ժամը 21:45-ին մի ոստիկանության ներկայացուցիչը մոտեցավ հավաքի մասնակիցների մի խմբի և առանց դիմելու հանրությանը և առանց բարձրախոսի ասաց, որ հավաքի մասնակիցների կողմից քար է նետվել ոստիկանության ուղղությամբ, ու պահանջեց, որ դադարեցվի նման վարքագիծը. հակառակ դեպքում որոշակի միջոցներ կձեռնարկվեն: Դրա արդյունքում աճեց ցուցարարների բարկությունը, քանի որ վերջիններս պնդեցին, որ քար չի նետվել: Այդ ժամանակ ցուցարարների թիվը հասել էր մոտ 2000 մասնակցի, ոստիկաններն էլ էին շատացել: Մոտ 2 րոպե անց, առանց նախապես զգուշացնելու, ոստիկանները սկսեցին նռնակներ նետել, ու դրանք նետվում էին խաղաղ ցուցարարների ուղղությամբ, ովքեր գտնվում էինք 35-40 մետր հեռավորության վրա, որտեղ և մենք էինք գտնվում՝ ծառի տակ նստած: Լսեցինք աղմուկ, նկատեցինք՝ խառնաշփոթ սկսվեց: Առաջին նռնակն ընկել էր մեզնից 3 մետր հեռավորության վրա. տղաս գլխի բեկորային վնասվածք էր ստացել, վերքից արյուն էր հոսում: 2-3 քայլ արեցինք, դեպի Տիգրան Մեծ պողոտա, բայց 2–րդ նռնակն ընկավ ուղիղ մեր ոտքերի տակ: Իմ վերնաշապիկն ամբողջությամբ այրվել էր, ոտքերս վնասվել էին: Ինձ հավաքի մասնակիցներն օգնեցին գնալ այդ տեղից: Ծխի

[43] Abdullah Yaşa and Others v. Turkey, No 44827/08, 16.07.2013, կետ 50:

[44] ՀՀ Ոստիկանություն, ՀՀ Ոստիկանության պետի թիվ 2760 -Ա հրամանի հավելված՝ «Հասարակական կարգի պահպանության մեջ ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, զանգվածային անկարգությունների ժամանակ նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման ուղեցույց» , ընդունված՝ Հոկտեմբերի 11, 2011թ. http://www.police.am/images/Uxecuyc-N2-arm.pdf.pdf

պատճառով վատ էի շնչում: Ես և հավաքի մյուս մասնակիցները օգնություն էինք կանչում, բայց ոստիկանները չօգնեցին: Հիվանդանոց ենք տեղափոխվել պատահական մեքենայով, որի վարորդը տեսել էր, որ վիրավորված ենք: Վիրահատություն եմ տարել, ոտքերիս վրա 2-րդ կարգի այրվածքներ եմ ստացել ու 20 օր հիվանդանոցում եմ անց կացրել: Բավականին երկար ժամանակ չեմ կարողացել նորմալ քայլել, ցավեր եմ ունեցել հատկապես ցուրտ եղանակին, իսկ ծանր հոգեկան ապրումներից մազերս էին թափվում»:

Հ.Բ.

«Մայրիկիս և ընկերոջս հետ ծառի տակ կանգնած էինք Խորենացի փողոցում, ոստիկաններից մոտ 35-40 մետր հեռավորության վրա: Առաջին նռնան ընկավ իմ հետևում՝ 3 մետր հեռավորության վրա: Փորձեցի փախչել այդ տեղից, սական գլխիս աջ հատվածին բեկորային վնասվածք ստացա, արնահոսում էի: Երբ փորձեցի քայլելել դեպքի Տիգրան Մեծի պողոտա մեկ այլ նռնակ ընկավ ուղիղ ոտքերիս վրա: Տաբատս և ոտքերս այրվել էին, բութ մատս՝ կոտրվել: Քայլել չէի կարող, ընկերներիս վրա էի հենվել ու այդ կերպ փորձում շարժվել: Մեկ այլ նռնակ պայթեց Տիգրան Մեծ պողոտային մոտենալուց՝ ծխից չէի կարողանում նորմալ շնչել: Հիվանդանոց եմ տեղափոխվել պատահական մեքենայով: Հիվանդանոցում վիրահատություն եմ տարել, մոտ 25 օր մնացել եմ հիվանդանոցում: 3-րդ աստիճանի այրվածքներ եմ ստացել, 5 սմ գերազանցող 2 բեկոր է դուրս բերվել մարմնիցս և 73 այլ չափսի բեկորներ: Ցուրտ եղանակին ոտքերս կապտում են, քայլելիս դեռ ցավեր ունեմ, խորը սպիներ են մնացել»:

Մ.Ա.

«Լուսաձայնային նռնակների պայթյուններից ստացել եմ մարմնական վնասվածքներ, մասնավորապես՝ երկու ոտքերիս ստորին հատվածներում բեկորային վնասվածքներ, ձախ ազդրի, սրունքների և ոստնաթաթերի շրջանների սալջարդ վերքեր, ոտնաթաթերի և ձախ արմնկահոդի շրջանների 1-2-րդ աստիճանի ջերմային այրվածքներ և առաջին աստիճանի այրվածքային շոկ: Ասեմ նաև, որ պայթյունից հետո լսողության հետ խնդիրներ եմ ունեցել մի որոշ ժամանակ: Վնասվածքներս պատճառվել են՝ պայթյունից առաջացած բեկորներից և բարձր ջերմաստիճանի բոցից:

Ա.Ս.

«Ցույցին մասնակցելու ժամանակ տեղի է ունեցել պայթյուն, որի բեկորները վնասել են ինձ: Պայթյունից առաջացած բեկորներից մեջքի հատվածում, ձախ ազդրի և աջ սրունքի քերծվածքներ եմ ստացել: Ձախ ազդրի հետին-դրսային հատվածում ունեմ 1.2սմ երկարությամբ կարված վերք՝ շուրջն արյունազեղումներ»:

Ա.Ս. (անվան և ազգանվան սկզբնատառերը համընկնում են նախորդ տուժողի հետ, սակայն վերջիններս տարբեր անձինք են)

2016 թվականի հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը հատուկ միջոցների կիրառման արդյունքում տուժած քաղաքացիների վկայություններ:

Գնացել էի Ազատության հրապարակ, այնտեղից շարժվեցինք Խորենացի փողոց, հետո էլ չգիտեմ, թե ինչի, թեքվեցինք Սարի Թաղ: Հավաքի վայրում ոստիկաններ չկային, իրանք ավելի ներքև էին՝ ՊՊԾ գնդի ճանապարհին էին փակած պահում: Մի 20 րոպեից ուստիկաններ ժամանեցին ու տեղակայվեցին հավաքից մոտ 20 մետր հեռավորության վրա: Լևոն Բարսեղյանն ու Արմեն Մարտիրոսյանն էին բանակցում ոստիկանների հետ, բայց բան չէր լսվում. իրենք մի 20 մետր հեռավորության վրա էին: Այդ ընթացքում էլ ես հորդորում էի մարդկանց պրովոկացիաներին չենթարկվել ու հանգիստ կանգնել: Մի քանի վայրկյան անց իմ առաջ նռնակներ ընկան, որոնցից լուրջ վնասվածքներ ստացա: Մի ծառի տակ ընկա, արյան մեջ էի, գլխի վնասվածք էի ստացել, կանգնել չէի կարող, գիտակցությունս էի կորցնում: Մյուսները փախնում էին, ոստիկաններն էլ իրանց հետևից էին վազում ու կողքովս անցնում ու ուշադրություն չէին դարձնում իմ վրա: Մի որոշ ժամանակ, չգիտեմ՝ ինչքան, այդ վիճակում էի գտնվում, հետո մարդիկ մոտեցան, փորձեցին շտապ օգնություն կանչել, բայց փողոցները փակ էին, շտապ օգնությունը չէր կարող մոտենալ Սարի Թաղի մոտակայք: Մի պատահական ոստիկանության մեքենա ինձ տարավ Էրեբունի թաղամաս ու թողեց փողոցում: Գլխիս վնասվածքից արյուն էր գալիս, ու մոտ 20 րոպե մնացել եմ որտեղ իջացրեցին. շարժվել չէի կարող: Հետո մարդիկ հավաքվեցին կողքերս, շտապ օգնություն կանչեցին, մեքենան եկավ, հիվանդանոց տարավ»:

Խ.Պ.

«Սարի Թաղի բնակիչ եմ: Երբ իմացա, որ մարդիկ Սարի Թաղում հավաքվել են, որոշեցի միանալ իրենց: Երբ հասա հավաքին, մի 8-10 րոպե անց՝ ժամը 21:45-ին, առանց զգուշացնելու, ոստիկանությունն սկսեց հատուկ միջոցներ կիրառել: Մարդիկ սկսեցին փախչել, ես էլ վազեցի, բայց մի աղջկա նկատեցի, ով շոկի մեջ էր, փորձեցի օգնել իրեն ու հենց այդ պահին ուղիղ ոտքերիս տակ վառվող պայթուցիկ տեսա: Բրդեցի աղջկան հետ, պայթուցիկն էլ իմ ոտքերի տակ պայթեց: Բան չէի տեսնում մի որոշ ժամանակ. երևի մի 40-50 վայրկյան, ծուխ էր, գլխումս շատ բարձր աղմուկ էր: Երբ տեսողությունս վերականգնվեց, տեսա, որ ոտքերս արյան մեջ են ամբողջությամբ, գլխումս էլ աղմուկը չէր անցնում: Մի մարդ մոտեցավ ինձ, օգնեց քայլել: Մի քանի մետր փորձել եմ վազել, բայց հետո նույնիսկ քայլել չկարողացա, ինձ մարդիկ սկսեցին տանել: Մի տուն տարան, հիմա չեմ հիշում՝ որ տունն էր, ինձ օգնեցին այնտեղ. բնակիչներից մեկը բուժքույր էր. առաջին բուժօգնություն ցույց տվեց: Բայց մեկ ա՝ վատ էի զգում, ու գնալով ավելի էր վիճակս վատանում: Տան բնակիչներն էլ վախենում էին շտապ

օգնություն կանչել, որովհետև ոստիկանությունը հետապնդում էր փախչող հանրահավաքի մասնակիցներին և հետևում էին շտապ օգնության մեքենաներին: Ես էլ շատ վատ էի, ինքս չէի կարող տեղաշարժվել: Ժամը գիշերվա 3:30 նոր շտապ օգնություն կանչեցին. տարան հիվանդանոց: Լուրջ վնասվածքներ էի ստացել՝ սրունքների հատվածում 1-2 կարգի այրվածքներ, բազմաթիվ վերքեր սրունքների հատվածում»:

Գ.Մ.

«Խորենացի փողոցում կանգնած էի, ոստիկանների կողմից նետված պայթուցիկներից մեկը դիպել է ձախ ծնկահոդիս, որը վիրավորել է նաև աջ սրունքը, իսկ պայթյունից առաջացած բոցից այրվել են քիթս և դեմքս, ականջներումս խշշոց եմ զգացել: Ազդրերիս վրա քերծվածքներ ունեմ, աջ սրունքի և ձախ ծնկահոդի սալջարդ վերքեր, ջերմային այրվածքներ՝ պատճառված բեկորներով և բոցով: Բժիշկները վերքերիցս հանել են սև գույնի ոչ մետաղական բեկորներ: Առողջությանս, ըստ հետազոտության, պատճառվել է թեթև վնաս, առողջության կարճատև քայքայումով՝ 6-21 օր տևողությամբ»:

Վ.Ա.

«2016թ.-ի հուլիսի 27-ին, ժամը 22.00-ի սահմաններում, Սարի թաղում, կանգնած էի ցույցի տեղում, հանկարծակի պայթյուններ են սկսվել, մի քանի պայթուցիկ ընկել է անմիջապես իմ կողքը, նաև կպել են իմ գլխին, ընկել եմ, հետո մի քանի հոգի ինձ տարան մի տան բակ, որտեղ էլի շարունակվել են պայթյունները, սկսել եմ ինձ վատ զգալ, ծոծրակային մասում ուժեղ ցավեր եմ ունեցել: Շտապօգնության կողմից տեղափոխվել եմ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» հիվանդանոց: Ծոծրակիս աջ կողմում քերծվածք եմ ստացել, սալջարդ»:

Ա.Ա.

«2016թ.-ի հուլիսի 29-ին երեկոյան միամիտ մտել եմ Սարի Թաղում հավաքված բազմության մեջ, հանկարծ լսել եմ կրակոցի, պայթյունի ձայներ, վնասվածքներ եմ ստացել, վայր ընկել, որից հետո շտապօգնության կողմից տեղափոխվել եմ հիվանդանոց: Պայթյունների բեկորներից վնասվածքներ եմ ստացել: Դեմքիս վերի մասում ու ոտքերիս վրա քերծվածքներ ունեի, արյունազեղումներ, վերքերի ձևով սալջարդեր առաջացրել են առողջության թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով»:

Զ.Հ.

«Վնասվածքներ ունեմ հետույքային մասում, ոտքերիս մասում բեկորային վնասվածքներ եմ ստացել պայթյունից: Առողջությանս թեթև վնաս է ատճառվել՝ առողջության կարճատև քայքայումով»:

Ա.Ե.

Փաստացի, 2016 թվականի հուլիսի 20-ին Խորենացի փողոցում և հուլիսի 29-ին Սարի Թաղ թաղամասում, ինչպես նաև նույն օրը՝ 2016 թվականի հուլիսի 29-ին Խորենացի փողոցում ոստիկանության կողմից հավաքի մասնակից քաղաքացիների նկատմամբ կիրառվել են հատուկ միջոցներ, որոնց ազդեցության արդյունքում մեծ թվով քաղաքացիներ ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ, ներառյալ լսողության վատթարացում և աչքի կորուստ, բեկորային վնասվածքներ, տարբեր աստիճանի այրվածքներ և այլն:

Հատուկ միջոցների կիրառումը լուրջ մտահոգություններ է առաջացնում օրինականության, անհրաժեշտության և համաչափության տեսանկյունից: Ինչպես վկայում են ականատասների և հավաքի մասնակիցների հաղորդած տեղեկությունները, ինչպես նաև ուղիղ հեռարձակում ապահովող լրատվամիջոցների տեսանյութերը, նշված օրերին տեղի ունեցող հավաքները եղել են խաղաղ, և բացառություն են կազմել առանձին անձանց կամ խմբերի կողմից բռնություն կամ բռնության կոչերը[45], իսկ ոստիկանության ներկայացուցիչների նկատմամբ արձանագրված առանձին բռնի գործողությունները կամ բռնության կոչերը չեն կարող ողջ հավաքը որակել որպես ոչ խաղաղ՝ դրանից բխող հետևանքներով[46]: Հավաքի կազմակերպիչների կողմից պարբերաբար հայտարարություն է տարածվել, որ հավաքը խաղաղ է և կոչ է արվել հավաքի մասնակիցներին որևէ բռնի գործողություն չկիրառել, չտրվել սադրանքներին: Հավաքի կազմակերպիչները, ինչպես նաև հավաքի առանձին մասնակիցներ պարբերաբար դիմել են ոստիկանության ծառայողներին՝ պահանջելով հեռացնել հավաքի վայրում գտնվող սադրիչներին և անկարգություններ իրականացնողներին: Այնուամենայանիվ, նման դիմումների առնչությամբ ոստիկանությունը որևէ գործողություն չի իրականացրել:

2016 թվականի հուլիսի 20-ին տեղեկություններ են տարածվել այն մասին, որ ՊՊԾ գունդը գրված խմբի սնունդը վերջացել է, և նրանց սննունդ չի տրամադրվում: Այս նպատակով քաղաքացիները հավաքվել են Խորենացի

[45] Առավել մանրամասն տես սույն զեկույցի 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի ԴԵՊՔԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ և ՀԱՋՈՐԴՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ բաժնում

[46] Primov and Others v. Russia, No 17391/06, 12.06.2014, § 155

փողոցում, որտեղ տեղի է ունեցել հանրային քննարկում: Հանրային քննարկման ժամանակ խաղաղ հավաքի մասնակիցները կազմել են «ժողովրդի պահանջի հռչակագիր», որտեղ ներկայացված կետերի մեջ նշել են նաև, պետք է բացառվի արյունահեղությունը: Պահանջ է ներկայացվել նաև, որպեսզի ոստիկանությունը թույլատրի ժողովրդի վստահված անձին սնունդ տեղափոխել ՊՊԾ գունդը գրաված խմբին[47]:

2016 թվականի հուլիսի 20-ին ժամը 21:45-ի սահմաններում հավաքի մասնակիցներին է մոտեցել ոստիկանության ներկայացուցիչը, և առանց պատասխանելու նրանց կողմից խմբին հաց փոխանցելու պահանջին, հայտարարել է, որ հավաքի մասնակիցների կողմից քարեր են նետվել դեպի ոստիկանության պատնեշը: Հավաքի մասնակիցներին այս հայտարարությունը զայրացրել է, քանի որ նրանք ոստիկանության ուղղությամբ քարեր չեն նետել: Այնուհետև, հավաքի առաջին շարքում գտնվող մասնակիցները հարձակվել են ոստիկանության վրա, փորձել խլել վահանները, ձեռքերով, ոտքերով, նաև քարերով հարվածել նրանց. Մոտ 2-3 րոպե անց, առանց պատշաճ նախազգուշացնելու, ոստիկանությունը սկսել է հատուկ միջոցներ կիրառել[48]:

2016թ. հուլիսի 20-ին ոստիկանությունը կոնկրետ բռնության վարքագիծ դրսևորող անձանց մեկուսացնելու փոխարեն, առանց որևէ նախազգուշացման սկսել է հատուկ միջոցներ կիրառել ոչ թե ոստիկանության ներկայացուցիչների հետ ընդհարման մեջ մտած անձանց դեմ, այլ ոստիկանության պատնեշից 35-40 մետր հեռավորության վրա գտնվող հավաքի մասնակիցների դեմ, որի պատճառով տուժել են ինչպես հավաքի խաղաղ մասնակիցներ, այնպես էլ հավաքին չմասնակցող անձինք:

2016 թվականի հուլիսի 29-ին Սարի Թաղում ոստիկանության կողմից հատուկ միջոցներ կիրառվել են ոչ թե այն անձանց նկատմամբ, ովքեր փորձել են սադրել հավաքի խաղաղ մասնակիցներին՝ քարերով շարժվելով դեպի ոստիկանության ծառայողների կողմը, այլ հավաքի խաղաղ մասնակիցների դեմ: Ավելին՝ ինչպես ականատեսներն են պնդում, ոստիկանների դեմ քարերով վազող մարդիկ անհետացել են ոստիկանների թիկունքում և նրանց նկատմամբ ոստիկանության ներկայացուցիչների կողմից որևէ քայլ չի ձեռնարկվել:

---

[47] Lragir.am, Խորենացի փողոցում մի խումբ քաղաքացիներ որոշել են ժողովրդի պահանջի հռչակագիր կազմել, 20 Հուլիսի 2016, ժամը 16:12, http://www.lragir.am/index/arm/0/country/view/136235

[48] Lragir.am, «Սասնա ծռեր» խմբի անդամներին բավարար սնունդ չի մատակարարվում, 20 հուլիսի 2016, ժամը 21:35, http://www.lragir.am/index/arm/0/country/view/136262

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ անձի հավաքի իրավունքը չի դադարում այն պատճառով, որ հավաքի ընթացքում ինչ-որ անձինք թույլ են տալիս բռնի գործողություններ կամ այլ անթույլատրելի արարք, իսկ հավաքի կոնկրետ մասնակիցը խաղաղ է և հանգիստ շարունակում է մասնակցել հավաքին[49]: Նույնիսկ այն դեպքում, երբ հավաքին մասնակցում են բռնության մտադրություններով որոշակի խումբ անձինք, այդ հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ հավաքի մնացած մասնակիցների իրավունքի սահմանափակման համար[50]:

Խորենացի փողոցում կանգնած էի, երբ ոստիկանների կողմից նետված պայթուցիկներից մեկը դիպավ ձախ ծնկահոդիս և վնասեց նաև աջ սրունքս: Պայթյունից առաջացած բոցից այրվեց քիթս, դեմքս, ականջներումս խշշոց զգացի: Բժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ ինձ մոտ արձանագրվել են ջերմային այրվածքներ՝ հավանաբար պատճառված բեկորներով և բոցով, իսկ վերքերից դուրս են բերվել սև գույնի ոչ մետաղական օտար մարմիններ:

2016 թվականի հուլիսի 20ին տուժած քաղաքացի Վ. Ա.

2016 թվականի հուլիսի 20-ի հավաքի մեկ այլ մասնակից՝ Մ.Ա., ով գտնվել է ոստիկանության պատնեշից մոտ 40 մետր հեռավորության վրա, անմիջապես իր ոտքերի մոտ ընկած նռնակի պայթյունի հետևանքով ստացել է բեկորային վնասվածքներ և 3-րդ աստիճանի այրվածքներ: Անձի մարմնի ստորին վերջույթներից հանվել են ընդհանուր առմամբ 74 բեկորներ, որոնցից ամենամեծը 5սմ տրամագծով:

2016 թվականի հուլիսի 29-ին Սարի Թաղում ոստիկանության կողմից հատուկ միջոցներ կիրառվել են ոչ թե այն անձանց նկատմամբ, ովքեր փորձել են սադրել հավաքի խաղաղ մասնակիցներին՝ քարերով շարժվելով դեպի ոստիկանության ծառայողների կողմը, այլ հավաքի խաղաղ մասնակիցների դեմ:

Վերոգրյալ հանգամանքների վրա հիմնվելով, կարելի է պնդել, որ ինչպես 2016 թվականի հուլիսի 20-ին, այնպես էլ 2016 թվականի հուլիսի 29-ին ոստիկանության կողմից հատուկ միջոցները կիրառվել են անօրինական, անհամաչափ և ոչ նպատակային՝ խախտելով ինչպես միջազգային չափանիշները, այնպես էլ ՀՀ օրենսդրության պահանջները:

[49] Ziliberberg v. Moldova (dec.), App. No. 61821/00, 4.05.2004
[50] Տես, Primov and others v. Russia, No 17391/06, 12.06.2014, § 155

Այս մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ 2016թ. հուլիսի 17-30 ընկած ողջ ժամանակահատվածի համար զանգվածային անկարգությունների հիմքով հարուցված քրեական գործում ներգրաված են 43 անձինք, ինչը փաստում է, որ ոստիկանության կողմից հավաքի ժամանակ ենթադրյալ խախտում՝ անկարգություն, թույլ տված անձինք եղել են տեղում նույնականցման ենթակա և նրանց հեռացնելով ոստիկանությունը կարող էր երաշխավորել խաղաղ հավաքի հետագա ընթացքը, բացառել ուժի և հատուկ միջոցների կիրառումը:

Նախազգուշացում և պատշաճ ժամանակի տրամադրում

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ պարբերության «...ոստիկանության ծառայողը հատուկ միջոցներ գործադրելուց առաջ պարտավոր է նախազգուշացնել դրանք գործադրելու մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով օրինական պահանջները կատարելու և իրավախախտումը դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց գործադրման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում քաղաքացիների կամ ոստիկանության ծառայողի կյանքի ու առողջության համար կամ կարող է առաջացնել այլ ծանր հետևանքներ, կամ երբ ստեղծված իրավիճակում այդպիսի նախազգուշացումն անհնար է»: Նույն պահանջը ներկայացված է նաև ոստիկանության զորքերի ծառայողներին Ոստիկանության զորքերի մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով:

Ուղեցույցի 27-րդ կետի համաձայն՝ «Ոստիկանության կողմից արվող նախազգուշացումները պետք է լինեն ամբոխին հասկանալի արտահայտություններով և առավել նպատակահարմար ձևով (...): Հնարավորության դեպքում ամբոխին ուղղված առանձին նախազգուշացումների միջև պետք է տրվի ողջամիտ ժամանակահատված, որպեսզի ամբոխը ցուցաբերի համապատասխան արձագանք: Անհրաժեշտ է նաև էլեկտրոնային կրիչի վրա տեսաձայնագրել արված նախազգուշացումները և անհատների կամ ամբոխի կողմից հնչած պատասխանները»:[51]

Ուղեցույցի 26-րդ կետում զետեղված են հատուկ միջոցներ գործադրելու մտադրության մասին նախազգուշացումներ անելու առաջարկելի 2 ձևակերպումներ, որոնք հետևյալն են.

ա) «Խոսում է ոստիկանությունը: Դադարեցրե՛ք զանգվածային անկարգությունը և հեռացե՛ք տարածքից, **<u>այլապես կգործադրվեն հատուկ միջոցներ (նշել տեսակը)»,</u>**

[51]Նույնաբովանդակ դրույթ առկա է նաև առավել բարձր իրավական ուժ ունեցող ակտի՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում

բ) «Խոսում է ոստիկանությունը: Դադարեցրե՛ք զանգվածային անկարգությունը և հեռացե՛ք տարածքից, **<u>այլապես կգործադրվեն հատուկ միջոցներ (նշել տեսակը):</u>** Այլևս նախազգուշացում չի լինելու»:

Ոչ 2016 թվականի հուլիսի 20-ին Խորենացի փողոցում, ոչ էլ հուլիսի 29-ին Սարի Թաղում և Խորենացի փողոցում ոստիկանության կողմից հատուկ միջոցները կիրառելուց առաջ հավաքի մասնակիցներին նախազգուշացում չի տրվել, չի տրվել բավարար ժամանակ սեփական վարքագիծը գնահատելու և արձագանքելու համար: Արդյունքում, ոստիկանության կողմից հատուկ միջոցները գործադրվել են հավաքի մասնակիցների համար անսպասելի:

2016թ. հուլիսի 20-ին Խորենացի փողոցում[52] հատուկ միջոցների գործադրումից առաջ ոստիկանության կողմից չի պահանջվել լքել տարածքը և չի եղել նախազգուշացում հատուկ միջոցների գործադրման մասին:

Նույն կերպ, 2016 թվականի հուլիսի 29-ին Խորենացի փողոցում հատուկ գործողությունից առաջ[53] ոստիկանը հայտարարում է, որ քաղաքացիների գործողություններն անօրինական են և խնդրում է սեղմ ժամկետում ազատել Խորենացի փողոցը և դադարեցնել հավաքը՝ առանց նշելու հատուկ միջոցների կիրառման մասին[54]: Սակայն այդ հայտարարություններից հետո ոստիկանական պատնեշից դուրս է գալիս փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանը, խնդրում հետ գնալ քաղաքացիներին հետևյալ խոսքերով «Ցանկություն չունենք որևէ մեկի հետ բախվելու...Դուք այդտեղ հանգիստ կանգնեք, մենք էլ այստեղ հանգիստ կկանգնենք»: Այսինքն՝ հատուկ միջոցների կիրառման հնարավորությունը նման հայտարարությամբ բացառվում էր:

Հատուկ միջոցների կիրառման մասին պատշաճ նախազգուշացում չի եղել նաև հուլիսի 29-ին Սարի թաղում[55]:

2016 թվականի հուլիսի 29-ին Սարի Թաղ կոչվող հատվածում բանակցություններ էին ընթանում մի կողմից երթի մասնակից Արմեն Մարտիրոսյանի, Լևոն Բարսեղյանի մյուս կողմից Երևանի ոստիկանապետ Աշոտ Կարապետյանի, ՀՀ փոխոստիկանապետեր Սամվել Հովհաննիսյանի ու Լևոն Երանոսյանի միջև: Ոստիկանապետ Ա.Կարապետյանը հորդորում է Ա. Մարտիրոսյանին, որպեսզի վերջինս հավաքվածներին հեռացնի տարածքից,

---

[52]«Բախում Խորենացի փողոցում: Ոստիկանությունը հատուկ միջոցներ կիրառեց» տեսանյութ, Ազատություն TV, Հուլիս 20, 2016թ. https://www.youtube.com/watch?v=4Bf3lvCiRKc

[53]Արտակ Համբարձումյան, «Հատուկ գործողություն Խորենացի փողոցում» տեսանյութ, Ազատություն TV, հուլիս 29 2016թ., https://www.youtube.com/watch?v=7DgwVhkzJec

Արտակ Համբարձումյան, «Հատուկ գործողությունից առաջ», Ազատություն TV, Հուլիս 29, 2016թ., https://www.youtube.com/watch?v=EPaTdnPPvOo

[54] Տես հղում 70, տեսանյութի 12-րդ րոպե

[55] CivilNet, Ոստիկանների գրոհը Սարի Թաղում, https://www.youtube.com/watch?v=Risy6Yl3taU

տեղափոխի դեպի Խորենացի փողոց: Ա.Կարապետյանը նշում է նաև, որ ցուցարարները քարերով խփում են ոստիկաններին, վնասված ոստիկան կա: Նշված պնդումներին ի պատասխան, Ա. Մարտիրոսյանը նշում է, որ այն անձինք, ովքեր քարերով խփում են՝ դա ոստիկանության սադրիչներն են՝ ոչ թե խաղաղ ցուցարարները: Այնուհետև, Ա. Մարտիրոսյանը, մտնելով ցուցարարների շարքերը, պահանջում է ցուցարարներից, որպեսզի վերջիններս քարեր չնետեն և, եթե նկատեն որ իրենց շարքերում որևէ մեկը քար է նետում դեպի ոստիկանները, բռնեն վերջինիս, և հանձնեն ոստիկանությանը[56]:

Զուգահեռաբար, Լևոն Բարսեղյանը բարձրախոսով հայտարարում է ոստիկաններին, որ ցուցարարները ոչ մի քայլ առաջ չեն գալիս, սակայն ոստիկանապետ Ա. Կարապետյանը չի թողնում որպեսզի վերջինս իր հայտարարությունը շարունակի և ստիպում է հետ շարժվել դեպի ցուցարարները: Ա. Կարապետյանը, առանց ցուցարարներին իր խոսքը հասանելի դարձնելու, հեռանալու համար տրամադրում է 5 րոպե, որի մասին հայտնում է միայն իրեն մոտ կանգնած Լ. Բարսղյանին, Ա. Մարտիրոսյանին, Զ. Փոստանջյանին՝ նշելով որ կիրառելու է հատուկ միջոցներ: Լ. Բարսեղյանը խնդրում է Ա. Կարապետյանին ոտիկաններին առաջ չբերել՝ նշելով, որ 5 րոպե ժամանակը բավարար չէ անձանց հեռացնելու համար[57]:

Նույն ժամանակահատվածում ոստիկանության ներկայացուցիչները հավաքը լուսաբանող լրագրողներին կոչ են արել հավաքվել մեկ տեղում և անսպասելիորեն թիրախավորվել հենց լրագրողներին[58]: Փաստացի, լրագրողների վերջինների մասնագիտական աշխատանքը և ոստիկանության գործողությունների լուսաբանումը դարձել է անհնար:

Հատուկ միջոցների կիրառման բոլոր երեք դեպքերում հատուկ միջոցառումները կիրառելուց առաջ ոստիկանության ծառայողների կողմից հավաքի մասնակիցներին պատշաճ և հետևանքների մասին պատկերացում կազմելու հնարավորություն տվող նախազգուշացում չի տրվել հատուկ միջոցներ գործադրելու մտադրության վերաբերյալ:

Օրենքով սահմանված տեսակի հատուկ միջոցների կիրառում

Բացառապես օրենքով նախատեսված հատուկ միջոցների կիրառման պայմանը կարևորվել է ինչպես միջազգայնորեն ընդունված չափանիշներով,

---

[56] Տես հղում 73
[57] Տես հղում 73
[58] CivilNet, Ոստիկանների գրոհը Սարի Թաղում, https://www.youtube.com/watch?v=Risy6Yl3taU

այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից: Այն դեպքում, երբ օրենսդրությամբ կարգավորված չէ հատուկ միջոցի օգտագործումը և սահմանված չեն դրա կիրառման չափանիշները, ապա հատուկ միջոցների կիրառումը չի կարող համապատասխանել ժամանակակից ժողովրդավարական հասարակություններում անձանց ֆիզիկական ամբողջականության պաշտպանության պահանջներին[59]:

ՀՀ ներպետական օրեսդրական կարգավորումներով նույնպես արգելվում է սպառազինության մեջ չընդգրկված հատուկ միջոցների օգտագործումը[60:]

2016թ. հուլիսին ոստիկանության կողմից հավաքի մասնակիցների նկատմամբ կիրառվել են հատուկ միջոցներ, որոնց կիրառումը հավաքների ժամանակ սահմանված չէ ՀՀ ներպետական օրենսդրությամբ:

Գործող ներպետական կարգավորումներով հստակ ամրագրված չէ կիրառված կոնկրետ հատուկ միջոցների գործարկման կարգը, մարդու նկատմամբ կիրառման նավազագույն չափանիշները:

Ավելին, ՀՀ ներպետական կարգավորումներով հստակեցված ամրագրված չեն հավաքի մասնակիցների նկատմամբ հատուկ միջոցների կիրառման չափանիշները:

Բացի այդ, ՀՀ ոստիկանության պաշտոնական պարզաբանմամբ՝ ՀՀ ոստիկանության պետի 2016 թվականի փետրվարի 29-ի թիվ 1-Ն հրամանի 1-ին հավելվածի 51-րդ կետի համաձայն՝ ոստիկանության ստորաբաժանումներում հատուկ միջոցների առկայության, նրանց կիրառման պայմանների, ինչպես նաև նրանց քանակի մասին տեղեկությունները գաղտնի են[61]:

2016 թվականի հուլիսի 20-ին և 29-ին ոստիկանության կողմից կիրառված 5 տեսակի հատուկ միջոցներից երեքի համար նպատակային նշանակությունը, օգտագործման ցուցումները և ազդեցությունը սահմանված չէ: Այս հիմքով մարդու առողջության վրա դրա ազդեցության և պատճառված վնասի համար բժշկական առաջնային օգնություն ցուցաբերելու հնարավորություն ևս սահմանափակվում է:

Ոստիկանության կողմից կիրառված 5 միջոցներից 2-ը ՀՀ ոստիկանապետի հրամանով սահմանված օգտագործման պայմանների կարգից բացակայում են և

---

[59] Նույն տեղում, կետ 49:

[60] ՀՀ Ոստիկանության պետի թիվ 5-Ն հրաման, ընդունված՝ հոկտեմբեր 23, 2009 թ., կետ 19: Հասանելի է http://www.irtek.am/views/act.aspx?tid=51328

[61] «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ին ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության կողմից տրամադրված 2016 թվականի օգոստոսի 31-ի N 24/2243 գրություն

դրանց նպատակային նշանակությունը, ազդեցությունը սահմանված չէ: Հատկանշական է, որ «Զարյա -3» հատուկ միջոցը, թեև սահմանված չէ, բայց կիրառվել է ամենաշատը՝ 46 հատ:

2016 թվականի հուլիսի 20 և 29 կիրառված հատուկ միջոցներ

Տեսակը	Օգտագործված քանակը	Նպատակային նշանակությունը	Օգտագործման կարգը	Ազդեցությունը
Զարյա -3[62]	46	Ցանկում բացակայում է	Ցանկում բացակայում է	Ցանկում բացակայում է
«Սվիրել» ԱՍԶ 40	26	Ցանկում բացակայում է	Նախատեսված է ԳՊ-25, ԳՊ-30 փողատակի նռնականետներից արձակելու համար: Բացել նռնականետի ապահովիչը, ուղղություն տալ ինքնաձիգին ամբոխի գլխավերևից մինչև 7 մետր բարձրությամբ և մոտ 20 աստիճան անկյան տակ բարձրացնելով փողը՝ կրակ արձակել նռնականետից՝ սեղմելով ձգանը:	Բեկորային վնասվածքներ չի պատճառում:
«Ֆակել-Ս»	24	Ցանկում բացակայում է	Նետել նռնակն անհրաժեշտ ուղղությամբ՝ իրավախախտների դիմաց կամ նրանց միջև առաջացած ազատ տարածությունում: Նախատեսված է փակ տարածքներում գործադրելու համար:	Բեկորային վնասվածքներ չի պատճառում:

[62] ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 867 - Ն որոշման մեջ բացակայում է

Դրոֆա	3	Գրգռող լուսաձայնային ազդեցության ձեռքի նռնակ:	Օդակաթիլային ծածկույթի առաջացման և դրա պահպանման ժամանակահատվածի ընթացքում անհրաժեշտ է գտնվել նռնակի ընկնելու վայրից 30 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:	Ցանկում բացակայում է
«Պլամյա-Մ»[63]	1	Ցանկում բացակայում է	Ցանկում բացակայում է	Ցանկում բացակայում է

Հատուկ միջոցների կիրառման վերաբերյալ զեկուցում

2016թ. հուլիսի 17-30-ն ընկած ժամանակահատվածում հատուկ միջոցներ գործադրելու վերաբերյալ վերադասության կարգով զեկուցել են ՀՀ ոստիկանության զորքերի 11 ծառայողներ, որոնցից 3-ը՝ հուլիսի 20-ին, իսկ 8-ը՝ հուլիսի 29-ին[64]:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի, ինչպես նաև Ոստիկանության զորքերի մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության ծառայողը, ինչպես նաև ոստիկանության զորքերի զինծառայողը պարտավոր են անմիջապես (անհապաղ) վերադասության կարգով զեկուցել հատուկ միջոցների կիրառման յուրաքանչյուր դեպքի մասին:

Հատուկ միջոցների կիրառման հանգամանքների և ներկայացված պաշտոնական տեղեկատվության համադրության պարագայում կարելի է եզրակացնել, որ ոստիկանության ծառայողների կողմից կիրառված հատուկ միջոցների մասին պատշաճ զեկուցում տեղի չի ունեցել:

Այս մասին է, վկայում նաև այն հանգամանքը, որ ըստ պաշտոնական տեղեկությունների ոստիկանության կողմից ընդհանուր կիրառվել է 100 հատուկ միջոց, և մեկ ոստիկանի կողմից, ըստ էության կիրառվել է մինչև 10 հատուկ միջոց:

[63]Բացակայում է թե 2011 թվականի հունիսի 23-ի N 867 – Ն որոշումից, թե ոստիկանապետի 23 հոկտեմբերի 2009 թվականի թիվ 5-Ն հրամանից

[64]«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ հարցմանը ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված պատասխան, 2017 թվական մարտի 14, թիվ 582 գրություն:

Հատուկ միջոցներ կիրառելուց հետո վիրավորված անձանց բժշկական օգնության ցուցաբերում

ՄԱԿ-ի Սկզբունքները պահանջում են, որ այն դեպքերում, երբ ուժի կամ զենքի կիրառումն անխուսափելի է, իրավապահ մարմինները պարտավոր են ապահովել բժշկական օժանդակության ապահովումը հնարավորին սեղմ ժամկետներում: Ոստիկանության մասին ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության ծառայողը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ կամ հրազեն կիրառելիս պարտավոր է ցուցաբերել կամ ապահովել մարմնական վնասվածքներ ստացած անձանց առաջին բուժօգնություն՝ բժշկական կազմակերպություններին անհապաղ հայտնելով մրամնական վնասվածքների ու մահվան բոլոր դեպքերի մասին[65]:

Ավելին, Ոստիկանության պետի թիվ 1-ն հրամանով սահմանվում է, որ զանգվածային անկարգությունների խափանմանը, զինված իրավախախտումների ձերբակալմանն, ինչպես նաև պատանդների ազատմանն ուղղված՝ հատուկ միջոցների գործադրման հետևանքով հատուկ միջոցառումներ իրականացնելիս բժշկական կազմակերպությունների աշխատակիցների ներգրավումը պարտադիր է[66]: Հետևաբար, եթե ըստ ոստիկանության գնահատականի՝ հատուկ միջոցները կիրառվել են զանգվածային անկարգություններ խափանման նպատակով, ապա տվյալ դեպքում նույնպես տեղի է ունեցել օրենսդրության պահանջների կոպիտ խախտում:

Մասնավորապես, ոստիկանության կողմից հատուկ միջոցներ կիրառվել են արգելափակված փողոցների տարածքներում, որտեղ շտապ բժշկական օգնություն տրամադրող մեքենաների անհասանելիությունը ոստիկանության ծառայողների համար կանխատեսելի և ակնհայտ էր:

Ավելին, 2016 թվականի հուլիսի 29-ին Սարի թաղում բժշկական օգնություն ցույց տալու փոխարեն, ոստիկանության աշխատակիցների կողմից արգելափակվել են Սարի Թաղից դուրս եկող ավտոմեքենաների ճանապարհը, մեքենաներից բռնի ուժով դուրս բերվել վնասված անձինք, լրագրողներ և այլն: Օրինակ, «Ա1+»-ի լրագրող Ռ. Ա.-ին հիվանդանոց տեղափոխող մեքենան կանգեցվել է, նա բռնի ուժի է ենթարկվել, դուրս բերվել մեքենայից, ինչի հետևանքով նրան ժամանակին բուժօգնություն չի տրամադրվել[67]:

---

[65]Ոստիկանության մասին ՀՀ օրենք, հոդված

[66]ՀՀ ոստիկանության պետի թիվ 1-Ն որոշում, 2011թ, կետ 10:

[67] Անանյան Ռոբերտ, Ինչ տեղի ունեցավ Սարի թաղում. «Ա1+»-ի լրագրողի պատմությունը (տեսանյութ), հուլիսի 30, 2016, 17:51, http://www.a1plus.am/1477514.html (04:30-09:25)

2016 թվականի հուլիսի 17-30-ը ոստիկանության կողմից կիրառված ուժը և հատուկ միջոցները ներպետական և միջազգային իրավական կարգավորումների համատեքստում

Հատուկ միջոցների կիրառման միջազգային չափանիշներ

ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի շրջանակներում[68] ընդունվել են մի շարք իրավակարգավորումներ, որոնք կարգավորում են իրավապահ մարմինների կողմից ուժի և հրազենի գործադրման չափանիշները:

1) ՄԱԿ-ի՝ «Իրավապահ մարմինների վարքագծի կանոնները», 1979թ.[69]

2)ՄԱԿ-ի՝ «Իրավապահ մարմինների կողմից ուժի և հրազենի կիրառման հիմնարար սկզբունքները», 1990թ.[70]

3) Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված՝ «Ոստիկանության էթիկայի մասին եվրոպական կանոնակարգը», 2001թ.

ՄԱԿ-ի կողմից 1990թ.-ին ընդունված Իրավապահ մարմինների կողմից ուժի և հրազենի կիրառման հիմնարար սկզբունքներով սահմանված են այն սկզբունքները, որոնք պետք է պահպանվեն իրավապահ մարմինների կողմից՝ «Բոլոր այն դեպքերում, երբ ոստիկանության կողմից ուժի և հրազենի օգտագործումն անխուսափելի է, պետք է ապահովեն հետևյալ սկզբունքների պահպանումը.

ա) Զենքի օգտագործման ժամանակ դրսևորել զսպվածություն և գործել խախտման/հանցագործության ծանրությանը և այն իրավաչափ նպատակին համապատասխան, որին պետք է հասնել,

բ) Վնասները և վնասվածքները հասցնել նվազագույնի և պահպանել մարդու կյանքը,

գ) Ապահովել, որպեսզի որքան հնարավոր է օժանդակություն և բժշկական օգնություն տրամադրվի վնասվածքներ ունեցող բոլոր անձանց և նրանց, ովքեր որևէ ազդեցություն են կրել այդ միջոցների օգտագործումից,

---

[68] Հայաստանի Հանրապետությունը (հետայսու տեքստում՝ ՀՀ) Միավորված ազգերի կազմակերպության (հետայսու տեքստում՝ ՄԱԿ) և Եվրոպայի Խորհրդի անդամ է, վավերացրել է ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան:

[69] The Office of the United Nations High Commissioner for Human Rights, Code of Conduct for Law Enforcement Officials, adopted by General Assembly resolution 34/169 of 17 December 1979, http://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/LawEnforcementOfficials.aspx

[70] The Office of the United Nations High Commissioner for Human Rights, Basic Principles on the Use of Force and Firearms by Law Enforcement Officials, adopted by the Eighth United Nations Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders, Havana, Cuba, 27 August to 7 September 1990, http://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/UseOfForceAndFirearms.aspx

դ) ապահովել, որպեսզի վնասներ և վնասվածքներ ստացած բոլոր անձանց ընտանիքի անդամները և մոտ ընկերները տեղեկացվեն այդ մասին հնարավորինս վաղ ժամկետում:

Ավելին, ՄԱԿ-ի սկզբունքները սահմանում են, որ իրավապահ մարմինները պետք է ընդունեն և գործարկեն դրույթներ և կարգավորումներ իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից անձանց նկատմամբ ուժի և հրազենի կիրառման վերաբերյալ:

Նույն սկզբունքների համաձայն՝ իրավապահ մարմինները պետք է հաստատեն միջոցների հնարավորին լայն շրջանակ և ապահովեն իրավապահ մարմիններին զինատեսակների և ռազմամթերքների տեսակներով, որոնք հնարավորություն կտան ուժի և զենքի տարբերակված կիրառումը: Դրանք պետք է ներառեն համապատասխան իրավիճակներում ոչ մահաբեր միջոցների կիրառումը այն նկատառումով, որ էականորեն սահմանափակվի մահաբեր կամ անձին վնաս պատճառելու ունակ զինատեսակների կիրառումը:

Միաժամանակ, ոչ մահաբեր զինատեսակների կիրառումը պետք է մանրակրկիտ գնահատման ենթարկվի, որպեսզի նվազագույնի հասցվի չներգրավված անձանց վնաս պատճառելու հնարավոր ռիսկը, և նման զենքի օգտագործումը պետք է մանրակրկիտ վերահսկվի:

Ցանկացած դեպքում, երբ ուժի կամ զենքի իրավաչափ կիրառումն անխուսափելի է, իրավապահ մարմինները պարտավոր են մասնավորապես ապահովել օժանդակության և բժշկական օգնության տրամադրումը ցանկացած վնասված կամ տուժած անձի հնարավոր ամենավաղ պահի, և ապահովել, որպեսզի իրավապահ մարմնի ներկայացուցիչների կողմից կամայական և չարաշահումով կիրառված ուժի և զենքի ցանկացած օգտագործում պատժվի որպես հանցագործություն:

Ըստ նույն սկզբունքների՝ նույնիսկ բացառիկ հանգամանքները, ինչպիսիք են ներքին քաղաքական անկայունությունը կամ այլ արտակարգ իրավիճակ, չեն կարող ներկայացվել որպես արդարացում սույն հիմնարար սկզբունքների չպահպանման առնչությամբ:

Իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից զենքի և հատուկ միջոցների կիրառման վերաբերյալ ներպետական օրենսդրական դրույթները և կարգավորումները պետք է՝

- հստակեցնեն այն իրավիճակները, որոնց պայմաններում իրավապահ մարմինների ներկայացուցիչները իրավասու են կրելու զենք (հրազեն) և սահմանեն թույլատրված զենքի և ռազմամթերքի տեսակները:

- Երաշխավորեն, որ իրավապահ մարմինների կողմից զենքը և ռազմամթերքն օգտագործվում է բացառապես պատշաճ հանգամանքներում և այն ձևով, որ նվազեցվի ոչ անհրաժեշտ վնասի վտանգը:
- Արգելեն այնպիսի հրազենի և զինատեսակի կիրառումը, որը կարող է առաջացնել չհիմնավորված վնասվածք կամ ներկայացնել չհիմնավորված վտանգ:
- Կանոնակարգեն հրազենի և զենքի նկատմամբ վերահսկողությունը, պահպանումը, հանձնումը, ինչպես նաև նախատեսեն համապատասխան ընթացակարգեր, որոնց հիման վրա իրավապահ մարմինների ներկայացուցիչները պատասխանատվություն են կրում իրենց հանձնված հրազենի և զինամթերքի համար, նախատեսեն զեկուցման համակարգ իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից իրենց պարտականությունները կատարելու ընթացքում հրազենի և զենքի կիրառման վերաբերյալ:

Ըստ սկզբունքների՝ ներպետական իրավական կարգավորումները պետք է բավականին հստակորեն ամրագրեն թույլատրելի զինատեսակների և ռազմամթերքի տեսակները:

Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված «Ոստիկանության էթիկայի մասին եվրոպական կանոնակարգ»-ի 5-րդ գլխով ևս սահմանվում են ոստիկանության գործողությունների եւ միջամտության թույլատրելի չափանիշները, որոնցից առանձնապես կարևոր են հետևյալները. Անհրաժեշտ է որպեսզի ոստիկանության ծառայողները՝

- ուժ գործադրեն միայն խիստ անհրաժեշտության դեպքում և այդ ուժը համապատասխանի և համաչափ լինի կիրառման նպատակներին.
- միշտ պետք է ստուգեն նախատեսվող գործողությունների օրինականությունը
- կատարեն վերադասի հրամանները, սակայն ձեռնպահ մնան անօրինական հրամանները կատարելուց
- պետք է կատարեն իրենց պարտականություններն անկողմնակալ եւ առանց խտրականություն դրսևորելու:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, բազմաթիվ գործերով հրազենի և այլ մահաբեր և ոչ մահաբեր զինատեսակների կիրառման առնչությամբ իրավապահ մարմինների գործողությունները գնահատելիս

առաջնորդվել է նույն սկզբունքներով[71]: Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ իրավապահ մարմինների՝ ոստիկանության և ոստիկանության զորքերի պաշտոնատար անձանց (ներկայացուցիչների) կողմից հատուկ միջոցների կիրառման կարգավորումները տրված են.

- Ոստիկանության մասին օրենքով[72], Ոստիկանության զորքերի մասին օրենքով[73], ՀՀ ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հրազենի, ռազմամթերքի, հատուկ միջոցների և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների ցանկերը, ինչպես նաև հրազենի, ռազմամթերքի, հատուկ միջոցների և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների տեսակներն սպառազինության մեջ ընդգրկելու, դրանք սպառազինությունից հանելու, հատուկ միջոցները և անհատական պաշտպանության միջոցները ոչնչացնելու կարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության որոշմամբ[74], ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցները գործադրելու և դրանք ոստիկանության ծառայողներին հատկացնելու, պահպանելու և պիտանելիությունը պարբերաբար ստուգելու կարգը սահմանելու մասին ՀՀ ոստիկանության պետի հրամանով[75],
- ոստիկանության զորքերի կողմից հատուկ միջոցներ օգտագործելու և հատուկ միջոցները ոստիկանության զորքերի ծառայողներին հատկացնելու կարգը սահմանելու մասին ՀՀ ոստիկանության պետի հրամանով[76]:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը սահմանում է հատուկ միջոցների հասկացությունը, ըստ որի դրանք ոստիկանության սպառազինության մեջ

---

[71] Finogenov and others v. Russia, No 18299/03 and 27311/03, 20.12.2011, Huohvanainen v. Finland, No 57389/00, 13.03.2007, McCann and others v. the United Kingdom,
18984/91, 27.09.1995, Giuliani and Gaggio v. Italy, No 23458/02, 24.03.2011

[72] Ոստիկանության մասին ՀՀ օրենք, ընդունվել է 16 ապրիլի 2001թ.:

[73] Ոստիկանության զորքերի մասին ՀՀ օրենք, ընդունվել է 17 նոյեմբերի 1997թ.:

[74] ՀՀ ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հրազենի, ռազմամթերքի, հատուկ միջոցների և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների ցանկերը, ինչպես նաև հրազենի, ռազմամթերքի, հատուկ միջոցների և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների տեսակներն սպառազինության մեջ ընդգրկելու, դրանք սպառազինությունից հանելու, հատուկ միջոցները և անհատական պաշտպանության միջոցները ոչնչացնելու կարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության թիվ 867-Ն որոշում, ընդունվել է 23 հունիսի 2011թ.,

[75] ՀՀ կառավարությանն առընթեն ՀՀ ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցները գործադրելու և դրանք ոստիկանության ծառայողներին հատկացնելու, պահպանելու և պիտալիությունը պարբերաբար ստուգելու կարգը սահմանելու մասին ՀՀ ոստիկանության պետի թիվ 1-Ն հրաման, ընդունվել է 30 մայիսի 2011թ., հասանելի է http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=69819

[76] Ոստիկանության զորքերի կողմից հատուկ միջոցներ օգտագործելու և հատուկ միջոցները ոստիկանության զորքրեի ծառայողներին հատկացնելու կարգը սահմանելու մասին ՀՀ ոստիկանության պետի թիվ 5 հրաման, ընդունվել է 23 հոկտեմբերի 2009թ:

ընդգրկված և սույն օրենքով նախատեսված տեխնիկական միջոցները (սարքերը, սարքավորումները, առարկաները, նյութերը) կամ ծառայողական շներն են, որոնց հիմնական նշանակությունը մարդկանց նկատմամբ անմիջական ֆիզիկական կամ հոգեբանական կամ նյութական օբյեկտների նկատմամբ անմիջական ֆիզիկական ներգործությունն է[77]: Նույն օրենքի համաձայն՝ արգելվում է ոստիկանության սպառազինության մեջ հատուկ միջոցների այնպիսի տեսակներ ընդգրկելը, որոնք, ըստ իրենց մարտավարատեխնիկական բնութագրերի, կարող են մարդու առողջությանը պատճառել ծանր վնաս կամ մարդու օրգանիզմում առաջացնել անդառնալի փոփոխություններ կամ մահ պատճառել կամ չհիմնավորված ռիսկի աղբյուր են: Հաշվի առնելով մարդու առողջության վրա հատուկ միջոցների կիրառման հնարավոր բացասական ազդեցությունը՝ ըստ Ոստիկանության մասին ՀՀ օրենքի՝ մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները սահմանվել են ՀՀ առողջապահության նախարարի հրամանով[78]:

Հայաստանի Հանրապետությունում կիրառման համար սահմանված հատուկ միջոցները բաժանվում են հետևյալ խմբերի.

1. ակտիվ պաշտպանության միջոցներ, որոնց մեջ մտնում են ձեռնաշթաներ, ռետինե մահակներ, էլեկտրահարող սարքեր, կայծային պարպիչներ, դազային և վնասվածքային ազդեցության ատրճանակներ և համապատասխան փամփուշտներ:

2. Հատուկ միջոցառումների իրականացման միջոցներ, որոնք ներառում են բարձր ճնշման փոշեցրիչներ և փաթեթներ, ձեռքի գազային նռնակներ, ծխագլանակներ, լուսաձայնային նռնակներ և սարքավորումներ, օդակաթիլային փոշեցրիչ (արցունքաբեր և գրգռիչ բաղադրությամբ փաթեթներ), գազային նռնակներով և ռետինե գնդակներով փամփուշտներ, արգելանքներ քանդելու միջոցներ., հատուկ ներկող նյութեր, ծառայողական շներ, ջրանետ մեքենաներ, զրահամեքենաներ, տրանսպորտի և մարդկանց հարկադիր կանգնեցման (արգելափակման) միջոցներ:

[77] Ոստիկանության մասին ՀՀ օրենք, հոդված 31:

[78] ՀՀ առողջապահության նախարար, Մարդու նկատմամբ գործադրվող հատուկ յիջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները սահմանելու մասին թիվ 09-Ն հրաման, ընդունվել է 2012թ. ապրիլի 20-ին:

Ըստ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի՝ ոստիկանության ծառայողը որպես բացառիկ միջոց գործադրում է ֆիզիկական ուժ, հրազեն և հատուկ միջոցներ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իր պարտականությունները կատարելու համար, եթե այլ միջոցներով այդ պարտականությունների կատարումը հնարավոր չէ ապահովել: Հատուկ միջոցների գործադրման ընտրությունը կատարելիս ոստիկանության ծառայողն առաջնորդվում է՝ ելնելով ստեղծված իրավիճակից իրավախախտման բնույթից և իրավախախտի անձից:

Ոստիկանության ծառայողը ֆիզիկական ուժ, հրազեն և հատուկ միջոցներ գործադրելուց առաջ պարտավոր է նախազգուշացնել դրանք գործադրելու մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով իր օրինական պահանջները կատարելու և իրավախախտումը դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց գործադրման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում քաղաքացիների կամ ոստիկանության ծառայողի կյանքի ու առողջության համար կամ կարող է առաջացնել այլ ծանր հետևանքներ, կամ երբ ստեղծված իրավիճակում այդպիսի նախազգուշացումն անհնար է: Ըստ նույն հոդվածի՝ ոստիկանության ծառայողը պարտավոր է ձգտել, որ անձին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի, ցուցաբերել կամ ապահովել մարմնական վնասվածքներ ստացած անձանց առաջին բուժօգնություն՝ բժշկական կազմակերպություններին անհապաղ հայտնելով մարմնական վնասվածքների և մահվան բոլոր դեպքերի մասին, հատուկ միջոցներ գործադրելու հետևանքով վիրավորվածների կամ մահվան բոլոր դեպքերի մասին անհապաղ զեկուցել վերադասության կարգով:

Նույնանման կարգավորում սահմանվում է նաև «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, ըստ որի՝ ոստիկանության զորքերի զինծառայողը որպես բացառիկ միջոց գործադրում է ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, հրազեն և մարտական տեխնիկա՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իր պարտականությունները կատարելու համար, եթե այլ միջոցներով այդ պարտականությունների կատարումը հնարավոր չէ ապահովել: Ֆիզիկական ուժի, հրազենի և հատուկ միջոցների գործադրման ընտրությունը կատարելիս ոստիկանության զորքերի զինծառայողն առաջնորդվում է՝ ելնելով ստեղծված իրավիճակից, իրավախախտման բնույթից ու իրավախախտի անձից: Ըստ նույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, հրազեն, մարտական տեխնիկա գործադրելիս ոստիկանության զորքերի զինծառայողը պարտավոր է դրանք գործադրելու մասին նախազգուշացնել՝ բավարար

ժամանակ տալով անձին իր օրինական պահանջները կատարելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, զենք կամ մարտական տեխնիկա գործադրելու հապաղումը անմիջական սպառնալիք է ստեղծում իր, քաղաքացիների, զինծառայողներ կամ ՀՀ ոստիկանության աշխատակիցների կյանքի ու առողջության համար կամ կարող է այլ ծանր հետևանքներ առաջացնել, կամ ստեղծված իրավիճակում այդպիսի նախազգուշացումն անհնարին է, ձգտել, որ իրավախախտին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի, ցուցաբերել կամ ապահովել մարմնական վնասվածքներ ստացած անձանց առաջին բուժօգնություն՝ բժշկական կազմակերպություններին անհապաղ հայտնելով մարմնական վնասվածքների ու մահվան բոլոր դեպքերի մասին, վերադասության կարգով անմիջապես զեկուցել ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, հրազեն, մարտական տեխնիկա գործադրելու հետևանքով վիրավորվածների կամ մահվան բոլոր դեպքերի մասին, ինչպես նաև հատուկ միջոցներ, հրազեն, մարտական տեխնիկա գործադրելու (օգտագործելու) յուրաքանչյուր դեպքի մասին:

Հատուկ միջոցների գործադրման, օգտագործման կարգը նախատեսված է ոստիկանության ծառայողների համար համապատասխանաբար ՀՀ ոստիկանապետի 2011թ. թիվ 1-Ն հրամանով, իսկ ոստիկանության զորքերի ծառայողների համար՝ ՀՀ ոստիկանապետի 2009թ. թիվ 5-Ն հրամանով:

Ըստ Ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցների գործադրման կարգի՝ հատուկ միջոցները գործադրվում են միայն նրանց մարտավարատեխնիկական բնութագրերին և նշանակությանը համապատասխան: Կոնկրետ միջոցառման ժամանակ հատուկ միջոցների գործադրումն իրականացվում է միջոցառումը ղեկավարող պաշտոնատար անձի հրամանով: Ինքնուրույն գործող ոստիկանության ծառայողը հատուկ միջոցների գործադրման որոշումն ընդունում է ինքնուրույն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իր պարտականությունները կատարելու համար, եթե այլ միջոցներով այդ պարտականությունների կատարումը հնարավոր չէ ապահովել:

Ոստիկանության զորքերի կողմից հատուկ միջոցները գործադրելու կարգի համաձայն՝ հատուկ միջոցառումների ապահովման միջոցները, բացառությամբ ջրանետերի և զրահամեքենաների, ստորաբաժանման կազմով կոնկրետ միջոցառման ժամանակ գործադրվում են միջոցառումը ղեկավարող պաշտոնատար անձի հրամանով: Ակտիվ պաշտպանության միջոցների օգտագործման որոշում իրավունք ունի ընդունել ոստիկանության զորքերի զինծառայողը՝ անձամբ: Ներպետական իրավական կարգավորումներով

արգելվում է ակտիվ պաշտպանության և հատուկ միջոցառումների ապահովման միջոցները գործադրել օրենքի սահմանված կարգի խախտմամբ, սակայն խաղաղ, առանց զենքի զանգվածային հրապարակային միջոցառումների ընթացքում հասարակական կարգի ապահովման ժամանակ[79]:

Հատուկ միջոցների գործադրման առանձնահատկությունների ներպետական օրենսդրական կարգավորումների խնդիրներ

ՀՀ ոստիկանության պետի կողմից ընդունված ՀՀ ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցները գործադրելու կարգը սահմանելու մասին թիվ 1-Ն հրամանով նախատեսված չեն և հստակեցված չեն յուրաքանչյուր հատուկ միջոցի գործադրման կարգը, այլ ընդհանրական կարգով սահմանվում են դրանց գործադրման առանձնահատկությունները: Մասնավորապես՝ հրամանի 28-րդ կետով սահմանվում է ուշադրությունը շեղող լուսաձայնային հատուկ միջոցների գործադրումը, որոնք «նախատեսված են պատանդներ ազատելու հատուկ միջոցառումների և զանգվածային անկարգությունների ժամանակ հոգեբանակաֆիզիոլոգիական ազդեցության միջոցով իրավախախտների նկատմամբ կանխարգելիչ և վնասազերծող գործողություններ իրականացնելու համար» կամ 27-րդ կետով նախատեսված ձեռքի գազային նռնակներ և գազային նռնակներով փամփուշտները նախատեսված են զանգվածային անկարգությունների կանխման և հատուկ միջոցառումների անցկացման ժամանակ արցունքաբեր և գրգռիչ նյութերի բաղադրությամբ գազածխային ծածկույթի հաշվին իրավախախտների հոգեկամային կայունության ճնշման համար:

Ավելի վաղ՝ 2009թ. ՀՀ ոստիկանապետի թիվ 5-Ն հրամանով սահմանվել է ոստիկանության զորքերի կողմից հատուկ միջոցների օգտագործման կարգը: Ոստիկանապետի հրամանը պարունակում է ընդամենը 18 անուն միջոցներ, որից 6-ը Կառավարության սահմանած 70 անուն հատուկ միջոցառումների միջոցների ցանկում բացակայում է: Ընդհանուր առմամբ, ոստիկանապետի հրամանը ոստիկանության զորքերի 13 անուն միջոցների օգտագործման ցուցումներն է սահմանում: Մասնավորապես հրամանի համաձայն՝

- ձեռքի լուսաձայնային նռնակ **«Ֆակել-Ս»՝** լուսաձայնային բաղկացուցիչների քանակը՝ 1, քաշը՝ 160 գ, տրամաչափը՝ 34 մմ, բարձրությունը՝ 107 մմ, դանդաղեցման ժամանակը՝ 3,5-4,2 վրկ, ձայնի ճնշման մակարդակը 10 մ-ից՝ **145 դբ**, լույսի ուժը՝ 10x106 կդ, արդյունավետ

[79] ՀՀ ոստիկանապետի թիվ 1-Ն հրաման, 2011թ., կետ 6, ՀՀ ոստիկանապետի թիվ 5-Ն հրաման, 2009թ., կետ 7:

գործողության շառավիղը՝ 5 մ: Կիրառվում է փակ տարածքներում: Բեկորային վնասվածքներ չի պատճառում:

- լուսաձայնային նռնակ **«Պլամյա»**[80]՝ նախատեսված է իրավախախտների վրա հոգեֆիզիոլոգիական ազդեցության համար՝ հզոր լուսային և ձայնային ազդակների միջոցով: Նռնակի տրամագիծը՝ 75 մմ, քաշը՝ 180 գ, լույսի ուժը՝ 60x106 կդ, ձայնի ճնշման մակարդակը 15 մ հեռավորության վրա՝ **170 դբ**, ազդեցության շառավիղը՝ 15 մ, օգտագործման անվտանգ հեռավորությունը՝ **2 մ**:

- լուսաձայնային կրակոց **«Սվիրել» ԱՍԶ-40**՝ տրամաչափը՝ 40 մմ, երկարությունը՝ 230 մմ, կրակոցի քաշը՝ 400 գ, ձայնի ազդեցության տևողությունը՝ 3 վրկ, ձայնի ճնշման մակարդակը 10 մ-ից՝ **130 դբ**, լուսաձայնային ճայթքման գործարկման հեռավորությունը՝ **100 մ**, լույսի առավելագույն ուժը՝ 50x106 կդ: Նախատեսված է ԳՊ-25, ԳՊ-30 փողատակի նռնականետներից արձակելու համար: Բեկորային վնասվածքներ չի պատճառում:

- գրգռող լուսաձայնային ազդեցության ձեռքի նռնակ **«Դրոֆա»**՝ նռնակի ընկնելու վայրից 5 մ հեռավորության վրա լուսաձայնային տարրերի պայթյունից առաջանում է լուսաձայնային ազդակ, իսկ գլանակի այրումից՝ գրգռիչ ազդեցությամբ օդակաթիլային ծածկույթ: Նռնակը լիցքավորված է CS նյութի բաղադրությամբ: Տրամագիծը՝ 35 մմ, բարձրությունը՝ 140 մմ, քաշը՝ 140 գ, օդակաթիլային ծածկույթի գույնը՝ սպիտակ, օդակաթիլային ծածկույթի ծավալը՝ 50 մ 3 ոչ պակաս, դանդաղեցման ժամանակը՝ 4+-1 վրկ: Գազարձակման ժամանակը՝ 10 վրկ, լուսային ազդակի առավելագույն ուժը՝ 2,0x10.6 կդ, ձայնի ճնշման մակարդակը 5 մ հեռավորության վրա՝ **120 դբ**, շահագործման ջերմաստիճանային տատանումը՝ -40-ից +50 oC:

«Մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները սահմանելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի թիվ 09-Ն հրամանը սահմանում է[81].

- միատարր ձեռքի լուսաձայնային նռնակ **«Ֆակել-Ս»-ի** կիրառման թույլատրելի չափանիշներն են՝ ներգործության տրամագիծը 5 մետրից ոչ ավելի, գործարկումը միայն **բաց տեղանքում**՝ մարդուց նվազագույնը **2,5 մետր** հեռավորության վրա: Ձայնային ճնշման մակարդակը 10 մետր հեռավորության վրա **145 դեցիբելից ոչ ավելի**,

---

[80]2016 թվականի հուլիսի 29-ի գիշերը գործարկված «Պլամյա-Մ»-ի մասին հրամանում նշում առկա չէ:

[81] Առողջապահության նախարարի թիվ 09-Ն հրաման, ընդունված՝ ապրիլ 20, 2012թ. http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75547

- **«Պլամյա»** լուսաձայնային սարքավորման կիրառման թույլատրելի չափանիշն է՝ գործարկվում է մարդուց նվազագույնը **2,5 մետր** հեռավորության վրա:

- լուսաձայնային նռնակ «Պլամյա-Մ»-ի կիրառման թույլատրելի չափանիշներն են՝ ձայնային ճնշման մակարդակը 15 մետր հեռավորության վրա **170 դեցիբելից ոչ ավելի**, գործարկվում է մարդուց նվազագույնը 2,5 մետր հեռավորության վրա:

-լուսաձայնային գործողության նռնակով կրակոց **ԱՍԶ-40-ի («Սվիրել»)** կիրառման թույլատրելի չափանիշներն են՝ ձայնային ճնշման մակարդակը 10 մետր հեռավորության վրա՝ **120 դեցիբելիցոչ ավելի**, գործարկման նվազագույն հեռավորությունը՝ **100 մետր:**

- լուսաձայնային գրգռիչ գործողության ձեռքի նռնակ «Դրոֆա»-ի կիրառման թույլատրելի չափանիշներն են՝ գործադրման ժամանակ ազդող նյութի՝ մալոնոդինիտրիլ-քլորբենզիլիդեն-ի (CS) գրգռման շեմը 0,5●10-4 միլիգրամ/լիտր, մարդու օրգանիզմի վրա անդառնալի փոփոխություններ առաջացնող խտությունը՝ 0,001 միլիգրամ●րոպե/լիտր, ձայնային ճնշման մակարդակը 5 մետր հեռավորության վրա **145 դեցիբելից ոչ ավելի**, գազարձակման ժամանակը 10 վայրկյանից ոչ ավելի:

«Պլամյա-Մ» լուսաձայնային նռնակի կիրառման կարգը նախատեսված չէ ոստիկանության զորքերի կողմից հատուկ միջոցների գործադրման կարգում:

Ոստիկանության պետի հրամանի և Առողջապահության նախարարի հրամանների միջև հենց «Պլամյա» հատուկ միջոցի շահագործման մասով առկա է հակասություն, մասնավորապես՝ Առողջապահության նախարարի հրամանով թե՛ «Պլամյա»-ի, և թե՛ «Պլամյա-Մ»-ի գործարկումը կհամարվի անվտանգ, եթե կիրառվի մարդուց 2,5 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա, իսկ Ոստիկանության պետի հրամանով, որտեղ խոսվում է միայն «Պլամյա»-ի մասին, գործարկման անվտանգ հեռավորություն է համարվում 2 մ-ը, և առկա չէ տեղեկություն վերջինիս բեկորային կամ ոչ բեկորային լինելու մասին: Բացակայում է նշում «Պլամյա-Մ»-ի անբեկոր լինելու մասին, ինչպես նաև այն հանգամանքը, որ առկա է դրա գործարկման անվտանգ հեռավորության սահմանաչափ, կարելի է ենթադրել, որ դրա գործարկման մարդուց նվազագույն հեռավորությունը խախտելու դեպքում այն կարող է մարդու առողջությանը վնաս պատճառել, չի բացառվում և բեկորային, այրվացքային վնասվածքների առաջացումը:

Օրենսդրական կարգավորման հակասություն է առկա նաև «Ֆակել-Ս» հատուկ միջոցի գործարկման մասով. մասնավորապես,

Առողջապահության նախարարի թիվ 09-Ն հրամանում նշվում է, որ «Ֆակել-Ս»-ը գործարկվում է բաց տեղանքում մարդուց նվազագույնը 2.5մ հեռավորության վրա, իսկ Ոստիկանության պետի թիվ 5-Ն հրամանի համաձայն, այն գործարկվում է փակ տարածքներում:

Հստակ չէ նաև ՀՀ առողջապահության նախարարի հրամանում կիրառված հատուկ միջոցների տեսակների գործարկման ժամանակ ձայնային ճնշման ուժգնությունը: Այսպես, ըստ այդ հրամանի՝

- լուսաձայնային նռնակ «Ֆակել-Ս»-ի ձայնային ճնշման մակարդակը պետք է լինի **10 մետր** հեռավորության վրա **145** դեցիբելից ոչ ավելի:
- լուսաձայնային գրգռիչ գործողության ձեռքի նռնակ «Դրոֆա»-ի ձայնային ճնշման մակարդակը **5 մետր** հեռավորության վրա չպետք է գերազանցի **145 դեցիբելը:**
- «Պլամյա-Մ»-ի ձայնային ճնշման մակարդակը **15 մետր** հեռավորության վրա չպետք է գերազանցի **170** դեցիբելը:
- ԱՍՋ-40-ի («Սվիրել») ձայնային ճնշման մակարդակը պետք է **10 մետր** հեռավորության վրա չգերազանցի **120 դեցիբելը**:

Առողջապահության նախարարի հրամանում նռնակներից յուրաքանչյուրի մասով թույլատրելի առավելագույն ձայնային ճնշման մակարդակների ուժգնությունը գրեթե նույնությամբ կրկնում է ոստիկանապետի հրամանով սահմանված նռանակների տեխնիկական բնութագիրը, բացառությամբ «Սվիրել»-ի, քանի որ ոստիակնապետի հրամանով սահմանված կարգով դրա ձայնային ճնշման մակարդակը 130 դեցիբել է, իսկ ՀՀ Առողջապահության նախարարի հրամանով դրա գործարկման թույլատրելի ձայնային ճնշման մակարդակը նվազեցվել է 10-ով, այսինքն՝ սահմանվել է 120 դեցիբել, քանի որ 130 դեցիբելը վնասակար է մարդու լսողության համար և կարող է առաջացնել խլություն: Ակնհայտ է, որ հստակ և միարժեք մոտեցում չկա այն մասին, թե ինչպիսի հեռավորությունից, ինչպիսի ձայնային ճնշմամբ, պետք է կիրառվեն նշված հատուկ միջոցները:

Ըստ ներկայացված ստանդարտների և 2016 թվականի հունիսի 17-31 կիրառված հատուկ միջոցների փաստերի համադրման արդյունքների՝ 2016 թվականի հուլիսի 20-ի և 29-ի տեսագրություններից հստակ երևում է, որ հատուկ միջոցները գործադրվել են մարդու նկատմամբ հատուկ միջոցների կիրառման չափանիշների խախտմամբ:

Մասնավորապես՝ հուլիսի 29-ի Սարի թաղի գործողության ժամանակ, ոստիկանների և խաղաղ ցուցարարների միջև ընկած հեռավորությունը 100

մետրից շատ ավելի քիչ է եղել,[82] այնինչ, օրինակ՝ Սվիրել լուսաձայնային կրակոցը պետք է գործարկվեր նվազագույնը 100 մետր հեռավորությունից:
Հատուկ միջոցների մյուս տեսակների՝ «Պլամյա Մ» լուսաձայնային նռնակի, Ֆակել-Ս լուսաձայնային նռնակի, գործադրման անվտանգ հեռավորությունը պահպանելու մասին, այն է՝ 2,5 մետրը, ևս խախտվել է: Ինչպես երևում է հավաքները լուսաբանող և սույն զեկույցում ներկայացված վկայություններից, տեսագրություններից, **նռնակների և կրակոցների անվտանգ գործարկման հեռավորությունները չեն պահպանվել:** Բազմահազարանոց և խտացված հավաքի խաղաղ մասնակիցների նկատմամբ կիրառվել են հատուկ միջոցներ, սահմանափակված և նեղ տարածությունում, որոնք ընկել են անմիջապես անձանց վրա՝ դիպել նրանց, կամ շատ մոտ տարածության վրա՝ խախտելով մարդու նկատմամբ հատուկ միջոցների կիրառման նվազագույն չափանիշներով նախատեսված հեռավորությունը, ինչի արդյունքում բազմաթիվ անձինք ստացել են լուրջ վնասվածքներ:

[82]Կարլեն Ալանյան, *«Ոստիկանությունը ուժ կիրառեց ցուցարարների, լրագրողների նկատմամբ»,* Ազատություն TV, Հուլիս 30, 2016թ., https://www.youtube.com/watch?v=mgmdgYu6o-g

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՈՒԼԻՍԻ 17-30-Ը ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈՒԺԻ ԿԻՐԱՌՈՒՄ

Ֆիզիկական ուժի կիրառման ներքին օրենսդրական կարգ և հակասություններ

Ակտիվ պաշտպանության միջոցները և ֆիզիկական ուժի կիրառումը սահմանվում է հետևյալ ՀՀ ներքին օրենսդրական կարգավորումներով[83]:

1. ՀՀ ԿԱ Ոստիկանության պետի 23.10.2009 թ.-ի թիվ 5-Ն հրամանի 12-րդ հոդվածը սահմանում է ոստիկանության կողմից կիրառվող ակտիվ պաշտանության միջոցները: Դրանք են՝

1) ձեռնաշղթաներ

2) ռետինե մահակներ («ՊՌ-73», «Արգումենտ-4», «ՊՌ-Տոնֆա»)

3) արցունքաբեր գազ (օդակաթիլային փոշեցրիչներ)

4) ուշադրություն շեղող լուսաձայնային միջոցներ (լուսաձայնային փամփուշտներ)

5) էլեկտրահարող սարքեր[84]:

Ընդ որում՝ ըստ ՀՀ ԿԱ Ոստիկանության պետի 23.10.2009 թ.-ի թիվ 5-Ն հրամանի 24-րդ կետի՝

«1) Ձեռնաշղթաներ «ԲՌ» և «ԲՌ-Ս»՝ նախատեսված են իրավախախտների ֆիզիկական դիմադրությունը սահմանափակելու համար: Քաշը՝ 0,4 կգ:

2. Հատուկ ռետինե մահակ «ՊՌ-73»՝ նախատեսված է իրավախախտների հարձակումները հետ մղելու կամ նրանց անհնազանդությունը կանխելու համար: Քաշը՝ 730 գ, երկարությունը՝ 65 սմ, տրամագիծը՝ 32 մմ»[85]: Ոստիկանության կողմից ակտիվ պաշտպանության միջոցերի կիրառման *թույլատրելի չափանիշները* սահմանող երկու հիմնական ՀՀ ներքին օրենսդրական կարգավորումներ կան՝ ՀՀ ԿԱ Ոստիկանության պետի 23.10.2009 թ.-ի թիվ 5-Ն հրամանը և Առողջապահության նախարարի՝ 20.04.2012 թ.-ի համար N 09-Ն հրամանը: Ըստ ՀՀ ԿԱ Ոստիկանության պետի 23.10.2009 թ.-ի հրամանի 25-րդ կետի՝ ակտիվ պաշտպանության միջոցների շահագործման ընդհանուր ցուցումները սահմանող 25-րդ հոդվածի 2-րդ կետի՝ ձեռնաշղթաների օգտագործման ժամանակ, երկու ժամը մեկ, անհրաժեշտ է ստուգել

---

[83]Այս զեկույցի առաջին գլխում արդեն ներկայացվել են ոստիկանության կողմից ուժի կիրառման վերաբերյալ միջազգային կարգավորումները:

[84]ՀՀ Ոստիկանության պետ հրաման, 23 հոկտեմբերի 2009 թվականի թիվ 5-Ն, http://www.irtek.am/views/act.aspx?tid=51328

[85]ՀՀ Ոստիկանության պետ հրաման, 23 հոկտեմբերի 2009 թվականի թիվ 5-Ն, http://www.irtek.am/views/act.aspx?tid=51328

փականների վիճակը, իսկ ռետինե մահակների օգտագործման ժամանակ պետք է ձգտել խուսափել գլխին և պարանոցին հարվածելուց[86]:

Համաձայն «Մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները սահմանելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 20.04.2012թ.-ի թիվ 09-Ն հրամանի 23-րդ կետի՝ ձեռնաշղթաներ ԲՌ, ԲՌ-Ս կիրառման թույլատրելի չափանիշն է՝ քաշը 0,5 կիլոգրամից ոչ ավելի: Ըստ նույն հրամանի՝ 21-րդ կետի՝ «ռետինե մահակ ՊՌ-73, ՊՌ-73Մ, ՊՌ-89, ՊՌ-90, «Արգումենտ», «Տոնֆա»-ի կիրառման թույլատրելի չափանիշների համաձայն՝ մարդկանց գլխին, վզին, փորին, սեռական օրգաններին, ներքին օրգանների հատվածներին, ինչպես նաև ծերերին, հղիներին, հաշմանդամներին ռետինե մահակով հարվածներ չի թույլատրվում հասցնել[87]:

3. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածը սահմանում է ոստիկանության աշխատակիցների կողմից ֆիզիկական ուժի գործադրման կարգը, որի համաձայն՝ իրավախախտումները կանխելու կամ խափանելու, իրավախախտներին բռնելու եւ ոստիկանություն ներկայացնելու, ոստիկանության աշխատակցի օրինական պահանջներին չենթարկվելու, անհնազանդություն ցուցաբերելու կամ դիմադրություն ցույց տալու դեպքերում, ինչպես նաև ինքնապաշտպանության նպատակով ոստիկանության աշխատակիցն իրավունք ունի իրավախախտների նկատմամբ գործադրել ֆիզիկական հարկադրանք (այդ թվում՝ ձեռնամարտի հնարքներ), ինչպես նաև ձեռքի տակ գտնվող անհրաժեշտ առարկաներ, **եթե ոչ ուժային միջոցները չեն ապահովում ոստիկանության վրա դրված պարտականությունների կատարումը[88]:**

Ակտիվ պաշտպանության միջոցներ

Ձեռնաշղթաներ

Ըստ ՀՀ Ոստիկանության պետի 11.10.2011թ.-ին հաստատված *«Հասարակական կարգի պահպանության մեջ ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, զանգվածային անկարգությունների ժամանակ նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ*

[86]ՀՀ Ոստիկանության պետ հրաման, 23 հոկտեմբերի 2009 թվականի թիվ 5-Ն http://www.irtek.am/views/act.aspx?tid=51328

[87]Առողջապահության նախարարի հրաման, համար N 09-Ն, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75547

[88]Հայաստանի Հանրապետության օրենքը ոստիկանության մասին, http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1271&lang=arm#4

միջոցների և զենքի գործադրման» ուղեցույցի 14-րդ կետի՝ ձեռնաշղթաները նպատակ ունեն ապահովելու իրավախախտի հետագա գործողությունների վերահսկելիությունը և կանխելու փախուստի հնարավոր փորձը: *Եթե իրավախախտը հարձակում է գործել այլ անձանց վրա, սակայն ոստիկանության կողմից վնասազերծվելուց հետո դիմադրություն չի ցուցաբերում, ենթարկվում է նրա օրինական պահանջներին, ապա ուժ գործադրելու որևէ հիմք չկա, բացի* ***ձեռնաշղթաներ*** *հագցնելուց՝ ապահովելու իրավախախտի հետագա գործողությունների վերահսկելիությունը և կանխելու փախուստի հնարավոր փորձը*[89]*:*

Ձեռնաշղթաների կիրառման վերոնշյալ օրենսդրական պահանջները հուլիսի 2016 թվականի հուլիսի 17-31-ն ընկած ժամակահատվածում մի շարք դեպքերում չեն պահպանվել:

ՀՀ ոստիկանության ներկայացուցիչները ձեռաշղթաները կիրառել են ոչ թե որպես ոստիկանության հրահանգներին չենթարկվող քաղաքացիներին վնասազերծելու միջոց, այլ որպես նրանց անպաշտպան վիճակում ծեծի ենթարկելու գործիք: Սրա մասին են վկայում այն փաստերը, երբ, օրինակ, 2016 թվականի հուլիսի 18-ին Ազատության հրապարակից Դ. Ս.-ին բերման ենթարկելու ընթացքում նրա վրա են հարձակվում միանգամից մոտ 6 ոստիկան, քաշքշելով տանում նրան[90]: Այնուհետև, արդեն բերման ենթարկված Դ. Ս.-ին ոստիկանության ծառայողները հագցրել են ձեռնաշղթաներ և ոստիկանական մեքենայի մեջ ձեռնաշղթայված Դ.Ս.-ին դաժանաբար ծեծել են:

> *«Կարող եք տեսնել, էս ուռած տեղերը ձեռնաշղթաների արդյունքն է, որ ամենացածր օղակով, ոսկորներս ճզմելով հագցրել էին, ու անմարդկային ձևով ծեծում էին բոլորիս: Մոտավորապես մի տասնհինգ անգամ գլխիս եմ երևի հարված ստացել...»:*
>
> *Դ. Ս.*

Մի շարք քաղաքացիների վկայություններից ևս պարզ է դառնում, որ ձեռնաշղթաների կիրառման նմանօրինակ այլ դեպքեր էլ են եղել: Այսպես, օրինակ, 2016 թվականի հուլիսի 17-ին Էրեբունու ոստիկանական բաժանմունք բերման ենթարկված քաղաքացիներից մեկի վկայության համաձայն՝

[89]«Հասարակական կարգի պահպանության մեջ ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, զանգվածային անկարգությունների ժամանակ նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման» ուղեցույց, http://www.osce.org/hy/yerevan/85134?download=true

[90] «Հուլիսի 18-ի Ազատության հրապարակի բախումները», Epress.am, տեսանյութ, հուլիս 18, 2016, https://www.youtube.com/watch?v=InRbxriOTJY

հարցաքննության ընթացքում ոստիկանները կիրառել են ձեռնաշղթաներ և դաժանաբար ծեծել իրեն:

«Ոստիկանները ձեռնաշղթաներ հագցրեցին, բարձրացրին գետնից ու կրկին սկսեցին ծեծել ինձ»:

Ս.Հ.

«2016 թվականի հուլիսի 17-ին՝ մոտ 18.30 Ազատության հրապարակում էի: 15 րոպեի ընթացքում, քանի դեռ այլ ակտիվիստների հետ խաղաղ խոսում էինք ու քննարկում Ֆեյսբուք սոցիալական ցանցից ստացված տեղեկությունները, ոստիկաններով լի ոստիկանական մեքենաներ մոտեցան հրապարակին տարբեր կողմերից, և մոտ 25-30 ոստիկան հարձակվեցին իմ և մյուս ակտիվիստների վրա: Հրամայեցին պարկեմ ասֆալտին, ապա ամուր սեղմելով ձեռնաշղթաներ հագցրին ու դաժանաբար ծեծեցին: Մարմնիս տարբեր մասերին ոտքով ու բռունցքներով հարվածներ հասցրին: Չեմ հիշում թե քանի հարված եմ ստացել գլխիս»:

Վ.Ղ.

Ոստիկանությունը մի շարք դեպքերում կիրառել է ձեռնաշղթաներ նաև արդեն բերման ենթարկված անձանց հանդեպ[91]:

«2016 թվականի հուլիսի 29-ին ոստիկանական մեքենայի մեջ հեռախոսազանգ ստացա և երբ հեռախոսս հանեցի, ոստիկանը խլեղ այն, ապա հետ տվեց՝ հրահանգելով անջատել: Ես հետևեցի նրա հրահանգին, ապա ինձ ձեռնաշղթաներ հագցրեցին»:

Մ.Ս.

Մահակներ

2016 թվականի հուլիսի 17-30-ն ընկած ժամանակահատվածում, ըստ տուժողների դատաբժշկական փորձաքննություններում ներառված տեղեկությունների՝ ոստիկանությունը խախտել է նաև մահակների կիրառության ներքին օրենսդրական կարգը:

[91] «Ինձ ձեռնաշղթաներ են հագցնում, չգիտեմ ինչի».ոստիկանությունը շարունակում է բերման ենթարկել, a1plusnews, տեսանյութ, հուլիս 18, 2016, https://www.youtube.com/watch?v=uob02vwmsUM

Այսպես, օրինակ, քաղաքացի Ա.Մ.-ի դատաբժշկական փորձաքննության տվյալների՝ հուլիսի 20-ի երեկոյան պայթյուններ լսելուց հետո նա դուրս է եկել տնից՝ հասկանալու համար, թե ինչ է կատարվում: Այդ պահին նրա վրա են հարձակվել կարմիր բերետավորներն ու մահակներով հարվածել նրա գլխին և մարմնի տարբեր մասերին: Մ.Շ.-ի գործին կցված դատաբժշկական փորձաքննության համաձայն՝ 2016 թվականի հուլիսի 20-ին Խորենացի փողոցում նրա վրա են հարձակվել 7-8 ոստիկանական համազգեստով անձինք, ովքեր առանց բացատրությունների մահակներով խփել են իր գլխին և մարմնի այլ հատվածներին, ինչի հետևանքով նա ստացել է գլխուղեղի ցնցում, գանգուղեղային վնասվածք և քթոսկրի կոտրվածք[92]:

Ֆիզիկական ուժ և բռնություն

Ձեռնաշղթաների և մահակների կիրառման կարգի խախտումներին զուգահեռ՝ ՀՀ ոստիկանությունը, մի շարք անձանց վկայությունների համաձայն, 2016 թվականի հուլիսի 17-ից մինչև 30-ն ընկած ժամանակահատվածում արձանագրվել են նաև ֆիզիկական ուժի կիրառման բազմաթիվ դեպքեր և՛ Ազատության հրապարակում, և՛ Սարի Թաղում, և՛ Խորենացի փողոցում, և՛ հավաքի մասնակցի գտնվելու այլ փաստացի վայրում:

Ավելին՝ որոշ անձանց հանդեպ ֆիզիկական ուժ կիրառել՝ անկախ ցույցերին նրանց դրսևորած մասնակցությունից: Այսպես, օրինակ, Վ. Շ.-ը ձերբակալվել է ցույցերի աշխարհագրական սահմաններից դուրս՝ իր աշխատավայրին մոտ: Ըստ Վ. Շ.ի վկայության՝ 2016 թվականի հուլիսի 17-ին բերման ենթարկելուց հետո դիմակներ հագած ոստիկանական համազգեստով անձինք նրան դաժան ծեծի են ենթարկել: Բերման ենթարկված Վ. Շ.-ին ծեծելու ընթացքում ոստիկանները ոտքով հարվածել են նրա *կրծքավանդակին, որովայնին և դեմքին*[93]*:*

Բացի այդ, 2016 թվականի հուլիսի 20-ի լույս 21-ի գիշերը ոստիկանության կողմից խաղաղ ցուցարարներին ցրելու ընթացքում արված տեսանյութերը հստակ ցույց են տալիս, որ ֆիզիկական ուժ է կիրառվել դիմադրություն չցուցաբերող անձանց նկատմամբ: Ոստիկանները և համազգեստ հիշեցնող

[92] Թե ՀՀ ԿԱ Ոստիկանության պետի 23.10.2009 թ.-ի թիվ 5-Ն հրամանը և թե ՀՀ առողջապահության նախարարի 20.04.2012թ.-ի թիվ 09-Ն հրամանի 21-րդ կետը մահակներով մարդկանց գլխին հարվածելը թույլատրելի չեն համարում:

[93] Ավետիք Իշխանյան, Մարդու իրավունքները Հայաստանում-2016, Lragir.am, փետրվար 1, 2017, http://www.lragir.am/index/arm/0/right/view/147087

տաբատ և սպիտակ շապիկ կրող անձիք, որոնք առանձնանում են ոստիկանների խմբից, հարձակվել են ցուցարարների վրա և նրանց քաշքշելով տեղափոխել Խորենացի փողոցում տեղակայված ոստիկանական բարիկադների հետև: Բերման ենթարկվողների ձեռքերը կոպիտ կերպով ոլորվել են[94], ինչպես նաև անձանց վզի հատվածում սեղմելով՝ ստիպել են նրանց քայլել կռացած[95]: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ ոստիկանությունն անօգնական վիճակում է թողել հատուկ միջոցների կիրառման արդյունքում տուժած անձանց[96]:

«2016 թվականի հուլիսի 18-ին երկու ոստիկան ոլորեցին ձեռքերս մեջքիս ետևում և ուժով տարան դեպի ոստիկանական մեքենա, որը 10-15 մետր հեռավորության վրա էր: Ոլորված ձեռքերի ցավի պատճառով չեի կարողանում շարժվել ու ոստիկաններն ինձ քարշ էին տալիս: Մեքենայի ճանապարհին մեկ այլ ոստիկան ուժգին հարվածեց ստամոքսիս առանց որևէ բան ասելու»:

Ա.Օ.

Նմանօրինակ խախտումների դեպքերը բազմաթիվ են: Այսպես, օրինակ, 2016 թվականի հուլիսի 21-ին ոստիկանության կողմից անօրինական և անհամաչափ ֆիզիկական ուժի կիրառման արդյունքում կոտրվածք է ստացել կինոռեժիսոր Արամ Շահբազյանը: Ոստիկանության Էրեբունի բաժին մտնել ցանկացող Շահբազյանին ոստիկանության ծառայողները վիրավորել են, այնուհետև, տապալել գետնին և սկսել ծեծել, ինչի հետևանքով ռեժիսորը ստացել է ձախ թևի կոտրվածք[97]:

2016 թվականի հուլիսի 21-ին ծեծի է ենթարկվել 30-ամյա Ա. Թ.ն, ում ծնոտը կոտրվել է: Ըստ Ա. Թ.ի՝ 2016 թվականի հուլիսի 20 լույսի 21-ի գիշերը ոստիկանները նրան տարել են ոստիկանական արգելապատնեշի ետնամաս ու ծեծել: Այնուհետև, ոստիկանության ծառայողները նրան տեղափոխել են Երևանի ոստիկանության Շենգավիթի բաժին մոտավորապես առավոտյան

[94]«Բախումներ Խորենացի փողոցում. հուլիսի 29», CivilNet TV, տեսանյութ, հուլիս 29, 2016, https://www.youtube.com/watch?v=dJVwVa_uFh8

[95] «Գիշերը մի քանի տասնյակ մարդ բերման ենթարկվեց Խորենացի փողոցից», Ազատություն, տեսանյութ, հուլիս 21, 2016, https://www.youtube.com/watch?v=AWxb5eBC6ZM

[96] Խոշոր բախում Խորենացի փողոցում՝ ոստիկանների և ցուցարարների միջև, FBH.am, տեսանյութ, հուլիս 20, 2016, https://www.youtube.com/watch?v=KFgtdiCHLJ4

[97] Գոհար Հակոբյան, «Կինոռեժիսորը՝ ոստիկանների կողմից ծեծվելու մասին. «Տվին, ջարդեցին, մեկն էլ ասեց՝ ս… եղի»», Առավոտ, հուլիս 22, 2016, http://www.aravot.am/2016/07/22/718651/

ժամը 4-ին, որտեղ նրան նորից ծեծել են ու միայն առավոտյան ժամը 10-ին շտապօգնության մեքենան նրան տեղափոխել է հիվանդանոց[98]:

Ոստիկանությունը բռնություն է կիրառել նաև տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ: 2016 թվականի հուլիսի 18-ին ոստիկանները առանց համապատասխան նախազգուշացման, միանգամից հարձակվում և քարշ են տալիս ձեռնափայտերի վրա հենվելով կանգնած անձին, այնուհետև նրան քաշքշելով տանում դեպի մեքենա՝ ճանապարհին մի կողմ շպրտելով նրա ձեռնափայտերը և բռնելով նրա ոտքերից՝ այդ թվում կոտրված ոտքից[99]:

«2016 թվականի հուլիսի 29-ին Խորենացի փողոցում ոստիկանական մեքենա նստեցնելիս ոստիկանները հարվածել են մեջքիս և գլխիս ետնամասին»:   *Ա.Հ.*

Քաղաքացի Ա.Հ.-ն տեղեկացրել է, որ 2016 թվականի հուլիսի 29-ին վնասվածքներ ունեցող անձանց օգնություն ցուցաբերելու ժամանակ ոստիկանները իջեցրել են մեքենայից և մահակով բազմաթիվ հարվածներ հասցրել, որից հետո բռնել են պարանոցից և փորձել խեղդել:

«2016 թվականի հուլիսի 29 Խորենացի և Քրիստափոր փողոցների խաչմերուկում ընկերուհուս հետ քայլելիս ինձ մոտեցան ոստիկանության աշխատակիցները, բռնեցին ձեռքերից ծնկներով գետնի վրայով քարշ տալով տարել են դեպի մեքենան, որի ընթացքում ոտքերով հարվածնել են դեմքի շրջանում, շտապօգնությունը տեղափոխել է հիվանդանոց: *Մ.Յ.*

«2016 թվականի հուլիսի 29 Սարի թաղում հանրահավաքի ժամանակ ոստիկանները հարվածել են քթիս, քաշել են պարանոցիցս, գցել են գետնին: Դիմել եմ Աբովյանի հիվանդանոց»:   *Դ.Տ.*

[98]«Հայաստան. Կամայական կալանավորումներ, դաժան ծեծ», զեկույց, օգոստոս 12, 2016, https://www.hrw.org/hy/news/2016/08/12/292965

[99] «Ինձ ձեռնաշղթաներ են հագցնում, չգիտեմ ինչի».ոստիկանությունը շարունակում է բերման ենթարկել, a1plusnews, տեսանյութ, հուլիս 18, 2016, https://www.youtube.com/watch?v=uob02vwmsUM

«2016 թվականի հուլիսի 29 Սարի թաղում գտնվելու ժամանակ ստացել եմ հարվածներ մարմնի տարբեր մասերում, վայր ընկել և ստացել մարմնական վնասվածքներ»:

Ա.Ա.

Բացի Սարի Թաղում խաղաղ ցույցի մասնակիցներից, տուժել են նաև Սարի թաղի բնակիչները, որոնք չեն մասնակցել ցույցին՝ ոմանք ոստիկանների կողմից ծեծի են ենթարկվել, ոստիկանության կողմից գործարկված նռնակներն ընկել են բնակելի տների վրա, որի արդյունքում տան բնակիչները ստացել են վնասվածքներ[100], վնասվել է գույքը:

2016 թվականի հուլիսի 17-31-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած դեպքերին առնչվող 129 դատաբժշկական (129 անձի վերաբերյալ) փորձաքննության ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ արձանագրվել են 13 տեսակի տարբեր վնասվածքներ, ընդ որում մեկ անձը ստացել է արձանագրված մեկից ավելի տեսակի վնասվածքներ. հետևյալ վնասվածքները.

2016 թվականի հուլիսի 17-30 –ը ոստիկանության կողմից կիրառված հատուկ միջոցների, բռնությունների արդյունքում վնասվածքներ ստացած և տուժող ճանաչված անձանց վնասվածքներ	
Վնասվածքի տեսակը	**Քանակը**
Քերծվածք	50
Բեկորային վնասվածք	27
Այրվածքներ	10
Պատռված վերքեր	1
Սալջարդ վերքեր	56
Լսողության խնդիրներ	1
Տեսողության խնդիրներ	3
Արյունազեղում	22
Էկզոգեն թունավորում	16
Կոտրվածք	5
Գլխուղեղի ցնցում	3

Փորձաքննություններում արձանագրված արցունքաբեր գազից սուր թունավորման երեք դեպքից մեկ տուժողը երեք ամսեկան երեխա է: Գազային և

[100] «Ահաբեկված Սարի թաղի բնակիչները», CivilNet TV, տեսանյութ, հուլիս 29, 2016, https://www.youtube.com/watch?v=asuBmIhROIA
«Սարի թաղի բնակիչները պատմում են հուլիսի 29-ի դեպքերի մասին», NewsamChannel, տեսանյութ, օգոստոս 3, 2016, https://www.youtube.com/watch?v=dZszlYfMVjY

էկզոգեն թունավորում ստացած անձանց մեջ կան նաև ոստիկաններ՝ 7 դեպքից վեցում տուժողները հենց գազը կիրառող ոստիկաններն են: Զուգահեռաբար ՀՀ Առողջապահության նախարարության պաշտոնական տվյալներով[101]՝ 2016 թվականի հուլիսի 20-ին բուժօգնության են դիմել 64 անձինք, որոնցից

- 36-ը ոստիկանության ծառայողներ՝ 18-ը թունավորվել կամ այլ կերպ տուժել են արցունքանբեր գազից,
- 11 քաղաքացի կոտրվածքներ են ստացել,
- 2 անձ այրվածքներ, 1 քաղաքացի թունավորվել է արցունքաբեր գազից,
- տուժած իգական սեռի ներկայացուցիչների թիվը 10-ն է,
- անչափահասներ չկան:

2016 թվականի հուլիսի 29-ի դեպքերի հետևանքով, ըստ ՀՀ Առողջապահության Նախարարության, բուժօգնության դիմել են հետևյալ վնասվածքներով.

- հոսպիտալացված ոստիկանների թիվը՝ 15, այրվածքներ և արցունքաբեր գազից տուժած ոստիկաններ չկան,
- այրվածքեր ստացած քաղաքացիական անձանց թիվը՝ 5,
- կոտրվածքներ ստացած քաղաքացիական անձանց թիվը՝ 22[102]:

Ակնհայտ է, որ ՀՀ Առողջապահության նախարարության կողմից տրամադրված և ՀՀ Հատուկ քննչական ծառայությունում վնասվածքների հիմքով տուժող ճանաչված անձանց վերաբերյալ տվյալների միջև առկա է հակասություն: Մասնավորապես՝ ՀՀ Հատուկ քննչական ծառայությունը 2016 թվականի հուլիսի 29-30-ը տուժող է ճանաչվել 167 քաղաքացի, որոնցից 25-ը լրագրող, 3-ը փաստաբան, 133-ը հավաքի մասնակից[103]:

---

[101]«Իրազեկ Քաղաքացիների Միավորումը» ՀԿ-ն դեռևս 2016 թ. հուլիսին հարցում էր ուղարկել Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարին, որպեսզի պարզենք Երեբունի վարչական շրջանում քաղաքացիների և ոստիկանների միջև բախումների արդյունքում քանի անձ է մայրաքաղաքի բուժ հաստատություններում բուժ օգնություն ստացել: Հարցմանն ի պատասխան՝ Առողջապահության նախարարության Աշխատակազմի ղեկավարի տեղակալի 01.08.2016թ.-ի թիվ ՎՀ8497-16 գրությամբ հայտնվել է տվյալները:

[102] Առողջապահության նախարարության Աշխատակազմի ղեկավարի տեղակալի 12.08.2016թ.-ի թիվ ԱԿ8938-16 գրություն

[103]Թեհմինե Ենոքյան, ՀՔԱ Վանաձորի գրասենյակ, *«Անպատիժ ոճիր / Տեսահաշվետվություն 2016»,* փետրվար 22, 2017, https://www.youtube.com/watch?v=bv0ak4SGv4o

ՀՀ Առողջապահության նախարարության գրությունները որևէ կերպ չեն հիշատակում պայթյունաբեկորային վնասվածքները, մինչդեռ ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից ստացված դատաբժշկական փորձաքննությունների տվյալների համաձայն՝ մի շարք անձինք (այդ թվում ոստիկաններ) ստացել են պայթյունաբեկորային վնասվածքներ:

Վնասվածքներ ստացած անձանց տվյալների վերաբերյալ հակասությունների առկայությունը մտահոգություն և կասկած է հարուցում այն առնչությամբ, որ վնասվածք ստացած ոչ բոլոր անձինք են հաշվառվել և հավանական է, որ նրանց թիվն ավելին է, քան պաշտոնական արձանագրությունների արդյունքները: Նման միտումը կարող է պայմանավորված է լինել այն դիտավորությամբ, որ հնարավորինս սահմանափակվի ոստիկանության անօրինական գործողությունների ամբողջ ծավալի պաշտոնական արձանագրումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2016 թվականի հուլիսի 17-30-ը տեղի ունեցած հավաքների ընթացքում ոստիկանությունը հավաքի մասնակիցների, պատահական անցորդների, հավաքի վայրին մոտ բնակվող ընտանիքի անդամների նկատմամբ կիրառել է ֆիզիկական ուժ, ինչպես նաև ակտիվ պաշտպանության միջոցներ՝ ձեռնաշղթաներ և մահակներ:

ՀՀ ոստիկանության ներկայացուցիչները ձեռաշղթաները կիրառել են ոչ թե որպես ոստիկանության հրահանգներին չենթարկվող քաղաքացիներին վնասազերծելու միջոց, այլ որպես հավաքի մասնակիցներին նսեմացնելու, նրանց անպաշտպանությունն ընդգծելու միջոց: Նման պնդումը հիմնավորվում է այն փաստով, որ շատ դեպքերում ձեռնաշղթաները հագցրել են արդեն ոստիկանության մեքենայի մեջ ոստիկաններով շրջապատված քաղաքացուն, հետո ծեծել են վերջինիս[104]:

Մի շարք քաղաքացիների վկայությունները փաստում են, որ ձեռնաշղթաները կիրառվել են նաև ոստիկանական բաժանմունքներում հարցաքննությունների ժամանակ:

[104] «Հուլիսի 18-ի Ազատության հրապարակի բախումները», Epress.am, տեսանյութ, հուլիս 18, 2016, https://www.youtube.com/watch?v=InRbxriOTJY

2016 թվականի հուլիսի 17-30-ն ընկած ժամանակահատվածում, ըստ տուժողների դատաբժշկական փորձաքննություններում ներառված տեղեկությունների՝ ոստիկանության կողմից խախտվել են նաև մահակների կիրառության իրավական պահանջները: Թեև իրավական կարգավորումների համաձայն[105]՝ մահակներով մարդկանց գլխին հարվածելը թույլատրելի չէ, այնուամենայնիվ, ոստիկանները դիտավորությամբ մահակներով հարվածները հասցրել են քաղաքացիների հենց փորի հատվածին և գլխին[106]:

Ձեռնաշղթաների և մահակների կիրառման կարգի խախտումներին զուգահեռ՝ ՀՀ ոստիկանությունը, մի շարք տուժողների վկայությունների համաձայն, 2016 թվականի հուլիսի 17-ից մինչև 30-ն ընկած ժամանակահատվածում ֆիզիկական ուժ է կիրառել բազմաթիվ քաղաքացիների նկատմամբ: Ընդ որում՝ նմանօրինակ դեպքեր արձանագրվել են 2016 թվականի հուլիսի 17-30-ն ընկած ժամանակահատվածում և՛ Ազատության հրապարակում, և՛ Սարի Թաղում, և՛ Խորենացի փողոցում:

Ավելին՝ որոշ անձանց ոստիկանություն բերման է ենթարկել և նրանց հանդեպ ֆիզիկական ուժ կիրառել՝ անկախ հավաքին նրանց դրսևորած մասնակցության[107]: Ոստիկանության կողմից կիրառված ուժի հետևանքով քաղաքացիները ստացել են կոտրվածքներ[108], այլ մարմնական ծանր վնասվածքներ:

Ուշագրավ է, որ 2016 թվականի հուլիսի 17-30-ն ընկած ժամանակահատվածում մի շարք բերման ենթարկված քաղաքացիներ հայտնել են, որ ոստիկանությունը հրաժարվել է նրանց տրամադրել ջուր, դեղամիջոցներ,

---

[105]ՀՀ ԿԱ Ոստիկանության պետի 23.10.2009 թ.-ի թիվ 5-Ն հրամանը և թե ՀՀ առողջապահության նախարարի 20.04.2012թ.-ի թիվ 09-Ն հրամանի 21-րդ կետը

2001 թ. ընդունված «Ոստիկանության էթիկայի մասին եվրոպական կանոնակարգի» 2-րդ գլխի Բ կետը ոստիկանության գործողությունների կամ միջամտության ժամանակ շեշտում է մարդու կյանքի հանդեպ հարգանքը, խոշտանգումներից կամ մարդու արժանապատվությունը նվաստացնելուց զերծ մնալու անհրաժեշտությունը: Ըստ Ոստիկանության էթիկայի մասին եվրոպական կանոնակարգի նույն կետի՝ ոստիկանության կողմից ուժի կիրառումը ընդունելի է միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, ընդ որում՝ այդ ուժը պետք է համապատասխանի հետապնդվող նպատակներին (Ոստիկանության էթիկայի մասին եվրոպական կանոնակարգ 2001 թ., https://www.loc.gov/law/help/police-weapons/coe.php#_ftn10)

[106]2016 թվականի հուլիսի 17-30 ոստիկանության գործողությունների հետևանքով տուժող ճանաչված անձանց դատաբժշկական փորրձաքննությունների ուսումնասիրության արդյունքներ: Օրինակ՝քաղաքացի Ա.Մ.-ի դատաբժշկական փորձաքննության տվյալների համաձայն՝ 2016 թվականի հուլիսի 20-ի երեկոյան պայթյուններ լսելուց հետո նա դուրս է եկել տնից՝ հասկանալու համար, թե ինչ է կատարվում: Այդ պահին նրա վրա են հարձակվել կարմիր բերետավորներն ու մահակներով հարվածել նրա գլխին և մարմնի տարբեր մասերին:

[107] Ավետիք Իշխանյան, Մարդու իրավունքները Հայաստանում-2016, Lragir.am, փետրվար 1, 2017, http://www.lragir.am/index/arm/0/right/view/147087

[108] Գոհար Հակոբյան, «Կինոռեժիսորը՝ ոստիկանների կողմից ծեծվելու մասին. «Տվին, ջարդեցին, մեկն էլ ասեց՝ ս… եղի»», Առավոտ, հուլիս 22, 2016, http://www.aravot.am/2016/07/22/718651/

անհրաժեշտ բուժօգնություն[109]: Ավելին՝ 2016 թվականի հուլիսի 20-ի գիշերը հավաքների վայրերին մոտ գտնվող շտապօգնության մեքենաները բուժօգնություն են ցուցաբերել միայն ոստիկաններին[110]:

2016 թվականի հուլիսի 29-ին Սարի Թաղ թաղամասում ոստիկանությունը բռնության է ենթարկել այդ թաղամասի բնակիչները, որոնք չեն մասնակցել հավաքի մասնակիցներին: Բացի այդ, ոստիկանության կողմից գործարկված նռնակներն ընկել են բնակելի տների վրա, որի արդյունքում տան բնակիչները ստացել են տարբեր մարմնական վնասվածքներ[111]:

---

[109] "Armenia 2016/2017", Annual Report by Amnesty International, February 21, 2017, https://www.amnesty.org/en/documents/pol10/4800/2017/en/

[110] «Զեկույց 2016 թ. հուլիսի 17-ից օգոստոսի 5-ը Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ», Հայաստանի Հելսինկյան կոմիտե, օգոստոսի 8, 2016, http://www.asparez.am/helsinkyan-komite-zekuyc_hy/#.WLCVcNIrLcs

[111] «Ահաբեկված Սարի թաղի բնակիչները», CivilNet TV, տեսանյութ, հուլիս 29, 2016, https://www.youtube.com/watch?v=asuBmIhROIA

«Սարի թաղի բնակիչները պատմում են հուլիսի 29-ի դեպքերի մասին», NewsamChannel, տեսանյութ, օգոստոս 3, 2016, https://www.youtube.com/watch?v=dZszlYfMVjY

2016 Թ. ՀՈՒԼԻՍԻ 17-ԻՑ 30-Ը ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՄԱՍՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ և ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Պատրաստել է «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» ՀԿ-ն

Ծանոթություն

Զեկույցի սույն բաժինն անդրադառնում է 2016 թվականի հուլիսի 17-30-ը տեղի ունեցած լրագրողների նկատմամբ բռնությունների և մասնագիտական գործունեության խոչընդոտման դեպքերին: Մանրամասն տվյալներ են ներկայացվում ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունների, դրանց հանգամանքների և հետևանքների, հարուցված քրեական գործում ներգրավված և տուժող ճանաչված ԶԼՄ-ների ներկայացուցիչների, նախաքննության ընթացքի և նշված քրգործից որոշ անջատված մասերով առաջադրված մեղադրանքների և մինչև սույն զեկույցի հրապարակումը կայացված դատավճիռների վերաբերյալ:

2016 թվականի հուլիսի 17-30-ը լրագրողների նկատմամբ թույլ տրված խախտումները ներպետական և միջազգային իրավական կարգավորումների համատեքստում

Լրագրողների իրավունքների պաշտպանությունը երաշխավորված է ՄԱԿ-ի մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածով[112], ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի ներքո[113]: Տեղեկատվության ազատությունը և մամուլի միջոցով տեղեկատվության հասանելիությունը ժողովրդավարական հասարակության անհրաժեշտ պայման է:

Լրատվամիջոցների և լրագրողների դերը խիստ կարևորվում է երկրում ընթացող կարևոր քաղաքական և սոցիալական իրադարձությունների ժամանակ տեղեկատվության հավաքման և տարածման գործում: Այս առումով Եվրոպական դատարանի կողմից հաստատված է համարվում, որ հանրային կարևորության և նշանակության հարցերի շուրջ տեղեկատվության տարածումը

[112] Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1896
[113]Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների Եվրոպական կոնվենցիա, http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=20870

ԶԼՄ-ների աշխատանքի անբաժանելի մասն է: Լրագրողներն այս առնչությամբ իրավասու են ոչ միայն տեղեկություն և մտքեր տարածել, այլ նաև լայն հասարակությունն ինքնին իրավունք ունի ստանալ այդ տեղեկատվությունը: Սա ներառում է նաև երկրում ընթացող բողոքների և հավաքների վերաբերյալ տեղեկատվության տարածումն ու լուսաբանումը, ինչը ժողովրդավարական հասարակության զարգացման կարևոր նախադրյալներից է: Այն դեպքում, երբ լրագրողները չեն կարողանում իրականացնել այդ գործառույթը, հանրային վերահսկողի նրանց դերակատարումը վերանում է[114]:

Միևնույն ժամանակ լրագրողներից պահանջվում է իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելիս պահպանել որոշակի պահանջներ: Սա առաջին հերթին վերաբերում է լրագրողի տարբերանշանի առկայությանը հատկապես ցույցերը և հավաքները լուսաբանելիս: Ընդունված է համարել, որ լրագրողի մոտ տեսանելի լրագրողական անվանանշանի/կրծքանշանի առկայությունը բավարար է և պետության կողմից չի կարող հավելյալ պահանջներ դրվել: Անթույլատրելի է լրագրողի նկատմամբ հավաքների ընթացքում ուժի գործադրումը սոսկ այն պատճառաբանությամբ, որ լրագրողը չի ունեցել հատուկ թիկնոց: Այն դեպքում, երբ լրագրողի մոտ առկա է մասնագիտական անվանանշան և վերջինս տեղեկացնում է լրագրող լինելու փաստի մասին, ոստիկանների կողմից ուժի գործադրումը որևէ արդարացում և հիմնավորում չի կարող ունենալ[115]:

Հավաքների լուսաբանման ընթացքում հավաքի մասնակիցների և լրագրողների նկատմամբ կիրառվող ընդհանուր արգելքները չեն կարող որևէ հիմնավորում ունենալ: Քանզի յուրաքանչյուր պարագայում ոստիկանության կողմից պետք է տարբերակում կատարվի հավաքին մասնակցող ենթադրյալ վտանգավոր մասնակիցների, խաղաղ մասնակիցների և լրագրողների միջև: Հետևաբար, եթե հավաքի ընթացքում կիրառվում են ընդհանուր բնույթի սահմանափակումներ, որոնք տարածվում են նաև հավաքը լուսաբանող լրագրողների վրա, ապա տեղի է ունենում Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում[116]:

Հաշվի առնելով մամուլի կարևորությունը՝ պետությունները պարտավորվում են օժանդակել և պահպանել այն սկզբունքների արդյունավետ իրականացմանը, որոնք կոչված են առավելագույս երաշխավորելու մամուլի անխափան և

[114] Observer and Guardian v. the United Kingdom, No 13585/88, 26.11.1991, § 59, Series A no. 216, and The Sunday Times v. the United Kingdom (no. 2), 26.11.1991, § 50, Series A no. 217
[115] Najfli v. Azerbaijan, No: 2594/07, 02.10.2012, §67
[116] Gsell v. Switzerland, No 12675/05, 08/10/2009, §60

անխախտ գործունեությունը: Այս առնչությամբ՝ պետությունները պետք է հստակ դիրքորոշում հայտնեն և անհանդուրժողականություն դրսևորեն լրագրողների նկատմամբ հարձակումների և բռնությունների նկատմամբ: Այն դեպքերում, երբ տեղի են ունեցել նման խախտումներ, ապա անհրաժեշտ է իրականացնել արդյունավետ քննություն և մասնագիտական տեսանկյունից գնահատել յուրաքանչյուր ապացույց[117]:

Մամուլի ազատության և լրագրողների գործունեության նմանատիպ երաշխիքներ սահմանված են նաև ՀՀ օրենսդրությամբ:

2015 թ. դեկտեմբերի 6-ին ընդունված ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածը[118] սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը:

Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Լրագրողական գործունեության խոչընդոտումները, ֆիզիկական բռնություններն ու հետապնդումները խախտում են «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը[119] համաձայն որի՝ լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում, որպես հասարակական պարտք կատարող անձ, պաշտպանվում է Հայաստանի

---

[117] The OSCE Representative on Freedom of the Media Safety of Journalists: An imperative for free media, http://www.osce.org/fom/194731?download=true

[118] Հայաստան Հանրապետության Սահմանադրություն, http://www.concourt.am/armenian/constitutions/index2015.htm

[119] ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1379

Հանրապետության օրենսդրությամբ: «Արգելվում է՝ որևէ տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանքը լրատվական գործունեություն իրականացնողի և լրագրողի նկատմամբ, լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը»:

ԶԼՄ-ների աշխատակիցների նկատմամբ արձանագրված խախտումների առնչությամբ ըստ անկախ փորձագետների և տուժածների փաստաբանների՝ պետք է կիրառվի ՀՀ քրեական օրենսգրքի 164 հոդվածը[120], որում նշվում է. «Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը կամ նրան տեղեկություններ տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով: Նույն արարքները, որոնք կատարել է պաշտոնատար անձն իր պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա»:

2016 թվականի հուլիսի 17-30-ը լրագրողների նկատմամբ թույլ տրված խախտումները

2016 թվականի հուլիսի 17-30-ը ընկած ժամանակահատվածում լրագրողների եւ լրատվամիջոցների իրավունքների խախտումները (օրինական մասնագիտական գործունեության խոչընդոտումները) ներկայացնում ենք ըստ հետեւյալ դասակարգման.

- ֆիզիկական բռնություններ լրագրողների եւ օպերատորների նկատմամբ,
- լրագրողական տեխնիկայի վնասում կամ ոչնչացում,
- լրագորղական նյութերի՝ լուսանկարներ, տեսանյութեր, ոչնչացում,
- ԶԼՄ աշխատակիցների բերման ենթարկում,
- հետապնդում լրագրողների և օպերատորների նկատմամբ,

[120] ՀՀ Քրեական օրենսգիրք, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110893

- սպառնալիք լրատվամիջոցների աշխատակիցների նկատմամբ:

Ֆիզիկական բռնություն

2016 թվականի հուլիսի 17-30-ը տեղի ունեցած հավաքների, ինչպես նաև ցուցարարների ու իրավապահ մարմինների գործողությունների լուսաբանման ընթացքում թիրախավորվել եւ ֆիզիկական բռնության են ենթարկվել 19 լրագրող եւ օպերատոր, որոնցից 3–ը՝ 2016 թվականի հուլիսի 17-21-ն ընկած ժամանակահատվածում, 16-ը՝ 2016 թվականի հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը:

Ընդ որում, բռնությունները կիրառել են ոչ միայն ոստիկանները, այլև քաղաքացիական հագուստով անձինք, որոնք գործել են ոստիկանության հովանավորությամբ:

Տուժած լրագրողների վկայությամբ՝ ոստիկանների գործողությունները միտումնավոր և նպատակաուղղված բնույթ են կրել, եւ նույնիսկ ներկայանալն ու լրագրողի վկայական ցույց տալը, կամ տեսախցիկների վրա նշված լրատվամիջոցների տարբերանշանները ԶԼՄ ներկայացուցիչներին զերծ չեն պահել բռնություններից: Այս իրադարձությունների ժամանակ աննախադեպ էր լրագրողների դեմ հատուկ միջոցների օգտագործումը: Ընդ որում՝ դրանք կիրառելուց առաջ ոստիկանները ԶԼՄ-ների ներկայացուցիչներին հրահանգել են հավաքվել մեկ վայրում, ինչը վկայում է, որ այդ գործողությունները միտումնավոր էին և նպատակաուղղված:

Այս ամենի հետեւանքով տուժել են «4news.am» կայքի թղթակից Արթուր Հայրապետյանը, «Iravaban.net»-ի թղթակից Գեւորգ Թոսունյանը, «Ազատություն» ռադիոկայանի լրագրողներ Արտակ Համբարձումյանը, Կարլեն Ասլանյանը, Հովհաննես Մովսիսյանը եւ օպերատոր Գարիկ Հարությունյանը, «A1+»-ի թղթակից Ռոբերտ Անանյանը եւ օպերատոր Տիգրան Բաղալյանը, «Civilnet.am»-ի լրագրող Մկրտիչ Կարապետյանը, «1in.am»-ի լրագրող Մարիամ Գրիգորյանը եւ օպերատոր Դավիթ Հարությունյանը, ազատ ֆոտոլրագրող Գեւորգ Ղազարյանը, «Panorama.am»-ի օպերատոր Հովիկ Գրիգորյանը, «Արմենիա» հեռուստաընկերության լրագրող Աղվան Ասոյանը եւ օպերատոր Ալբերտ Գալստյանը, «Lragir.am»-ի օպերատոր Մարութ Վանյանը, ռուսական «LifeNews» հեռուստաընկերության լրագրող Եվգենիա Զմանովսկայան ու օպերատոր Տիգրան Գասպարյանը, «Newspress.am» կայքի օպերատոր Լեւոն Սարգսյանը, «News.am» լրատվական կայքի ֆոտոլրագրող, օպերատոր Խորեն Գրիգորյանը եւ այլոք:

Լրագորղների նկատմամբ ֆիզիկական բռնությունների հանգամանքների և ըստ ժամանակագրության դրանց դրսևորումների ուսումնասիրությունը

վկայում է, որ, երբ հավաքների վայրում զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները փորձել են իրականացնել իրենց մասնագիտական պարտականությունները և տեղեկություններ հավաքել ընթացող իրադարձությունների մասին նրանց նկատմամբ կիրառվել է բռնություն կամ ցուցաբերվել է վատ վերաբերմունք: Այս կերպ ոստիկանությունը խոչընդոտել է իր ոչ համաչափ գործողությունների լուսաբանումը:

Ընդ որում, տեղեկություններ հայթայթելու լրագրողների աշխատանքը ոստիկանությունը որակել է որպես խոչընդոտում իր պարտականությունների կատարմանը և այդ հիմքով փորձել է արդարացնել ԶԼՄ-ների ներկայացուցիչների նկատմամբ բռնությունները:

«Կուտակված ոստիկանների միջից մի գազազած ոստիկան կարմրած աչքերով հարձակվեց ինձ վրա ու սկսեց ոտքերով հարվածել և ձեռքիցս խլեց բջջայինը, որով նկարահանում էի: Ես միայն հասցրեցի ասել, թե ինչու ես հարվածում: Թոկից փախած ոստիկանը, առանց ամաչելու, նայում էր աչքերիս մեջ, հայհոյում ու շարունակում ոտքերով հարվածներ հասցնել ու անամոթաբար ստելով ասում, թե չի հարվածում, բայց միաժամանակ շարունակում էր հարվածները: Այդ ոստիկանը չէր հանգստանում, շարունակում էր հարվածել, այս անգամ արդեն բռունցքներով: Չեմ հիշում արդեն՝ ինչպես եմ հայտնվել ոստիկանական պարեկային ծառայության մեքենայի մեջ, ակնոցս արդեն թռել էր հարվածների ընթացքում: Ոստիկանության պարեկային ծառայության մեքենայի պատուհանը բաց էր, այդ նույն ոստիկանը հայհոյելով շարունակում էր պատուհանից ներս խուժել և բռունցքներով հարվածում էր դեմքիս»[121]:

«4news.am» լրատվական կայքի թղթակից Արթուր Հայրապետյան

2016 թվականի հուլիսի 17-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում, Ազատության հրապարակի տարածքում իր լրագրողական աշխատանքը կատարելու ընթացքում ոստիկանների կողմից ֆիզիկական բռնության է ենթարկվել «4news.am» կայքի թղթակից Արթուր Հայրապետյանը: Լրագրողը բջջային հեռախոսով փորձել է նկարել, թե ինչպես են ոստիկանները տարեց տղամարդու թևերը ոլորելով քարշ տալիս ու տեղափոխում պարեկային ծառայության մեքենա: Արթուր Հայրապետյանը մոտեցել է ոստիկաններից մեկին, հարցրել, թե ինչ է կատարվում, ինչու են քաղաքացուն բաժին տանում: Ոստիկանը սկզբում ասել է, թե չի պարտավորվում պատասխանել հարցին, հետո ծեծի է ենթարկել լրագրողին:

[121] Գրիշա Բալասանյան, Լրագրողները պնդում են, որ բռնության են ենթարկվել ոստիկանների կողմից, Հետք, հուլիսի 23, 2016, 15:05, http://hetq.am/arm/news/69370/lragroxnery-pndum-en-or-brnutyan-en-entarkvel-ostikanneri-koxmic.html/

2016 թվականի հուլիսի 18-ին Խորենացի փողոցում ոստիկանը հարվածել է «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Արտակ Համբարձումյանին[122] այն բանից հետո, երբ գործընկերների հետ մոտեցել է իրավապահներին ու հետաքրքրվել, թե ինչու են բերման ենթարկում հարակից պուրակի ծառերի տակ նստած քաղաքացիներին։

«2016 թվականի հուլիսի 18-ի ցերեկը Խորենացի փողոցում ոստիկանները բերման ենթարկեցին քաղաքացիներին, որոնցից մի քանիսը հարակից պուրակի ծառերի տակ էին նստած, մի քանիսը՝ խոտին: Ոստիկանները եկան, միանգամից բոլորին տարան՝ առանց որևէ հիմնավորման կամ պատճառ նշելու: Պարզապես նստեցնում էին մեքենաներն ու տանում:

Երբ բերման ենթարկելու հերթական փուլն ավարտվեց, լրագրողներով մոտեցանք այնտեղ գործողությունները ղեկավարող ոստիկանին՝ հարցնելու, թե որն է պատճառը, որ այդ մարդկանց բերման են ենթարկում:

Քաղաքացիներին բերման ենթարկելու հրաման տված ոստիկանը գտնվում էր ոստիկաններից կազմված պատի հետևում: Ու այդ պատ կազմած ոստիկանները մեզ թույլ չէին տալիս մոտենալ իրենց ղեկավարին, մենք էլ փորձում էինք, իրենցից չանցնելով, ամեն դեպքում, հարցերն ուղղել: Ղեկավարն էլ հետևից պատասխանում էր:

Երբ հերթական անգամ ղեկավար ոստիկանին հարց ուղղեցի, թե ինչու են մարդկանց բերման ենթարկում, արդյոք ունի հիմնավորում, դիմացի ոստիկաններից մեկը (տեսանյութում էլ երևում է՝ ակնոցով ոստիկանը) բռնեց իմ միկրոֆոնից ու ինչ-որ բան ասաց, արդեն չեմ հիշում, թե ինչ: Ես փորձեցի ազատել միկրոֆոնը, հետ քաշել: Այդ պահին նա ձեռքով հարվածեց իմ փորին:

Երբ ղեկավարը, որը հարվածի պահին այդտեղ չէր գտնվում, հետ եկավ, ասացի՝ ձեր ենթական այսպիսի բան է արել, ասաց՝ չի արել, թեև նա տեղում չէր: Ինձ հարվածող ոստիկանը հաջորդող օրերին շարունակում էր նույն տեղում ծառայել:

Այսինքն՝ այդ հրապարակումը ոստիկանության համար ոչինչ չէր նշանակում, թեև ակնհայտ էր, որ այդտեղ հարվածելու փաստ կար: Ոստիկանը հարվածել էր լրագրողին, և իմ միկրոֆոնը բռնելը լրագրողի աշխատանքը խոչընդոտել էր, ինչը օրենքով արգելված է»[123]*:*

[122] Արտակ Համբարձումյան, Ոստիկանը հարվածեց «Ազատության» լրագրողին, Ազատություն, հուլիսի 18, 2016, http://www.azatutyun.am/a/27865228.html

[123] Աննա Բարսեղյան, #Erebuni կամ Խորենացույց. բռնության ենթարկված լրագրողների պատմությունները (լրացվում է), Media.am, հուլիսի 21, 2016, http://www.media.am/Erebuni-Protest-Journalists-Beaten

2016 թվականի հուլիսի 21-ի գիշերը՝ ժամը 03:00-ից 03:30-ի ժամանակահատվածում, մայրաքաղաքի Տիգրան Մեծի պողոտայում գտնվող «Հայէկոնոմբանկի» մասնաճյուղի մոտ ծեծի է ենթարկվել «Iravaban.net» լրատվամիջոցի թղթակից Գեւորգ Թոսունյանը այն բանից հետո, երբ նկարահանել է քաղաքացիական անձանց կողմից ոստիկանների իմացությամբ հավաքի մասնակիցների նկատմամբ դրսևորվող բռնության դրվագները:

«2016 թվականի հուլիսի 20-ի լույս 21-ի գիշերը, ժամը մոտավորապես 03:00-03:30 սահմաններում Խորենացի փողոցի ակցիան էի լուսաբանում: Այդ ընթացքում Տիգրան Մեծ պողոտայից դեպի մեզ վազելով մի քանի երիտասարդներ եկան ու ասացին, որ իրավիճակը Տիգրան Մեծի պողոտայում լարված է:

Ես գնացի՝ լուսաբանելու, ու նկատեցի, որ Տիգրան Մեծ պողոտայում՝ կամուրջի տակ, ոստիկանական ուժեր էին կանգնած շարքով, իսկ նրանցից մոտ 20-30 մետր հեռավորության վրա 6-7 ակտիվիստներ էին, որոնց տեսել էի Խորենացու ակցիայի ժամանակ: Նրանց դիմաց ավելի մեծ թվով քաղաքացիական հագուստով անձինք էին, որոնք շշեր էին նետում ակտիվիստների վրա:

Ես նկարեցի այդ գործընթացը, նաև նկարեցի այդ քաղաքացիական հագուստով անձանց: Քանի որ լավ չէի հասկանում՝ ինչ է կատարվում, մոտեցա այդ քաղաքացիական հագուստով անձանց: Նրանք ինձ անծանոթ էին: Նրանցից մեկը կանչեց ինձ, ասաց՝ «Արի, արի, ստեղ անվտանգ ա»:

Մտա իրենց շարքերը, ու իրենք սկսեցին ինձ ասել՝ «Մի՛ նկարի, մի՛ նկարի»: Տեսա, որ ագրեսիվ են, անջատեցի տեսախցիկը ու ուզեցի հեռանալ այդտեղից: Բայց ինձ մոտեցան մի քանիսը, ասացին՝ «Հլը ջնջի, հլը չիպդ տուր»: Ասացի՝ «Լավ, կտամ չիպը» ու զգացի՝ ինչպես մի քանի հոգի սկսեցին ինձ մեջքից հարվածել:

Այդ մարդիկ չէին բավարարվում միայն նրանով, որ չիպը տամ: Ասացի, որ կտամ չիպը, բայց ինձ գցել էին գետնին, շարունակում էին ծեծել: Ես շոկի մեջ էի, որովհետև ինձ թվաց, որ իրենք ուզում են ինձ վնաս պատճառել. իրենց նպատակը զուտ չիպը վերցնելը չէր, իմ աշխատանքը խոչընդոտելը չէր:

Ես կարծում եմ, որ այդ մարդիկ քաղաքացիական հագուստով ոստիկաններ էին: Ես նրանց մինչև այդ երբեք չէի տեսել ակցիաների ժամանակ: Նրանք բավական ագրեսիվ էին և շշեր էին նետում հենց ակցիայի մասնակիցների վրա, այն մասնակիցների, որոնց ես նախկինում էլ տեսել էի: Նրանք չէին ուզում, որ իրենց դեմքը երևա, ագրեսիվորեն պահանջում էին, որ չնկարեմ ու սպառում էին, որ էլ չգնամ ակցիաների: Այդ ամենը ինձ

համար հիմք է կարծելու, որ այդ անձինք ոստիկաններ էին»[124]:

«Iravaban.net» կայքի լրագրող Գևորգ Թոսունյան

2016 թվականի հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը՝ Ազատության հրապարակից մեկնարկած խաղաղ երթի և այնուհետև Սարի թաղում ընթացող հավաքի, ոստիկանության կողմից հավաքի մասնակիցների նկատմամբ կիրառված հատուկ միջոցների կիրառման գործընթացում լուսաբանող իրականացնող լրատվամիջոցների նկատմամբ կիրառվել են թե՛ ֆիզիկական բռնություններ և թե՛ վերջիններս տուժել են հատուկ միջոցների հետևանքով:

Ես հենց այդ ոստիկանական պատնեշի մոտ էի, երբ կրակոցները սկսվեցին, մենք փորձեցինք ավելի վերև բարձրանալ: Ես անձամբ լրագրողների առումով որևէ զգուշացում չեմ լսել, որ գործողություն է սկսվելու: Երբ Սարի թաղի այդ հատվածում սկսեցին կրակոցները, լուսային ռումբերն արձակվեցին, կարծես ծուխ էլ կար, քանի որ հազոցներ էին լսվում: Մենք բարձրացանք մի փոքր բարձր հատված, լուսային կրակոցները շարունակում էին, ինչից հետո մոտ երեք-չորս տասնյակ քաղաքացիական հագուստով անձանց տեսա, որոնք մեծ չափի մահակներով սկսեցին համատարած հարվածել բոլորին: Իմ ձեռքին այդ ժամանակ տեխնիկա կար նկարահանող, քաղաքացիական հագուստով մի անձ մոտեցավ ինձ, բեյջս ցույց տվեցի, որ լրագրող եմ, դրանից հետո բեյջս պոկեցին, այնուհետև հարվածեցին, տեխնիկան գցեցին գետնին: Մեկն ասաց՝ «Էդ նկարո՞ւմ ես», ու սկսեցին հարվածել գլխիս: Փաստորեն թիրախավորում էին լրագրողներին: Հիմնականում հարվածները գլխիս, պարանոցիս շրջանում էին: Ես գոռում էի՝ լրագրող եմ, բայց չեմ նկարում, որ գոնե դադարեն հարվածները, բայց նրանք շարունակում էին: Մոտ երկու րոպե 4-5 քաղաքացիական անձինք շարունակում էին հարվածներ հասցնել: Հետո լուսային պայթյուն եղավ, ոստիկանները շեղվեցին, և ես կարողացա այդ տարածքից հեռանալ»[125]:

«Ազատություն» ռադիոկայանի լրագրող Հովհաննես Մովսիսյան

«Ազատություն» ռադիոկայանի լրագրողներ Հովհաննես Մովսիսյանի, Կարլեն Ասլանյանի և օպերատոր Գարիկ Հարությունյանի վրա քաղաքացիական հագուստով անձինք հարձակվել են հենց ուղիղ եթերում աշխատելու ժամանակ: Նրանց խոսքով՝ հարձակվողները քաջ իմացել են, որ

[124] Աննա Բարսեղյան, #Erebuni կամ Խորենացույց. բռնության ենթարկված լրագրողների պատմությունները (լրացվում է), Media.am, հուլիսի 21, 2016, http://www.media.am/Erebuni-Protest-Journalists-Beaten

[125] Ասլանյան Կարլեն, Արտակարգ թողարկում. Լարված իրավիճակ Սարի թաղում և Խորենացի փողոցում, Տաթևիկ Լազարյան, հուլիսի 29, 2016, http://www.azatutyun.am/a/27888947.html (04:39:20-04:42:15)

իրենք լրագրողներ են՝ նկարահանող խումբը ուղիղ հեռարձակում իրականացնելիս է եղել, խմբի բոլոր երեք անդամները կրել են լրագրողական վկայականներ: Ուղիղ եթերն ընդհատվել է:

> …Երբ մենք ցուցարարների հետ սկսեցինք նահանջել, որպեսզի խուսափենք այրվածքներ ստանալուց, երկու ճանապարհ կար. մեկը տանում էր դեպի Նար-Դոսի փողոց, մյուսը՝ փակուղի: Մի քանի տասնյակ հաղթանդամ տղամարդիկ, բոլորի ձեռքերին մեծ մահակներ, երկաթյա ձողեր, անմիջապես շուրջկալեցին ինձ ու Հովհաննեսին, օպերատորին մեր տեսադաշտից բաց էինք թողել, բարեբախտաբար, նա հակառակ ուղղությամբ էր գնացել: Մենք անմիջապես հասկացանք, որ սրանք ցուցարարներ չեն, չեմ էլ կարող պնդել, որ ոստիկաններ են, քանի որ քաղաքացիական հագուստով էին, իրենք էլ շատ լավ գիտեին, որ մենք լրագրողներ ենք, վկայականներ ունեինք, իմ ձեռքին մեծ միկրոֆոն կար, Հովհաննեսի ձեռքին էլ մեր հեռարձակման սարքն էր, հեռախոսը, որով նա զուգահեռ հեռարձակում էր իրականացնում: Խմբի ղեկավարն էր հավանաբար, միանգամից հրահանգեց՝ ծեծել, խփել, ջարդել, խլել ձեռքերից տեսախցիկը, հեռարձակումը, ամեն ինչ վերացնել: Այսինքն՝ ես ենթադրում եմ, որ նրանք գիտեին՝ դա ուղիղ եթեր է, անմիջապես անցան բռնությունների: Իհարկե, ես փորձեցի մի կերպ պաշտպանել ինքս ինձ ու միկրոֆոնը: Գլխի և պարանոցի հատվածում մի քանի հարվածներ ստացա, մի կերպ կարողացա այդ փակուղուց դուրս պրծնել»[126]:
>
> *«Ազատություն» ռադիոկայանի լրագրող Կարլեն Ասլանյան*

Տեխնիկայից զրկվելուց հետո Հովհաննես Մովսիսյանն սկսել է հեռախոսով հաղորդել տիրող իրավիճակի մասին: Չընդհատելով եթերը՝ նա աշխատել է՝ փախչելով քաղաքացիական հագուստով մարդկանց հետապնդումից:

Ուղիղ եթերում աշխատելու ժամանակ ոստիկանների նետած պայթուցիկներից վնասվածքներ են ստացել **«A1+»-ի լրագրող Ռոբերտ Անանյանը** եւ **օպերատոր Տիգրան Բաղալյանը:** Լրագրողի դիտարկմամբ՝ ԶԼՄ աշխատակիցները թիրախավորված են եղել: Առավելապես ագրեսիվ են եղել այն լրատվամիջոցների ներկայացուցիչների նկատմամբ, որոնք տեսաձայնագրող սարքեր են ունեցել: Պայթուցիկները թիրախավորված նետել են հենց այն ուղղությամբ, որտեղից լրագրողական տեսախցիկների լույսեր են արձակվել:

[126] Ասլանյան Կարլեն, Արտակարգ թողարկում. Լարված իրավիճակ Սարի թաղում և Խորենացի փողոցում, Տաթևիկ Լազարյան, հուլիսի 29, 2016, http://www.azatutyun.am/a/27888947.html (04:06:02 - 04:06:30) (04:07:50 – 04:09:25)

Ոստիկանների առանձին ներկայացուցիչներ մոտեցան լրագրողներին և հորդորեցին մի կողմ քաշվել: Լրագրողները ոստիկանների հորդորը մեծ մասամբ կատարեցին: Սարսափելին այն էր, որ պայթյունները սկսեցին լսվել հենց այդ տարածքից, որտեղ լրագրողներն էին հավաքված: Լևոն Երանոսյանը, ով մինչ այդ հայհոյում էր պատգամավորին՝ Զարուհի Փոստանջյանին, քաղաքացիներին, առանձնահատուկ վերաբերմունք ուներ լույսի նկատմամբ, որ տեսախցիկի վրա լույս կար, գոռում էր՝ անջատեք թե չէ.. իր բառապաշարով: Մեր դեպքում էլ թիրախ դարձան այն լրագրողները և օպերատորները, որոնք առաջին հերթին ունեին տեսախցիկ, և լույս էր վառվում:

Ինչ տեղի ունեցավ մեզ հետ: Պայթյուն, պայթյուն… հաշվել հնարավոր չէր, թե քանի պայթյուն եղավ, որտեղ… մեր գլխի վերևն էլ պայթեց, կողքը, մյուս կողքը, հետևը: Այսինքն դու որևէ տեղ չունես փախչելու, պատսպարվելու: Չես փախչում, քո մասնագիտական պարտականությունն այդ իրավիճակում շարունակում ես կատարել, բայց ուզում ես ավելի անվտանգ տեղ գնալ: Չհասցրեցինք փաստորեն: Պայթյունների մեջ էինք, բայց չէի հասկանում՝ ինչ է կատարվում: Ընթացքում օպերատորը ցույց տվեց, որ ձեռքս վնասել եմ, հետո հասկացա, որ դժվարությամբ եմ քայլում, այդ իրավիճակում շատ դժվար էր և աշխատել, պատասխանատու ես քո լսարանի առջև, բայց պետք է աշխատես: Այնուամենայնիվ փորձեցինք դադարեցնել աշխատանքը, ուղիղ եթերը չանջատվեց, քաղաքացիները, սարի թաղցիները մոտեցան, վերքերի շրջանում մշակումներ իրականացրեցինք, քաղաքացիներից մեկն ասաց, որ կարող է մեզ հասցնել բժշկական կենտրոն, մեծ սիրով համաձայնեցինք: Նստեցինք մեքենա, այդ պահին ուղիղ հեռարձակումը շարունակվում էր: Հիշեցնում էինք հեռուստադիտողներին, թե ինչ էր տեղի ունեցել, գազատար էր պայթել, տուն էր այրվել: Մեքենան մի պահ կանգնեց, ինչ որ անսարքություն էր կապված մեքենայի հետ: Մոտ 15-20 ոստիկաններ հարձակվեցին մեքենայի վրա, մեզ հարցնում էին՝ որ լրատվամիջոցից եք, ովքեր եք, ասացինք, որ «A1+» հեռուստաընկերությունն ենք ներկայացնում և աշխատում ենք, մեր պարտականություններն ենք կատարում: Մեզ ուղղակի դուրս շպրտեցին մեքենայի միջից՝ թույլ չտալով անգամ հավաքվել, պայուսակ վերցնել. .. շոկային իրավիճակ էր»[127]:

«A1+»-ի լրագրող Ռոբերտ Անանյան

Նռնակի պայթյունի հետեւանքով Ռոբերտ Անանյանը ոտքերի եւ ձեռքի բեկորային վնասվածքներ է ստացել ու բուժվել հիվանդանոցում:

[127] Անանյան Ռոբերտ, Ինչ տեղի ունեցավ Սարի թաղում. «A1+»-ի լրագրողի պատմությունը (տեսանյութ), հուլիսի 30, 2016, 17:51, http://www.a1plus.am/1477514.html (04:30-09:25)

Ոստիկանության եւ ցուցարարների բախումները լուսաբանելիս ձայնային նռնակի պայթյունից վիրավորում են ստացել **«1in.am»-ի լրագրող Մարիամ Գրիգորյանը** եւ **օպերատոր Դավիթ Հարությունյանը**:

> «Երբ «Ժառանգություն» կուսակցության փոխնախագահ Արմեն Մարտիրոսյանը բանակցություններ էր վարում ոստիկանների հետ, քաղաքացիական հագուստով մի մարդ, կարծում եմ՝ ոստիկան էր, ասաց, որ վերեւ բարձրանանք, քանի որ հատուկ գործողություններ են սկսելու: Ես և իմ օպերատոր Դավիթ Հարությունյանը բարձրացանք նրա նշած ուղղությամբ, սակայն մեր ուղղությամբ ևս պայթուցիկներ նետվեցին: Պայթուցիկներն անկանոն ձևով էին նետվում մարդկանց վրա: Դրանցից մեկն ընկավ ոտքիս տակ, ոտնաթաթիս հատվածն ամբողջությամբ այրվեց: Ի դեպ, երբ բարձրացանք քաղաքացիական հագուստով անձի նշած ուղղությամբ, այնտեղ հանդիպեցինք լրագրողների: Ես համոզված եմ, որ ոստիկանները միտումնավոր էին լրագրողներին նույն վայրում հավաքել՝ թիրախավորելու նպատակով» [128]:
>
> *«1in.am»-ի լրագրող Մարիամ Գրիգորյան*

Պայթյունից ոտքի վնասվածք ստացած լրագրող Մարիամ Գրիգորյանն ապաստան է գտել մի բնակչի տանը, այնուհետեւ հոսպիտալացվել է:

Պայթյուններից ոտքի վնասվածք է ստացել նաև **«1in.am»-ի օպերատոր Դավիթ Հարությունյանը:** Վիրավոր վիճակում նա շարունակել է ուղիղ եթերի համար նկարահանել հավաքը ցրելու գործողությունները, սակայն քաղաքացիական հագուստով անձինք, ովքեր գործել են ոստիկանության իմացությամբ, և համագործակցել են ոստիկանության հետ հարձակվել ու դաժան ծեծի են ենթարկել նրան:

---

[128] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2016 թ. տարեկան զեկույց, www.khosq.am, «Զեկույցներ» բաժին, էջ 23, http://khosq.am/reports/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4-%D5%AD%D5%B8%D5%BD%D6%84%D5%AB-%D5%A1%D5%A6%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BE%D5%AB%D5%B3%D5%A1%D5%AF%D5%AB-9/

«Երբ նկարահանում էի ցույցը ցրելու տեսարանը, այդ պահին քաղաքացիական հագուստով ոստիկաններ հարձակվեցին ինձ վրա: Սկսեցին մահակներով հարվածել մեջքիս, կողքերիս: Նույնիսկ այն ժամանակ, երբ դադարել էի նկարահանելը ու փախչում էի, նրանք հետապնդում էին ինձ: Հասնելով՝ հագուստիս վրայից պոկեցին ու դեն նետեցին բեյջը եւ տեսախցիկի մարտկոցներով պայուսակը: Մի կերպ կարողացա փախչել ու ապաստան գտնել մի բնակչի տանը» [129]:

«1in.am»-ի օպերատոր Դավիթ Հարությունյան

Օպերատորը բազմաթիվ կապտուկներ է ունեցել մեջքին, կողքերին, վերջույթներին:

Սարի թաղում ոստիկանների կողմից թիրախավորված կիրառված լուսաձայնային նռնակի պայթյունից վնասվածք է ստացել նաև **անկախ ֆոտոլրագրող Գեւորգ Ղազարյանը:**

«Չգիտեմ՝ միտումնավոր էր, թե ոչ, բայց Սարի թաղում առաջին լուսաձայնային նռնակը պայթեց հենց իմ ոտքերի մոտ: Ականջներս խլացան, ոտքս վնասվեց: Ոստիկանական հատուկ միջոցների կիրառման պատճառով սկսեց այրվել տներից մեկը: Մի ողջ ընտանիք, որ ընդհանրապես ցույցին չէր մասնակցում, դուրս եկավ տանից և սկսեց բողոքել և հայհոյել ոստիկաններին: Այդ ժամանակ ոստիկանական շարքերից քաղաքացիական հագուստով մարդկանց խումբ դուրս եկավ, որոնք հարձակվեցին այդ մարդկանց վրա: Ես բնականաբար սկսեցի լուսանկարել ու տեսանկարահանել: Դա տեսնելով, վերջիններս հարձակվեցին ինձ վրա, Այդ ողջ ընթացքում ես լրագրողական վկայականով էի և բացահայտ էր, որ մամուլի ներկայացուցիչ եմ: Փորձեցի հետ վերցնել խցիկս, սպառնացին: Այդ պահին ես միակ լրագրողն էի տարածքում և հեշտ թիրախ էի նրանց համար» [130]:

Անկախ ֆոտոլրագրող Գևորգ Ղազարյան

Պայթյունից տուժել է նաեւ **«Panorama.am»-ի օպերատոր Հովիկ Գրիգորյանը:** Նրա խոսքով՝ պայթյունից հետո ոտքն անշարժացել է. «մոտ մեկ ժամ ոտքս չէի կարողանում դնել գետնին. ինչ-որ մի բան կպել էր, ցավ էի զգում», - ԽԱՊԿ-ի հետ զրույցում նշել է նա:

[129] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2016 թ. տարեկան զեկույց, www.khosq.am, «Զեկույցներ» բաժին, էջ 23, goo.gl/A8Ug5F

[130] Գարեգին Ալեքսանյան, Հուլիսի 29. ԶԼՄ-ների սև օրը, Ճամփորդ, օգոստոսի 16, 2016, http://champord.am/hulisi-29-zlmneri-sev-ory/

Ոստիկանական գործողությունների ժամանակ պայթյուն է որոտացել նաև **«ՍիվիլՆեթի» լրագրող Մկրտիչ Կարապետյանի և օպերատոր Սարգիս Խարազյանի** ոտքերի տակ, ինչի հետեւանքով Մկրտիչ Կարապետյանը թեթեւ վնասվածքներ է ստացել: Իսկ օպերատոր Սարգիս Խարազյանն այդ իրավիճակում ստիպված է եղել դադարեցնել նկարահանումները: Քաղաքացիական հագուստով ոստիկանները նաեւ մահակներով հարվածներ են հասցրել լրագրողին[131]:

«Lragir.am»-ի օպերատոր Մարութ Վանյանը տեղեկացրել է, որ իրեն բռնության ենթարկող անձինք վահաններով դուրս են եկել ոստիկանների պատնեշի հետեւի կողմից ու թիրախավորված հարձակվել հենց լրագրողների վրա:

> «Քաղաքացիական հագուստով անձինք՝ մոտ 10 հոգի, ինձ զցեցին գետնին, ձեռքիցս վերցրեցին տեսախցիկն ու հայհոյելով փայտե հաստ ձողերով սկսեցին հարվածել: Հարցնում էին, թե ինչ եմ նկարել: Ասում էի՝ լրագրող եմ, բեյջս էի ցույց տալիս, կամերաս ջարդեցին, բեյջս պոկեցին: Պայուսակով պահում էի մեկ դեմքս, մեկ կրծքավանդակս: Հարվածների մեծ մասը ստացել եմ ձեռքերիս, ուսերիս: Ամենաուժեղ հարվածը ծնկներիս հասցվեց, ահավոր ցավ զգացի, ոտքս սկսեց դողալ: Ուսապարկս քաշեցին պոկեցին վրայիցս, զցեցին մի կողմ: Ծեծելուց հետո ասում էին՝ վեր կաց, գնա, ասում էի՝ գոնե շտապօգնություն կանչեք, ոտքս կոտրվել է, չեմ կարողանում շարժվել: Ձեռքերիցս երկու հոգի բռնեցին, քարշ տալով տարան փողոցի մյուս կողմը զցեցին: Մի կերպ շտապօգնություն եմ կանչել, եկել-տարել են»[132]:
>
> *«Lragir.am»-ի օպերատոր Մարութ Վանյան*

Մարութ Վանյանը ստացել է ոտքերի եւ ուսերի սալջարդեր, իսկ գործածված պայթուցիկներից՝ բեկորային վնասվածքներ:

Սարի թաղի 1-ին փողոցում ծեծի ենթարկված **«Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվականի թղթակից Աղվան Ասոյանը** եւ **օպերատոր Ալբերտ Գալստյանը տեղեկացրել են, որ** ոստիկանության շարքերից դուրս են եկել քաղաքացիական հագուստով անձինք, ոստիկանների իմացությամբ նրանց ձեռքից վերցրել են մահակները եւ հարձակվել ցուցարարների, քաղաքացիների ու լրագրողների վրա:

---

[131] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2016 թ. տարեկան զեկույց, www.khosq.am, «Զեկույցներ» բաժին, էջ 23, goo.gl/FHvVy8

[132] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2016 թ. տարեկան զեկույց, www.khosq.am, «Զեկույցներ» բաժին, էջ 23-24, goo.gl/mVaFFU

«Քաղաքացիական հագուստով անձինք մահակներով հարձակվեցին օպերատոր Ալբերտ Գալստյանի վրա, ով այդ ժամանակ տեսանկարահանում էր տեղի ունեցող գործողությունները: Նրանք սկսեցին ոտքերով ու ձեռքերով հարվածներ հասցնել: Ես փորձեցի նրան ազատել՝ ասելով, որ հեռուստաընկերության աշխատակից է: Այդ պահին, քաղաքացիական հագուստով նույն անձինք հարձակվեցին ինձ վրա, գցեցին գետնին, աչքերիս մեջ գազ փչեցին եւ սկսեցին ծեծել, հայհոյել ինձ: Ծեծից հետո, աչքերս լվանալու համար մտա մոտակա հացի փուռ: Այնտեղ պատսպարվելու նպատակով եւս մի քանի լրագրողներ կային, որոնք նույնպես տուժել էին ոստիկանության գործողություններից ու ծեծի էին ենթարկվել քաղաքացիական հագուստով անձանցից: Լրագրողներին պաշտպանելու համար փռի դուռը կողպեցին: Սակայն քաղաքացիական հագուստով անձինք կոտրեցին դուռը եւ սկսեցին փռում եղած առարկաներով հարվածել լրագրողներին եւ փռի աշխատակիցներին»[133]:

«Արմենիա» հեռուստաընկերության լրագրող Աղվան Ասոյան

Քաղաքացիական հագուստով անձանց հարձակումից վերոհիշյալ հացի փռում պատսպարվել է նաեւ **«Newspress.am» կայքի օպերատոր Լեւոն Սարգսյանը**:

«Լրատվամիջոցների մի քանի աշխատակիցներ փուռ տեղափոխեցին **«LifeNews» հեռուստաընկերության օպերատոր Տիգրան Գասպարյանին**, ով ոստիկանության կիրառած լուսաձայնային նռնակներից վիրավորվել ու ոտքի բեկորային վնասվածքներ էր ստացել: Նրան օգնում էին, որպեսզի տեղափոխեն հիվանդանոց: Այդ ժամանակ քաղաքացիական հագուստով անձինք հարձակվեցին փռում գտնվողների, այդ թվում՝ ինձ վրա, խլեցին տեսախցիկս, որում իմ տեսանկարահանած բոլոր նյութերն էին»[134]:

«Newspress.am» կայքի օպերատոր Լեւոն Սարգսյան

Ոստիկանության կիրառած հատուկ միջոցներից ոտքի բեկորային վնասվածքներ է ստացել «LifeNews» հեռուստաընկերության օպերատոր Տիգրան Գասպարյանը:

«Այն պահին, երբ «Ժառանգություն» կուսակցության փոխնախագահ Արմեն Մարտիրոսյանն ու պատգամավոր Զարուհի Փոստանջյանը մոտեցան ու սկսեցին

[133] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2016 թ. տարեկան զեկույց, www.khosq.am, «Զեկույցներ» բաժին, էջ 24-25, goo.gl/y8JuQW

[134] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2016 թ. տարեկան զեկույց, www.khosq.am, «Զեկույցներ» բաժին, էջ 25, goo.gl/zy9cSD

խոսել ոստիկանների հետ, տարածքում գտնվող լրատվամիջոցների ներկայացուցիչներին մի ոստիկան ասաց, որ գնանք աջ կողմ. այնտեղ ավելի անվտանգ է: Ուզում էինք տեղափոխվել, սակայն չհասցրեցինք. ոստիկանությունը հատուկ միջոցներ կիրառեց, նռնակներից մեկը հենց ինձ վրա պայթեց: Շարունակեցի քայլել, երկրորդը պայթեց, հետո՝ երրորդը, չորրորդը, էլ ոչինչ չզգացի, միայն զգացի, որ արյուն է հոսում»[135]:

«LifeNews» հեռուստաընկերության օպերատոր Տիգրան Գասպարյան

Այս իրադարձությունների պատճառով խոչընդոտվել է նաեւ «LifeNews»-ի թղթակից Եվգենիա Զմանովսկայայի աշխատանքը եւ խաթարվել է ուղիղ եթերի հեռարձակումը:

Իրադարձությունների ժամանակ քաղաքացիական անձինք բռնություն են գործադրել նաև **«News.am» լրատվական կայքի ֆոտոլրագրող, օպերատոր Խորեն Գրիգորյանի նկատմամբ[136]:**

Լրագրողական տեխնիկայի վնասում եւ լրագրողական նյութերի ոչնչացում

2016 թվականի հուլիսի 17-30 տեղի ունեցած դեպքերի ժամանակ արձանագրվել են նաև լրատվամիջոցներին պատկանող տեխնիկայի և նկարահանված նյութերի միտումնավոր ոչնչացման 13 դեպք:

Այս կերպ միջամտելով ԶԼՄ-ների աշխատանքներին՝ ոստիկանությունը խոչընդոտել է իր ոչ համաչափ գործողությունների լուսաբանումը:

2016 թվականի հուլիսի 17-ին Ազատության հրապարակի տարածքում ոստիկանները «4news.am» կայքի թղթակից Արթուր Հայրապետյանին ֆիզիկական բռնության ենթարկելուց հետո նրա ձեռքից խլել են բջջային հեռախոսը: Ոստիկանության բաժնում ոչնչացրել են դրանում պարունակվող ամբողջ տեղեկատվությունը ու վնասված վիճակում այն վերադարձրել լրագրողին: Արթուր Հայրապետյանը փորձել է վերականգնել ոչնչացված տեսանյութը, սակայն չի հաջողվել[137]:

---

[135] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2016 թ. տարեկան զեկույց, www.khosq.am, «Զեկույցներ» բաժին, էջ 25

[136] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2016 թ. տարեկան զեկույց, www.khosq.am, «Զեկույցներ» բաժին, էջ 26, goo.gl/YFRuUVcontent_copyCopy short URL

[137] Գրիշա Բալասանյան, Լրագրողները պնդում են, որ բռնության են ենթարկվել ոստիկանների կողմից, Հետք, հուլիսի 23, 2016, 15:05, http://hetq.am/arm/news/69370/lragroxnery-pndum-en-or-brnutyan-en-entarkvel-ostikanneri-koxmic.html/

2016 թվականի հուլիսի 19-ին Երեւանի Սարի թաղում ոստիկանները խոչընդոտել են «Lragir.am» կայքի թղթակից Թեհմինե Ենոքյանի մասնագիտական գործունեությունը: Նրանք վերցրել են լրագրողի խցիկը եւ ոչնչացրել են նկարահանած այն տեսանյութերը, որտեղ նկարահանվել է տեղի բնակիչների նկատմամբ ոստիկանության գործողությունները, այն, թե ինչպես են ոստիկանները փորձում իրենց ամրակցված զենքն օգտագործել տեղի բնակիչների դեմ[138]:

2016 թվականի հուլիսի 20-ի լույս 21-ի գիշերը Խորենացի փողոցի հավաքը լուսաբանելու ընթացքում վնասվել է «Iravaban.net» կայքի լրագրող Գևորգ Թոսունյանի տեսախցիկը: Քաղաքացիական հագուստով անձինք, Գեւորգ Թոսունյանի ենթադրությամբ՝ ոստիկաններ, նկատելով, որ իրենց նկարահանում են, հարձակվել են լրագրողի վրա, քաշքշել են նրան, բազմաթիվ հարվածներ հասցնելուց հետո բռնությամբ վերցրել տեսախցիկի հիշողության քարտը:

> «Ինձ շրջապատեցին 6-7 հոգով, պահանջում էին, որ չիպը տամ: Ես սկզբում հրաժարվում էի տալ, բայց ինձ գցեցին գետնին: Այդ ժամանակ կամերան ընկավ, վեր բարձրանալիս տեսա, որ կամերան իրենցից մեկի ձեռքում է: Ասացի, որ վերադարձնի: Ասացին՝ «Տուր չիպը, թե չէ էլի կծեծենք»: Սպառնալիքների ներքո չիպը իրենց տվեցի ու գնացի»[139]:
>
> *«Iravaban.net» կայքի լրագրող Գևորգ Թոսունյան*

2016 թվականի հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ **քաղաքացիական հագուստով անձինք** հարձակվել են հենց ուղիղ եթերում աշխատող **«Ազատություն» ռադիոկայանի լրագրողներ Հովհաննես Մովսիսյանի, Կարլեն Ասլանյանի ու օպերատոր Գարիկ Հարությունյանի վրա:**

> «Իմ ձեռքին մեծ միկրոֆոն կար, Հովհաննեսի ձեռքին էլ մեր հեռարձակման սարքն էր, հեռախոսը, որով նա զուգահեռ հեռարձակում էր իրականացնում: Խմբի ղեկավարն էր հավանաբար, միանգամից հրահանգեց՝ ծեծել, խփել, ջարդել, խլել ձեռքերից

---

[138] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2016 թ. տարեկան զեկույց, www.khosq.am, «Զեկույցներ» բաժին, էջ 20, goo.gl/gM2n43

[139] Աննա Բարսեղյան, #Erebuni կամ Խորենացույց. բռնության ենթարկված լրագրողների պատմությունները (լրացվում է), Media.am, հուլիսի 21, 2016, http://www.media.am/Erebuni-Protest-Journalists-Beaten

տեսախցիկը, հեռարձակումը, ամեն ինչ վերացնել: Այսինքն՝ ես ենթադրում եմ, որ նրանք գիտեին՝ դա ուղիղ եթեր է, անմիջապես անցան բռնությունների»[140]:

«Ազատություն» ռադիոկայանի լրագրող Կարլեն Ասլանյան

«Իմ ձեռքին այդ ժամանակ նկարահանող տեխնիկա կար, քաղաքացիական հագուստով մի անձ մոտեցավ ինձ, բեյջս ցույց տվեցի, որ լրագրող եմ, դրանից հետո բեյջս պոկեցին, այնուհետև հարվածեցին, տեխնիկան գցեցին գետնին: Միայն մեկ հարց տվեցին. «Էդ նկարո՞ւմ ես», ու 4 հոգով հարձակվեցին: Ասացի, որ չեմ տեսանկարահանում՝ հույս ունենալով փրկել տեխնիկան, բայց ապարդյուն»[141]:

«Ազատություն» ռադիոկայանի լրագրող Հովհաննես Մովսիսյան

«Քաղաքացիական հագուստով անձինք՝ մոտ 10 հոգի, ինձ գցեցին գետնին, ձեռքիցս վերցրեցին տեսախցիկն ու հայհոյելով փայտե հաստ ձողերով սկսեցին հարվածել: Հարցնում էին, թե ինչ եմ նկարել: Ասում էի՝ լրագրող եմ, բեյջս էի ցույց տալիս, կամերաս ջարդեցին, բեյջս պոկեցին»[142]:

«Lragir.am»-ի օպերատոր Մարութ Վանյան

Քաղաքացիական հագուստով անձինք մահակներով հարձակվել են **«1in.am»-ի օպերատոր Դավիթ Հարությունյանի, Արմենիա հեռուստաընկերության օպերատոր** Ալբերտ Գալստյանի վրա, ովքեր տեսանկարահանելիս են եղել տեղի ունեցող գործողությունները: Նրանց ձեռքից խլել ու կոտրել են տեսախցիկը[143]:

Անկախ ֆոտոլրագրող Գևորգ Ղազարյանը լուսանկարել ու տեսանկարահանել է, թե ինչպես են ոստիկանական շարքերից քաղաքացիական հագուստով մարդիկ հարձակվել քաղաքացիների վրա:

---

[140] Ասլանյան Կարլեն, Արտակարգ թողարկում. Լարված իրավիճակ Սարի թաղում և Խորենացի փողոցում, Տաթևիկ Լազարյան, հուլիսի 29, 2016, http://www.azatutyun.am/a/27888947.html

[141] Մովսիսյան Հովհաննես, Արտակարգ թողարկում. Լարված իրավիճակ Սարի թաղում և Խորենացի փողոցում, Տաթևիկ Լազարյան, հուլիսի 29, 2016, http://www.azatutyun.am/a/27888947.html

[142] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2016 թ. տարեկան զեկույց, www.khosq.am, «Զեկույցներ» բաժին, էջ 23-24

[143] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2016 թ. տարեկան զեկույց, www.khosq.am, «Զեկույցներ» բաժին, էջ 23-24, goo.gl/nXt5MU

«Դա տեսնելով, վերջիններս հարձակվեցին ինձ վրա, կոտրեցին խցիկներից մեկը, մյուսն էլ խլեցին: Այդ ողջ ընթացքում ես լրագրողական վկայականով էի և բացահայտ էր, որ մամուլի ներկայացուցիչ եմ: Փորձեցի հետ վերցնել խցիկս, սպառնացին: Այդ պահին ես միակ լրագրողն էի տարածքում և հեշտ թիրախ էի նրանց համար»[144]:

Անկախ ֆոտոլրագրող Գևորգ Ղազարյան

Իրադարձությունների ժամանակ քաղաքացիական հագուստով անձինք խլել ու կոտրել են նաև **«News.am» լրատվական կայքի ֆոտոլրագրող, օպերատոր Խորեն Գրիգորյանի** տեսախցիկը:

«Ոստիկանների շարքի մոտ լուսանկարում եւ տեսաձայնագրում էի: Հատուկ միջոցների կիրառումից հետո զգացի, որ թիկունքից մեկը դաստակս բռնել է, հաջորդ ակնթարթին քաղաքացիական հագուստով մի տղամարդ հարձակվեց տեսախցիկների վրա եւ կոտրեց» [145]:

«News.am» լրատվական կայքի ֆոտոլրագրող, օպերատոր Խորեն Գրիգորյան

Հացի փռում, որտեղ ոստիկանության կիրառած լուսաձայնային նռնակներից պատսպարվել են լրատվամիջոցների աշխատակիցները, քաղաքացիական հագուստով անձինք հարձակվել ու խլել են **«Newspress.am» կայքի օպերատոր Լեւոն Սարգսյանի** տեսախցիկը, որում եղել են նրա տեսանկարահանած բոլոր նյութերը[146]:

Լրագրողների բերման ենթարկում

Հուլիսյան իրադարձությունների ընթացքում ուժի գործադրմամբ ոստիկանության տարբեր բաժիններ ապօրինի բերման են ենթարկվել ԶԼՄ-ների երեք ներկայացուցիչներ:

2016 թվականի հուլիսի 24-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի շենքի դիմացից բերման է ենթարկվել «Armtimes.com» լրատվական կայքի ֆոտոթղթակից Տիգրան Մազմանյանը: Նա այստեղ սպասել է փաստաբանի: Այդ պահին 4 հոգի

---

144 Գարեգին Ալեքսանյան, Հուլիսի 29. ԶԼՄ-ների սև օրը, Ճամփորդ, օգոստոսի 16, 2016, http://champord.am/hulisi-29-zlmneri-sev-ory/

145 Գարեգին Ալեքսանյան, Հուլիսի 29. ԶԼՄ-ների սև օրը, Ճամփորդ, օգոստոսի 16, 2016, http://champord.am/hulisi-29-zlmneri-sev-ory/

146 Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2016 թ. տարեկան զեկույց, www.khosq.am, «Զեկույցներ» բաժին, էջ 25, goo.gl/Dpfmka

մոտեցել են նրան, նստեցրել մեքենան, տարել քննչական կոմիտե՝ հուլիսի 22-ին Խորենացի փողոցում «զանգվածային անկարգություններին» մասնակցելու կասկածանքով: «Բերման ենթարկելու արձանագրություն կազմեցին, խուզարկեցին, գործին որպես վկա ներգրավեցին եւ բաց թողեցին», - «Aravot.am»-ի թղթակցին ասել է Տիգրան Մազմանյանը[147]: Ֆոտոթղթակիցն ընդգծել է, որ հուլիսի 22-ին իրականացրել է մասնագիտական պարտականությունները՝ լուսաբանելով տեղի ունեցող հավաքը:

2016 թվականի հուլիսի 27-ին՝ ժամը 03:30-ի սահմաններում, Երեւանի Խորենացի փողոցում կայացած բազմամարդ հանրահավաքից հետո ոստիկանության Շենգավիթի բաժին է բերման ենթարկվել Գյումրու լրագրողների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանը[148]: Ավելի ուշ հարուցվել է քրեական գործ՝ սառը զենք կրելու կասկածանքով, եւ նա ձերբակալվել է: Շուրջ 10 ժամ Լևոն Բարսեղյանի գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկություն հայտնի չի եղել, թեեւ ոստիկանությունը տեղեկացրել է, որ նա ազատ է արձակվել առավոտյան 06:30-ին: Այդ ամբողջ ժամանկահատվածում Բարսեղյանը գտնվել է ոստիկանության հսկողության ներքո, տարվել է Գյումրու Կումայրի բաժին, հետո բերվել ոստիկանության Երևան քաղաքի Շենգավիթի բաժին: Բարսեղյանի նկատմամբ քրեական գործ հարուցելու հիմք է հանդիսացել նրա անձնական խուզարկությամբ՝ տաբատի գրպանից հայտնաբերված ծալովի դանակը: Սակայն Լևոն Բարսեղյանին հավաքի վայրից ազատազրկման միջոցով մեկուսացնելու իրական դրդապատճառը հավաքի ժամանակ վերջինիս սուր քննադատական ելույթն էր:

Նրա փաստաբանի հաղորդմամբ՝ այդ դանակն առաջին անգամ չէ, որ հայտնաբերվում է Լեւոն Բարսեղյանի մոտ նմանատիպ իրավիճակներում, երբ ոստիկանությունը նրան բերման էր ենթարկում բողոքի ակցիաներից: Սակայն ամեն անգամ այդ դանակի առկայությունն արձանագրվել է եւ անտեսվել, քանի որ չի համապատասխանել սառը զենքի չափանիշներին:

2016 թվականի հուլիսի 29-ին հարուցված քրեական գործն ամբողջությամբ կարճվել է, իսկ Լեւոն Բարսեղանն ազատ է արձակվել[149]:

2016 թվականի հուլիսի 30-ին Սարի թաղում տեղի ունեցած բախումներից հետո ոստիկաններն ու քաղաքացիական հագուստով անձինք փորձել են

---

[147]Ամի Չիչակյան, Armtimes.com-ի ֆոտոթղթակիցը որպես վկա է ներգրավվել, հուլիսի 25, 2016, 16:42, http://www.aravot.am/2016/07/25/719633/

[148] Բերման են ենթարկում Լեւոն Բարսեղյանին, հուլիսի 26, 2016, https://www.youtube.com/watch?v=3gfSJ-7Fjx0

[149] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2016 թ. տարեկան զեկույց, www.khosq.am, «Զեկույցներ» բաժին, էջ 21

բերման ենթարկել «Արձագանք» ռադիոստուդիայի հիմնադիր Եղիշե Պետրոսյանին, սակայն այդ պահին նրա առողջական վիճակի վատացման պատճառով նրան տեղափոխել են հիվանդանոց: Նույն օրը Եղիշե Պետրոսյանին ներկայացվել է նրան ձերբակալելու մասին որոշում, որը բողոքարկվել է:

2016 թվականի օգոստոսի 5-ին Ե. Պետրոսյանին ազատ արձակելու որոշում է կայացվել՝ նրա գործողություններում հանցակազմի բացակայության հիմքով[150]:

Հետապնդում

Ֆիզիկական բռնություններից և ազատազրկումներից զատ ԶԼՄ-ների ներկայացուցիչները մասնագիտական պարտականություններ իրականանցնելիս ենթարկվել են նաև հետապնդումների: Այսինքն՝ երբ հարձակումների և տարատեսակ այլ ճնշումների ենթարկվելուց հետո լրագրողներն ու օպերատորները ստիպված են եղել դադարեցնել աշխատանքը և լքել իրադարձությունների վայրը, ոստիկաններն ու նրանց կողմից հովանավորվող քաղաքացիական հագուստով անձինք շարունակել են հետապնդել լրատվամիջոցների ներկայացուցիչներին և բռնի գործողություններ իրականացնել նրանց նկատմամբ: 2016 թվականի հուլիսի 17-30-ը հետապնդումների են ենթարկվել ԶԼՄ 4 ներկայացուցիչներ՝ «Iravaban.net» կայքի լրագրող Գևորգ Թոսունյանը, «ArmLur.am»-ի լրագրող Նաիրա Հովհաննիսյանը, օպերատորներ Նարեկ Սարգսյանը եւ Հովսեփ Հովսեփյանը:

2016 թվականի հուլիսի 21-ի գիշերը՝ ժամը 03:00-ից 03:30-ի ժամանակահատվածում, մայրաքաղաքի Տիգրան Մեծի պողոտայում տեղի ունեցող ակցիան լուսաբանելու ընթացքում ֆիզիկական բռնության ենթարկելուց հետո քաղաքացիական հագուստով անձինք փորձել են հետապնդել «Iravaban.net» կայքի լրագրող Գևորգ Թոսունյանին:

> «Երբ հեռանում էի, մի քանիսն ինձ հետապնդում էին՝ «Կարո՞ղ ա ուրիշ բան էլ կա, կարո՞ղ ա նկարում ես: Նայի, հա, չերևաս էլ ակցիաներին, թե չէ էլի կծեծենք[151]»:
>
> *«Iravaban.net» կայքի լրագրող Գևորգ Թոսունյան*

---

[150] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 2016 թ. տարեկան զեկույց, www.khosq.am, «Զեկույցներ» բաժին, էջ 26-27

[151] Աննա Բարսեղյան, #Erebuni կամ Խորենացույց. բռնության ենթարկված լրագրողների պատմությունները (լրացվում է), Media.am, հուլիսի 21, 2016, http://www.media.am/Erebuni-Protest-Journalists-Beaten

2016 թվականի հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը Սարի թաղում տեղի ունեցած բախումների ժամանակ քաղաքացիական հագուստով զինված անձինք հետապնդել են **«ArmLur.am»-ի լրագրող Նաիրա Հովհաննիսյանին, օպերատորներ Նարեկ Սարգսյանին եւ Հովսեփ Հովսեփյանին:**

ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանը տեղեկացրել է, որ նկատել է, թե ինչպես է ՀՀ փոխոստիկանապետ, Ներքին զորքերի հրամանատար Լեւոն Երանոսյանը եւ Երեւանի ոստիկանապետ Աշոտ Կարապետյանը քաղաքացիական անձանց մատնացույց արել լրագորղին ու «ArmLur.am»-ի օպերատորին:

Դրանից հետո հաղթանդամ մի երիտասարդ փորձել է Նարեկ Սարգսյանի նկատմամբ բռնություն գործադրել, խլել տեսախցիկը, սակայն Զարուհի Փոստանջյանը թույլ չի տվել: Այնուհետեւ, օպերատորին է մոտեցել ինքնաձիգով զինված մի ոստիկան, որից ևս լրագրողին պաշտպանել է Զարուհի Փոստանջյանը: «ArmLur.am»-ի աշխատակիցներն ու պատգամավոր Զարուհի Փոստանջյանն ապաստանել են Սարի թաղի 1-ին փողոցի տներից մեկում: Տան բակն ու հարակից փողոցները հսկել են քաղաքացիական հագուստով անձիք, ինչի համար լրագրողներն ու ԱԺ պատգամավորը դուրս չեն եկել թաքստոցից: Երկու ժամ այստեղ մնալուց հետո միայն նրանք կարողացել են անվնաս հեռանալ[152]:

Սպառնալիք

2016 թվականի հուլիսի 31-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի աշխատակիցներն այցելել են «1in.am» լրատվական կայքի օպերատոր Դավիթ Հարությունյանի բնակարան եւ պահանջել ներկայանալ և որպես վկա ցուցմունք տալ հուլիսի 29-ին տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ: Նման պահանջ է ներկայացվել նաեւ կայքի լրագրող Մարիամ Գրիգորյանին, ով բեկորային վնասվածքներ էր ստացել պայթյուններից: Լրագրողի խոսքով, քննիչը սպառնացել է, որ որպես վկա ցուցմունք չտալու դեպքում ինքը պատասխանատվության կենթարկվի եւ կներգրավվի որպես մեղադրյալ[153]:

---

[152] Հիմնական ծեծուջարդի ավարտից հետո ArmLur.am-ի աշխատակիցներին հաջողվեց ազատվել հետապնդումներից (տեսանյութ), Armlur.am, հուլիսի 30, 03:36, http://armlur.am/562272/

[153] Արշալույս Մղդեսյան, Երևանում խաղաղ հավաքների ժամանակ լրագրողների գործունեության խոչընդոտումն ու իրավունքների խախտումները, Մեդիա կենտրոն, օգոստոսի 1, 2016 թ, 12:00, http://www.media-center.am/hy/1471608394 04:50-06:40

«Lragir.am»-ի թղթակից Թեհմինե Ենոքյանը Սարի թաղում բռնություն կիրառած քաղաքացիական հագուստով անձանցից մեկի կողմից «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում սպառնալիքներ է ստացել: Թեհմինե Ենոքյանը ոստիկանությանը տեղեկացրել է, որ իր կողմից նույնականացվել է 2016 թվականի հուլիսի 29-ին Սարի թաղում բռնություն կիրառած եւ սադրանքներ հրահրած անձանցից մեկը, ով ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի անվտանգության աշխատակից Գագիկ Զոհրաբյանն է:

Լրագրողը ոստիկանությանն է ուղարկել նաեւ կայքի լուսանկարները, այդ թվում սպառնալիք պարունակող գրառման մասին փաստող գրառումը:

«Այսօր առավոտյան իմ ֆեյսբուքյան էջում Գագո Զոհրաբյանի նկարի տակ ստացել եմ սպառնալիքներ, Պավել Սասունյանի կողմից: Պահանջում եմ իմ անվտանգությունը ապահովելու նկատառումներով բացահայտել սույն անձին եւ պատասխանատվության ենթարկել»:

Թեհմինե Ենոքյան

Նույն օրը ՀՀ ոստիկանությունը հայտարարություն է տարածել, որում նշել է, թե ընթացող ծառայողական քննության շրջանակներում առկա նախնական արդյունքներով Գագիկ Զոհրաբյանի կողմից կատարված բռնության որևէ դեպք չի հայտնաբերվել:

Բացի այդ, Գ. Զոհրաբյանը Սարի թաղում է եղել ՀՀ ոստիկանության պետի ցուցումով, որպես օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման աշխատակից՝ կատարել է իր ծառայողական պարտականությունները, այդ թվում՝ լրագրողների նկատմամբ քաղաքացիական հագուստով անձանց կողմից բռնություններ գործադրելու վերաբերյալ տեղեկությունների ստուգման ուղղությամբ: Այդ օրը բռնություն է գործադրվել նաեւ Գ. Զոհրաբյանի նկատմամբ: Միաժամանակ հայտնում ենք, որ Գ. Զոհրաբյանը որեւէ առնչություն չունի լրագրող Թեհմինե Ենոքյանի ֆեյսբուքյան էջում «ոմն Պավել Սասունյանի» դրսեւորած խուլիգանական վարքագծի հետ» [154]:

ՀՀ Ոստիկանություն

2016 թվականի հուլիսյան իրադարձությունների ժամանակ լրագրողների իրավունքների խախտումներին վերաբերող նախաքննության ընթացքն ու քրեական գործից անջատված մասերով դատական վճիռները

[154] Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, Հայտարարություն, օգոստոսի 5, 2016, 17:58, http://www.police.am/news/view/%D5%B0%D5%B5%D5%BF0508.html

2016 թվականի հուլիսի 30-ին լրագրողների առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով եւ այլ եղանակներով մասնագիտական օրինական գործունեությունը 2016 թվականի հուլիսի 29-ի գիշերը լույս հուլիսի 30-ին խոչընդոտելու վերը նշված դեպքերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ մասերով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով ՀՀ գլխավոր դատախազությունում հարուցվել է քրեական գործ: 2016 թվականի օգոստոսի 3-ին նախաքննություն կատարելու համար քրեական գործն ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն[155], և գործը միացվել է ոստիկանության կողմից հավաքի մասնակիցների նկատմամբ դրսևորած անօրինական գործողությունների հիմքով հարուցված մեկ այլ քրեական գործի:

ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, 309-րդ հոդվածի 2-րդ մասով, 164-րդ հոդվածի 2-րդ մասով, 332.3-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործեր[156]:

2016 թվականի հուլիսի 17-19-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդին հարող տարածքում տեղի ունեցած միջադեպերի առնչությամբ ևս մեկ **առանձին քրեական գործ է հարուցվել:** Այս գործում որպես տուժող են ներգրավել «4news.am» կայքի թղթակից Արթուր Հայրապետյանը, «Ազատություն» ռադիոկայանի թղթակից Արտակ Համբարձումյանը և «Iravaban.net» լրատվամիջոցի թղթակից Գեւորգ Թոսունյանը:

2017 թվականի հունվարի 30-ի դրությամբ քրեական գործի շրջանակներում հարցաքննվել են 24 լրագրող եւ օպերատոր, որոնցից 21-ը տուժող են ճանաչվել: Ըստ ՀՔԾ-ի տեղեկատվության՝ 2017 թվականի հունվարի 30-ի դրությամբ նախաքննության շրջանակներում «մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունի մեկ անձ»[157]:

Հուլիսյան իրադարձությունների առնչությամբ հարուցված քրեական գործի ընթացքի վրա ազդեցություն ունեցավ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2016 թվականի օգոստոսի 1-ի ելույթը՝ հասարակության, իշխանությունների ու հոգեւոր դասի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ: Պետության

---

[155] ՀՀ դատախազություն, Լրագրողների աշխատանքը խոչընդոտելու դեպքով հարուցվել է քրեական գործ, հուլիսի 30, 2016, http://www.prosecutor.am/am/mn/4162/

[156] ՀՀ հատուկ քննչական ծառայություն, Հարուցվել են քրեական գործեր՝ ոստիկանների կողմից առերևույթ բռնություն կիրառելու, պաշտոնական լիազորությունները չարաշահելու, լրագրողների մասնագիտական օրինական գործունեությանը ու փաստաբանների լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու դեպքերով, օգոստոսի 3, 2016, http://www.ccc.am/hy/1428493746/3/5286

[157] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն ձեռնամուխ է եղել 2016 թ. հուլիսի 29-30-ին Երեւանի Սարի թաղում եւ Խորենացի փողոցում տեղի ունեցած դեպքերով հարուցված քրեական գործի ընթացքի դիտարկմանը: Նշված տվյալները տրամադրվել են ՀՀ Հատուկ քննչական ծառայության կողմից ԽԱՊԿ-ի գրավոր հարցմանն ի պատասխան:

ղեկավարը շնորհակալություն հայտնեց իրավապահ մարմինների ներկայացուցիչներին՝ իրենց աշխատանքի համար[158]: Իսկ 2016 թվականի դեկտեմբերի 28-ին ՀՀ նախագահի հրամանագրով ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալ Հունան Պողոսյանը և ՀՀ ոստիկանության զորքերի հրամանատար Լևոն Երանոսյանը պարգևատրվեցին հասարակական կարգի գերազանց պահպանման և հայրենիքին մատուցած ծառայությունների համար[159]:

Վերոհիշյալ ելույթում Սերժ Սարգսյանը նաև ներողություն է խնդրել լրագրողներից, որոնց նկատմամբ հուլիսի 29-ի ցույցը ցրելու ընթացքում ոստիկանները ֆիզիկական բռնություն են կիրառել, խոչընդոտել նրանց մասնագիտական գործունեությունը: «Ես … ներողություն եմ խնդրում մեր լրագրողներից հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերվա դեպքերի համար. սա մեր ամենաէական բացթողումն էր այս օրերի ընթացքում: Բոլոր հետեւությունները, անշուշտ, արվելու են: Ձեր ներողամտությունը հայցելով՝ միայն լրագրողներին, բայց ոչ իրավապահներին, խնդրում եմ մոռանալ այդ դեպքերի մասին, քանի որ իրոք վստահ եմ, որ այլեւս նման բան չի կրկնվելու, եւ նաեւ ուզում եմ, որ այդ դեպքերն այսուհետ անգամ ենթագիտակցական որեւէ ազդեցություն չունենան ձեր ազատ գործելաոճի վրա», - նշել է Սերժ Սարգսյանը[160]:

2016 թվականի հուլիսի 17-30-ն ընկած ժամանակահատվածում լրագրողների իրավունքների խախտումների առնչությամբ իրականացվող նախաքննության ընթացքի, ինչպես նաև քրեական գործից որոշ անջատված մասերով արդեն կայացված դատավճիռների ուսումնասիրությունը վկայում է, որ անօրինական գործողությունների համար ոստիկաններին և նրանց կողմից հովանավորվող քաղաքացիական հագուստով անձանց պատասխանատվության ենթարկելու գործընթացը ձևական բնույթ է կրում և կանխարգելիչ նշանակություն չի կարող ունենալ՝ նմանատիպ դեպքերի կրկնությունը բացառելու համար:

Դատարանի կողմից կիրառված առավելագույն պատիժը կազմել է 200.000 (երկու հարյուր հազար) դրամ տուգանք և մեկ տարի ազատազրկում:

---

[158]Հայաստանի Հանրապետության Նախագահ, Մամլո հաղորդագրություններ, Նախագահը հանդիպում է ունեցել հասարակության, իշխանությունների եվ հոգեվոր դասի ներկայացուցիչների հետ, 01 օգոստոս 2016 http://www.president.am/hy/press-release/item/2016/08/01/President-Serzh-Sargsyan-meeting-with-government-civil-and-spiritual-representatives/

[159] ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ՆՀ-1238 –Ա, ՆՀ-1239 –Ա, 28 դեկտեմբեր 2016, http://www.president.am/hy/decrees/item/3399/, http://www.president.am/hy/decrees/item/3398/

[160] Նախագահը հանդիպում է ունեցել հասարակության, իշխանությունների եվ հոգեվոր դասի ներկայացուցիչների հետ, օգոստոսի 1, 2016, http://www.president.am/hy/press-release/item/2016/08/01/President-Serzh-Sargsyan-meeting-with-government-civil-and-spiritual-representatives/

Ընդ որում, չնայած կիրառված ֆիզիկական բռնությունների վերաբերյալ հրապարակված տեսանյութերին և հայտարարություններին, այնուամենայնիվ, մեղադրյալները պատասխանատվության են ենթարկվել բացառապես լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու համար, իսկ բռնության հանգամանքը պատժի կիրառման հիմք չի հանդիսացել:

Իրադարձությունները համակողմանի չեն ստուգվել նաև այն պատճառով, որ դատական նիստերն ընթացել են արագացված քննության կարգով:

Հատուկ քննչական ծառայության հրապարակած տվյալների համաձայն՝ քրեական գործով մեղադրանք է առաջադրվել 8 քաղաքացիական անձանց, որոնցից 7-ի վերաբերյալ նախաքննությունն ավարտվել է, և քրեական գործից անջատված մասերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան: Այդ անձինք «Ազատություն» ռադիոկայանի, «Արմենիա» հեռուստաընկերության եւ «News.am» կայքի աշխատակիցների մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտողներն են:

Մասնավորապես, **«Արմենիա» հեռուստաընկերության օպերատոր Ալբերտ Գալստյանի** մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու համար 4 անձանց՝ Սեյրան Կարապետյանին, Վլադիմիր Մխիթարյանին, Դավիթ Սարգսյանին ու Կարեն Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով եւ 164-րդ հոդվածի 1-ին մասով[161]:

Ամբաստանյալներն ընդունել են իրենց մեղքը, միջնորդել արագացված դատաքննություն անցկացնել եւ խնդրել են մեղմ պատիժ սահմանել:

2016 թվականի նոյեմբերի 2-ին դատարանը վճռել է «Արմենիա» հեռուստաընկերության օպերատոր Ալբերտ Գալստյանի օրինական գործունեությունը խոչընդոտելու եւ խուլիգանություն կատարելու համար Սեյրան Կարապետյանին, Վլադիմիր Մխիթարյանին, Դավիթ Սարգսյանին եւ Կարեն Գրիգորյանին դատապարտել մեկ տարվա ազատազրկման՝ Քրեական օրենսգրքի 258 հոդվածի 3-րդ կետի առաջին մասով եւ յուրաքանչյուրին տուգանել 200 հազարական դրամով՝ Քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածով: Դատարանը նաեւ վճռել է ամբաստանյալներից համապարտության կարգով հօգուտ տուժող «Արմենիա Թի-Վի» ՓԲԸ-ի բռնագանձել երկու հարյուր վաթսունյոթ հազար ինը հարյուր յոթ դրամ՝ որպես հանցագործությամբ անմիջականորեն պատճառված վնասի հատուցում: Գործով իրեղեն ապացույց

[161] ՀՀ հատուկ քննչական ծառայություն, Ավարտվել է Սարի թաղում խմբով խուլիգանություն կատարած և լրագրողի աշխատանքը խոչընդոտած 4 անձանց վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը, սեպտեմբերի 9, 2016, http://www.ccc.am/hy/1428493746/3/5321

ճանաչված՝ Ալբերտ Գալստյանի «Panasonic» տեսակի «AG-AC160P» մոդելի թվային տեսախցիկը դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վերադարձվել է «Արմենիա Թի-Վի» ՓԲԸ-ին:

Մեջբերում թիվ ԵԷԴ/0100/01/16 դատավճռից (2016 թվականի նոյեմբերի 2)

Ամբաստանյալներ Սեյրան Վալերիկի Կարապետյանին, Վլադիմիր Մարտինի Մխիթարյանին, Դավիթ Վաղգեսի Սարգսյանին և Կարեն Սերյոժայի Գրիգորյանին ՀՀ քր. օր-ի 258 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 164 հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ 2016թ. հուլիսի 29-ին, ժամը 2200-ի սահմաններում պատահական տաքսի ավտոմեքենայով Երևան քաղաքի Մ.Խորենացու փողոցում գտնվող սննդի կետ գնալու նպատակով երթևեկել են Չարենցի փողոցով: Ճանապարհին հանդիպել են իրենց ծանոթներ Աշոտ Ռազմիկի Թադևոսյանին ու Սամվել Յուրիկի Փուրտոյանին, ովքեր նույն վայր գնալու նպատակով ևս միացել են նրանց: Որոշ տարածություն անցնելուց հետո, նկատել են, որ ճանապարհը փակ է, հնարավոր չէ ավտոմեքենայով առաջ շարժվել: Իջել են մեքենայից և ճանապարհը շարունակել են ոտքով: Փողոցում հավաքված անձանցից պարզել են, որ երթ է տեղի ունեցել, որի մասնակիցները Նար-Դոս փողոցով բարձրացել են Սարի թաղ: Հետաքրքրությունից դրդված՝ շարժվել են Սարի թաղ: Երբ հասել են այնտեղ, նկատել են, որ երթի մասնակիցները հավաքված են դեպի Մ.Խորենացու փողոց իջնող ոլորանների մոտ, իսկ ավելի ներքևում կանգնած են եղել ոստիկանական ստորաբաժանումները: Ցուցարարների միջով մի փոքր առաջանալուց հետո, նկատել են, որ նրանց կողմից քարեր են նետվում ոստիկանների վրա, որից հետո վերջիններս սկսել են նրանց նկատմամբ հատուկ միջոցներ կիրառել: Դրա արդյունքում առաջացած խառնաշփոթի պատճառով Սեյրան Կարապետյանը, Վլադիմիր Մխիթարյանը, Դավիթ Սարգսյանն ու Կարեն Գրիգորյանը կորցրել են Աշոտ Թադևոսյանին ու Սամվել Փուրտոյանին: Ցանկանանալով դուրս գալ Սարի թաղից՝ հանդիպել են քննությամբ չպարզված մի քանի անձանց, որոնց ձեռքերում մահակներ են եղել: Վերջիններս հրամայական տոնով ուղղորդել են, թե որ կողմ գնան, ինչն էլ դուր չի եկել նրանց և շրջապատի մարդկանց նկատմամբ իրենց առավելությունն ընդգծելու, մյուսներից իրենց անձը վեր դասելու խուլիգանական դրդումներով, վեճի են բռնվել նրանց հետ, կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգն ու բացահայտ անհարգալից վերաբերմունք արտահայտելով փողոցում հավաքված հասարակության նկատմամբ, շուրջ 10 րոպե տևողությամբ բարձրաձայն հայհոյանքներ են տվել և բռնություն գործադրել նշված անձանց նկատմամբ՝ ձեռքերով ու ոտքերով հարվածներ են հասցրել նրանց՝ անտեսելով իրենց կարգի հրավիրող մոտակայքում հավաքված անձանց հորդորները: Ընթացքում տեսել են, որ լրագրողական անվանաքարտ (բեյջ) կրող՝ «Արմենիա» հեռուստաընկերության լրագրող Ալբերտ Հայկի Գալստյանը տեսանկարահանում է իրենց վերը նշված գործողությունները: Որոշել են հարձակվել Ալբերտ Գալստյանի վրա, վերցնել նրա տեսախցիկն ու նրան ծեծի ենթարկել: Իրենց հանցավոր մտադրությունն իրագործելով՝ Սեյրան Կարապետյանը, Վլադիմիր Մխիթարյանը, Դավիթ Սարգսյանն ու Կարեն Գրիգորյանը հարձակվել են նրա վրա, պահանջել, որ չտեսանկարահանի իրենց, ապա Վլադիմիր Մխիթարյանը Ալբերտ Գալստյանի ձեռքից խլել է «Պանասոնիկ» մակնիշի տեսախցիկը, որից հետո վերջինիս գցել են գետնին ու սկսել ոտքերով ու ձեռքերով միասին հարվածներ հասցնել լրագրողի մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ՝ գոտկային և աջ սրունք-թաթային հոդի շրջանների քերծվածքների, աջ դաստակի 2-րդ մատի արյունազեղման ձևով: Այնուհետև, նկատելով մոտեցող

ոստիկանության աշխատակիցներին, դիմել են փախուստի՝ իրենց հետ տանելով լրագրողից վերցված տեսախցիկը՝ դրանում առկա իրենց վերաբերյալ տեսաձայնագրությունը վերացնելու նպատակով։

«Ազատություն» ռադիոկայանի լրագրող Հովհաննես Մովսիսյանի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու համար քաղաքացի Տիգրան Ահարոնյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասով[162]:

2016 թվականի նոյեմբերի 17-ին դատարանը վճռել է Տիգրան Ահարոնյանին մեղավոր ճանաչել ՀՀ քր. օր-ի 164 հոդվածի 1-ին մասով եւ տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200 հազար դրամի չափով։

[162] ՀՀ հատուկ քննչական ծառայություն, Ավարտվել է Սարի թաղում «Ազատություն» ռ/կ-ի լրագրողի աշխատանքը խոչընդոտած անձի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը, հոկտեմբերի 5, 2016, http://www.ccc.am/hy/1428493746/3/5347

Մեջբերում թիվ ԵԷԴ/0109/01/16 դատավճռից (2016 թվականի նոյեմբերի 17)

2016թ. հուլիսի 29-ին, ժամը 2100-ի սահմաններում, ավտոմեքենաների օգտագործված էժան մասեր գնելու և իր բնակավայրի մոտ գտնվող «Մալաթիա» տոնավաճառում վաճառելու նպատակով, պատահական տաքսի ավտոմեքենայով գնացել է Երևան քաղաքի Սարի թաղ թաղամաս: Մինչև ժամը 22:00-ի սահմանները Սարի թաղում փնտրել է նման գործունեությամբ զբաղվող անձանց, և երբ ցանկացել է դուրս գալ Սարի թաղից, հայտնվել է դեպի Մ.Խորենացի փողոց տանող ոլորանների մոտ: Այնտեղ նկատել է հավաքված մարդկանց, ովքեր ցույց անելիս են եղել ՊՊԾ գնդի տարածքը գրված «Սասնա Ծռեր» խմբավորման պաշտպանության օգտին: Հետաքրքրությունից դրդված մնացել է այնտեղ: Ցուցարարների շարքերից քարեր և այլ առարկաներ ոստիկանների ուղղությամբ նետելուց, իսկ վերջիններիս կողմից հատուկ միջոցներ կիրառելուց հետո առաջացած խառնաշփոթից քաղաքացիները վազելով հեռացել են տարբեր ուղղություններով: Տիգրան Ահարոնյանը ևս փորձել է հեռանալ տարածքից, և երբ քայլելով հասել է իրեն անծանոթ վայր, նկատել է «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Հովհաննես Մովսիսյանին՝ ձեռքին լրագրողական տեխնիկա: Կարծել է, որվերջինս տեսանկարահանում է իրեն, ինչը դուր չի եկել Տիգրան Ահարոնյանին և, չցանկանալով, որպեսզի իր վերաբերյալ տեսանյութերը հայտնվեն հեռուստատեսությունում կամ համացանցում, մոտեցել է Հովհաննես Մովսիսյանին, քաշքշել, ձեռքերով մի քանի անգամ հարվածել մարմնի տարբեր մասերին՝ պահանջելով իրեն չտեսանկարահանել: Այդ ընթացքում,պոկել է Հովհաննես Մովսիսյանի լրագրողական անվանաքարտը, նետել գետնինու դիմել փախուստի: Նման եղանակով Տիգրան Ահարոնյանը խոչընդոտել է «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Հովհաննես Մովսիսյանի մասնագիտական օրինական գործունեությանը և նրա առողջությանը դիտավորությամբ պատճառել թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ՝ աջ ձեռքի 3-րդ մատի և աջ քունքային շրջանի փափուկ հյուսվածքների սալջարդերի, աջ դաստակի 3-րդ մատի շրջանի քերծվածքների ձևերով:

«News.am» կայքի լրագրող Խորեն Գրիգորյանի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու եւ ուրիշի գույքը ոչնչացնելու համար երկու անձանցից մեկին՝ քաղաքացի Գոռ Խաչատրյանին, մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասով եւ 185-րդ հոդվածի 1-ին մասով: Մյուս անձին՝ Գարեգին Հովսեփյանին, մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասով[163]:

Քրեական գործի շրջանակներում տուժող ճանաչված մյուս լրագրողներին առնչվող դրվագների քննության առնչությամբ որևէ զարգացում չկա: Հատկանշական է, որ այդ լրագրողների մի մասը կարողացել է տեսանյութերով նույնականացնել, ճանաչել և նախաքննության մարմնին ներկայացնել իր նկատմամբ բռնություն գործադրող կամ իր մասնագիտական

[163] ՀՀ հատուկ քննչական ծառայություն, Ավարտվել է Սարի թաղում «news.am»-ի լրագրողի աշխատանքը խոչընդոտած անձանց վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը, հոկտեմբերի 31, 2016, http://www.ccc.am/hy/1428493746/3/5366

գործունեությանը խոչընդոտող ոստիկաններին, սակայն այդ ոստիկանների առնչությամբ որևէ գործողություն չի իրականացվել: Քննության նման հապաղումը հանգեցնում է անձանց նույնականացման դժվարություններին, փաստերի և հանգամանքների վերականգնման անհնարինությանը, իսկ վերջնական արդյունքում՝ հանցագործությունների բացահայտման անհնարինությանը: Նման եզրակացության են հանգել և քննության արդյունավետության նկատմամբ իրենց մտահոգություն են հայտնել տուժող ճանաչված այն լրագրողները, որոնց գործերի առնչությամբ որևէ զարգացում չի արձանագրվել:

Նրանց կարծիքով՝ քաղաքացիական 8 անձանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու փաստի միջոցով իշխանությունը փորձում է տպավորություն ստեղծել՝ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու մասին, սակայն գործընթացին անմիջական առնչություն ունեցող անձինք՝ բռնություն իրականացնող ոստիկանները, որոնք երեւում են տեսանյութերում, այդ թվում քաղաքացիական հագուստով անձանց հրաման տվողները, մնում են անպատիժ:

«Որպեսզի արդարությունը վերականգնվի, պետք է պատժի ենթարկվեն Երևանի նախկին ոստիկանապետ Աշոտ Կարապետյանը և ՀՀ դեռևս փոխոստիկանապետ Լևոն Երանոսյանը. չէ՞ որ Քրեական օրենսգիրքն էլ է նախատեսում, որ հանցագործություն ենթադրող հրամաններ արձակողները պետք է պատժվեն»:

«1in.am»-ի լրագրող Մարիամ Գրիգորյան

«Եթե նույնիսկ հիմա հարցնեն՝ ով է ծեծել քեզ, այլևս չեմ հիշի, այնքան ժամանակ է անցել, որ դեմքն էլ եմ մոռացել»:

4news.am կայքի թղթակից Արթուր Հայրապետյան

«Ազատություն» ռադիոկայանի լրագրող Կարլեն Ասլանյանը, ով հարվածներ էր ստացել գլխի եւ պարանոցի շրջանում, համոզմունք է հայտնել, որ պատիժը ենթադրում է հրահանգ տվողների և ոչ թե այդ հրահանգը կատարողների պատասխանատվություն:

«Այնպես չէր, որ քաղաքացիական հագուստով անձինք սեփական նախաձեռնությամբ միանման մահակները վերցրեցին ու որոշեցին ոստիկանների աչքի առաջ ծեծել ցուցարարներին ու լրագրողներին: Պարզ է, որ այդ ամենը «վերևից» իջեցված հրաման է եղել: Պարզ է նաև, թե ինչու չէին ոստիկաններն այդ ամենին միջամտում: Իսկ գործը

դանդաղ է տեղից շարժվում, քանի որ չկա այն բացահայտելու կամք, նույն սցենարով են շարժվում, ինչպես «#ElectricYerevan»-ի ժամանակ»:

Կարլեն Ասլանյան

«Ազատություն» ռադիոկայանի թղթակից Արտակ Համբարձումյանը ՀՔԾ-ում քննիչների հետ դիտել է միջադեպի տեսագրությունը, որտեղ ակնհայտ երևում է բռնություն կիրառած ոստիկանը: Լրագրողը տուժող է ճանաչվել դեռ 2016-ի օգոստոսին:

«Տեսանյութում ամեն ինչ ակնհայտ երևում է: Պետք է առերեսում լիներ, սակայն տուժող ճանաչվելու օրվանից հետո այլևս ինձ հետ ՀՔԾ-ից կապ չեն հաստատել: Հաշվի առնելով, թե նման միջադեպերն ինչ ճակատագրի են արժանացել, կարծում եմ՝ այս գործն էլ չի տարբերվի նախորդներից»:

«Ազատություն» ռադիոկայանի թղթակից Արտակ Համբարձումյան

«Քննչական մարմիններն ակտիվ գործողություններ էին իրականացնում, երբ դեպքերը թարմ էին, տպավորություն էին ստեղծում, թե օպերատիվ աշխատում են: Հետո՝ մեկ ամիս էլ չանցած, սկսեցին լռել»:

«Lragir.am» կայքի օպերատոր Մարութ Վանյան

Ֆիզիկական բռնության ենթարկելուց բացի քաղաքացիական հագուստով անձինք կոտրել են օպերատորի երկու տեսախցիկները, հափշտակել նրա անձնագիրը: Վեց ամիսների ընթացքում ոչ տեսախցիկներն են վերադարձրել, կամ արժեքը փոխհատուցվել, ոչ անձնագիրն է գտնվել[164]:

Սարի թաղում 2016 թվականի հուլիսի 29-ի երթի ժամանակ ծեծից ու ոստիկանական հատուկ միջոցներից տուժած «A1+»-ի լրագրող Ռոբերտ Անանյանը վերջին անգամ հենց դեպքի օրը հիվանդանոցում է հարցաքննվել: Ըստ նրա՝ չնայած առկա տեսանյութին ու այն հանգամանքին, որ ուղիղ եթերում է աշխատելիս եղել, երբ բռնության է ենթարկվել, այդուհանդերձ, բացահայտված չեն ոչ իր և օպերատորի ուղղությամբ պայթուցիկներ նետած, ոչ էլ մեքենան կանգնեցրած ու իրենց մասնագիտական աշխատանքը խոչընդոտած ոստիկանները:

[164] Լիլիթ Հովհաննիսյան, «Սարի թաղի» գործի նախաքննությունը դոփում է տեղո՞ւմ, ԽԱՊԿ, փետրվարի 1, 2017, goo.gl/161mzUcontent_copyCopy short URL

«Կադրում երևում է և՛ մեքենան, և՛ անձինք, ովքեր խոչընդոտել են մեր աշխատանքը, ցանկության դեպքում նրանց կհարցաքննեին ու պատասխանատվության կենթարկեին: Վեց ամիսը հաստատ բավարար էր դրա համար»:

Ռոբերտ Անանյան[165]

[165]ԽԱՊԿ, «Սարի թաղի» գործի նախաքննությունը դոփում է տեղո՞ւմ, փետրվարի 1, 2017, goo.gl/MWjwzF

Անկախ ֆոտոլրագրող Գևորգ Ղազարյանը ՀՔԾ-ից վերջին ծանուցումն ստացել է շուրջ երեք ամիս առաջ: Հրավիրել են ծանոթանալու գործընկերների փորձաքննության արդյունքներին: Առանձնակի վստահություն չունի հարուցված քրեական գործի նկատմամբ:

> «#ElectricYerevan»-ի գործի քննության սցենարն է. մի քանի հոգու մեղադրանք են առաջադրել ու կանգ առել: Այնպիսի տպավորություն ունեմ, որ մի անգամ էլ լրագրողներին ծեծի կենթարկեն, ու դա առիթ կլինի, որպեսզի մի քանի գործ էլ այդ ժամանակ ձևական ուղարկեն դատարան»:
>
> *Գևորգ Ղազարյան*

Տեղական լրագրողական հանրության և միջազգային կազմակերպությունների արձագանքը

2016 թվականի հուլիսի 17-30-ն ընկած ժամանակահատվածում Երեւանի Խորենացի փողոցում եւ Սարի թաղում ԶԼՄ-ների աշխատակիցների նկատմամբ իրականացված բռնություններն ու մասնագիտական գործունեության խոչընդոտումները դատապարտել են հայաստանյան եւ միջազգային մի շարք լրագրողական եւ իրավապաշտպան կազմակերպություններ:

Մասնավորապես, 2016 թվականի հուլիսի 21-ին 9 լրագրողական կազմակերպությունների տարածած հայտարարությունը վերաբերում էր «Iravaban.net» կայքի լրագրող Գեւորգ Թոսունյանի, «Ազատություն» ռադիոկայանի թղթակից Արտակ Համբարձումյանի, ինչպես նաեւ «4news.am» կայքի աշխատակից Արթուր Հայրապետյանի նկատմամբ իրականացված բռնություններին[166]: Հուլիսի 28-ին 19 լրագրողական և իրավապաշտպան կազմակերպությունների հայտարարության առիթ դարձան Գյումրիի լրագրողների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանի ձերբակալումն ու նրա դեմ անհիմն քրեական գործ հարուցելը[167]: Իսկ երկու օր անց հրապարակած հայտարարությամբ լրագրողական 12 կազմակերպություններ իրենց վրդովմունքն արտահայտեցին հուլիսի 29-30-ին մայրաքաղաքի Խորենացի փողոցում ու Սարի թաղում ԶԼՄ-ների աշխատակիցների դեմ ոստիկանական ստորաբաժանումների իրագործած

[166] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, հայտարարություն, հուլիսի 21, 2016, goo.gl/iDh2s4content_copyCopy short URL

[167] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, հայտարարություն, հուլիսի 28, 2016, goo.gl/jXf52b

տոտալ հարձակումների, այդ ընթացքում հատուկ միջոցների կիրառման եւ լրագրողական գործունեության խոչընդոտման փաստերի առնչությամբ[168]:

2016 թվականի օգոստոսի 2-ին 12 լրագրողական կազմակերպություններ հանդես եկան հայտարարությամբ՝ պահանջելով իշխանություններից ազատ արձակել «Արձագանք» ռադիոստուդիայի հիմնադիր Եղիշե Պետրոսյանին[169]:

Արձագանքելով լրագրողների հանդեպ կատարված բռնություններին, 15 լրատվամիջոցներ մայրաքաղաքի Ազատության հրապարակում հավաք նախաձեռնեցին եւ ընդունեցին հայտարարություն, որով իշխանությունից պահանջեցին ՀՀ քրեական օրենսգրքի 164 հոդվածի («Լրագրողի օրինական մասնագիտական գործունեությունը խոչընդոտելը») հիմքով պատասխանատվության ենթարկել հուլիսի 29-ին լրագրողների վրա ձեռք բարձրացրած անձանց, դադարեցնել լրագրողների նկատմամբ պետական մակարդակով տարվող բացասական քարոզչությունը[170] :

2016 թվականի հուլիսի 29-ի դեպքերը դատապարտել ու իրենց մտահոգությունն են հայտնել մի շարք միջազգային կազմակերպություններ՝ «Human Rights Watch»-ը[171], «Լրագրողներ առանց սահմանների»[172], «Լրագրողների եվրոպական դաշնությունը» (EFJ) եւ «Լրագրողների միջազգային դաշնությունը» (IFJ)[173], ԵԱՀԿ մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչ Դունյա Միյատովիչը: Վերջինս նամակ է ուղղել ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանին՝ նշելով, որ կառավարությունը «պետք է գործնական քայլեր կատարի իրավապահ մարմինների գործողություններում լրատվամիջոցների ներկայացուցիչների նկատմամբ զսպվածություն ապահովելու համար», եւ ավելացրել, որ «իշխանությունների կողմից պետք է նախաձեռնվեն քայլեր՝ որպես երաշխիք, որ լրատվամիջոցները թիրախավորված չլինեն ոստիկանության կամ խուժանի կողմից:

---

[168] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, հայտարարություն, հուլիսի 30, 2016, goo.gl/G8f2Tfcontent_copyCopy short URL

[169] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, հայտարարություն, օգոստոսի 2, 2016, goo.gl/nw7jkV

[170] Lragir.am, Այդպես շարունակվել չի կարող. լրատվամիջոցներն իշխանությանը, օգոստոսի 10, 2016, 17:46, http://www.lragir.am/index/arm/0/right/view/137559

[171] Human Rights Watch, Armenia: Excessive Police Force at Protest, August 1, 2016, 12:59PM, https://www.hrw.org/news/2016/08/01/armenia-excessive-police-force-protest

[172] Reporters Without Borders, Armenia: RSF calls for end to impunity for police violence against journalists, August 1, 2016, https://rsf.org/en/news/armenia-rsf-calls-end-impunity-police-violence-against-journalists

[173] International Federation of Journalists (IFJ), Armenia: excessive police force against journalists covering demonstrations, August 2, 2016, http://www.ifj.org/nc/news-single-view/backpid/1/article/armenia-excessive-police-force-against-journalists-covering-demonstrations/

Ոստիկանությունը պետք է պաշտպանի լրագրողներին եւ լրատվամիջոցների ներկայացուցիչներին», - ասել է նա[174]:

2016 թվականի օգոստոսի 1-ին լրագրողների հանդեպ բռնություններին արձագանքեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ով անցյալում նմանատիպ դեպքերից հետո լռություն էր պահպանում: Հասարակության, իշխանությունների ու հոգեւոր դասի ներկայացուցիչների հետ հանդիպմանը հանդես գալով ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի վրա «Սասնա ծռեր» խմբի հարձակման հետեւանքով ստեղծված իրավիճակի վերաբերյալ ելույթով, նա ներողություն է խնդրել լրագրողներից, որոնց նկատմամբ հուլիսի 29-ին Երեւանի Սարի թաղում ցույցը ցրելու ընթացքում ոստիկանները ֆիզիկական բռնություն են կիրառել, խոչընդոտել նրանց մասնագիտական գործունեությունը:

«Ես … ներողություն եմ խնդրում մեր լրագրողներից հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերվա դեպքերի համար. սա մեր ամենաէական բացթողումն էր այս օրերի ընթացքում: Բոլոր հետեւությունները, անշուշտ, արվելու են: Ձեր ներողամտությունը հայցելով՝ միայն լրագրողներին, բայց ոչ իրավապահներին, խնդրում եմ մոռանալ այդ դեպքերի մասին, քանի որ իրոք վստահ եմ, որ այլեւս նման բան չի կրկնվելու, եւ նաեւ ուզում եմ, որ այդ դեպքերն այսուհետ անգամ ենթագիտակցական որեւէ ազդեցություն չունենան ձեր ազատ գործելառճի վրա», - նշել է Սերժ Սարգսյանը[175]:

Կատարվածի վերաբերյալ հայտարարությամբ է հանդես եկել եւ իր մտահոգությունն է արտահայտել նաեւ Հայաստանում ԱՄՆ դեսպանությունը[176]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2016 թվականի հուլիսին Երևանի Խորենացի փողոցում և Սարի թաղում տեղի ունեցած իրադարձություններն աննախադեպ էին ԶԼՄ-ների աշխատակիցների նկատմամբ բռնությունների, խոչընդոտումների և ճնշումների առումով: Ոստիկանության թիրախավորված գործողությունների

---

[174] OSCE Representative on Freedom of the Media Dunja Mijatović, OSCE media freedom representative urges protection for journalists reporting on civil unrest in Armenia, 1 August 2016, http://www.osce.org/fom/257336

[175] Նախագահը հանդիպում է ունեցել հասարակության, իշխանությունների եվ հոգեվոր դասի ներկայացուցիչների հետ, օգոստոսի 1, 2016, http://www.president.am/hy/press-release/item/2016/08/01/President-Serzh-Sargsyan-meeting-with-government-civil-and-spiritual-representatives/

[176] ՀՀ-ում ԱՄՆ դեսպանություն, ԱՄՆ դեսպանատան հայտարարությունը, հուլիսի 30, 2016, https://armenian.armenia.usembassy.gov/news073016.html

հետևանքով տուժել են 27 լրագրող և օպերատոր։ Նրանց մեծ մասը ենթարկվել են մի քանի տեսակի իրավախախտումների՝ ֆիզիկական բռնությունների, հետապնդման և ճնշման, սպառնալիքի, ապօրինի բերման ենթարկումների, տեխնիկայի և տեսանյութերի ոչնչացման։ Ընդհանուր առմամբ լրագրողների իրավունքների տարատեսակ խախտումների թիվը հասել է 42-ի։ Այնուամենայնիվ, քանակական առումով ամենաշատ կիրառվածը ֆիզիկական բռնությունն է, որին բախվել է 19 լրագրող և օպերատոր։

Թեև հուլիսյան իրադարձությունների առնչությամբ հարուցված քրեական գործով 8 անձանց մեղադրանք է առաջադրվել, որոնցից 7-ը կանգնել են դատարանի առջեւ, այնուամենայնիվ, սա համարժեք չէ ԶԼՄ-ների աշխատակիցների նկատմամբ կիրառված բռնությունների եւ ճնշումների ծավալներին։

Հատկանշական է, որ 8 մեղադրյալները բոլորն էլ քաղաքացիական անձինք են: 2017 թվականի հունվարի 30-ի դրությամբ որևէ ոստիկանի մեղադրանք չի առաջադրվել։ Մինչդեռ համացանցում և լրատվամիջոցների արխիվներում բազմաթիվ են տեսանյութերը, որոնցում երևում են իրենց լիազորությունները չարաշահող և ապօրինի գործողություններ իրականացնող ոստիկանները, այդ թվում նաև բարձրաստիճան սպաները։ Այդ նյութերը հասու են նաև նախաքննությունն իրականացնող մարմնին։ Սակայն դա որևէ հետևանքի չի հանգեցրել։ Այս փաստերը թույլ են տալիս գործում ներգրավված լրագրողներին ու օպերատորներին, նրանց փաստաբաններին, ինչպես նաև անկախ փորձագետներին և իրավապաշտպաններին նախաքննության ընթացքը գնահատելու որպես անարդյունավետ, ձևական և կոծկման միտում ունեցող։ Այս գնահատականը էլ ավելի իրական է դառնում, եթե նկատի ունենանք, որ ՀՔԾ-ն նմանատիպ իմիտացիոն մոտեցում է ցուցաբերում 2015 թվականի հունիսի 23-ին մայրաքաղաքի Բաղրամյան պողոտայում տեղի ունեցած դեպքերով հարուցված քրեական գործի նկատմամբ. 21 տուժած լրագրողի և օպերատորի պարագայում ընդամենը 4 մեղադրյալ, և դա նախաքննության ավելի քան մեկուկես տարվա ընթացքում։ Չնայած հանրության ուշադրությանը և հետաքրքրությանը հուլիսյան իրադարձություններին վերաբերող քրեական գործի նկատմամբ, ՀՔԾ-ն ամիսներ շարունակ չի հրապարակում գաղտնիք չպարունակող այն տեղեկությունները, որոնք կարող են պատկերացում տալ նախաքննության առաջընթացի մասին։

Այս պայմաններում ՀՀ դատախազությունը, որը պարտավոր է վերահսկել Հատուկ քննչական ծառայության գործունեությունը եւ մասնավորապես՝ այս քրեական գործի ընթացքը, պատշաճ կերպով չի իրականացնում այդ

առաքելությունը եւ միջոցներ չի ձեռնարկում նախաքննության արդյունավետությունը բարձրացնելու համար։

Տուժած լրագրողների և օպերատորների փաստաբանների մի մասը այլևս հավատ չտածելով, որ հայաստանյան իրավապահները կիրականացնեն անաչառ, բազմակողմանի նախաքննություն, նյութեր են նախապատրաստում միջազգային ատյաններ դիմելու համար։ Իսկ անկախ փորձագետներն ու իրավապաշտպանները հանրային ելույթներում նշում են, որ ամենամեծ խնդիրը ոչ այնքան իրավապահ մարմինների անգործությունն է, որքան երկրի քաղաքական իշխանությունների՝ հուլիսյան իրադարձությունների ընթացքում լրագրողների դեմ իրականացված հանցագործությունները մինչև վերջ բացահայտելու և բոլոր մեղավորներին պատասխանատվության ենթարկելու կամքի բացակայությունն է։

Հավելված 1 Հուլիսյան իրադարձությունների ընթացքում տուժած լրագրողների ու օպերատորների ցանկը, նրանց իրավունքների խախտումների ամսաթիվը, տեսակը եւ հեղինակը

Լրագրողի անունը	Խոչընդոտումների/ խախտումների տեսակը	Խախտման հեղինակը	Խախտման օրը
Արթուր Հայրապետյան («4news.am»)	Ֆիզիկական բռնություն	Ոստիկան	Հուլիսի 17
Արտակ Համբարձումյան («Ազատություն» ռ/դ)	Ֆիզիկական բռնություն	Ոստիկան	Հուլիսի 18
Գեւորգ Թոսունյան («Iravaban.net»)	Ֆիզիկական բռնություն	Քաղաքացիական հագուստով անձինք	Հուլիսի 21
Հովհաննես Մովսիսյան («Ազատություն» ռ/դ)	Ֆիզիկական բռնություն	Քաղաքացիական հագուստով ոստիկաններ	Հուլիսի29-ի լույս 30-ի գիշերը
Կարլեն Ասլանյան	Ֆիզիկական բռնություն	Քաղաքացիական հագուստով անձինք	Հուլիսի29-ի լույս 30-ի գիշերը

(«Ազատություն» ռ/դ)			
Գարիկ Հարությունյան («Ազատություն» ռ/դ)	Ֆիզիկական բռնություն	Քաղաքացիական հագուստով անձինք	Հուլիսի29-ի լույս 30-ի գիշերը
Ռոբերտ Անանյան («Ա1+»)	Ֆիզիկական բռնություն	Ոստիկաններ	Հուլիսի29-ի լույս 30-ի գիշերը
Տիգրան Բաղալյան («Ա1+»)	Ֆիզիկական բռնություն	Ոստիկաններ	Հուլիսի29-ի լույս 30-ի գիշերը
Մարիամ Գրիգորյան («1in.am»)	Ֆիզիկական բռնություն	Քաղաքացիական հագուստով ոստիկաններ	Հուլիսի29-ի լույս 30-ի գիշերը
Դավիթ Հարությունյան («1in.am»)	Ֆիզիկական բռնություն	Քաղաքացիական հագուստով ոստիկաններ	Հուլիսի29-ի լույս 30-ի գիշերը
Մկրտիչ Կարապետյան («ՍիվիլՆեթ»)	Ֆիզիկական բռնություն	Քաղաքացիական հագուստով ոստիկաններ	Հուլիսի29-ի լույս 30-ի գիշերը
Մարութ Վանյան «Lragir.am»	Ֆիզիկական բռնություն	Քաղաքացիական հագուստով անձինք	Հուլիսի29-ի լույս 30-ի գիշերը
Գեւորգ Ղազարյան (անկախ ֆոտոլրագրող)	Ֆիզիկական բռնություն	Քաղաքացիական հագուստով անձինք	Հուլիսի29-ի լույս 30-ի գիշերը
Աղվան Ասոյան «Արմենիա» Հ/Ը	Ֆիզիկական բռնություն	Քաղաքացիական հագուստով անձինք	Հուլիսի29-ի լույս 30-ի գիշերը
Ալբերտ Գալստյան «Արմենիա» Հ/Ը	Ֆիզիկական բռնություն	Քաղաքացիական հագուստով անձինք	Հուլիսի29-ի լույս 30-ի գիշերը
Լեւոն Սարգսյան («Newspress.am»)	Ֆիզիկական բռնություն	Քաղաքացիական հագուստով անձինք	Հուլիսի29-ի լույս 30-ի գիշերը

Տիգրան Գասպարյան («LifeNews»)	Ֆիզիկական բռնություն	Ոստիկաններ	Հուլիսի29-ի լույս 30-ի գիշերը
Հովիկ Գրիգորյան («Panorama.am»)	Ֆիզիկական բռնություն	Ոստիկաններ	Հուլիսի29-ի լույս 30-ի գիշերը
Խորեն Գրիգորյան («News.am»)	Ֆիզիկական բռնություն	Քաղաքացիական հագուստով անձինք	Հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը
Արթուր Հայրապետյան «4news.am»	Տեխնիկայի և տեսանյութերի ոչնչացում	Ոստիկաններ	Հուլիսի 17
Գեւորգ Թոսունյան («Iravaban.net»)	Տեխնիկայի և տեսանյութերի ոչնչացում	Քաղաքացիական հագուստով անձինք	Հուլիսի 21
Հովհաննես Մովսիսյան («Ազատություն» ռ/դ)	Տեխնիկայի և տեսանյութերի ոչնչացում	Քաղաքացիական հագուստով ոստիկաններ	Հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը
Կարլեն Ասլանյան («Ազատություն» ռ/դ)	Տեխնիկայի և տեսանյութերի ոչնչացում	Քաղաքացիական հագուստով անձինք	Հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը
Գարիկ Հարությունյան («Ազատություն» ռ/դ)	Տեխնիկայի և տեսանյութերի ոչնչացում	Քաղաքացիական հագուստով անձինք	Հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը
Դավիթ Հարությունյան («1in.am»)	Տեխնիկայի և տեսանյութերի ոչնչացում	Քաղաքացիական հագուստով ոստիկաններ	Հուլիսի29-ի լույս 30-ի գիշերը
Տիգրան Բաղալյան («A1+»)	Տեխնիկայի և տեսանյութերի ոչնչացում	Ոստիկաններ	Հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը
Մարութ Վանյան «Lragir.am»	Տեխնիկայի և տեսանյութերի ոչնչացում	Քաղաքացիական հագուստով անձինք	Հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը

Գեւորգ Ղազարյան (անկախ ֆոտոլրագրող)	Տեխնիկայի և տեսանյութերի ոչնչացում	Քաղաքացիական հագուստով անձինք	Հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը
Ալբերտ Գալստյան «Արմենիա» Հ/Ը	Տեխնիկայի և տեսանյութերի ոչնչացում	Քաղաքացիական հագուստով անձինք	Հուլիսի29-ի լույս 30-ի գիշերը
Լեւոն Սարգսյան («Newspress.am»)	Տեխնիկայի և տեսանյութերի ոչնչացում	Քաղաքացիական հագուստով անձինք	Հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը
Տիգրան Գասպարյան («LifeNews»)	Տեխնիկայի և տեսանյութերի ոչնչացում	Ոստիկաններ	Հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը
Խորեն Գրիգորյան («News.am»)	Տեխնիկայի և տեսանյութերի ոչնչացում	Քաղաքացիական հագուստով անձինք	Հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը
Տիգրան Մազմանյան «Armtimes.com»	Ապօրինի բերման ենթարկում	Ոստիկաններ	Հուլիսի 24
Լեւոն Բարսեղյան («Ասպարեզ»)	Ապօրինի բերման ենթարկում	Ոստիկաններ	Հուլիսի 27
Եղիշե Պետրոսյան «Արձագանք»	Ապօրինի բերման ենթարկում	Ոստիկաններ	Հուլիսի 30
Նաիրա Հովհաննիսյան («ArmLur.am»)	Հետապնդում	Քաղաքացիական հագուստով անձինք	Հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը
Նարեկ Սարգսյան («ArmLur.am»)	Հետապնդում	Քաղաքացիական հագուստով անձինք	Հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը

Հովսեփ Հովսեփյան («ArmLur.am»)	Հետապնդում	Քաղաքացիական հագուստով անձինք	Հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը
Թեհմինե Ենոքյան («Lragir.am»)	Սպառնալիք	Քաղաքացիական հագուստով անձ	Հուլիսի 19
Մարիամ Գրիգորյան («1in.am»)	Սպառնալիք	Քննիչ	Հուլիսի 31
Սարգիս Խարազյան («ՍիվիլՆեթ»)	Աշխատանքի խաթարում՝ հատուկ միջոցների կիրառման հետևանքով	Ոստիկաններ	Հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը
Եվգենիա Զմանովսկայա («LifeNews»)	Աշխատանքի խաթարում՝ հատուկ միջոցների կիրառման հետևանքով	Ոստիկաններ	Հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը

2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-30 ԱՆՁՆԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ և ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Պատրաստել է «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ
փորձագետ Օֆելյա Զալյանը

Ծանոթություն

Զեկույցի սույն բաժնում ներկայացվում է ՊՊԾ գնդի գրավումից հետո՝ 2016 թվականի հուլիսի 17-30-ը ընկած ժամանակահատվածում, Երևան քաղաքում և ՀՀ այլ մարզերում անձնական անձեռնմխելիության և ազատության իրավունքի վիճակը:

Մասնավորապես, այս բաժինն անդրադառնում է անօրինական ազատազրկումների (բերման ենթարկում, ձերբակալություն, կալանավորում), անօրինական խուզարկությունների և քաղաքական հետապնդումների դեպքերին ինչպես խաղաղ հավաքների մասնակիցների, այնպես էլ Սարի Թաղ կոչվող թաղամասի բնակիչների, «Սասնա Ծռեր» զինված խմբի անդամների ընտանիքի անդամների, ազգականների, ընկերների, երբևէ քաղաքացիական ակտիվություն ցուցաբերած անձանց նկատմամբ:

Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտումները 2016 թվականի հուլիսի 17-30-ը տեղի ունեցած իրադարձությունների ընթացքում

2016 թ. հուլիսի 17-ին զինված խմբի կողմից ՊՊԾ գունդը գրավելուց հետո ծավալված խաղաղ հավաքների ընթացքում թե՛ Երևան քաղաքում, թե՛ մարզերում՝ առանց պատճառների վերաբերյալ քաղաքացիներին տեղեկացնելու, առանց իրավական հիմնավորման, որոշ դեպքերում ուժի գործադրմամբ ոստիկանությունը բերման է ենթարկել և տևական ժամանակով ազատազրկել մի շարք քաղաքացիների:

2016 թվականի հուլիսի 17-ին, երբ Երևան քաղաքում քաղաքացիներ դուրս եկան փողոց, ըստ պաշտոնական տվյալների, բերման ենթարկվեց 114 քաղաքացի[177]:

2016 թվականի հուլիսի 19-ին Սարի Թաղ կոչվող թաղամասի մի խումբ բնակիչներ բողոքի ակցիա կազմակերպեցին՝ պահանջելով վերականգնել առանց նախապես զգուշացնելու դադարեցված էլեկտրաէներգիայի, գազի մատակարարումը և հանրային տրանսպորտի աշխատանքը:

Երբ ոստիկանությունը փորձեց զենք կիրառել բողոքի մասնակիցների նկատմամբ[178], նրանք քարեր նետեցին ոստիկանների ուղղությամբ: Բողոքի մասնակիցների այս գործողությունը որակվեց որպես իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն, արդյունքում բողոքի ակցիային մասնակցած Սարի Թաղի 10 բնակիչ կալանավորվեց, նրանց ավելի ուշ մեղադրանք առաջադրվեց քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու հիմքով:

2017 թ. հուլիսի 20-ին Խորենացի փողոցում, երբ ցուցարարները խնդրեցին թույլ տալ սնունդ փոխանցել Զինված խմբին, իսկ Ոստիկանությունը չթույլատրեց, հավաքի մի քանի մասնակցի կողմից քարեր նետվեցին ոստիկանների ուղղությամբ, նրանք մոտեցան ոստիկանական պատնեշին՝ փորձելով պոկել ոստիկանների սաղավարտներն ու վահանները[179]: Գրեթե անմիջապես, այդ գործողություններին ի պատասխան, ոստիկանությունը

---

[177] «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ հարցմանը ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության 2016 թվականի օգոստոսի 5-ի N 24/1960 գրություն

[178] Ահաբեկիչը նախագահ է. սարիթաղցիները ոստիկաններին 19.07.2016 թ., Թեհմինե Ենոքյան, https://www.youtube.com/watch?v=NRYHnFdZYBg

[179] Խորենացու փողոցում բախումներ են ցուցարարների եւ ոստիկանների միջեւ, Սիվիլնեթ, հուլիսի 20 2016 թ, https://www.youtube.com/watch?v=QwCh2ot1fp0

հատուկ միջոցներ կիրառեց հավաքի մասնակիցների նկատմամբ: Այնուհետև՝ ոստիկանները սկսեցին հետապնդել փախչող ցուցարարներին և ծեծի ենթարկել[180]:

2016 թ. հուլիսի 20-ի լույս 21-ի գիշերը իշխանության ներկայացուցչի կյանքի կամ առողջության համար վտանգավոր և ոչ վտանգավոր բռնություն գործադրելու, բռնություն գործադրելու սպառնալիքի կասկածանքով ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարածքային բաժիններ են տարվել 136 քաղաքացիներ[181], որոնցից 16-ը ձերբակալվել են՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի շրջանակներում հարուցված քրեական գործի շրջանակներում[182]:

2016 թվականի հուլիսի 26-ի երեկոյան կազմակերպված երթից հետո Խորենացի-Տիգրան Մեծ փողոցների հարակից տարածքից պաշտոնական տվյալներով ոստիկանության բաժիններ բերման է ենթարկվել 82 քաղաքացի: Ոստիկանությունը բերման ենթարկելը հիմնավորեց ապօրինի զենք, զինամթերք, պայթուցիկ նյութեր պահելու կասկածանքով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բերման ենթարկված 82 անձանցից միայն մեկն է ձերբակալվել, կարելի է պնդել, որ նշված հիմնավորումը պատրվակ էր երթի մասնակիցների նկատմամբ ճնշումն օրինականացնելու համար:

2016 թվականի հուլիսի 29-ին ցուցարարները հավաքվեցին Ազատության հրապարակում և շարժվեցին դեպի Խորենացի փողոց: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մովսես Խորենացի փողոցն արգելափակված էր ոստիկանական պատնեշով՝ երթն ինքնաբուխ կերպով փոխեց իր ընթացքը՝ բարձրանալով Սարի Թաղ կոչվող թաղամաս: Ոստիկանությունը ուժեր կենտրոնացրեց երթի մասնակիցների թիկունքում՝ փակելով եկած ճանապարհով ետ դառնալու հնարավորությունը[183]:

Միաժամանակ, ոստիկանությունը մեծ ուժեր կենտրոնացրեց նաև Խորենացի փողոցում: Քաղաքացիական հագուստով բազմաթիվ անձինք, որոնք ըստ լրատվամիջոցների տարածած տեղեկատվության ոստիկաններ էին,

---

[180]IPHR, զեկույց «Այրված, ծեծված և խաբված: Ոստիկանության բռնության համար պատասխանատվության սպասելիս, էլեկտրոնային, օգոստոս 2016, էջ 6, http://iphronline.org/wp-content/uploads/2016/09/ARM-Beaten-Burned-and-Betrayed-Sept-2016.pdf

[181]ՀՀ Ոստիկանություն, պարզաբանում, 21.07.2016 թ., http://www.police.am/news/view/պարզաբանում210716.html

[182] Նաիրա Բուլղադարյան, Բերման է ենթարկվել 136 քաղաքացի, Ազատություն ռադիոկայան, հուլիս 21 2016 թ., http://www.azatutyun.am/a/27871733.html

[183] Թիվ 69107116 քրեական գործի փաստեր և ականատես վկաների ցուցմունքներ:

կազմակերպված շարքով, անցան ոստիկանական բարիկադների ետևը[184], որը համարվում էր արգելված գոտի:

Ավելի ուշ լրատվամիջոցների կողմից տարածված լուսանկարներից և տեսանյութերից պարզ դարձավ, որ վերոնշյալ անձինք ինչ-որ հաբեր են ընդունում, այնուհետև հարձակվում են ցուցարարների վրա և ոստիկանների ուղղությամբ քարեր նետելով՝ բախումներ սադրում: Արդյունքում հավաքի մասնակիցների գործողությունները գնահատվեց որպես զանգվածային անկարգություն[185]:

2016 թվականի հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը պաշտոնական տվյալներով բերման է ենթարկվել 207 քաղաքացի:

2016 թվականի հուլիսի 17-30 տեղի ունեցած ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտումները միջազգային և ներպետական իրավական կարգավորումների համատեքստում

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր մարդ ունի ազատության և անձի անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ազատությունից զրկվել այլ կերպ, քան Կոնվենցիայով և օրենքով սահմանված կարգով: Յուրաքանչյուր ձերբակալվածի իրեն հասկանալի լեզվով անհապաղ հաղորդվում են կալանավորման պատճառները և նրան ներկայացվող ցանկացած մեղադրանք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը երաշխավորում է, որ անձը պետք է զերծ լինի իշխանությունների կողմից կամայականորեն ազատազրկվելու հնարավորությունից: Անձի ազատությունից զրկելու զանկացած դեպք պետք է ոչ միայն համապատասխանի ներպետական օրենսդրության նյութական և դատավարական կանոններին, այլև պետք է համապատասխանի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի նպատակներին: , Իշխանության չարաշահումներից պաշտպանության ապահովման համար Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասը հստակ

[184]Azatutyun.am, Քաղաքացիական հագուստով անձինք՝ ոստիկանական պատից այն կողմ, https://www.youtube.com/watch?v=N6tGdfNm1CI

[185] «Ոստիկանները հուլիսի 29-ին հոգեմետ դեղերի ազդեցության տա՞կ են եղել», Հայկական ժամանակ, 03.08.2016 թ, http://armtimes.com/hy/article/90868

սահմանում է այն հանգամանքները, որոնց դեպքում անձն իրավաչափորեն կարող է զրկվել ազատությունից: Այդ հանգամանքները պետք է սահմանափակ մեկնաբանության ենթարկվեն, քանի որ դրանք անձի ազատության հիմնական երշախիքներից բացառիկ դեպքեր են:[186] Անձին ազատությունից զրկելու ցանկացած դեպք պետք է լինի օրինական: Ներպետական օրենսդրության դրույթներին համապատասխանելու պահանջից բացի, ազատազրկումը պետք է հիմնված լինի անձին կամայականություններից պաշտպանելու երաշխիքների վրա[187]:

2016թ. հուլիսի իրադարձությունների ընթացքում բազմաթիվ անձինք ազատությունից զրկվել են հանցագործության կատարման կասկածանքի հիման վրա: Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ անձը կարող է զրկվել ազատությունից բացառապես քրեական վարույթի առնչությամբ[188]: Նույն կետը պահանջում է անձի կողմից հանցագործություն կատարելու ողջամիտ կասկածի առկայություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն սահմանել է, որ այն դեպքերում, երբ անձին մեղադրանք չի ներկայացվել կամ անձը դատարան չի տարվել, չի նշանակում, որ անձին ազատությունից զրկելու նպատակը չի համապատասխանել տվյալ դրույթին:

Ճիշտ է, նույն դրույթը չի պահանջում, որ ոստիկանությունն ունենա բավարար ապացույցներ մեղադրանք առաջադրելու համար, սակայն կասկածը պետք է հիմնված լինի ողջամիտ հիմքերի վրա, ինչը էական նշանակություն ունի անձին կամայական ձերբակալումից կամ կալանավորումից ազատելու համար: Նշված ողջամիտ կասկածը հիմնավորելու համար պետք է առկա լինեն փաստեր կամ տեղեկատվություն, որոնք կբավարարեն օբյեկտիվ դիտորդին, որ անձը կարող էր կատարած լինել կոնկրետ հանցանքը[189]:

Ողջամիտ կասկածի առկայությունը պայման է առանց որի անձին ազատությունից զրկելը չի կարող համարվել օրինական, սակայն որոշ ժամանակ անցնելուց հետո՝ կալանքը երկարացնելիս,դա բավարար համարվել չի կարող: Այս դեպքում դատարանները պետք է տան այլ հիմնավորումներ արդարցնելու անձի ազատազրկումը: Ներպետական դատարանները պետք է տան վերաբերելի և բավարար հիմքեր,

---

[186] Քուինն ընդդեմ Ֆրանսիայի (Quinn v. France), 22 մարտի 1995, կետ 42:

[187] Բոզանոն ընդդեմ Ֆրանսիայի (Bozano v. France), 18 դեկտեմբեի 1986թ. կետ 54:

[188] Ալ Հուսինն ընդդեմ Բոսնիայի և Հերցեգովինայի (Al Husin v. Bosnia and Herzegovina), N 3727/08, 7 փետրվարի 2012թ. կետ 65:

[189]Լաբիտան ընդդեմ Իտալիայի (Labita v. Italy) [GC], 26772/95, 06 ապրիլի 2000, կետ 155: Գուզզարդին ընդդեմ Իտալիայի (Guzzardi v. Italy) 7367/76, 6 նոյեմբերի 1980, կետ 102:

միաժամանակ, պետք է գնահատեն՝ արդյոք իրավասու մարմինները հատուկ ջանասիրություն են ցուցաբերել քննության իրականացման առնչությամբ[190]:

Դատարանն արձանագրել է, որ նույնիսկ կարճ ժամկետով ազատազրկումը պետք է համոզիչ լինի: Բավարար և վերաբերելի հիմավորումների ներկայացման պահանջը գործում է անձի ազատազրկման վերաբերյալ կայացված առաջին որոշման փուլից, այն է՝ ձերբակալումից անմիջապես հետո[191] :

Անձին ազատազրկելու վերաբերյալ որոշում կայացնելիս, իշխանությունները պարտավոր են հաշվի առնել նաև այլընտրանքային այն միջոցները, որոնք կարող են ապահովել նրա ներկայությունը դատաքննությանը[192]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ հիմնավորումները, որոնք կարող են համարվել վերաբերելի և բավարար ներառում են այնպիսի հիմքերը, ինչպիսիք են անձի փախուստի ռիսկը, վկաների վրա ճնշում գործադրելու կամ ապացույցներ կեղծելու վտանգը, կրկնահանցագործության վտանգը, դավադրության վտանգը, հասարակական անկարգություններ հարուցելու և կալանավորվածին պաշտպանելու անհրաժեշտությունը[193]:

Անձին ազատազրկելու դատարնի հիմնավորումները չպետք է լինեն ընդհանուր և վերացական[194]: Նույն կերպ, անձի փախուստի վտանգը չի կարող հիմնվել բացառապես անձին սպասվող պատժի ծանրության վրա: Այն պետք է գնահատվի վերաբերելի գործոնների համակցությամբ, որոնք կարող են հաստատել կամ փոխուստի վտանգի առկայությունը կամ դրանք պետք է այնքան չնչին լինեն, որ չհիմնավորեն անձի ազատազրկումը[195]:

Հաշվի պետք է առնվի անձի բնույթը, նրա արժեքները, բնակության վայրի առկայությունը, զբաղվածությունը, ընտանեկան կապերը և այլ բոլոր կապերը, որն անձն ունի երկրի հետ, ինչպես նաև անձի արտերկրյա հարաբերությունները[196]:

---

[190]Լաբիտան ընդդեմ Իտալիայի, կետ 153, Իդալովն ընդդեմ Ռուսաստանի (Idalov v. Russia [GC], 5826/03, 22 մայիսի 2012, կետ 140:

[191] Բուզարդին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության (Buzardi v. the Republic of Moldova [GC]), 23755/07, 5 հուլիսի 2016, կետեր 87 և 102:

[192] Իդալովն ընդդեմ Ռուսաստանի, կետ 140:

[193] Տոմազին ընդդեմ Ֆրանսիայի (Tomasi v. France) 12850/87, 27 օգոստոսի 1992, կետ 95, Թոհն ընդդեմ Ավստրիայի (Toth v. Austria) 11894/85, 12 դեկտեմբերի 1991, կետ 70, Ի. Ա. ընդդեմ Ֆրանսիայի, 28213/95, 23 սեպտեմբերի 1998, կետ 108:

[194] Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի (Piruzyan v. Armenia) 33376/07, 26 հունիսի 2012, կետ 92:

[195] Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի, կետ 95:

[196] Նեումեիստերն ընդդեմ Ավստրիայի, 27 հունիսի 1968, կետ 10:

Անձի կողմից քննության պատշաճ իրականացմանը խանգարելու վտանգը ևս չի կարող հիմնվել վերացական հիմնավորումների վրա, այլ պետք է ուղեկցվի փաստացի ապացույցներով[197]:

Ազատությունից զրկված ցանկացած անձ պետք է անհապաղ տեղեկացնել ազատությունից զրկելու պատճառների, ինչպես նաև իր դեմ ներկայացված մեղադրանքի վերաբերյալ: Նման պահանջը էական երաշխիք է և իշխանության կամայականություններից զերծ լինելու համար: Մասնավորապես՝ եթե անձը իրազեկված է իրեն ազատությունից զրկելու պատճառների մասին, ազատությունից զրկելու իրավաչափության հարցը կարող է բողոքարկվել դատարան կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի ներքո:

Ազատությունից զրկվելու պատճառների մասին տեղեկանալու իրավունքը երաշխավորված է նաև ՀՀ Սահմանադրությամբ, որն ամրագրում է, որ «ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի համաձայն՝ բերման ենթարկել կարող են առանց հարգելի պատճառի քննության չներկայացող կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին, դատապարտյալին, վկային և տուժողին: Բերման ենթարկելը կատարվում է վարույթն իրականացնող հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ չի թույլատրվում բերման ենթարկել մինչև 14 տարեկան անչափահասներին, հղի կանանց և ծանր հիվանդությամբ տառապող անձանց, բացառությամբ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ կասկածվելու դեպքերի:

Բերման ենթարկելու մասին որոշումը կատարում է հետաքննության մարմինը՝ օրենքով սահմանված կարգով: Քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ ազատազրկված անձին «անհապաղ հաղորդում են ձերբակալության կամ կալանավորման հիմքերը»:

[197] Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի, 96:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205 հոդվածի՝ վկան, տուժողը, կասկածյալը և մեղադրյալը քննիչի մոտ կանչվում են ծանուցագրով: Ծանուցագրում նշվում է, թե ով է կանչում, ում, դատավարական ինչպիսի կարգավիճակով, ուր և երբ (օրն ու ժամը) պետք է ներկայանա կանչվողը, ինչպես նաև անհարգելի պատճառներով չներկայանալու հետևանքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131.1 հոդվածը սահմանում է, որ հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո երեք ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, որի պատճենը ստորագրությամբ տրվում է ձերբակալված անձին:

ՀՀ Վճռաբեկ դատարանի 2009 թ. դեկտեմբերի 18-ին կայացված թիվ ԵԱԴԴ/0085/06/09 գործով որոշման 28-րդ կետում արտահայտվել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ «…եթե քրեական հետապնդման մարմին բերելուց չորս ժամ հետո ազատությունից զրկված անձին ձերբակալման արձանագրություն չի հայտարարվի, ապա անձն օրենքի ուժով պետք է համարվի ձերբակալված և իրավունք ունենա օգտվել ձերբակալվածի համար օրենքով սահմանված երաշխիքներից»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածի համաձայն՝ ձերբակալված անձինք պահվում են ձերբակալվածներին պահելու վայրերում: Ձերբակալվածներին պահելու կարգը և պայմանները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

Բերման ենթարկում

Համաձայն պաշտոնական տվյալների՝ 2016 թ. հուլիսի 17-30-ը ընկած ժամանակահատվածում բերման է ենթարկվել 726 քաղաքացի[198]:

Բերման ենթարկելու հանգամանքների ուսումնասիրությունը վկայում է, որ 2016 թ.-ի հուլիսի 17-30-ը ընկած ժամանակահատվածում ոչ բոլոր դեպքերն են արձանագրվել սահմանված կարգով, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ բերման ենթարկված քաղաքացիների թիվը ավելին է եղել, քան պաշտոնական տվյալների համադրման արդյունքում ստացված թիվը:

Նման եզրահանգման համար հիմք են հանդիսանում նաև պաշտոնատար անձանց կողմից տրամադրված թվերի միջև առկա հակասություններն ու անճշտությունները:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2016 թվականի հուլիսի 17-ին տեղեկատվություն է տարածել այն մասին, որ Վանաձորի ոստիկանության Բազումի բաժին բերման են ենթարկվել մի շարք քաղաքացիներ, որոնցից Հասմիկ Էվոյանը զանգահարել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակ և խնդրել փաստաբան տրամադրել, սակայն Կազմակերպության փաստաբաններին այդպես էլ չի հաջողվել մուտք գործել ոստիկանության բաժին[199]: Մինչդեռ ավելի ուշ ոստիկանության կողմից տրամադրված պաշտոնական տեղեկատվության մեջ նշվել է, որ 2016 թվականի հուլիսի 17-ին Վանաձորի ոստիկանության բաժին անձինք բերման չեն ենթարկվել[200]:

ՀՀ Ոստիկանության կողմից 2016 թ. հուլիսի 21-ին տարածված պարզաբանման համաձայն՝ 2016 թ. հուլիսի 20-ի լույս 21-ի գիշերը իշխանության ներկայացուցչի կյանքի կամ առողջության համար վտանգավոր և ոչ վտանգավոր բռնություն գործադրելու, բռնություն գործադրելու սպառնալիքի կասկածանքով ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարածքային բաժիններ են բերվել 136 քաղաքացիներ[201]: Ավելի ուշ Ոստիկանության կողմից

---

[198] Ըստ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի և «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպությունների հավաքագրած տվյալների:

[199]«Հրատապ: Հիմնադիր խորհրդարանի անդամներին իրավական աջակցություն տրամադրելու նպատակով ոստիկանության բաժին այցելած փաստաբաններին թույլ չեն տալիս մուտք գործել բաժին, ՀՔԱՎ, July 17, 2016 թ., 2:45»,http://hcav.am/events/17-07-2016-02-1/

[200]2016 թվականի օգոստոսի 5-ին «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ին ՀՀ Ոստիկանության իրավաբանական վարչության կողմից տրամադրված գրություն

[201]ՀՀ Ոստիկանություն, հուլիսի 7, 2016 թ. պարզաբանում՝ http://www.police.am/news/view/պարզաբանում210716.html

տրամադրված պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ 2016 թվականի հուլիսի 20-ին և 21-ին բերման է ենթարկվել ընդամենը 147 քաղաքացի[202]:

Բերման ենթերկելու դեպքերի առնչությամբ ոստիկանության գործողությունների վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ բերման ենթարկելու դեպքերը պատշաճ չեն փաստաթղթավորվել՝ ոստիկանության գործողությունների անօրինականության ծավալը թաքցնելու նպատակով[203]:

2016 թ. հուլիսի 17-30-ը ընկած ժամանակահատվածում Երևանում և մարզերում բերման ենթարկված բազմաթիվ քաղաքացիներ վկայել են, որ բերման ենթարկելու վերաբերյալ իրենց որևէ որոշում չի ներկայացվել: Ավելին՝ բերման են ենթարկվել ոչ միայն Ազատության հրապարակում, Խորենացի փողոցում խաղաղ հավաքի մասնակիցները, այլև այդ տարածքով անցնող պատահական անցորդներ: Տներից բերման են ենթարկվել նախկինում քաղաքացիական ակտիվությամբ աչքի ընկած անձինք, «Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական շարժման հետ որևէ կապ ունեցող անձինք, «Սասնա Ծռեր» զինված խմբի անդամների հարազատները:

Բերման ենթարկված անձանց հնարավորություն չի տրվել տեղեկացնելու հարազատներին իրենց գտնվելու վայրի մասին կամ իրավական աջակցություն ստանալու, մինչդեռ քաղաքացիներն անազատության մեջ են պահվել 4 ժամից ավելի՝ մինչև 24 ժամ:

Հայտնի են տասնյակ դեպքեր, երբ ոստիկանությունում արգելել են փաստաբանի հանդիպումը վստահորդի հետ, բերման ենթարկված անձանց զրկել են զանգ կատարելու իրավունքից: ՀՀ Ոստիկանության կողմից փաստաբանների պարտականությունները կատարելուն խոչընդոտելու կապակցությամբ 2016 թ. հուլիսի 22-ին հայտարարությամբ հանդես է եկել ՀՀ Փաստաբանների պալատի փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը, որը դատապարտել է փաստաբանների և նրանց վստահորդների իրավունքների ապօրինի սահմանափակումները և ՀՀ Ոստիկանությունից ու պետական այլ մարմիններից պահանջել չխոչընդոտել

[202]2016 թվականի օգոստոսի 5-ին «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ-ի հարցմանը ՀՀ Ոստիկանության իրավաբանական վարչության կողմից տրամադրված գրություն

[203]Բերման ենթարկելու արձանագրության մեջ անհրաժեշտ է նշել այն գործողությունը, որի համար անձը բերման է ենթարկվել, ինչպես նաև արձանագրել ժամը, բերման ենթարկված անձի համար ապահովել ազատազրկված անձի իրավունքների պաշտպանությունը:

փաստաբանների լիազորությունների իրականացմանը, իսկ այդպիսիք թույլ տված անձանց ենթարկել պատասխանատվության[204]:

Բերման ենթարկելու փաստերի ուսումնասիրությունը վկայում է նաև, որ բերման ենթարկելու ընթացքում կամ դրանից հետո ոստիկանությունը արհեստական ապացույցներ է ստեղծել իր գործողությունների օրինականությունը հիմնավորելու համար:

«Ամեն ինչ ի սկզբանե է կեղծված: Ասում են, իբր ինձ բերման են ենթարկել մեր շենքի բակից, այն դեպքում, երբ իրականում, ինչպես ասացի, մեր տանից են տարել՝ առանց համապատասխան թույլտվության, առանց խուզարկության թղթի, օրենքի խախտմամբ: Ուսապարկը, որը դարձյալ իրենք են վերցրել մեր տանից, որդունս է, զինվորական ուսապարկ է, որում եղել են դիրքեր բարձրանալու համար անհրաժեշտ բոլոր պարագաներն, այդ թվում՝ երկու դանակ ….»[205]:

- *«Առանց տեղեկացնելու, առանց ծանուցման, եկան, կարդացին, որ ինձ բերման են ենթարկում սառը զենք մոտս ունենալու համար»[206]:*

- *2016 թվականի հուլիսի 17-ին բերման ենթարկված, Արեգ և Սերգեյ Կյուրեղյանների մայր Նվարդ Բիլյան*

*2016 թվականի հուլիսի 17-30-ը բերման ենթարկված անձանց վերաբերյալ տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ ոստիկանության կողմից հատուկ թիրախավորվել են քաղաքական և քաղաքացիական ակտիվություն ցուց*աբերած անձինք: Հավաքների շարունակականությունը կանխելու նպատակով ոստիկանները բերման են ենթարկել և տևական ժամանակ անազատության մեջ պահել վերջիններիս: Որոշ դեպքերում թիրախավորվել են նաև նրանց ընտանիքի անդամները (այն դեպքում, երբ ոստիկանությունը չի կարողացել բերման ենթարկել կոնկրետ անձին, բերման է ենթարկել նրա ընտանիքի անդամներին):

2016 թվականի հուլիսի 17-ին՝ 07:00-ի սահմաններում, ոստիկանները գնացել են Միքայել

[204]«ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԽՍՏՈՐԵՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է», A1+, ՀՈՒԼԻՍ 22, 2016 Թ., 19:56, HTTP://WWW.A1PLUS.AM/1474580.HTML

[205] «Ոստիկաններն ինձ տնային շորերով տանից հանել են ու ձեռքերիցս քաշքշելով՝ տարել». Կյուրեղյանների մայրը մանրամասներ է պատմում, Lragir.am, 19:05, օգոստոսի 5 2016թ., http://www.lragir.am/index/arm/0/right/vien/137329

[206] Տաթև Դանիելյան, «Կյուրեղյանների մայրը կրկին բերման է ենթարկվել», «Իրավունք», օգոստոսի 5 2016թ., http://www.azatutyun.am/a/27902375.html

Նազարյանի բնակարան՝ նրան բերման ենթարկելու, սակայն Միքայելը տանը չի եղել: Ոստիկանները բերման են ենթարկել նրա հորը և եղբորը: Միքայելի եղբորն ու հորը բաժին են տարել, որպեսզի Միքայելին գտնեն կամ Միքայելը պարտադրված ներկայանա ոստիկանական բաժին: Այնուհետև ժամը 08:00-ի սահմաններում Միքայելին գտել են Աշտարակում բնակվող իր բարեկամի տանը և բերման ենթարկել ոստիկանության Աշտարակի բաժին, որից հետո նրա հորը և եղբորն ազատ են արձակել: Միքայելին ազատ են արձակել՝30 ժամ հետո:

Պաշտոնական տվյալներով՝ 2016 թ. հուլիսի 17-ին, 18-ին և 27-ին ընդհանուր թվով 198 անձ է բերման ենթարկվել ՀՀ Ոստիկանության զորքերի թիվ 1033 զորամաս: Բերման ենթարկված քաղաքացիների մեծ մասը պահվել է 4 ժամից ավելի, որոշ դեպքերում՝ մինչև 24 ժամ: Նրանք հիմնականում պահվել են մարզադահլիճում:

Ըստ բերման ենթարկված քաղաքացիների՝ ոստիկանները թույլատրել են նստել միայն դահլիճում առկա առանց հենակների նստարանների վրա, որոնք չափանազանց անհարմար են եղել, և շատերը նախընտրել են նստել հատակին: Իսկ հանդիսատեսի համար նախատեսված՝ հենակներ ունեցող նստարաններին ոստիկանները թույլ չեն տվել նստել: Զորամասում նրանք ենթարկվել են վատ վերաբերմունքի՝ ծեծի, սահմանափակված է եղել զուգարանից օգտվելու հնարավորությունը, սնունդ չի տրվել և վերջիններս զրկված են եղել իրենց իրավունքների իրացման որևէ հնարավորությունից, շատ դեպքերում ազատազրկման վերաբերյալ որևէ փաստաթուղթ չի կազմվել:

…մարզադահլիճում շուրջ 300 անձ կար՝ կին, տղամարդ, երիտասարդ, տարեց: Բոլորի հետ անհարգալից էին վերաբերվում՝ ծնկի իջեցնել, ձեռքերը ծալած մեջքին պառկացնել գետնին, դեմ տալ պատին և այլն[207]:

2016 թվականի հուլիսի 17-ին ժամը 09.30-10.45-ի սահմաններում բերման ենթարկված դերասան, ազատամարտիկ Արայիկ Հովհաննիսյան[208]

«…. 12 ժամ հետո, երբ իմ ուշքը գնաց, ես վատացա, իրանք ընդամենը ինձ հանեցին, որպեսզի ես մաքուր օդ շնչեմ, և նորից հետ բերեն շենք: 12 ժամում մեզ տրամադրել են ընդամենը 1 շիշ ջուր 100 հոգու համար: Կարծես թե գերու կարգավիճակով մեզ պահեին այնտեղ»:

[207]Տաթև Հարությունյան «Ինչպե՞ս են վերաբերվել բերման ենթարկվածների հետ Արգավանդի զորամասում. Պատմում է բերման ենթարկված դերասանը», «Առավոտ», հուլիսի 21 2016 թ., 16:41, http://www.aravot.am/2016/07/21/718195/

[208] «Ինչպե՞ս են վերաբերվել բերման ենթարկվածների հետ Արգավանդի զորամասում. Պատմում է բերման ենթարկված դերասանը», «Առավոտ», հուլիսի 21 2016 թ., 16:41, http://www.aravot.am/2016/07/21/718195/

2016 թվականի հուլիսի 17-ին բերման ենթարկված ակտիվիստ, «Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական շարժման աջակից, «Նոր Հայաստան» Հանրային փրկության ճակատի աջակից Սյուզի Գևորգյան

2016 թ. հուլիսի 17-30-ն ընկած ժամանակահատվածում բերման ենթարկվածների մի մասը ավելի ուշ վկայի դատավարական կարգավիճակում ենթարկել է հարցաքննության:

2016 թվականի հուլիսի 17-ին Էրեբունի ոստիկանության բաժնի մոտ ոստիկանները ծեծել են այդ տարածքում հայտնված 35-ամյա Սերյոժա Հովակիմյանին և 14 ժամ պահել ոստիկանության բաժանմունքում: Նա պատմել է, որ բաժանմունքում մոտ 7 ժամ ձեռնաշղթաներով են պահել, հետո ասել են, որ վկայի կարգավիճակով են հարցաքննում: Հովակիմյանը փաստաբան է պահանջել, սակայն ոստիկանները նրան հայհոյանքներով են պատասխանել: Սերյոժա Հովակիմյանը պատմել է, որ ոստիկանները ստիպել են գրել, որ դատապարտում է «Սասնա ծռեր» խմբի անդամների գործողությունները[209]:

Գյումրիում ոստիկանները քաղաքացիներին բերման են ենթարկել տանից՝ զենք, զինամթերք կրելու կասկածանքով, սակայն այդ պահին ոչ քաղաքացու բնակարանն են խուզարկել, ոչ քաղաքացուն անձնական զննության ենթարկել:

Գրանցվել են նաև դեպքեր, երբ քաղաքացուն բերման են ենթարկել՝ անձը պարզելու պատճառաբանությամբ, այն դեպքում, երբ ներկայացվել է անձը հաստատող փաստաթուղթը:

«2016 թվականի հուլիսի 17-ին կնոջս հետ զբոսնում էինք Երևանի Խորենացի-Քրիստափոր փողոցում, երբ ժամը 17:20-ի սահմաններում մեզ մոտեցան ոստիկանները, պահանջեցին ներկայանալ, որին ի պատասխան ես հայտնեցի անուն ազգանունս, սակայն ինձ ուժի գործադրմամբ բերման ենթարկեցին Ոստիկանության ներքին զորքերի զորամաս, որտեղ 5-6 ժամ պահելուց հետո առանց հարցաքննության ազատ արձակեցին 2016 թվականի հուլիսի 18-ին՝ ժամը 00: 40 սահմաններում[210]:

[209]Տաթևիկ Խաչատրյան, «ՊՊԾ գունդը գրավելուց հետո ոստիկանները ծեծել են ակտիվիստին», «Հայկական ժամանակ», 22:05, 24 հուլիսի 2016 թ., http://armtimes.com/hy/read/90221

[210] Բերման է ենթարկվել գեղանկարիչ Նիկոլ Աղաբաբյանը (տեսանյութ), A1+, հուլիս 17 2016 թ., 19:29, http://www.a1plus.am/1472621.html

Գեղանկարիչ Նիկոլ Աղաբաբյան

2016 թվականի հուլիսի 17-ին հոր հետ միասին ավտոմեխանիկի մոտ գնալու ճանապարհին բերման է ենթարկվել անչափահաս Արտյոմ Պետրոսյանը, որը ծեծի է ենթարկվել բերման ենթարկվելիս[211]:

Նույն օրը 20:30-ին բերման է ենթարկվել և ծեծի ենթարկվել նաև անչափահաս Շահեն Հարությունյանը, որի մորը իրավապահները տեղյակ չեն պահել որդուն բերման ենթարկելու վերաբերյալ և միայն ՄԻՊ-ի գրասենյակի միջնորդությամբ է հաջողվել պարզել նրա գտնվելու վայրը:

«Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական շարժման աջակից վանաձորցի Տիգրան Սիմոնյանը 2016 թվականի հուլիսի 17-ին բերման է ենթարկվել տանից Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի ոստիկանության Գուգարքի բաժին առավոտյան մոտավորապես ժամը 08:00-ին՝ առանց բերման ենթարկելու համապատասխան որոշման: Մի քանի ոստիկան այցելել են տուն և ասել, որ հրավիրում են ոստիկանություն աշխատանքի վայրում նախօրեին տեղի ունեցած կռվի մասին խոսելու: Բերման ենթարկվելու իրական պատճառի մասին Սիմոնյանը տեղեկացել է ժամեր անց ոստիկանությունում:

2016 թվականի հուլիսի 29-ին ոստիկանության կողմից բռնության են ենթարկվել ոչ միայն խաղաղ հավաքի մասնակիցները, այլև Սարի թաղի բնակիչները: Ոստիկանները հետևել են խուճապահար փախչող ցուցարարներին և ներխուժել քաղաքացիների տները, ահաբեկել և որոշ դեպքերում ծեծի ենթարկել տանտերերին՝ մեղադրելով, որ թաքցնում են ցուցարարներին:

«….եկան մեր տներում մեզ ծեծեցին, սրա պատասխանը ով է տալու[212]:

«Սարի թաղ» թաղամասի բնակիչ

Ոստիկանության կողմից ուժի և բռնության կիրառման դեպքերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ոստիկանության

[211] Ոստիկանությունը բերման է ենթարկել անչափահաս տղայի, «Հայկական ժամանակ»,14:08, հուլիսի 17 2016 թ., http://armtimes.com/hy/article/89741

[212]«Ահաբեկված Սարի թաղի բնակիչները», Սիվիլնեթ, հուլիսի 29 2016 թ., https://www.youtube.com/watch?v=asuBmIhROIA

գործողությունները քաղաքացիներին հավաքներին մասնակցելու համար «պատժելու» նպատակ են հետապնդել:

« .... սկզբից խփում էին՝ առանց նառուչնիկ էինք, ձեռքերներս ոլորել, խփում էին, քֆուր էին տալիս, թքեցին Դավիթի վրա: Ինձ պառկացրել էր գետնին բատինկեն դեմ էր տվել բերանիս, բա՝ հըլը պաչի»:

Ակտիվիստ Անդրանիկ Ասլանյան[213]

«Անմարդկային ձևով ծեծում էին բոլորիս: Մոտավորապես մի 15 անգամ երևի գլխիս եմ հարված ստացել բռունցքով ու շատ գազանավարի, խոշտանգում էր դա: Վերջում քարշ տալով ինձ հանեցին, գցեցին դուրս և կրունկով խփեցին գլխիս»:

«Բերեցին ջուր լցրեցին վրաս ու ծաղրում էին, որ սրանք վախից են էս օրը ընկել: Դա արդեն ներքին զորքերի սպորտային դահլիճում»:

Երևանի ավագանու անդամ Դավիթ Սանասարյան[214]

2016թ. հուլիսի 17-ին՝ ժամը 16:30-ին, ակտիվիստ Վաղինակ Շուշանյանի աշխատանքի վայր են այցելել ոստիկանները և նրան տարել ոստիկանության զորքերի զորամաս, մի քանի րոպե բռունցքներով ու ոտքերով ծեծի են ենթարկել՝ հարվածելով դեմքին, գլխին և որովայնին, այնուհետև ոստիկաններից մեկը ոտքով ուժգին հարվածել է կրծքավանդակին, որից հետո Շուշանյանի շնչառությունը վատացել է: Շուշանյանին բերման են ենթարկել ՀՀ Ոստիկանության զորքերի թիվ 1033 զորամաս: Շուշանյանը լրատվամիջոցներին տված հարցազրույցներում նշել է, որ սենյակներից մեկում տեսել է ակտիվիստ Վարդգես Գասպարիին՝ հատակին պառկած, աչքերի տակ կապտուկներ, տեսել է նաև այլ ծեծված քաղաքացիների[215]:

«Ինձ բերման ենթարկեցին՝ ցուցաբերելով ծայրաստիճան ցինիկ վարքագիծ. Ինձ ուղղակիորեն կանգնած տեղից վերցրեցին խցկեցին ոստիկանական մեքենան, հանդգնեցին

[213] AzatutyunTV, Ակտիվիստը պնդում է՝ ոստիկանները իրեն ծեծել և ստորացրել են 19 Հուլիսի, 2016 թվական, https://www.youtube.com/watch?v=wlXk9gDP9Lw

[214] Նանե Սահակյան, Ակտիվիստը պնդում է՝ ոստիկանները իրեն ծեծել և ստորացրել են, Ազատություն Ռադիոկայան, հուլիս 19, 2016, http://www.azatutyun.am/a/27867319.html

[215] Վաղինակ Շուշանյանին ոստիկանները դաժան ծեծի են ենթարկել, Սիվիլնեթ, հուլիսի 18 2016 թ., https://www.youtube.com/watch?v=XVRqt4wPVVo

անարգել թքել ինձ վրա:

… Իմ բողոքի ձայնն էի բարձրացնում «Սերժիկ մարդասպան», «Սերժիկ սրիկա» կոչերով, էտ ոստիկաններից մեկը, քաղաքացիական հագուստով, ուղղակիորեն եկավ ու կոշիկով կանգնեց իմ երեսի վրա, որպեսզի իմ բերանը փակի»:

Քաղաքացիական ակտիվիստ Վարդգես Գասպարի

2016 թվականի հուլիսի 20-ին՝ ժամը 12:15-ին, մարդիկ հանգիստ կանգնած էին Խորենացի փողոցում: Ես քայլեցի Քրիստափորի փողոց, որ խանութ գնամ: Քաղաքացիական համարներով մի մեքենա կանգնեց, չորս տղամարդ մոտեցան ինձ ու պահանջեցին, որ նստեմ մեքենան: Ես մերժեցի, քանի որ ինձ համար հասկանալի չէր, թե ովքեր են: Նրանք բռնեցին ձեռքերս ու քաշեցին մեքենայի մեջ: Փորձում էին թևերս ոլորել, ես էլ գոռում էի նրանց վրա, պահանջում էի՝ բացատրեն, թե ուր են ինձ տանում: Ասացին, թե հետո կիմանամ, երբ տեղ հասնենք: Ու ես նորից սկսեցի գոռալ: Նրանք գլուխս սեղմել ու ծեծում էին ինձ: Հետո իմացա, որ տանում էին Էրեբունու քաղմաս[216]»:

Հավաքի մասնակից Արա Պետրոսյան

Բռնեցին ձեռքերիցս շպրտեցին մեքենայի մեջ: 6 ժամ ձեռնաշղթաներ էր ինձ հագցրած, գրպաններից վերցրել էին պարունակությունը: Այդ օրը մեզ բաց թողեցին գիշերը 12 անց կես, ժամը 1-ի կողմերը:

«Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական շարժման անդամ Ֆելիքս Հայրապետյան

«Առավոտ 7:30-ի կողմերը մտա Ազատության հրապարակ, տեսա արդեն մի քանիսին մեքենայի մեջ են գցել: Հեռախոսս հանեցի, որ նկարեմ, մոտիկացավ մի մլիցա ասաց՝ էդ ինձ ե՞ս նկարում, արա: Հետո հեռախոսս խփեց գցեց գետնին ջարդեց, մի քանի հարված հասցրեց, գցեցին գետնին էլի շարունակեցին խփել: Քարշ տալով տարան մեքենայի մեջ գցեցին, մի քանի հարված հասցրեցին այնտեղ արդեն ոտքով, ու հետո ամբողջ ճանապարհին հայհոյելով, հատկապես մեջն էլ աղջիկ կար մերոնցից, հասանք տեղ... Հանելուց էլ մի երկու անգամ տվին ակնոցս ընկավ ջարդվեց ու մտցրին ներս... Ասեմ, որ ամբողջ ընթացքում ձեռքերներս ձեռնաշղթաներով է եղել[217]:

---

[216] «Այրված, ծեծված ու խաբված, ոստիկանական բռնության համար պատասխանատվության սպասելիս, Օգոստոս 2016», էջ 13, http://iphronline.org/wp-content/uploads/2016/09/ARM-Beaten-Burned-and-Betrayed-Sept-2016.pdf

[217] Մեզ չծեծեցին, սակայն կողքի սենյակից ձայներ էին գալիս. քաղաքացիներին ծեծի են ենթարկել, «Հրապարակ», 18 հուլիսի 2016 թ., 14:07,

Ակտիվիստ Հովհաննես Ղազարյան

Ոստիկանության գործողություններին զուգընթաց՝ քաղաքացիների նկատմամբ բռնություններ են դրսևորել նաև ոստիկանների իմացությամբ և հրահանգներով գործող քաղաքացիական անձինք: 2016 թվականի հուլիսի 24-ին «Հայ կանանց ճակատի» անդամ Սյուզան Սիմոնյանը լրատվամիջոցներին տեղեկացրել է, որ Սարի Թաղ թաղամասից վեց տղայի առևանգել են և տարել Թոխմախ ու հենց Թոխմախի Միերի (ԱԺ պատգամավոր Միեր Սեդրակյան) աչքի առջև ծեծի և խոշտանգման ենթարկել: Հետո, երբ բաց են թողել, սպառնացել են, որ եթե որևէ մեկին բողոքի, կսպանեն[218]:

«Մեզ ահաբեկում էին, նկատում էինք, որ նույն մեքենաները, մարդիկ հետապնդում էին: Եղբորս՝ քաղբանտարկյալ Լիպարիտ Պետրոսյանի որդուն, օրեր առաջ տատիկի տնից բերման են ենթարկել ԱԱԾ՝ ասելով, որ իրենք ամեն ինչ գիտեն, «հեռու մնացեք էս ամեն ինչից», «մենք ձեր հեռախոսազանգերը լսում, հետևում ենք»: Մոտ չորս օր առաջ էլ ոստիկաններն էին եկել մեր բնակարան, ցանկանում էին հանդիպել, ասում էին՝ խոսելու բան ու առաջարկ ունենք, բայց թույլ չտվեցի, որ մտնեն բնակարան, քանի որ ծանուցագիր չունեին: Ասացի՝ որևէ բանի հետ համաձայն չեմ և առաջարկներ էլ չեմ ընդունում: Օրեր առաջ էլ փողոցում անծանոթ մարդիկ են մոտեցել հորեղբորս կնոջը, ասելով՝ մենք ձեր հեռախոսազանգերը լսում ենք, գիտենք՝ձեր աղջիկները որտեղ են»:

Տաթևիկ Պետրոսյան[219]

«Հատուկ ծառայությունները կամ ոստիկանությունը, դա դեռ կբացահայտվի, ամեն դեպքում այդ ծառայությունները, հեռախոսի միջոցով փորձել են ֆիքսել և ֆիքսել են իմ գտնվելու վայրը, երբ ես ուզեցի իմ հեռախոսի քաղվածքը, պարզվեց, որ կես ժամը մեկ ջիփիարես ծառայությանը հաղորդագրություն է ուղարկվել, ֆիքսվել է իմ գտնվելու վայրը: Փաստորեն 2 ամիս շարունակ իմ հաշվին այդ ծառայությունները իմ գտնվելու վայրը ֆիքսել են[220]:

---

http://hraparak.am/?p=117717&l=am/mez+chcececin+sakayn+koxqi+senyakic+dzayner+ein+galis+qaxaqacinerin+ceci+en+entarke

[218]«Հանրահավաքից տեղեկացրեցին, որ Սարի թաղից վեց տղայի առևանգել են և տարել Թոխմախ». Սյուզան Սիմոնյան: Հասանելի է http://galatv.am/hy/news/158349/

[219]«Սասնա ծռեր» խմբի անդամ Աշոտ Պետրոսյանի ընտանիքի անդամներին ահաբեկում են: Հասանելի է http://hetq.am/arm/news/69465/sasna-tsrer-khmbi-andam-ashot-petrosyani-yntaniqi-andamnerin-ahabekum-en.html

[220]Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, «Անպատիժ ոճիր», տեսահաշվետվություն, փետրվար 22, 2017 թ., http://hcav.am/multimedia/22-02-2017-09/

«Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական շարժման քարտուղարության անդամ

Հասմիկ Էվոյան

Քաղաքացիների նկատմամբ հետապնդումները շարունակվեցին անգամ այն բանից հետո, երբ «Սասնա Ծռեր» խումբը վայր դրեց զենքերը.

«Հիմնադիր Խորհրդարանի» անդամ Հարություն Աղլամազյանը, որը ակտիվ մասնակցություն է ունեցել Ազատության հրապարակում ի պաշտպանության «Սասնա ծռերի» անցկացված հանրահավաքներին և վարել է դրանք, 2016 թ. օգոստոսի լույս 5-ի գիշերը ծեծի է ենթարկվել անհայտ անձանց կողմից, երբ նա Հատուկ քննչական ծառայությունից տուն էր վերադառնում: Աղլամազյանի խոսքով, հարձակվողները երեք հոգի են եղել, ծեծել են հոր ներկայությամբ և դիմել փախուստի այն բանից հետո, երբ աղմուկի պատճառով հարևանները դուրս են եկել բակ: Բազմաթիվ սալջարդերով Հարությունը տեղափոխվել է հիվանդանոց: Աղլամազյանին ծեծի ենթարկելու առնչությամբ հարուցված գործը կարճվել է՝ ապացույցների բացակայության պատճառով:

«Մի քանի օր շարունակ ինձ բակում, գործի տեղը հետևում էին: Ոստիկանական ավտոներով նույնպես, քաղաքացիական շորերով ոստիկաններ նույնպես եղել են, Ազգային անվտանգության ծառայությունից նույնպես եղել են: Այսինքն՝ էն մարդիկ, ովքեր էդ բանը արել են, կապված են դրանց հետ՝ իշխանությունների հետ, ոստիկանության հետ: Էդ քրեական տարրերը: Ճիշտ է, նրանք պետք ա պատժվեն, բայց ավելի կարևոր է, թե ով է նրանց էդ հրահանգը տվել»[221]:

«Հիմնադիր Խորհրդարանի» անդամ Հարություն Աղլամազյան

2016 թվականի հուլիսի 17-30-ը տեղի ունեցած ազատազրկումների, այդ թվում ձերբակալությունների և կալանքը որպես խափանման միջոց կիրառելու դեպքերի վերլուծության արդյունքները վկայում են, որ այս ընթացքում հավաքի առանձին մասնկիցների կամ կազմակերպիչների նկատմամբ քրեական հետապնդումը կիրառվել է բացառապես վերջիններիս քաղաքական հայացքների և քաղաքական ակտիվության համար[222]: Հավաքներին մասնակցելու համար

[221]ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՂԼԱՄԱԶՅԱՆ. ԾԵԾԻՑ ՏԱՍԸ ՕՐ ԱՆՑ ԷԼ ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԸ ԼՌՈՒՄ ԵՆ HTTP://WWW.AZATUTYUN.AM/A/27923178.HTML

[222]Human Rights Watch, Armenian Activist Stuck in Detention, 30 January 2017, https://www.hrw.org/news/2017/01/30/armenian-activist-stuck-detention

քրեական հետապնդումների ենթարկված և ազատազրկված անձինք արժանացել են քաղաքական հալածյալներ/խղճի բանտարկյալներ գնահատականին[223]:

Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի խախտումներ

2016 թ. հուլիսի 17-30-ն ընկած ժամանակահատվածում արձանագրվել են նաև անօրինական խուզարկության դեպքեր, որոնց վերլուծությունը փաստում է, որ խուզարկությունները կիրառվել են որպես քաղաքացիների նկատմամբ լրացուցիչ ճնշման, վախի, ճնշումների տարածման միջոց:

2016 թվականի հուլիսի 25-ին «Հիմնադիր խորհրդարան»-ը հաղորդագրություն է տարածել, որում նշվել է, որ «Հիմնադիր խորհրդարանի» մամուլի պատասխանատու Սյուզան Սիմոնյանը վերջին երեք օրերին երկու անգամ այցելել է իր ծանոթներին, որոնք ապրում են Զոր-1 թաղամասի առանձնատներից մեկում: Իսկ հուլիսի 24-ին դիմակավորների մի հսկայական խումբ, օգտվելով, որ այդ առանձնատան դարպասը և դուռը բաց է, ներխուժել են առանձնատուն, գետնին պառկեցրել տանտիրոջը, խուճապի մատնել ընտանիքի անդամներին և առանձնատան երեք հարկերում խուզարկել են՝ առանց բացատրություն տալու և առանց համապատասխան իրավական փաստաթուղթ ներկայացնելու:

Միայն առանձնատունը խուզարկելուց հետո նրանք հարցրել են տանտերերից, թե որտեղ է գտնվում Գարեգին Չուգասզյանը: Տանտերերը զարմացել են այդ հարցից, քանի որ նրանք իրականում չեն ճանաչել Չուգասզյանին, նրա մասին իմացել են ընդամենը սոցիալական ցանցից որպես գիտնական և քաղաքական գործիչ: Դիմակավոր մարդկանց խումբը լքել է առանձնատունը[224]:

Կալանավորումներ

2016 թվականի հուլիսի 17-30-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանում արձանագրվել է կալանքի՝ որպես խափնման միջոցի կիրառման բազմաթիվ

[223] Արևելյան Գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորում, Resolution No.9/AA/2016, 28-28 Նոյեմբեր, 2016 http://eap-csf.eu/wp-content/uploads/ResolutionNo9_EN_final.pdf

[224]«Հիմնադիր խորհրդարան», «Սյուզան Սիմոնյանի նկատմամբ իրականացվում է ապօրինի հետապնդում», 01:19, 25 հուլիսի 2016 թ., http://galatv.am/hy/news/158424/

դեպքեր, և ըստ էության, կալանքը կիրառվել է որպես հավաքների ակտիվ մասնակիցներին, «պատժելու» միջոց:

ՀՀ Ոստիկանության պարեկապահակետային ծառայության (ՊՊԾ) գունդը գրված «Սասնա ծռեր» զինված խմբին օժանդակելու մեղադրանքով կալանավորումներ

2016 թվականի հուլիսյան դեպքերից ընթացքում մի շարք քաղաքացիներ կալանավորվեցին «Սասնա ծռեր» զինված խմբին օժանդակելու մեղադրանքով: Մասնավորապես նրանց մեղադրանքներ է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 218-րդ (պատանդ վերցնելը), 219-րդ (շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ զավթելը) և 235-րդ (ապօրինի զենք զինամթերք ձեռք բերել, իրացնել, պահել, փոխադրել) հոդվածներով նախատեսված արարքները կատարելուն օժանդակելու համար: Զինված խմբին օժանդակելու մեղադրանքով կալանավորվեցին «Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական շարժման անդամները և աջակիցները, զինված խմբի ընտանիքի անդամները, ընկերները, բարեկամները: Կալանավորվեցին երկու անձինք, որոնցից մեկը հեռախոսազանգ էր ստացել ՊՊԾ գնդից և պնդում էր, որ իրեն անծանոթ համարից են զանգել ու խոսակցություն չի եղել զանգողի հետ, իսկ մյուս դեպքում կալանավորված անձը զանգ է ստացել իր ծանոթից ով նույն օրը զանգ է ստացել ՊՊԾ գնդից: Նշված հոդվածներով հարուցված գործերով պաշտպանները բազմիցս հայտարարել են, որ իրենց պաշտպանյալներին շինծու մեղադրանքներ են առաջադրվել:

ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ (Զանգվածային անկարգությունները) հոդվածներով նախատեսված արարքների կատարման մեղադրանքով կալանավորումներ

Հուլիսի 21-ին Երևանի քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ հուլիսի 20-ի ուշ երեկոյան տեղի ունեցած զանգվածային անկարգությունների վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (Զանգվածային անկարգությունների ժամանակ դրանց մասնակցի կողմից բռնություն գործադրելը, ջարդ կամ հրկիզում իրականացնելը, գույք ոչնչացնելը կամ վնասելը, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելը կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրելը...)[225]:

2016 թվականի հուլիսի 21-ին՝ ժամը 08-ի դրությամբ, զանգվածային անկարգություններին անմիջական մասնակցություն ունենալու կասկածանքով բերման է ենթարկվել 28 անձ, որոնցից 16-ը՝ ձերբակալվել է[226]: 09.09.2016 -ի դրությամբ ձեռք բերված ապացույցների համակցությամբ՝ 7 անձի մեղադրանք է առաջադրվել՝ հուլիսի 20-ին տեղի

[225] ՀՀ Քննչական կոմիտե, *21.07.2016*՝ http://investigative.am/news/view/ankargutyunner-xorenaci-poxoc.html
[226] ՀՀ Քննչական Կոմիտե, Հարուցվել է քրեական գործ՝ զանգվածային անկարգությունների դեպքերի առթիվ. կան ձերբակալվածներ, հուլիսի 21 2016 թ., 11:29, http://investigative.am/news/view/ankargutyunner-xorenaci-poxoc.html

ունեցած զանգվածային անկարգություններին մասնակցելու համար: Նրանց մասով քրեական գործերն անջատվել են առանձին վարույթ և դրանք՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան[227]:

Համաձայն ՀՀ հատուկ քննչական ծառայության 2016 թ. սեպտեմբերի 13-ին տարածած տեղեկատվության 2016թ. հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը Երևան քաղաքի Սարի Թաղում տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ քրեական գործով առերևույթ հանցագործություններ կատարելու, այդ թվում՝ լրագրողների մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու համար մեղադրանք է առաջադրվել 7 անձանց[228]:

ՀՀ ՔԿ հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում 2016 թվականի հուլիսի 30-ին հարուցվել է քրեական գործ՝ հուլիսի 29-ի ուշ երեկոյան Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանում տեղի ունեցած անկարգությունների դեպքերի առթիվ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հանցագործության հատկանիշներով: Զանգվածային անկարգությունները կազմակերպելու և դրանց մասնակցելու կասկածանքով ձերբակալվել է 23 անձ[229]:

2016 թ. օգոստոսի 5-ի դրությամբ որպես մեղադրյալ ներգրավվել է 8 անձ, որոնցից 3-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով, 5-ին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով[230]:

Զանգվածային անկարգություններ կազմակերպելուն և մասնակցելու մեղադրանքով ձերբակալվեցին մի քանի տասնյակ քաղաքացի: Այս մեղադրանքով ձերբակալվեցին այն քաղաքական, քաղաքացիական գործիչները և ակտիվիստները, որոնք իրենց վրա էին վերցրել խաղաղ ցույցերի առաջնորդումը, մասնավորապես, Արմեն Մարտիրոսյանը, Հովսեփ Խուրշուդյանը, Դավիթ Սանասարյանը՝ «Ժառանգություն» կուսակցությունից, և Անդրեաս Ղուկասյանը՝ «Նոր Հայաստան» շարժումից, որոնց նկատմամբ դատարանը կիրառեց կալանքը որպես խափանման միջոց: Խաղաղ ցույցերի առաջնորդումը իրենց վրա վերցրած քաղաքական և քաղաքացիական գործիչների, ակտիվիստների, և հատկապես հակաճգնաժամային Համակարգող խորհրդի անդամներին ձերբակալելը, այնուհետև կալանավորելը նպատակ ուներ վերջ դնել ցույցերին և լռեցնել ռեժիմի նկատմամբ հասարակական բողոքի ալիքը[231]:

---

[227] ՀՀ Քննչական Կոմիտե, 7 մեղադրյալների մասով նախաքննությունն ավարտվել է և ուղարկվել դատարան, սեպտեմբերի 9, 2016 թ., 18:04, http://investigative.am/news/view/ankargutyunner-sari-tax-qrgorci-avart.html

[228] ՀՔԾ, սեպտեմբերի 13, 2016՝ http://www.ccc.am/hy/1428493746/3/5324 -- 2016-09-13

[229] ՀՀ Քննչական Կոմիտե, հուլիսի 30, 2016 թ.՝ http://investigative.am/news/view/ankargutyunner-khorenatsi1.html

[230] ՀՀ Քննչական Կոմիտե, օգոստոսի 6, 2016 թ.՝ http://investigative.am/news/view/exishe-petrosyan.html

[231] Հասարակական խորհուրդ ոչ պաշտոնական մարմին էր, որը միավորում էր քաղաքական և քաղաքացիական գործիչներին, ովքեր ցույցերը համակարգելու պատասխանատվություն էին ստանձնել:

ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ (Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը) հոդվածով նախատեսված արարքների կատարման մեղադրանքով կալանավորումներ

2016 թ. հուլիսի 19-ի «Սարի թաղ» թաղամասի բնակիչները բողոքի ակցիա են իրականացրել՝ դժգոհություն արտահայտելով իրենց թաղամասում գազամատակարարման, ջրամատակարարման, էլեկտրաէներգիայի մատակարարման և երթուղային տրանսպորտի աշխատանքը դադարեցնելու առնչությամբ: Այդ ընթացքում ոստիկանները փորձել են իրենց ամրակցված զենքերով վախի մթնոլորտ ստեղծել ցուցարարների շրջանում, հնչեցրել են սեռական բնույթի հայհոյանքներ, ինչն էլ զայրացրել է ցուցարարներին, և նրանք սկսել են քարեր նետել ոստիկանների ուղղությամբ[232]:

Երևանի քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով[233] մասով (իշխանության ներկայացուցչին՝ օրենքով նրա վրա դրված պարտականությունները կատարելու ժամանակ դիմադրելը կամ նրան ակնհայտ ապօրինի գործողություններ կատարելուն հարկադրելը, որը կատարվել է բռնությամբ կամ բռնություն գործադրելու սպառնալիքով): Քրեական գործը հարուցվել է 2016թ. հուլիսի 19-ին՝ ժամը 20-ի սահմաններում Երևան քաղաքի Մ.Խորենացի փողոցին հարող Գլինկայի և Որմնադիրների փողոցների հատման վայրում մի խումբ անձանց կողմից ոստիկանության տարբեր ծառայողներին պատճառված մարմնական վնասվածքների առթիվ:

Քրեական գործի շրջանակներում կալանավորվել են Սարի թաղի 10 բնակիչ:

---

[232]Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, «Անպատիժ ոճիր», տեսահաշվետվություն, փետրվար 22, 2017 թ., http://hcav.am/multimedia/22-02-2017-09/

[233] ՀՀ Քննչական կոմիտե, «Հարուցվել է քրեական գործ՝ ոստիկանության ծառայողների նկատմամբ բռնություն կիրառելու դեպքի առթիվ», հուլիսի 20 2016 թ., 12:03, http://investigative.am/news/view/brnutyun-vostikanner-xoranaci-poxoc.html

Տեղական և միջազգային կառույցների արձագանքը տեղի ունեցած խախտումների վերաբերյալ

Մի շարք հայաստանյան իրավապաշտպան կազմակերպություններ հանդես են եկել զեկույցներով և հայտարարություններով, որտեղ բարձրաձայնել և դատապատել են ոստիկանության կողմից իրականացվող բռնություններն ու անօրինականությունները[234]:

Մասնավորապես, 2016 թվականի հուլիսի 19-ին Հյուման Ռայթս Հաուս Երևան իրավապաշտպան ցանցը հայտարարություն է տարածել այն մասին, որ հուլիսի 17-ի առավոտյան «Սասնա ծռեր» խմբի կողմից ՊՊԾ գնդի գրավմանը հետևել են ոստիկանության կողմից ՀՀ քաղաքացիների նկատմամբ հետապնդումները: Ցանցը դատապարտել է ոստիկանության գործողությունները խաղաղ քաղաքացիների նկատմամբ, մասնավորապես՝ անօրինական բերման ենթարկելու, նրանցից շատերին բռնության ենթարկելու, 3 ժամից ավել առանց կարգավիճակ սահմանելու, ինչպես նաև անօրինական վայրում պահելու քայլերը: Հայտարարությունում նշվել է, որ հուլիսի 17-ին բերման է ենթարկվել առնվազն մեկ անչափահաս, 100-ից ավելի քաղաքացիների տարել են ոստիկանության զորքերի 1033 զորամաս, որոշ դեպքերում պահել են 6-ից մինչև 30 ժամ: Նշվել է նաև այն մասին, որ հանրությանը հայտնի է դարձել նաև հետապնդվող քաղաքացիական ակտիվիստներից մեկի հարազատներին պատանդ վերցնելու մեկ դեպք՝ հարկադրելու նրան ներկայանալ ոստիկանություն: Հայտարարությունը ստորագրել են մեկ տասնյակից ավելի հասարակական կազմակերպություններ[235]:

Նշված դեպքերի վերաբերյալ 2016 թ. հուլիսի 29-ին հայտարարություն է տարածել նաև ՀՀ ՄԻՊ-ը, կոչ անելով պետության համապատասխան մարմիններին և հանրային գործիչներին ակտիվացնել ջանքերը՝ ուղղված իրավունքների բոլոր տեսակի խախտումների վերացմանն ու դրանց հետագա կանխարգելմանը: ՄԻՊ-ը իր հայտարարության մեջ նշել է, որ հուլիսի 17-29 ընկած ժամանակահատվածում ոստիկանության կողմից թույլ են տրվել խաղաղ հավաքների ազատության և անձնական ազատության իրավունքների խախումներ[236]:

---

[234] Հայաստանի Հելսինկյան Կոմիտե, Զեկույց. 2016 թ. հուլիսի 17-ից օգոստոսի 5-ը Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ , asparez.am, 2016 թ., էլեկտրոնային, http://www.asparez.am/wp-content/uploads/2016/08/Հաշվետվություն_2016-թ.-հուլիսի-17-ից-օգոստոսի-5-ը-ՀՀ-ում-տեղի-ունեցած-իրադարձությունների-վերաբերյալ-.pdf

[235] «Իրավապաշտպան ՀԿ-ներ. Միայն հուլիսի 17-ին ՀՀ Ոստիկանությունը բերման է ենթարկել Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների 140-ից ավելի բնակիչ», «Առավոտ», հուլիսի 19 2016 թ., 12:15, http://www.aravot.am/2016/07/19/717057/

[236] ՀՀ մարդու իրավունքների պաշտպան արման թաթոյան, զինված հարձակմանը հաջորդեց ատելության խոսքի քարոզչության աննախադեպ բռնկում. հղում՝ http://www.ombuds.am/media/statement-arman-tatoyan.html

Հուլիսյան դեպքերի վերաբերյալ 2016 թ. օգոստոսի 12-ին հայտարարություն է տարածել նաև Human Rights Watch միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը: 2016 թ. օգոստոսի 12-ին տարածած հայտարարության մեջ ասվում է. « Հայաստանի իշխանությունները կամայականորեն ձերբակալել են հիմնականում ընթացող խաղաղ բողոքի ցույցերի հետ կապված տասնյակ անձանց և ծեծի ենթարկել նրանցից շատերին: Իշխանությունները նաև չարդարացված քրեական մեղադրանքներ են առաջադրել բողոքի ցույցի բազմաթիվ առաջնորդների և որոշ մասնակիցների նկատմամբ և զրկել նրանց ազատազրկված անձանց տարրական իրավունքներից»[237]:

2016 թ. հուլիսի 29-ի գիշերը լույս 30-ին ոստիկանների կողմից խաղաղ ցուցարարների և իրենց աշխատանքային պարտականությունները կատարող լրագրողների նկատմամբ գործադրված անհամաչափ ուժի վերաբերյալ մտահոգություն է հայտնել նաև ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատունը[238] և ԵԱՀԿ-ի մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչը[239]:

---

[237]Human Rights Watch, հայաստան. կամայական կալանավորումներ, դաժան ծեծ. իշխանությունները հավաքում, կալանավորում են բողոքի ցույցի առաջնորդներին, human rights watch, 2016 թ. օգոստոսի 12, ժամը՝ 11:36, հղում՝ https://www.hrw.org/hy/news/2016/08/12/292965

[238]Embassy of the United States, statement from U.S. Embassy, *july 30, 2016,* https://armenia.usembassy.gov/news073016.html

[239]Դունյա Միյատովիչ. իշխանությունները պետք է գործնական քայլեր կատարեն, www.a1plus.am, հրապարակված է 2016 թ. օգոստոսի 1-ին, հղում՝ http://www.a1plus.am/1478207.html

Եզրակացություն

Ուսումնասիրված տեղեկատվության համաձայն 2016 հուլիսի 17-30-ն ընկած ժամանաահատվածում Երևանում և մարզերում ՀՀ Ոստիկանությունը խախտել է և՛ ՀՀ օրենսդրությունը, և՛ միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված մարդու իրավունքների հիմնարար ազատությունները՝ առանց օրինական հիմքերի սահմանափակելով բազմաթիվ քաղաքացիների ազատ տեղաշարժի, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքները և խախտելով խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը: Քաղաքացիները զրկվել են իրավական պաշտպանություն ստանալու իրավունքից:

Ոստիկանության գործողություններից տուժել են ինչպես խաղաղ ցուցարարները այնպես էլ ցույցի հետ կապ չունեցող, բայց պատահաբար մոտակայքում հայտնված անձինք, «Սարի թաղ» կոչվող թաղամասի բնակիչները:

Ոստիկանությունը հատուկ թիրախավորել է նախկինում քաղաքական և քաղաքացիական ակտիվություն ցուցաբերած քաղաքացիներին: Որոշ դեպքերում հաշվեհարդար տեսել նրանցից՝ դաժան ծեծի և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկելով նրանց:

Արձանագրվել են Ոստիկանության կողմից քաղաքացիների նկատմամբ հետապնդումների, ճնշումների և սպառնալիքների դեպքեր: Հաճախ քաղաքական և քաղաքական ակտիվիստներին ցույցերին մասնակցելուց հետ պահելու նպատակով ճնշումներ են կիրառվել նրանց ընտանիքի անդամների նկատմամբ:

Պաշտոնական տվյալներով 2016 թ. հուլիսի 17-30-ն ընկած ժամանակահատվածում բերման են ենթարկվել 726 քաղաքացի: Կան հիմնավոր կասկածներ, որ այդ օրերին բերման ենթարկվածների թիվը անհամեմատ ավելի մեծ է, քան պաշտոնական տվյալները:

Մի քանի տասնյակ քաղաքացիներ՝ ձերբակալվել և կալանավորվել են Զինված խմբին օժանդակելու, զանգվածային անկարգություններ կազմակերպելու և մասնակցելու, իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու մեղադրանքներով:

Կեղծ մեղադրանքների հիման վրա, միայն երկու ոստիկանի ցուցմունքով կալանավորվել են այն ակտիվիստները և քաղաքական գործիչները, ովքեր իրենց վրա էին վերցրել խաղաղ ցույցերի առաջնորդումը:

Կալանավորվել են «Սարի թաղի» 10 բնակիչներ, որոնք իրենց բողոքի ձայնն էին բարձրացրել իրենց թաղամասում գազամատակարաման, ջրամատակարարման, էլեկտրաէներգիայի մատակարարման և երթուղային տրանսպորտի աշխատանքը դադարեցնելու առնչությամբ:

Մինչդեռ, նույն իրադարձությունների ժամանակ ոստիկանական գործողություններից տուժած անձանց գործերով ոչ մի առաջընթաց չկա, այն դեպքում, երբ ակնհայտ են ոստիկանության աշխատակիցների անօրինական գորրծողությունները.

Հուլիսի 19-ին Երևանի Խորենացու փողոցում և հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը Սարի թաղում տեղի ունեցած դեպքերի առիթով կարգապահական պատասխանատվության են ենթարկվել ոստիկանության մի շարք ծառայողներ, պաշտոնից ազատվել են Երևանի ոստիկանապետը և Լոռու ՄՎ Սպիտակի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ, սակայն որևէ ոստիկան չի ենթարկվել քրեական պատասխանատվության.

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի փաստաբանների հարցումներին ի պատասխան՝ ՀՀ Հատուկ Քննչական ծառայությունից 2016 թ. դեկտեմբերին հայտնել են, որ ոստիկանության ծառայողների կողմից պաշտոնեական դիրքի չարաշահմամբ «Սարի թաղում» և հարակից տարածքներում տարբեր անձանց նկատմամբ բռնություն գործադրելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործերի շրջանակներում որևէ անձի մեղադրանք չի առաջադրվել[240]:

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք եզրակացնել, որ հուլիսյան դեպքերի առնչությամբ իրավասու մարմինները ակնհայտ տարբերակված մոտեցում են ցուցաբերել՝ հերթական անգամ փորձելով կոծկել ոստիկանների կողմից հանցագործություն կատարելու դեպքերը և հակառակ մոտեցմամբ փորձելով լռեցնել այն մարդկանց ձայնը, ովքեր համարձակվել են դուրս գալ փողոց և իրացնել Սահմանադրությամբ ամրագրված իրենց իրավունքները:

---

[240] ՀՔԱ Վանաձորի գրասենյակի փաստաբանների հարցումներին ի պատասխան՝ ՀՀ Հատուկ Քննչական ծառայությունից 2016 թ. դեկտեմբերին հայտնել են, որ ոստիկանության ծառայողների կողմից պաշտոնեական դիրքի չարաշահմամբ Սարի թաղում և հարակից տարածքներում տարբեր անձանց նկատմամբ բռնություն գործադրելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործերի շրջանակներում որևէ անձի մեղադրանք չի առաջադրվել:

Հավելված 1 241 2016 թ. հուլիսի 17-30-ը բերման ենթարկված քաղաքացիների թիվը՝ ըստ պաշտոնական տվյալների

Աղյուսակ 1. 2016 թ. հուլիսի 17-30-ը բերման ենթարկված քաղաքացիների թիվը՝ ըստ պաշտոնական տվյալների		
Ամիս/ամսաթիվ	**Բերման ենթարկվածների քանակը**	**Բերման ենթարկվելու վայրը՝ ըստ քանակի**
17/07/2016	**114**	Գյումրիի ոստիկանության բաժիններ՝ 9 քաղաքացի
		1033 զ/մ՝ 95 քաղաքացի
		Երևան քաղաքի վարչության (ԵՔՎ) այլ ստորաբաժանումներ՝ 10 քաղաքացի
18/07/2016	**25**	1032 զ/մ՝ 9
		ԵՔՎ ոստիկանության տարբեր բաժիններ՝16
20/07/2016	**129**	ԵՔՎ տարբեր բաժիններ
21/07/2016	**18**	Երևանի ոստիկանության Կենտրոնական բաժին
22/07/2016	**0**	
24.07.2016	**0**	
26/07/2016	**82**	ԵՔՎ բաժիններ
27/07/2016	**151**	ԵՔՎ բաժիններ՝ 57
		1033 զ/մ՝ 94
2016 թ. հուլիսի 29-ին լույս 30-ին	**207**	ԵՔՎ Կենտրոնական բաժին՝ 3
		Էրեբունու բաժին՝ 4
		Արաբկիրի բաժին՝ 13
		Մալաթիայի բաժին՝ 21
		Նոր Նորքի բաժին՝ 56

[241]Պաշտոնական տվյալները ստացվել են պաշտոնական կայքէջերով տարածված տեղեկատվությունից և «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ-ին ՀՀ Ոստիկանության իրավաբանական վարչության տրամադրած պատասխան գրություններից: Գրությունների պատասխանները ներկայացվում են կից հավելվածով:

		Մաշտոցի բաժին՝ 16
		Շենգավիթի բաժին՝ 38
		Քանաքեռ - Զեյթունի բաժին՝ 18
		Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժին՝ 12
		Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի բաժին՝ 14
		Կոտայքի մարզային վարչության Աբովյանի բաժին՝ 11
		ՀՀ Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչություն՝ 1
Ընդամենը	**726**	

Հավելված 2 2017 թ.-ի հուլիսի 17-ին բերման ենթարկված անձանց ցուցակը

Աղյուսակ 2 2017 թ.-ի հուլիսի 17-ին բերման ենթարկված անձանց ցուցակը				
	Անուն, ազգանուն	**Բերման ենթարկելու հանգամանքները**	**Մարդու իրավունքների խախտումներ**	**Անազատության մեջ գտնվելու տևողությունը**
1.	Հասմիկ Էվոյան «Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական շարժման քարտուղարության անդամ	Բերման է ենթարկվել տանից 2016 թ. հուլիսի 17-ի առավոտյան՝ մոտավորապես ժամը 8-ին, առանց բերման ենթարկելու համապատասխան որոշման: Բերման ենթարկելիս չեն բացատրել պատճառները: Բերման է ենթարկվել Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի ոստիկանության Բազումի բաժին, որտեղ պահվել է մինչև գիշեր՝ մոտավորապես 01:00:	- Բերման են ենթարկել առանց ծանուցագրի - Ոստիկանությունում թույլ չեն տվել հանդիպել փաստաբանի հետ - Բերման ենթարկելը և այնուհետև ազատ արձակելը չի արձանագրվել - Բռնություն չի եղել	17 ժամ (հուլիսի 17-ից՝ 08:00-ից մինչև 01:00-ն)
2.	Ռազմիկ Էվոյան «Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական շարժման աջակից	Բերման է ենթարկվել տանից 2016 թ. հուլիսի 17-ին առավոտյան՝ առանց բերման ենթարկելու համապատասխան որոշման: Բերման ենթարկելիս չեն բացատրել պատճառները: Բերման է ենթարկվել Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի ոստիկանության Բազումի բաժին:	- Բերման են ենթարկել առանց ծանուցագրի - Ոստիկանությունում թույլ չեն տվել հանդիպել փաստաբանի հետ - Բերման ենթարկելը և այնուհետև ազատ արձակելը չի արձանագրվել - Բռնություն չի եղել	2 ժամ (08:00-10:00)
3.	Գագիկ Եգանյան «Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական	Բերման են ենթարկել տանից առավոտյան մոտավորապես 8:00-ին: 5-6 ոստիկան տուն են եկել, ասել են, որ ոստիկանապետը հրավիրում է զրուցելու, քաղաքացին պահանջել է ծանուցագիր ցույց տալ, ծանուցագիր չի եղել, այնուամենայնիվ գնացել է ոստիկանություն:	- Բերման են ենթարկել առանց ծանուցագրի - Բերման ենթարկելը և այնուհետև ազատ	Մանրամասն տեղեկատվություն չկա:

	շարժման աջակից	Ոստիկանությունում պահել են մինչև գիշեր: Սնունդ տանից են ուղարկել, ջուր ոստիկանությունում տրամադրել են: Բերման է ենթարկվել Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի ոստիկանության Բազումի բաժին:	արձակելը որևէ տեղ չի արձանագրվել - Բռնություն չի եղել	
4.	Սամվել Էվոյան «Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական շարժման աջակից	Հունիսի 17-ին առավոտյան զանգահարել են, հրավիրել ոստիկանություն, ավտոշուկայում աշխատանքի է եղել, ասել են, որ աշխատանքից հետո գնա ոստիկանություն: Աշխատանքից հետո 12:30-ի սահմաններում գնացել է Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի ոստիկանության Տարոնի բաժին: «Ասեցին նստի, կկանչենք, ոչ մի բան չբացատրեցին, դեղիս ժամն էր, խնդրեցի, որ թողնեն տուն գնամ հաց ուտեմ, դեղ խմեմ, ծաղրում էին, ասում էին մենք քեզ պատիվ կտանք»: Ոստիկանության բաժնում պահել են մինչև երեկոյան 19:00: Պետի մոտ հրավիրելուց հետո է միայն քաղաքացին իմացել, թե ինչ է տեղի ունեցել Երևանում և որն է իրեն ոստիկանություն կանչելու իրական պատճառը: Որևէ արձանագրություն չի կազմվել:	- Քաղաքացուն ոստիկանությունում մոտավորապես 7 ժամ պահելը որևէ տեղ չի արձանագրվել - Բռնություն չի եղել	7 ժամ (12:30-19:00)
5.	Սամվել Մակարյան «Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական շարժման աջակից	Բերման են ենթարկել տանից առավոտյան մոտավորապես ժամը 8-ին: 2 ոստիկան են այցելել, որոնց քաղաքացին անձամբ ճանաչել է, ասել են, որ պետը հրավիրում է զրույցի, բայց չգիտեն, թե ինչու: Ոստիկանները սպասել են մինչև քաղաքացին հագնվի, որից հետո միասին գնացել են ոստիկանություն: Մինչև մոտավորապես 14:00-ն որևէ մեկը չի բացատրել, թե ինչու է քաղաքացին տարվել ոստիկանություն, միայն 14:00-ին է իմացել Երևանի դեպքերի մասին: Բերման է ենթարկվել Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի ոստիկանության Բազումի բաժին: Ոստիկանությունում պահել են մինչև գիշերվա 01:30, պահվել է առանց ուտելիքի և ջրի: Արգելել են ծխել և հեռախոսից օգտվել: Որևէ տեղ չի արձանագրվել նրան բերման ենթարկելու և ոստիկանությունում պահելու փաստը:	- Բերման են ենթարկել առանց ծանուցագրի - Բերման ենթարկելը և այնուհետև ազատ արձակելը չի արձանագրվել - Բռնություն չի եղել - Սնունդ և ջուր չի տրամադրվել	Մոտավորապես 17 ժամ (08:00-01:30)
6.	Սոսո Ավթանդիլով «Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական	Բերման են ենթարկել տանից, առավոտյան 8:30-ի սահմաններում, բերման են ենթարկել առանց ծանուցագրի, ոստիկանություն տանելու պատճառների մասին որևէ բացատրություն չի տրվել: Բերման է ենթարկվել Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի ոստիկանության Բազումի բաժին:	- Բերման են ենթարկել առանց ծանուցագրի - Բերման ենթարկելը և այնուհետև ազատ արձակելը չի	12 ժամ (8:30-20:30)

	շարժման աջակից	Սնունդ և ջուր կինն է տարել ոստիկանություն:	արձանագրվել - Բռնություն չի եղել	
7.	Հովհաննես Ղազարյան «Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական շարժման նախկին անդամ	Բերման է ենթարկվել տանից առավոտյան մոտավորապես ժամը 8-ին՝ առանց բերման ենթարկելու համապատասխան որոշման: Բերման է ենթարկվել Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի ոստիկանության Բազումի բաժին:	- Բերման են ենթարկել առանց ծանուցագրի - Արգելել են հանդիպել փաստաբանի հետ - Բերման ենթարկելը և այնուհետև ազատ արձակելը չի արձանագրվել - Բռնություն չի եղել	5 ժամ (8:00-13:30)
8.	Տիգրան Սիմոնյան «Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական շարժման աջակից	Բերման է ենթարկվել տանից Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի ոստիկանության Գուգարքի բաժին առավոտյան մոտավորապես ժամը 8-ին՝ առանց բերման ենթարկելու համապատասխան որոշման: Մի քանի ոստիկան /քաղաքացին ոստիկանների թիվը հստակ չէր հիշում/ այցելել են տուն և ասել, որ հրավիրում են ոստիկանություն՝ աշխատանքի վայրում նախօրեին իբր թե տեղի ունեցած կռվի հարցով: Ոստիկանություն տանելուց հետո մի քանի ժամ ոչ ոք չի զրուցել քաղաքացու հետ, չեն բացատրել իրեն ոստիկանություն տանելու պատճառը: Ծանոթ ոստիկանի խնդրել է պարզել իրենց ոստիկանություն բերելու պատճառը, որից հետո հրավիրել են պետի մոտ, որտեղ էլ իմացել է Երևանում տեղի ունեցած դեպքերի մասին: «Հարցրեցին «Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական շարժման հետ կապ ունես, ասացի՝ ունեմ: Հարցրեցին Երևանի դեպքի հետ կապ ունես, ասացի՝ չունեմ: Բաց թողեցին: Ոչ ֆորմալ տարան, ու նույն ձևով էլ բաց թողեցին: Վերջում էլ ասեցին ցույցերի չգնաս»,- պատմել է քաղաքացին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակցին:	- Բերման են ենթարկել առանց ծանուցագրի - Բերման ենթարկելը և այնուհետև ազատ արձակելը չի արձանագրվել - Բռնություն չի եղել	4 ժամից ավելի (8:00 – 13:00)
9.	Գևորգ Մանուկյան	Հուլիսի 17-ին առավոտյան գտնվել է եկեղեցում, երբ հեռախոսազանգ է ստացել «Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական շարժման աջակից		Մոտավորապես 1.5 ժամ / 13:00-14:30/

	«Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական շարժման անդամ	Տիրան Սահակյանից, ով իրեն տեղեկացրել է, որ ոստիկանությունից իրենց տուն մարդիկ են եկել և ուզում են իրեն բերման ենթարկել: Տիրան Սահակյանը Գևորգ Մանուկյանին խնդրել էր իրենց տուն գնալ, որտեղ երկու քաղաքացիական հագուստով ոստիկան է եղել: Մանուկյանը Սահակյանի հետ գնացել է ոստիկանության բաժին, որտեղ մնացել են մոտավորապես մեկ ու կես ժամ: Ոստիկանության բաժնի պետից տեղեկացել են Երևանում տեղի ունեցած իրադարձությունների մասին և Տիրան Սահակյանինց պահանջել են խոստանալ, որ չի գնա Երևան ցույցերին մասնակցելու, հակառակ դեպքում կկալանավորեն: Սահակյանը խոստացել է, որ չի մասնակցի, որից հետո նրանց ազատ են արձակել: Որևէ արձանագրություն չի կազմվել:		
10.	Տիրան Սահակյան	Առավոտյան երկու քաղաքացիական հագուստով ոստիկան այցելել են տուն և պահանջել իրենց հետ գնալ ոստիկանություն: Տիրան Սահակյանը հրաժարվել է նրանց հետ գնալ և զանգահարել է «Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական շարժման անդամ Գևորգ Մանուկյանին, ում խնդրել է շտապ գնալ իրենց տուն: Այնուհետև Գևորգ Մանուկյանի և ոստիկանների հետ գնացել են ոստիկանության բաժանմունք պարզելու ինչում է հարցը: Ոստիկանության բաժանմունքում մեկ ժամից ավել մնալուց հետո պետը ընդունել է և տեղեկացրել Երևանում տեղի ունեցած իրադարձությունների մասին: Սահակյանից պահանջել է խոստանալ չմասնակցել Երևանում կազմակերպվող ցույցերին: Այն բանից հետո, երբ Սահակյանը խոստացել է չմասնակցել ցույցերին նրան բաց են թողել:	- Բերման են ենթարկել առանց ծանուցագրի - Բերման ենթարկելը և այնուհետև ազատ արձակելը որևէ տեղ չի արձանագրվել - Բռնություն չի եղել	Մոտավորապես 2 ժամ / 10:30-14:30/
11.	Վարդան Ղարադաղյան «Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական շարժման աջակից	Բերման է ենթարկվել Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի ոստիկանության Բազումի բաժին տանից հուլիսի 17-ին առավոտյան, առանց բերման ենթարկելու համապատասխան որոշման: Մանրամասն տեղեկատվություն չկա:		
12.	Ժաննա	Բերման է ենթարկվել Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի		

	Ժամհարյան «Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական շարժման աջակից	ոստիկանության Բազումի բաժին տանից հուլիսի 17-ի առավոտյան՝ առանց բերման ենթարկելու համապատասխան որոշման: Մանրամասն տեղեկատվություն չկա:		
13.	Քերոբ Սարուխանյան [242] քաղաքական ակտիվիստ	Բերման է ենթարկվել Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի ոստիկանության Բազումի բաժին տանից հուլիսի 17-ի առավոտյան՝ առանց բերման ենթարկելու համապատասխան որոշման: Մանրամասն տեղեկատվություն չկա:		
14.	Լևոն Բարսեղյան Գյումրի քաղաքի ավագանու անդամ, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ	Հուլիսի 17-ին՝ ժամը 10:29, Լևոն Բարսեղյանին, իր անձնական ֆորդ Ֆոկուս 33DS095 համարով ավտոմեքենայով ոստիկանները կանգնեցրել են Ազարակ-Ոսկեվազ խաչմերուկում (Մ-1 մայրուղի) և արգելափակել են նրա հետագա ընթացքը, Լ.Բարսեղյանը կողպել է մեքենան և փորձել է ոտքով շարունակել ճանապարհը: Ոստիկանները ֆիզիկապես արգելափակել են նրան՝ թույլ չտալով հեռանալ ավտոմեքենայից, ասելով, թե Գյումրիից մարդիկ են գալիս, ուզում են խոսել, որևէ բացատրություն չեն ներկայացրել, թե ինչու են սահմանափակում իր ազատ տեղաշարժի իրավունքը: 11:10-ին Գյումրիից մեքենայով ոստիկանական խումբ է ժամանել և խմբի ղեկավար փոխգնդապետը Լ. Բարսեղյանին հրավիրել է Գյումրի՝ զրույցի: Լ.Բարսեղյանը հրաժարվել է ընդունել հրավերը՝ խնդրելով իրեն ծանուցագրով տեղեկացնել ոստիկանություն կանչվելու պատճառի մասին, ոստիկանները բացատրություն չեն տվել և քսան րոպե տևած վեճից հետո որոշել են նրան ուժով տեղափոխել Գյումրի: Այդ բանավեճի ընթացքում Լ. Բարսեղյանը առաջարկել է միասին գնալ 5 կմ հեռավորությամբ գտնվող Արագածոտնի ոստիկանական վարչություն կամ Աշտարակի քաղմաս՝ խոսելու այնտեղ, սակայն Գյումրիից եկած ոստիկանները մերժել են այդ տարբերակը, Լ.Բարսեղյանն առաջարկել է իրենց այդտեղ խուզարկել, մեքենան այդտեղ խուզարկել և թույլ տալ շարունակել ճանապարհը, ինչը նույնպես մերժել են: Լ. Բարսեղյանը փորձել է մեքենայի բանալին	- ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակում - ոստիկանները թույլ չեն տվել զանգել փաստաբանին - բերման են ենթարկել բռնի ուժով, առանց ծանուցագրի	4,5 ժամ (ժամը 10:29 -16:05-ը)

[242] ՀՔԱ Վանաձորի գրասենյակ, «Բերման ենթարկված անձինք շարունակում են մնալ ոստիկանության բաժիններում», հուլիսի 17 2016, 14:32, http://www.aravot.am/2016/07/17/716166/

		հանձնել մոտակա խանութ, որպեսզի ազգականները հետո գան վերցնեն մեքենան, սակայն ոստիկանները թույլ չեն տվել, պնդելով, որ հենց իր մեքենայով են իրեն տանելու զրույցի: Ապա ուժով 5 հոգով խլել են ավտոմեքենայի բանալին նրա ձեռքից, նրան ուժով քարշ են տվել ճանապարհի մի մայթից մյուս մայթը, խլել են հեռախոսը, նստեցրել իր մեքենան, մեքենայի մեջ են նստել նաև 4 ոստիկան և տեղափոխել Ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետ Մարտիրոսյանի աշխատասենյակ: Մարտիրոսյանը սկսել է բացատրել, որ կարիք չկա Երևան գնալու, Բարսեղյանը բացատրել է, որ իր անելիքը իրենից բացի ոչ ոք որոշել չի կարող, բացատրություն է պահանջել իրեն ապօրինաբար ազատությունից զրկելու մասին, ինչին պետը պատասխանել է, թե զենք, զինամթերք, պայթուցիկ նյութեր տեղափոխելու կասկած են ունեցել, դրա համար բերման են ենթարկել: Պետը չի կարողացել բացարել, թե այդ դեպքում ինչու տեղում չեն խուզարկել մեքենան և իրեն, և ինչու է առանց խուզարկելու 4 ոստիկան նստել այն մեքենան, որի մասին կասկած են ունեցել, թե դրանում զենք, զինամթերք է տեղափոխվում: Ապա Լ.Բարսեղյանին ոստիկանները տեղափոխել են ոստիկանության Կումայրի բաժին: Լ. Բարսեղյանը ոչ մի հարցի չի պատասխանել: Ոստիկանները կազմել են անձնական խուզարկության և բերման ենթարկելու արձանագրություն, ապա զննել են ավտոմեքենան, կազմել են զննման մասին արձանագրություն: Անձնական խուզարկության և մեքենայի զննության արդյունքում զենք, զինամթերք, պայթուցիկ նյութեր չեն հայտնաբերվել: Լ. Բարսեղյանին ազատ են արձակել 16:05-ին:		
15.	Եղիշե Շարյան «Ժառանգություն» կուսակցության անդամ, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի իրավախորհրդատու	Հուլիսի 17-ին՝ ժամը 8:30-ին, ոստիկանները այցելել են տուն, հրավիրել են զրույցի «միլպետի հետ», չեն բացատրել զրույցի առարկան, ծանուցագիր չեն ունեցել: Եղիշե Շարյանը հրաժարվել է գնալ ոստիկանություն՝ առանց իրավական հիմքի: Ստիպել են ընդունել հրավերը և տարել են իրենց հետ ոստիկանություն: Մինչև ոստիկանություն տանելը չեն խուզարկել ոչ Եղիշե Շարյանին, ոչ էլ նրա բնակարանը: Ոստիկանության Կումայրի բաժնում ժամը 12:30-ի սահմաններում Ե. Շարյանին տեղեկացրել են, որ նրան բերման են ենթարկել զենք զինամթերք պահելու, կրելու կասկածանքով, կազմվել են արձանագրություններ բերման ենթարկելու և իրավունքները սահմանափակելու մասին: Կատարվել է անձնական խուզարկություն,	- Բերման են ենթարկել առանց ծանուցագրի - արգելել են տեսակցել փաստաբանի հետ	13 ժամ

		ինչի մասին նույնպես կազմվել է արձանագրություն, զենք կամ զինամթերք նրա մոտ չեն հայտնաբերել: Այնուհետև անօրինական պահել են ոստիկանությունում:		
16.	Սերիկ Տոնոյան ՀԱԿ անդամ, նախկին ազատամարտիկ	Առավոտյան ժամը մոտավորապես 10-ին Գյումրի քաղաքում 2 ոստիկան գնացել են Սերիկ Տոնոյանի բնակարան, առանց ծանուցագիր ներկայացնելու պահանջել են գնալ ոստիկանություն: Ս. Տոնոյանը պահանջել է ծանուցագիր ներկայացնել և վարվել օրենքով, որից հետո հրմշտոց է եղել տան մեջ և նրան բռնի ուժով բերման են ենթարկել Ոստիկանության Մուշ բաժանմունք՝ զենք, զինամթերք կրելու կասկածանքով: Մինչև ոստիկանություն տանելը չեն խուզարկել ոչ Ս. Տոնոյանին, ոչ էլ նրա բնակարանը: Ոստիկանությունում կազմվել է արձանագրություն նրան բերման ենթարկելու, իրավունքները սահմանափակելու մասին, անձնական խուզարկության մասին, զենք կամ զինամթերք նրա մոտ չեն հայտնաբերել:	- Բերման են ենթարկել առանց ծանուցագրի - Բերման են ենթարկել բռնի ուժով - փորձել են հոգեբանական ճնշումների ենթարկել զանազան անհեթեթ զրույցներով - արգելել են տեսակցել փաստաբանի հետ	անազատության մեջ է գտնվել 14,5 ժամ (հուլիսի 17-ի առավոտյան 10:00 -ից մինչև հուլիսի 18-ի 00:30)
17.	Արտավազդ Բարսեղյան	Հուլիսի 17-ին առավոտյան 8:30-ի սահմանում առանց ծանուցագրի 2 ոստիկան ներխուժել են Արտավազդ Բարսեղյանի բնակարան և բռնի ուժով բերման են ենթարկել ոստիկանության Մուշ բաժին՝ զենք, զինամթերք կրելու և պահելու կասկածանքով: Մինչև ոստիկանություն տանելը չեն խուզարկել ոչ Ա. Բարսեղյանին, ոչ էլ նրա բնակարանը: Բերման ենթարկելուց հետո կազմել են արձանագրություն, բերման ենթարկելու, իրավունքները սահմանափակելու, անձնական խուզարկության մասին, զենք կամ զինամթերք նրա մոտ չեն հայտնաբերել: Անձնական խուզարկություն կատարելուց և արձանագրությունները կազմելուց հետո էլի մի քանի ժամ Ա. Բարսեղյանը ոստիկանական բաժնում պահվել է մի քանի ժամ: Ժամը 17:00-ի սահմաններում ազատ են արձակել:	- Բերման են ենթարկել առանց ծանուցագրի	Ա. Բարսեղյանը ոստիկանական բաժնում պահվել է ընդհանուր առմամբ 9,5 ժամ (8:30-ից մինչև 17:00)
18.	Սևակ Խաչատրյան	Սևակ Խաչատրյանը բնակվում է Կառնուտ գյուղում: Հուլիսի 17-ին՝ առավոտյան ժամը 8:30-ի սահմանում, Ս. Խաչատրյանի տուն են այցելել ոստիկաններ և հրավիրել են ոստիկանության Գյումրու Կումայրի բաժին: Սևակ Խաչատրյանը իր մեքենայով գնացել է Կումայրի բաժին ժամը 11:00-ին: Տան և նրա անձնական խուզարկություն չի իրականացվել տանը: Ժամը 13:00-ի սահմանում նրան տեղեկացրել են, որ նրան բերման են ենթարկել զենք, զինամթերք պահելու և կրելու կասկածանքով, կազմվել են արձանագրություններ բերման ենթարկելու,	- Բերման են ենթարկել առանց ծանուցագրի - արգելել են տեսակցել փաստաբանի հետ	10 ժամ (8:30-ից մինչև 21:30)

		իրավունքները սահմանափակելու մասին: Կատարվել է խուզարկություն, որի մասին նույնպես կազմվել է արձանագրություն, նրա մոտ զենք զինամթերք չի հայտնաբերվել: Բաց են թողել երեկոյան ժամը 21:30-ի սահմաններում:		
19.	Արտաշես Բոյաջյան ԳՊՄԻ դասախոս, գիտությունների թեկնածու, ակտիվիստ	Ա. Բոյաջյանի տուն ոստիկանները այցելել են առավոտյան 10:30-ի սահմաններում՝ առանց ծանուցագրի և հրավիրել են ոստիկանության Կումայրիի բաժին: Ոստիկանությունում տեղեկացրել են, որ բերման են ենթարկել զենք, զինամթերք կրելու, պահելու կասկածանքով: Կազմվել է արձանագրություն՝ բերման ենթարկելու և իրավունքները սահմանափակելու մասին: Կատարվել է խուզարկություն, ինչի մասին նույնպես կազմվել է արձանագրություն: Մինչև ոստիկանություն տանելը Ա. Բոյաջյանին և նրա բնակարանը չեն խուզարկել: Այնուհետև բաժին է եկել Բոյաջյանի փաստաբան Հայկ Հարությունյանը, նրան ազատ են արձակել ժամը 17:30-ի հատվածում:	- Բերման են ենթարկել առանց ծանուցագրի	7 ժամ (10:30-ից մինչև 17:30)
20.	Արմեն Ներսիսյան «Ազգային ոգի» քաղաքացիական նախաձեռնության անդամ, ԳՊՄԻ դասախոս	Արմեն Ներսիսյանի տուն ոստիկանները այցելել են առավոտյան ժամը 10-ի սահմաններում և առանց ծանուցագրի հրավիրել են ոստիկանություն զրույցի: Տունը կամ իրեն չեն խուզարկել: Նրան տարել են ոստիկանության Մուշ բաժին: Այնտեղ մեկ ժամ սպասել տալուց հետո տեղեկացրել են, որ բերման են ենթարկել զենք և զինամթերք պահելու և կրելու կասկածանքով: Անձնական խուզարկություն են կատարել, կազմվել են արձանագրություններ բերման ենթարկելու, իրավունքները սահմանափակելու, անձնական խուզարկության մասին: Խուզարկության արդյունքում Արմեն ներսիսյանի մոտ զենք, զինամթերք չեն հայտնաբերել: Այնուհետև շարունակել են Արմեն Ներսիսյանին պահել ոստիկանական բաժնում: Նրան իրավապաշտպանների բողոքներից և պահանջներից հետո ազատ են արձակել 23:00-ի սահմաններում:	- Բերման են ենթարկել առանց ծանուցագրի - արգելել են տեսակցել փաստաբանի հետ	13 ժամ
21.	Ռուզաննա Թեմուրյան Քաղաքական բանտարկյալ Լիպարիտ Պետրոսյանի կինն է	Հուլիսի 17-ին առավոտյան ժամը 10:00-11:00-ի սահմաններում Երևանի Խորենացի փողոցում է գտնվել Նարինե Պետրոսյանի հետ, կանանց ձայներ են լսել, փողոցն անցել են, որ տեսնեն ինչ է կատարվում, տեսել են մի կնոջ բերման են ենթարկում, սայլակի վրա նստած մի աղջկա են տեսել, պարզվել է նրան ուղեկցողին են բերման ենթարկում: Ոստիկանները մոտեցել են Թեմուրյանին և Պետրոսյանին, հարցրել, թե ուր են, Թեմուրյանը ասել է գնում եմ ընկերներիս մոտ, այն հարցին, թե ովքեր են ընկերներդ, Թեմուրյանը պատասխանել է՝ «բոլոր պայքարող	- Բերման ենթարկելը և այնուհետև ազատ արձակելը որևէ տեղ չի արձանագրվել - 6 ժամ պահել են ձեռնաշղթաներով - սնունդ չեն տրամադրել	6 ժամ (11:00 - 16:00)

		մարդիկ»: Ոստիկանը սպառնացել է՝ «գլուխդ կպոկեմ», որից հետո թևերը ոլորելով երկուսին էլ տարել են Իսակովի փողոցի վրա գտնվող ոստիկանական ակադեմիա: Ոստիկանական ակադեմիայում այլ բերման ենթարկվածներ են եղել, բոլորը ձեռնաշղթաներով: Ռուզանին ևս ձեռնաշղթաներ են հագցրել և հրահանգել են ոչ ոքի հետ չխոսել և ուղիղ պատին նայել, այլապես սպառնացել են գետնին պառկեցնել: «Կողքիս նստած երիտասարդին, որին ճանաչում եմ, հիմնադիր խորհրդարանի անդամ է, բուժօգնություն էին ցույց տալիս, բազմաթիվ վնասվածքներ ուներ»: Ձեռնաշղթաներով պահել են մինչև 16:00, որից հետո ազատ են արձակել:		
22.	Նարինե Պետրոսյան Քաղաքական բանտարկյալ Լիպարիտ Պետրոսյանի հորեղբոր աղջիկն է	Բերման են ենթարկել Ռուզաննա Թեմուրյանի հետ Խորենացի փողոցից ժամը 11:00-ի սահմաններում: Ձեռնաշղթաներով պահել են մինչ երեկոյան 20:00-ն, որից հետո հանել են ձեռնաշղթաները: Ազատ են արձակել հուլիսի 18 -ին ժամը 03:00: Նարինե Պետրոսյանը լսել է ոստիկանների խոսակցությունը այն մասին, որ տարեց տղամարդկանց և կանանց ազատ արձակելուց հետո երիտասարդ տղաներին ծեծելու են, այդ պատճառով ազատ արձակված կանայք և տարեց տղամարդիկ չեն լքել տարածքը, մինչև ՄԻՊ-ի գրասենյակից ներկայացուցիչներ են եկել, որից հետո ազատ են արձակել բոլորին: Բերման ենթարկվածներին պահանջի դեպքում ջուր տրամադրել են, ջուրը ոստիկաններն են խմեցրել, բոլորին նույն բաժակով, անհրաժեշտության դեպքում նաև թույլ են տվել զուգարանից օգտվել, սակայն սնունդ չի տրամադրվել:	- 8 ժամ պահել են ձեռնաշղթաներով - Բերման ենթարկելը և այնուհետև ազատ արձակելը որևէ տեղ չի արձանագրվել - սնունդ չեն տրամադրել	16 ժամ(հուլիսի 17-ի 11:00 -ից մինչև հուլիսի 18-ը)
23.	Արայիկ Վիրաբյան	Հուլիսի 17-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում ոստիկանական ակադեմիա բերման ենթարկված Ռուզաննա Թեմուրյանը զանգահարել է որդուն, տեղեկացրել, որ իրեն բաց են թողել ու խնդրել որպեսզի իրեն դիմավորի: Թեմուրյանին նրա տղայի մեքենայով դիմավորելու է գնացել որդու ընկերը՝ Արայիկ Վիրաբյանը, ում նույնպես բերման են ենթարկել ոստիկանական ակադեմի: Վիրաբյանի ընտանիքի տնական ժամանակ որևէ տեղեկություն չի ունեցել նրա գտնվելու վայրի մասին, ահազանգել են ՀՔԱ Վանաձորի գրասենյակ, ՄԻՊ -ի գրասենյակ:	- Բերման ենթարկելը և այնուհետև ազատ արձակելը որևէ տեղ չի արձանագրվել	11 ժամ (հուլիսի 17-ի 16:30 -ից մինչև հուլիսի 18-ի 04:00-ն)

		Վիրաբյանը ազատ է արձակվել հուլիսի 18-ին՝ ժամը 03:00 -04:00 սահմաններում:		
24.	Կարեն Աթայան	Հուլիսի 17-ին՝ ժամը 20:30-21:00 սահմաններում բերման է ենթարկվել Մաշտոցի պողոտայից[243]: Այլ մանրամասներ հայտի չեն:		
25.	Նիկոլ Աղաբաբյան գեղանկարիչ	Հուլիսի 17-ին, 17:20 -ի սահմաններում Երևանի Խորենացի-Քրիստափոր փողոցների խաչմերուկից բերման են ենթարկել գեղանկարիչ Նիկոլ Աղաբաբյանին, որը կնոջ հետ զբաստելիս է եղել: Ոստիկանության ներկայացուցիչները պահանջել են ներկայանալ, Ն. Աղաբաբյանը ներկայացել է, ինչը, սակայն, չի բավարարել իրավապահներին՝ նրա անձը հաստատված համարելու համար և ուժի կիրառմամբ ոստիկանները նրան նստեցրել են ոստիկանական մեքենա[244]: Նիկոլ Աղաբաբյանին բերման են ենթարկել Ոստիկանության ներքին զորքերի զորամաս որտեղ 5-6 ժամ պահելուց հետո առանց հարցաքննության ազատ են արձակել հուլիսի 18-ին, ժամը 00: 40 սահմաններում:	- Առանց որևէ բացատրության, առանց իրավական հիմքերի փողոցից բերման են ենթարկել - Բերման ենթարկելը և այնուհետև ազատ արձակելը որևէ տեղ չի արձանագրվել	7 ժամ (հուլիսի 17-ի 17:20 -ից մինչև 00: 40)
26.	Շահեն Հարությունյան Ակտիվիստ, քաղաքական բանտարկյալ Շանթ Հարությունյանի որդին է	Առավոտյան ժամը 9-ին տուն են եկել ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության անչափահասների գործերով բաժանմունքից և տանը մնացել մինչև 14:00 ու այդ ընթացքում արգելել են Շահեն Հարությունյանին դուրս գալ բնակարանից: 14:00 -ին տուն են եկել ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի աշխատակիցները և Շահենին տարել են Այլընտրանքային պատիժների կատարման բաժին, որտեղ նրան պահել են մինչև 20:00, որտեղից Շահենը գնացել է Ազատության հրապարակ մասնակցելու բողոքի ցույցին: Կես ժամ անց նրան բերման են ենթարկել Էջմիածնի ոստիկանություն, որտեղ պահել են մինչև հուլիսի 18-ը՝ ժամը 04:00-ն: Ազատության հրապարակից բերման ենթարկելիս ոստիկանները դաժանորեն ծեծի են ենթարկել Շահեն Հարությունյանին: Չնայած այն հանգամանքին, որ Շահեն Հարությունյանը անչափահաս է եղել նրա մայրը չի տեղեկացվել նրան բերման ենթարկելու մասին: Մայրը ՄԻՊ -ի	- Հուլիսի 17-ի ժամը 09:00-14:00 -ը սահմանափակվել է ազատ տեղաշարժի իրավունքը - Տանից 14:00 -ին բերման են ենթարկել առանց ծանուցագրի - Ազատության հրապարակից 20:30 բերման ենթարկելիս ծեծի են ենթարկել	5 ժամ (հուլիսի 17-ի ժամը 09:00-14:00 թույլ չեն տվել տանից դուրս գալ) 7 ժամ (14:00-20:00 պահվել է Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնում)

[243] Շահեն Հարությունյանին նորից բերման ենթարկեցին. Զ. Փոստանջյանը դիմել է ոստիկաններին, հուլիսի 17,2016, 21:19, http://www.a1plus.am/1472679.html

[244] Բերման է ենթարկվել գեղանկարիչ Նիկոլ Աղաբաբյանը (տեսանյութ), A1+, հուլիսի 17 2016 թ., 19:29, http://www.a1plus.am/1472621.html

		ներկայացուցիչներից է տեղեկացել Շահենի գտնվելու վայրի մասին: Ազատության հրապարակից բերման ենթարկելու կապակցությամբ կազմվել է արձանագրություն, արձանագրվել են նաև մարմնական վնասվածքները, որոնց կապակցությամբ հետագայում Շահեն Հարությունյանը տուժող է ճանաչվել:		7,5 ժամ (հուլիսի 17-ի 20:30 -ից մինչև հուլիսի 18-ը 04:00 պահվել է ՀՀ Ոստիկանության Էջմիածնի բաժնում)
27.	Գագիկ Սարուխանյան	14.20-ին բերման է ենթարկվել Գագիկ Սարուխանյանը[245]: Մանրամասն տեղեկատվությունը բացակայում է:		
28.	Իրինա Հարությունյան «Նոր Հայաստան» քաղաքացիական շարժման ակտիվիստ	Հուլիսի 17-ին բերման է ենթարկվել Իրինա Հարությունյանը[246]: Մանրամասն տեղեկատվություն չկա:		
29.	Ալբերտ Բաղդասարյան «Հակաճգնաժամայ ին խորհրդի» անդամ	Հուլիսի 17-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, բերման է ենթարկվել ՀՀ Ոստիկանության Արաբկիրի բաժանմունք: Բաղդասարյանն ասել է, որ իրեն բերման ենթարկելու պատճառն իրեն հայտնի չէ[247]: Հետագա ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն չկա:		

[245] «Ովքեր են օրվա ընթացքում բերման ենթարկվեցին», «Ժողովուրդ», հուլիսի 17 2016 թ., 16:38, http://armlur.am/557040/

[246] Բերման են ենթարկվել ակտիվիստներ Իրինա Հարությունյանը, Վարդգես Գասպարին և Գագիկ Սարուխանյանը, Mamul.am, հուլիսի 17, 2016 թ. 15:25, http://mamul.am/am/news/87814

[247] «Բերման է ենթարկվել Ալբերտ Բաղդասարյանը», «Առաջին լրատվական», հուլիսի 17, 2016 թ., 17:11, http://www.1in.am/1969103.html

30.	Նորայր Ավետիսյան	Հուլիսի 17-ին՝ առավոտյան ժամը 9-ին, ոստիկանությունը այցելել է Էջմիածնի շրջանի Պտղունք գյուղում գտնվող՝ ազատազրկված ազատամարտիկ Վոլոդյա Ավետիսյանի տուն և ոստիկանության Վաղարշապատի բաժին տարել նրա որդուն՝ «Հիմնադիր խորհրդարան»-ի նախկին անդամ Նորայր Ավետիսյանին[248]: Մանրամասն տեղեկատվություն չկա:		
31.	Դավիթ Սանասարյան «Ժառանգություն» կուսակցության անդամ, Երևան թաղաքի ավագանու անդամ	Բերման է ենթարկվել ժամը 20:30-ի սահմաններում ոստիկանության Էջմիածնի բաժանմունք: Մանրամասն տեղեկատվություն չկա:		
32.	Անդրեաս Ղուկասյան «Ոտքի՛, Հայաստան» նախաձեռնության հիմնադիր անդամ	Բերման է ենթարկվել ժամը 20:30-ի սահմաններում Ազատության հրապարակից ՀՀ Ոստիկանության Էջմիածնի բաժանմունք: Մանրամասն տեղեկատվություն չկա:		
33.	Վարդգես Գասպարի Քաղաքացիական ակտիվիստ	Հուլիսի 17-ին բերման են ենթարկել ՀՀ Ոստիկանության զորամաս, որտեղ տեսել է բազմաթիվ բերման ենթարկված երիտասարդների, իրեն մեկուսացրել են ինչ-որ սենյակում, ոստիկանները թքել են իր վրա, երբ սկսել է գոռալ «Սերժիկ մարդասպան, Սերժիկ սրիկա» մի ոստիկան մոտեցել է ոտքը դրել դեմքին ու սեղմել, հետո ոտքով հարվածել է գլխին և գլուխը հարվածել սալահատակին մի քանի անգամ: Վարդգես Գասպարին լրատվամիջոցներին տված հարցազրույցում	- Բերման ենթարկելը և այնուհետև ազատ արձակելը որևէ տեղ չի արձանագրվել - Ոստիկանության աշխատակիցների կողմից ենթարկվել է	4 ժամից ավելի

[248]Բերման է ենթարկվել Վոլոդյա Ավետիսյանի որդին, Ազատություն Ռադիոկայան, հուլիսի 17, 2016 թ., http://www.azatutyun.am/a/27863262.html

		հայտնել է, որ ականատես է եղել, թե ինչպես են սենյակի դռան մոտ մի երիտասարդի դաժան ծեծի ենթարկել: Սենյակի դիմաց կանգնած է եղել ավտոմատով ոստիկան, ով մեկ ժամ շարունակ ավտոմատը լիցքավորել ու ձգանը քաշել է, հավանաբար վախի մթնոլորտ ստեղծելու նպատակով[249]:	ծեծի ու վատ վերաբերմունքի	
34.	Դավիթ Հովհաննիսյան «Ոտքի՛, Հայաստան» քաղաքացիական շարժման անդամ	Բերման է ենթարկվել ժամը 20:30-ի սահմաններում Ազատության հրապարակից ՀՀ Ոստիկանության Էջմիածնի բաժանմունք: Մանրամասն տեղեկատվություն չկա:		
35.	Պետրոս Մակեյան «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության նախագահ	Հուլիսի 17-ին՝ առավոտյան 09:30-ին, Շիրակի մարզի Փանիկ գյուղում ոստիկանները գնացել են Մակեյանի տուն, տեղեկացրել են Երևանի դեպքերի վերաբերյալ և հաղորդել, որ պետը հրավիրում է բաժին, երբ Մակեյանը մերժել է առանց ծանուցագրի բաժին գնալ, մեկ ժամից պետի տեղակալն է այցելել և զգուշացրել է, որ չգնալու դեպքում ուժ կկիրառեն: Մակեյանը ոստիկանների հետ գնացել է ՀՀ Ոստիկանության Արթիկի բաժին, որտեղից նրան ուղարկել են Գյումրու բաժին, որտեղ Մակեյանին տեղեկացրել են, որ քանի որ ինքը շփում է ունեցել ՊՊԾ գունդը գրաված անձանց հետ, նրան պետք է խուզարկեն: Խուզարկության համար հետ են տարել Արթիկի բաժանմունք: Խնդրել են, որ Երևան չգնա, ինչին Մակեյանը պատասխանել է, որ ինքն է որոշում: http://armtimes.com/hy/article/89769	- Բերման են ենթարկել առանց ծանուցագրի - Բերման ենթարկելը և այնուհետև ազատ արձակելը որևէ տեղ չի արձանագրվել	5 ժամ (10:30-16:00)
36.	Վաղինակ Շուշանյան ակտիվիստ, «Ոչ թալանին» նախաձեռնության անդամ,	2016թ. հուլիսի 17-ին՝ ժամը 16:30-ին ակտիվիստ Վաղինակ Շուշանյանի աշխատանքի վայր են այցելել ոստիկանները և նրան տարել ոստիկանության զորքերի զորամաս, մի քանի րոպե բռունցքներով ու ոտքերով ծեծի են ենթարկել՝ հարվածելով դեմքին, գլխին և որովայնին, այնուհետև ոստիկաններից մեկը ոտքով ուժգին հարվածել է կրծքավանդակին, որից հետո Շուշանյանի շնչառությունը վատացել է: Շուշանյանին բերման են ենթարկել ՀՀ Ոստիկանության զորքերի թիվ	- Բերման են ենթարկել առանց ծանուցագրի - Բերման ենթարկելը և այնուհետև ազատ արձակելը չի արձանագրվել	9 ժամ (հուլիսի 17-ի ժամը 16:30-ից մինչև հուլիսի 18-ը ժամը 02:00)

[249]Վարդգես Գասպարին պատմում է իրեն բռնության ենթարկելու մասին, Lragir.am,հուլիսի 19, 2016 թ., 17:43, http://www.lragir.am/index/arm/0/right/view/136172

		1033 զորամաս: Շուշանյանը լրատվամիջոցներին տված հարցազրույցներում նշել է, որ սենյակներից մեկում տեսել է Վարդգես Գասպարիին հատակին պառկած, աչքերի տակ կապտուկներ, տեսել է նաև այլ ծեծված քաղաքացիների: Շուշանյանին ազատ են արձակել հուլիսի 18-ին՝ ժամը 02:00[250]: «Մեզ պահել էին մի սենյակում, որտեղ տոթ էր, լիքը մարդ կար, մեզ չծեծեցին, սակայն կողքի սենյակից ձայներ էին գալիս, մի քանի րոպե հետո ներս բերեցին արյունլվա եղած Վաղինակին».- «Հրապարակին» պատմել է քաղաքացիներից մեկը՝ չցանկանալով հրապարակել իր անունը[251]:	- Ոստիկանության աշխատակիցների կողմից ենթարկվել է ծեծի ու վատ, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի	
37.	Ֆելիքս Հայրապետյան «Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական շարժման անդամ	Երևանի Ազատության հրապարակից ժամը 11:00-11:30-ի սահմաններում ոստիկանները բերման են ենթարկել Ֆելիքս Հայրապետյանին: Նրա գտնվելու վայրի վերաբերյալ տևական ժամանակ հարազատները որևէ տեղեկություն չեն ունեցել և չեն կարողացել կապ հաստատել նրա հետ: 6 ժամ պահել են ձեռնաշղթաներով: Ազատ են արձակել հուլիսի 18-ին՝ 12:00 - 01:00 –ի սահմաններում:	- Առանց իրավական հիմքի անազատության մեջ պահել են 12 ժամ - 6 ժամ պահել են ձեռնաշղթաներով	12 ժամ
38.	Միքայել Նազարյան ակտիվիստ, այն ակտիվիստն է, որն իր ձեռքով պատրաստված խաղալիք զենքով ակցիա էր իրականացրել կենտրոնի դատարանի դիմաց	Հուլիսի 17-ին՝ 07:00-ի սահմաններում, ոստիկանները գնացել են Միքայել Նազարյանի բնակարան՝ նրան փնտրելու: Սակայն Միքայելը տանը չի եղել, և ոստիկանները բերման են ենթարկել նրա հորը և եղբորը: Այնուհետև՝ ժամը 08:00-ի սահմաններում Միքայելին գտել են Աշտարակում բնակվող իր բարեկամի տանը և բերման ենթարկել Աշտարակի ոստիկանական բաժին: Միքայելի եղբորն ու հորը բաժին են տարել, որպեսզի Միքայելին գտնեն կամ Միքայելը պարտադրված ներկայանա ոստիկանական բաժին, քանի որ Միքայելին գտնելուց հետո նրանց ազատ են արձակել: 11:00-ի սահմաններում, Միքայելը զանազարել է իր ծանոթ փաստաբանին խնդրելով գալ և փաստաբանական աջակցություն ցուցաբերել: Փաստաբանը 13:00-ին ներակայացել է Աշտարակի ոստիկանական բաժին, սակայն նրան թույլ	- Բերման են ենթարկել առանց ծանուցագրի - Արգելել են տեսակցել փաստաբանի հետ - Առանց իրավական հիմքի անազատության մեջ պահել են 30 ժամ	30 ժամ

[250]Վաղինակ Շուշանյանին ոստիկանները դաժան ծեծի են ենթարկել, Սիվիլնեթ, հուլիսի 18 2016 թ., https://www.youtube.com/watch?v=XVRqt4wPVVo

[251] Մեզ չծեծեցին, սակայն կողքի սենյակից ձայներ էին գալիս. քաղաքացիներին ծեծի են ենթարկել, Հրապարակ,հուլիսի 18 2016 թ., 14:07, http://hraparak.am/?p=117717&l=am/mez+chcececin+sakayn+koxqi+senyakic+dzayner+ein+galis+qaxaqacinerin+ceci+en+entarkel

		չեն տվել հանդիպել իր վստահորդին: Միքայելին ոստիկանական բաժնում պարզաբանել են, որ բերման են ենթարկել, որպեսզի Երևան չգնա: Ոստիկանները փաստաբանին ոստիկանության շենքի տարածքից փորձել են դուրս հրավիրել ձեռքերը ոլորելով: Փաստաբանը ահազանգել է մարդու իրավունքների գրասենյակին՝ տեղեկացնելով իրավիճակի մասին, ժամեր անց ՄԻՊ-ի գրասենյակից հետ են զանգահարել և տեղեկացրել, որ ոստիկանական բաժնից փոխանցել են, որ Միքայել Նազարյանն այնտեղ է գտնվում գողության կասկածանքով: Ռոպեներ անց Աշտարակի ոստիկանության աշխատակիցները փաստաբանի հետ զրույցում հերքել են այդ տեղեկավությունը՝ նշելով, որ իրենք նման բան որևէ մեկին չեն հաղորդել: Միքայելին ազատ են արձակել 30 ժամ պահելով անազատության մեջ՝ առանց որևէ հիմնավորման:		
39.	Մնացական Ալեքսանյան	Բերման են ենթարկել առավոտ 10-ին, Էրեբունու ոստկանության մոտակայքի «Ծիրան» սուպերմարկետի մոտից: Առանց որևէ բան ասելու, պարզաբանելու Մնացականին մտցրել են մեքենան ու տարել: Մնացականի ընկերուհին այդ պահին փորձել է ճշտել ոստիկաններից, թե ուր և ինչու են տանում, սակայն ոստիկանները նրան հրել են ու հեռացել մեքենայով: Բերման ենթարկելուց յոթ ժամ անց Մնացականը զանգահարել է ընկերուհուն և տեղեկացրել, որ գտնվում է ոստիկանության ներքին զորքերի շենքում[252]:	- Բերման են ենթարկել փողոցից առանց որևէ բացատրության, հիմնավորման - Առանց իրավական հիմքի անազատության մեջ պահել են 11 ժամից ավելի	Պահվել է 11 ժամից ավելի
40.	Հովհաննես Պետրոսյան	Հուլիսի 17-ին բերման են ենթարկվել հայր և որդի Պետրոսյանները, նրանք գնալիս են եղել ավտոմեխանիկի մոտ: Անչափահաս Արտյոմ Պետրոսյանը ծեծի է ենթարկվել բերման ենթարկելիս[253]: Այլ մանրամասներ չկան:	- Բերման են ենթարկել առանց իրավական հիմնավորման - Բերման ենթարկելիս ծեծել են անչափահաս քաղաքացուն	
41.	Արտյոմ Պետրոսյան			
42.	Սյուզի Գևորգյան	Բերման է ենթարկվել ՀՀ Ոստիկանության զորքերի թիվ 1033 զորամաս, որտեղ պահվել է դահլիճում այլ բերման ենթարկված անձանց հետ:	- Բերման են ենթարկել առանց իրավական	12 ժամից ավել

[252] Դիանա Ղազարյան, «Հարցրեցի՝ ինչի համար եք բերման ենթարկում, ոչ մի բացատրություն չտվեցին», Հետք, հուլիսի 17, 2016 թ. http://hetq.am/arm/news/69215/harcreci-inchi-hamar-eq-berman-entarkum-och-mi-bacatrutyun-chtvecin.html

[253] Ոստիկանությունը բերման է ենթարկել անչափահաս տղայի, Հայկական ժամանակ, հուլիսի 17 2016 թ., 14:08, http://armtimes.com/hy/article/89741

	Ակտիվիստ, «Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական շարժման աջակից, «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի աջակից	Անազատության մեջ պահվել է 12 ժամից ավելի: Բերման ենթարկելու հետագայում ազատ արձակելու գործընթացը չի արձանագրվել: ՀՔԱ Վանաձորի իգրասենյակին և լրատվամիջոցներին տված հարցազրույցներում կարծիք է հայտնել, որ իրենց պահել են որպես պատանդ:	հիմնավորման - Բերման ենթարկելու հետագայում ազատ արձակելու գործընթացը չի արձանագրվել - 12 ժամ պահել են առանց սննդի և սահմանափակ քանակով ջուր են տրամադրել	
43.	Նելի Մինասյան Քաղաքացիական ակտիվիստ	Բերման են ենթարկել բակի խանութից՝ առանց որևէ բացատրության, առանց ծանուցագրի: Հետագայում իր ֆեյսբուքյան էջում Մինասյանը գրառում է արել. «Մոտ 150 անձանց բերման էին ենթարկել ոստիկանության ակադեմիա, ընդ որում՝ կանայք, պապիկներ, անչափահաս երեխաներ, անմեղսունակ անձինք, ազգությամբ արաբ, էլ չգիտեմ ում, և պահում էին ֆիզկուլտզալում՝ որպես պատանդ: Ոչ ուտելիք, ոչ նորմալ խմելու ջուր, առանց որևէ բացատրության՝ ապօրինի կերպով, անգամ մի զանգի հնարավորություն չի եղել, նվաստացնելով, ծեծելով 24 ժամ պահել են: Ընդ որում, ինձ ձերբակալել են մեր բակի խանութից, առանց որևէ խոսք ասելու քաշքշելով տարել են»[254]:	- Բերման են ենթարկել առանց իրավական հիմնավորման	24 ժամ
44.	Խաչիկ Դանիելյան	Շիրակի մարզի «Հիմնադիր խորհրդարանի» պատասխանատու Արամ Հակոբյանը Aravot.am-ի հետ զրույցում հայտնել է, որ տեղեկություններ ունի, որ անգամ «Գոհար» երգչախմբի երաժիշտներից՝ կոնտրաբասիստ Խաչիկ Դանիելյանին էին տարել ոստիկանություն, առավոտվանից		

[254] Մեզ չծեծեցին, սակայն կողքի սենյակից ձայներ էին գալիս. քաղաքացիներին ծեծի են ենթարկել, Հրապարակ, հուլիսի 18 2016 թ., 14:07, http://hraparak.am/?p=117717&l=am/mez+chcececin+sakayn+koxqi+senyakic+dzayner+ein+galis+qaxaqacinerin+ceci+en+entarkel

		տարել են, գիշերը բաց թողել, ամենաերկարը իրեն են պահել: «Ինձ համար անհասկանալի է, թե այս մարդուն ինչո՞ւ են տարել, ինչո՞ւ են այդքան պահել ու առհասարակ այդ մարդիկ ի՞նչ կապ ունեն մեր գործողությունների հետ»,- ասել է նաև[255]: Այլ մանրամասներ չի հաջողվել պարզել:		
45. 46.	Սերգեյ Հովակիմյան Բորիս Հովակիմյան	Հուլիսի 17-ին Էրեբունի ոստիկանության բաժնի մոտ ոստիկանները ծեծել են այդ տարածքում հայտնված 35-ամյա Սերյոժա Հովակիմյանին և 14 ժամ պահել ոստիկանության բաժանմունքում: Նա պատմել է, որ բաժանմունքում մոտ 7 ժամ ձեռնաշղթաներով են պահել, հետո ասել են, որ վկայի կարգավիճակով են հարցաքննում: Հովակիմյանի փոխանցմամբ, իրեն հարցաքննել է նաև ԱԱԾ պետի տեղակալ Միքայել Համբարձումյանը: Հովակիմյանը փաստաբան է պահանջել, սակայն ոստիկանները նրան հայհոյանքներով են պատասխանել: Սերյոժա Հովակիմյանը պատմել է, որ ոստիկանները ստիպել են գրել, որ դատապարտում է «Սասնա ծռեր» խմբի անդամների գործողությունները. «Ես այդ ժամանակ շոկի մեջ էի, այնքան էին ծեծել, ոչինչ չէի զգում, գրեցի, որ մի կերպ այդտեղից դուրս գամ: Էդ վայրագությունը, որ ես տեսա, մտածեցի, որ էրեխեքս որբ կմնան»,-հավելել է նա: Ոստիկանությունում առգրավել են նրա հեռախոսը, էլեկտրոնային կրիչը, բանկային քարտը, տաբատի գոտին ու մեքենայի բանալիները: Նա տեղեկացրեց, որ հայրը՝ Բորիս Հովակիմյանը, փորձել է ազատել իրեն ոստիկանների ձեռքից, բայց այդ ընթացքում իրեն էլ են ձեռնաշղթաներ հագցրել և տեղափոխել առանձին սենյակ: Հովակիմյանները մի քանի օր չէին կարողանում հետ ստանալ իրենցից առգրավված իրերը: Դրանք վերադարձնելու համար նրանք դիմել էին Մարդու իրավունքների պաշտպանին[256]:	- Բերման են ենթարկել փողոցից ուժի կիրառմամբ, չեն բացատրել բերման ենթարկելու պատճառները - Առանց օրինական հիմքի անազատության մեջ են պահել 14 ժամ - Ենթարկել են վատ և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի - Փաստաբան չեն հրավիրել	14 ժամ
47.	Արայիկ Հովհաննիսյան	Հուլիսի 17-ին՝ ժամը 09.30-10.45-ի սահմաններում բերման է ենթարկվել նաև դերասան, ազատամարտիկ Արայիկ Հովհաննիսյանը[257]: Նրան	- Բերման են ենթարկել փողոցից ուժի	18 ժամ

[255] «Գոհար» երկգչախմբի երաժշտին նույնպես բերման են ենթարկել, «Առավոտ», հուլիսի 18 2016 թ., 13:46, http://www.aravot.am/2016/07/18/716594/

[256] ՊՊԾ գունդը գրավելուց հետո ոստիկանները ծեծել են ակտիվիստին, 24.07.2016, 22:05, Հայկական ժամանակ, http://armtimes.com/hy/read/90221

	դերասան, ազատամարտիկ	տարել էին Արգավանդի ճանապարհին գտնվող ներքին զորքերի զորամաս: Հովհաննիսյանը լրատվամիջոցներին պատմել է. «Հուլիսի 17-ին՝ ժամը 09.30-10.45-ի կողմերն ընկերներիցս մեկը զանգեց, ասաց՝ ընտանիքի հետ Սարյանի արձանի մոտի սրճարանում նստած են ու հրավիրեց սուրճ խմելու: Ես էլ 3-րդ մասից գնացի, Թումանյան-Մաշտոցի պողոտա խաչմերուկում՝ դեպի Օպերայի բակ տանող հատվածում, կանգնած էին «հրեշտակների» ստորաբաժանման երկու ոստիկան: Բարևեցին, ասացին բարձրանանք վերև, վերևում այլ ծառայողներ կան, ճշտելու բան կա: Բարձրացանք, երբ Օպերայի ցանկապատները վերջացան, կանգնած տեսա հրեշտակների ստորաբաժանման խմբի անդամներին ու որոշ ղեկավարների: Այդ ժամանակ ինձ հետ վերև բարձրացած ոստիկանը դարձավ ագրեսիվ, ևս չորս-հինգ հոգի վրա տվեցին ինձ, ձեռնաշղթաները հագցրին ձեռքիս ու նստեցրին մեքենա: Երբ հարցրի՝ ի՞նչ հիմքով են ինձ տանում՝ սկսեցին վիրավորել»: Նրա պատմելով՝ մարզադահլիճում շուրջ 300 հոգի է եղել՝ կին, տղամարդ, երիտասարդ, տարեց: Բոլորի հետ անհարգալից են վերաբերվել՝ ծնկի են իջեցրել, ձեռքերը ծալած մեջքին պառկացրել գետնին, դեմ տվել պատին և այլն. «Ինձ բաց են թողել լուսադեմին՝ ժամը 04.00-ին, այն բանից հետո, երբ Նիկոլ Փաշինյանը, Լարիսա Ալավերդյանը և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչներ բանակցեցին նրանց հետ»: Նա նաև հայտնել է, որ զորամասի տարածքում իրենց ոչ ոք սնունդ չի տվել, միայն կարողացել են բնական կարիքները հոգալ:	կիրառմամբ, չեն բացատրել բերման ենթարկելու պատճառները - Առանց օրինական հիմքի անազատության մեջ են պահել 18 ժամ - Անազատության մեջ գտնվելու ողջ ընթացքում սնունդ չի տրամադրվել - ցուցաբերել են անձը նվաստացնող վերաբերմունք՝ ծնկի են իջեցրել, ձեռքերը ծալած մեջքին պառկացրել գետնին, դեմ տվել պատին և այլն	

[257] Ինչպե՞ս են վերաբերվել բերման ենթարկվածների հետ Արգավանդի զորամասում. Պատմում է բերման ենթարկված դերասանը. Առավոտ, 21.06.2016, 16:41, http://www.aravot.am/2016/07/21/718195/

2016 թվականի հուլիսի 17-30-ը կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ փաստեր[258]		
	Անուն, ազգանուն	**Որպես խափանմա միջոց կիրառվել է կալանքը**
1.	Կարո Եղնուկյան	Կալանավորվել է 22.07.2016 թ.-ին: Մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի 38-218 և 38-219 հոդվածներով՝ պատանդ վերցնելուն, շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ զավթելուն աջակցելու համար[259]:
2.	Ներսես Գևորգյան	Կալանավորվել է 2 ամիս ժամկետով: Մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 38-218 և 38-219 հոդվածներով նախատեսված՝ պատանդ վերցնելուն, շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ զավթելուն աջակցելու համար: Գտնվում է կալանքի տակ:
3.	Մանվել Աթայան	25.07.2016 թ.-ին կալանավորվել է 2 ամսով: Մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի 218 և 219 հոդվածներով նախատեսված՝ պատանդ վերցնելուն, շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ զավթելուն աջակցելու համար:
4.	Մարտին Վարդանյան («Սասնա ծռեր» խմբավորման անդամ Հովհաննես Վարդանյանի որդին է)	23.07.2016 թ.-ին կալանավորվել է 2 ամիս ժամկետով: Մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 219 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքին աջակցելու համար, այն է՝ շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ, այլ հաղորդակցության ուղիներ զավթելը կամ դրանք պահելը՝ զենք կամ որպես զենք օգտագործվող առարկաներ գործադրելով, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից: 2016 թ. հոկտեմբերի 19-ին դատարանի որոշմամբ կալանքը՝ որպես խափանման միջոց, փոխարինվել է 1մլն դրամ գրավով[260]:
5.	Միհեր Մազմանյան (ազատամարտիկ)	2016 թ. հուլիսի 24-ի երեկոյան՝ ժամը 19:00-ի սահմաններում, ձերբակալվել և երկու օր անց կալանավորվել էր ազատամարտիկ, երկրորդ կարգի հաշմանդամ Միհեր Մազմանյանը: Նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-219 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքին աջակցելու

[258] Ներկայացված փաստերը հավաքագրվել են լրատվամիջոցների, փաստաբանների տրամադրած տեղեկությունների հիման վրա և ամփոփում են մինչև 2017 թվականի ապրիլ ամիսն առկա տեղեկությունները:
[259] Ժողովուրդ, Կարո Եղնուկյանը երկու ամսով կալանավորվել է, 22 Հուլիսի 2016թվական, http://armlur.am/559350/
[260] http://armlur.am/601290/

		համար, այն է՝ շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ, այլ հաղորդակցության ուղիներ զավթելը կամ դրանք պահելը՝ զենք կամ որպես զենք օգտագործվող առարկաներ գործադրելով, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից: 2016 թվականի սեպտեմբերի 28-ին դատարանի որոշմամբ Մազմանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոփոխվել է, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը՝ նկատի ունենալով, որ վերացել է նրա կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը:
6.	Արմեն Միքայելյան («Հիմնադիր խորհրդարանի» անդամ)	Կալանավորվել է 2016 թվականի հուլիսի 27-ին[261]: Մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 235 հոդվածով, այն է՝ ապօրինի զենք-զինամթերք կրելու համար: 2016 թվականի օգոստոսի 16-ին կալանքը՝ որպես խափանման միջոց, փոխարինվել է 500 000 դրամ գրավով[262]: 2017 թ. մարտի 17-ին Արմեն Միքայելյանը մեղավոր է ճանաչվել և դատապարտվել ազատազրկման 1 տարի ժամկետով: Դատարանի որոշմամբ փոխվել է Միքայելյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց գրավը, նրան կալանքի են վերցրել դատական նիստերի դահլիճում[263]:
7.	Ս. Հ. Պատահական զանգ է ստացել «Սասնա Ծռեր» զինված խմբի անդամներից մեկի կողմից և այդ պատճառով ներգրավվել է որպես մեղադրյալ: (Անձը ցանկացել է գաղտնի պահել իր ինքնությունը):	Կալանավորվել է 2 ամիս ժամկետով: Մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 38-219 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքին աջակցելու համար, այն է՝ շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ, այլ հաղորդակցության ուղիներ զավթելը կամ դրանք պահելը՝ զենք կամ որպես զենք օգտագործվող առարկաներ գործադրելով, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից:

[261] 1in.am, Հիմնադիր խորհրդարանի անդամ Արմեն Միքայելյանը կալանավորվել է, 27 Հուլիսի 2016, http://www.1in.am/1969344.html

[262] Aravot.am, Արմեն Միքայելյանի կալանավորումը փոխարինվում է գրավով, 16 Օգոստոս 2016 թվական, http://www.aravot.am/2016/08/16/726762/

[263] «Հիմնադիր խորհրդարանի» անդամ Արմեն Միքայելյանը դատապարտվեց 1 տարվա ազատազրկման, Առավոտ, մարտի17 2017 թ., http://www.aravot.am/2017/03/17/867199/

8.	Արթուր Սարգսյան («Հաց բերող»)	03.08.2016 թ.-ին դատարանի որոշմամբ 2 ամիս ժամկետով կալանավորվել է Ոստիկանության ՊՊԾ գունդը գրված «Սասնա ծռեր» խմբի անդամներին սեփական մեքենայով սնունդ հասցրած Արթուր Սարգսյանը: Մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 218-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (պատանդ վերցնելը) և 235-րդ հոդվածի 3-րդ մասով (ապօրինի զենք զինամթերք ձեռք բերել, իրացնել, պահել, փոխադրել): Մեղադրանքը 06.08.2016 թ.-ին վերաորակվել է և առաջադրվել է պատանդ վերցնելուն, շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ զավթելուն աջակցելու մեղադրանք: 2016 դեկտեմբերի 15-ին ՀՀ վերաքննիչ դատարանը մերժել է «հաց բերող» Արթուր Սարգսյանին ազատել գրավի դիմաց: Փաստաբանը միջնորդել է դատարանին հաշվի առնել Ա. Սարգսյանի առողջական վիճակը և վերջին օրերի վատթարացումը և կալանքը փոխարինել գրավով, սակայն դատարանը մերժել է միջնորդությունը: 2016 թ. դեկտեմբերի 16-ին փաստաբանի կողմից ՄԻ Եվրոպական դատարան է ուղարկվել դիմում՝ որպես միջանկյալ միջոց (ԵԴ 39 կանոնի համաձայն), որպեսզի հանձնարարվի կառավարությանը ձեռնարկել բոլոր միջոցները Արթուր Սարգսյանի բուժումն ապահովելու համար: 2017 թվականի փետրվարի 9-ին նրա նկատմամբ վերստին կիրառվել էր կալանքը՝ որպես խափանման միջոց, սակայն 2017 թվականի մարտի 6-ին վերացվել: 2017 թվականի մարտի 15-ին սրված առողջական խնդիրների պատճառով Արթուր Սարգսյանը տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն, որտեղ էլ 2017 թվականի մարտի 16-ին մահացել է:
9.	Խաչատուր Գիշյան	20.07.2016 թ.-ին կալանավորվել է 2 ամսով ՀՀ Ոստիկանության պարեկապահակային ծառայության գունդը գրված զինված խմբին աջակցելու մեղադրանքով: Մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի 38-219 հոդվածով, այն է՝ շենքեր ու շինություններ, կապի միջոցներ զավթելու և ապօրինի կերպով զենք զինամթերք պահելու և տեղափոխելու համար աջակցությունը: Ըստ մեղադրանքի՝ Խաչատուր Գիշյանը իր սեփական բեռնատար մեքենան տրամադրել է զինված խմբին, որով էլ «Սասնա ծռեր» խումբը հուլիսի 17-ին մտել էր ոստիկանության ՊՊԾ գունդ: 2016 թ. սեպտեմբերի 10-ին Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը որոշել է ևս երկու ամսով երկարացնել «Սասնա ծռեր» խմբին բեռնատար տրամադրած Խաչատուր Գիշյանի կալանքի ժամկետը: 10.11.2016 թ.-ին Քննչական մարմինը միջնորդություն է ներկայացրել Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ Խաչատուր Գիշյանի կալանքի ժամկետը

		երկարացնելու նպատակով: Խաչատուր Գիչյանը 70 տարեկան է:
10.	Աշոտ Մուրադյան	26.07.2016 թ.-ին կալանավորվել է 2 ամիս ժամկետով՝ զինված խմբի աջակցելու կասկածանքով: Փաստաբանի խոսքով՝ Մուրադյանին մեղադրանք առաջադրելու համար հիմք է հանդիսացել զինված խմբի կողմից ՊՊԾ գնդի տարածքը գրավելու օրը նրա ստացած հեռախոսազանգը[264]:
11.	Սամսոն Գաբրիելյան	23.07.2016 թ. կալանավորվել է 2 ամիս ժամկետով՝ զինված խմբին աջակցելու կասկածանքով: Մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ հուլիսի 19-ին Սարի թաղ է գնացել և որպեսզի սարիթաղցիներին վստահեցնի, որ ծպտյալ ոստիկան չէ՝ զանգահարել է զինված խմբի անդամ Պավել Մանուկյանին և նրան ասել, որ շրջապատված են ու խորհուրդ տվել զգուշանալ ուղարկվող սննդից:
12.	Տարոն Լոռյան	26.07.2016 թ.-ին կալանավորվել է 2 ամիս ժամկետով՝ զինված խմբի աջակցելու կասկածանքով: Տարոն Լոռյանը հուլիսի 17-ի առավոտյան անծանոթ համարից զանգ է ստացել, պատասխանել է, սակայն խոսակցություն չի եղել: Նախաքննական մարմինը գտել է, որ հնարավոր է՝ նա կոդավորված զրույց է ունեցել ոստիկանության ՊՊԾ գունդը գրված խմբի հետ և մեղադրանք է առաջադրել նրան:
13.	Արա Ալեքսանդր Կումշոյանի /Ալեք Ենիգոմշյան/ («Հիմնադիր խորհրդարան»-ի քարտուղարության անդամ)	30.07.2016 թ. Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը՝ դատավոր Մեսրոպ Մակյանի գլխավորությամբ որոշում կայացրեց կալանավորել «Հիմնադիր խորհրդարան»-ի անդամ Ալեք Ենիգոմշյանին ՀՀ քրեական օրենսգրքի 2019-րդ հոդվածի 3-րդ կետի 1-մասով՝ կազմակերպված խմբի կողմից զենքի կիրառմամբ, կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի շենքերը շինությունները 2016 թ.-ի հուլիսի 17-ին զավթելու և պահելուն ուղղված կազմակերպված խմբի հանցավոր գործողությունների օժանդակության կասկածանքով: ՀՀ Հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից 08.08.2016 թ.-ին որոշում է կայացվել կիրառված խափանման միջոց կալանավորումը վերացնելու մասին՝ մեղադրյալին կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը վերանալու պատճառաբանությամբ:
14.	Սուրիկ Պետրոսյան	2016 թվականի հուլիսի 27-ին 2 ամսով կալանքը կիրառվել է որպես խափանման միջոց[265]:

[264] «Սասնա ծռեր» խմբին աջակցելու համար ևս երեք հոգու մեղադրանք առաջադրվեց: Ազատություն ռադիոկայան, 26.06.2016 թ., http://www.azatutyun.am/a/27882854.html

		2016 թվականի սեպտեմբերի 28-ին դատարանի որոշմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոփոխվել է, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը՝ նկատի ունենալով, որ վերացել է նրան կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը[266]:
15.	Սարո Այվազյան	2016 թվականի օգոստոսի 3-ին կալանքը կիրառվել է որպես խափնաման միջոց 2 ամիս ժամանակով, 2016 թվականի հոկտեմբերի 25-ին կալանքը՝ որպես խափանման միջոց փոխարինվել է գրավով, և նոյեմբերի 4-ին ազատ է արձակվել[267]:

ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ (Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը) հոդվածով նախատեսված արարքների կատարման մեղադրանքով կալանավորված անձինք		
Աղյուսակ 3. 2016թ. հուլիսի 19-ին դեպքերի հետ կապված կալանավորված անձանց ցանկը (Սարի թաղի բնակիչներ)		
N	**Անուն, ազգանուն**	**Որպես խափանմա միջոց կիրառվել է կալանքը**
1.	Հարություն Թորոսյան	Մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կասկածանքով՝ Իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը՝ կապված նրանց կողմից իրենց ծառայողական պարտականությունները կատարելու հետ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով: Գտնվում է կալանքի տակ:

[265] Հրապարակ.am, «Սասնա ծռեր»-ին օժանդակելու մեջ մեղադրվողներից երկուսը ազատ են արձակվել. Տեսանյութ, 28 Սեպտեմբեր 2016 թվական, http://hraparak.am/?p=124754&l=am/

[266] Panaroma.am, «Սասնա ծռերին» օժանդակելու մեջ մեղադրվող Միհեր Մազմանյանն ու Սուրիկ Պետրոսյանն ազատ են արձակվել, 28 Septembe8 2016, http://www.panorama.am/am/news/2016/09/28/Միհեր-Մազմանյանն-ու-Սուրիկ-Պետրոսյան/1650189

[267] Pastinfo.am, «Սասնա ծռերին» օժանդակելու մեջ մեղադրվողին օգնեցին գրավի գումարը վճարել, 04 Նոյեմբեր 2016 թվական, http://www.pastinfo.am/hy/news/2016/11/04/«Սասնա-ծռերին»-օժանդակելու-մեջ-մեղադրվողին-օգնեցին-գրավի-գումարը-վճարել/468581

2.	Էդուարդ Զեյթունյան	Մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կասկածանքով՝ Իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը՝ կապված նրանց կողմից իրենց ծառայողական պարտականությունները կատարելու հետ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով: Գտնվում է կալանքի տակ:
3.	Հրաչյա Բոյաջյան	Մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կասկածանքով՝ Իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը՝ կապված նրանց կողմից իրենց ծառայողական պարտականությունները կատարելու հետ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով: Գտնվում է կալանքի տակ:
4.	Անդրանիկ Քոսոյան	Մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կասկածանքով՝ Իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը՝ կապված նրանց կողմից իրենց ծառայողական պարտականությունները կատարելու հետ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով: Գտնվում է կալանքի տակ:
5.	Հրայր Իսախանյան	Մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կասկածանքով՝ Իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը՝ կապված նրանց կողմից իրենց ծառայողական պարտականությունները կատարելու հետ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով: Գտնվում է կալանքի տակ:
6.	Ժորա Ավետիսյան	Մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կասկածանքով՝ Իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը՝ կապված նրանց կողմից իրենց ծառայողական

		պարտականությունները կատարելու հետ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով: Գտնվում է կալանքի տակ:
7.	Կարեն Վանոյան	Մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կասկածանքով՝ Իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը՝ կապված նրանց կողմից իրենց ծառայողական պարտականությունները կատարելու հետ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով: Գտնվում է կալանքի տակ:
8.	Արման Ադամյան	Մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կասկածանքով՝ Իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը՝ կապված նրանց կողմից իրենց ծառայողական պարտականությունները կատարելու հետ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով: Գտնվում է կալանքի տակ:
9.	Սարգիս Արաբաջյան	Մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կասկածանքով՝ Իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը՝ կապված նրանց կողմից իրենց ծառայողական պարտականությունները կատարելու հետ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով: Գտնվում է կալանքի տակ:
10.	Սարգիս Գրիգորյան	Մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կասկածանքով՝ Իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը՝ կապված նրանց կողմից իրենց ծառայողական պարտականությունները կատարելու հետ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով: Գտնվում է կալանքի տակ:

ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ (Զանգվածային անկարգությունները) հոդվածներով նախատեսված արարքների կատարման մեղադրանքով կալանավորված անձինք		
1.	Արարատ Խանդոյան («Սասնա ծռեր» խմբավորման անդամ Արայիկ Խանդոյանի եղբայրն է)	23.07.2016 թ.-ին կալանավորվել է 2 ամսով: Արարատ Խանդոյանին մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ զանգվածային անկարգությունների ժամանակ դրանց մասնակցի կողմից բռնություն գործադրելը, ջարդ կամ հրկիզում իրականացնելը, գույք ոչնչացնելը կամ վնասելը, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելը կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրելը: 2017 թվականի հունիսի 27-ին Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ Արարատ Խանդոյանը դատապարտվեց ազատազրկման 3 տարիև 6 ամիս ժամկետով[268]:
2.	Արեգ Սադոյան (Հանրային խորհրդի անդամ Արշակ Սադոյանի որդին է)	28.07.2016 թ.-ին կալանավորվել է 2 ամիս ժամկետով: Մեղադրանք է առաջադրվել հուլիսի 20-ին զանգվածային անկարգություններին մասնակցելու համար Քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ զանգվածային անկարգությունների ժամանակ դրանց մասնակցի կողմից բռնություն գործադրելը, ջարդ կամ հրկիզում իրականացնելը, գույք ոչնչացնելը կամ վնասելը, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելը կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրելը: 2014 նոյեմբերի 24-ին Արեգ Սադոյանը ազատ արձակվեց դատական նիստերի դահլիճից Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանի դատավճռով: Դատարանը Սադոյանին մեղավոր ճանաչեց ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտեց 3 տարվա պայմանական ազատազրկման՝ 3 տարի փորձաշրջանով:
3.	Ռաֆայել Կարագյոզյան	28.07.2016 թ.-ին կալանավորվել է 2 ամիս ժամկետով: Մեղադրանք է առաջադրվել հուլիսի 20-ին զանգվածային անկարգություններին մասնակցելու

[268] Ազատություն ռադիոկայան, Արարատ Խանդոյանը դատապարտվեց 3 տարվա և 6 ամսվա ազատազրկման, 27 հունիսի 2017, https://www.azatutyun.am/a/28581501.html

		համար Քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ զանգվածային անկարգությունների ժամանակ դրանց մասնակցի կողմից բռնություն գործադրելը, ջարդ կամ հրկիզում իրականացնելը, գույք ոչնչացնելը կամ վնասելը, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելը կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրելը: Ըստ մեղադրանքի, Ռաֆայել Կարագոզյանը 2016թ. հուլիսի 20-ին Երևանում տեղի ունեցած հասարակական անվտանգությունը վտանգած բռնությամբ, ջարդելով, գույք ոչնչացնելով և վնասելով արտահայտված զանգվածային անկարգությունների ընթացքում բռնություն է գործադրել ոստիկանության աշխատակիցների նկատմամբ՝ ոտքով բազմաթիվ հարվածներ է հասցրել իրենց ծառայողական պարտականությունները կատարող, իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցներին, քաշել և փորձել է խլել մեկ այլ ոստիկանության աշխատակցի վահանը: Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը նոյեմբերի 24-ին երեք տարի պայմանական ազատազրկման դատապարտեց Ռաֆայել Կարագյոզյանին: Դատական նիստի ընթացքում Կարագյոզյանը ընդունել է իրեն առաջադրված մեղադրանքը և պահանջել արագացված դատավարություն անցկացնել[269]:
4.	Դավիթ Սանասարյան («ժառանգություն» կուսակցության մամուլի նախկին խոսնակ, Երևանի ավագանու անդամ)	«ժառանգություն» կուսակցության մամուլի նախկին խոսնակ, Երևանի ավագանու անդամ Դավիթ Սանասարյանը 2016թ. հուլիսի 30-ին, ժամը 01:30-ի սահմաններում Երևանի «Գրիգոր Լուսավորիչ» հիվանդանոցից բերման է ենթարկվել ոստիկանություն: Ժամը 04:07-ին ձերբակալվել է որպես կասկածյալ: Կասկածվում է ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի հատկանիշներով հանցավոր արարք կատարելու մեջ՝ այն է օրենքով սահմանված կարգի խախտմամբ հավաք կազմակերպելը և անցկացնելը: 2016թ. օգոստոսի 1-ին, երբ մի քանի ժամից պետք է լրանար Դավիթ Սանասարյանի ազատազրկման 72 ժամը և նա պետք է ազատ արձակվեր, նրան նոր մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով, այն է՝ զանգվածային անկարգություններ կազմակերպելը: Մեղադրանքին հետևել է քննիչի միջնորդությունը՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին: Քննիչի կողմից ներկայացված փաստերի մեջ միակ հիմնավորումը, որ Դավիթ Սանասարյանը կազմակերպել է զանգվածային անկարգություններ, եղել են ոստիկանների ցուցմունքներն առ այն, որ Դավիթ Սանասարյանը հավաքի մասնակիցներին հրահրել է զանգվածային անկարգությունների:

[269] Civilnet, 2016 թ., նոյեմբերի 24, http://www.civilnet.am/news/2016/11/24 /երեք-տարի-պայմանական-Խորենացի-անկարգություններ/303979

		Որևէ տեսանյութ, որը կփաստեր ոստիկանների ցուցմունքները, ներկայացված չի եղել (փաստաբանի խոսքերով): 2016 թ. օգոստոսի 2-ին դատարանը բավարարել է քննիչի միջնորդությունը և 2 ամիս ժամկետով կալանավորել է Դավիթ Սանասարյանին: 19.08.2016 թ.-ին ՀՀ վերաքննիչ դատարանի վճռով փոխվել է խափանման միջոց կալանքը 1 500 000 դրամ գրավի դիմաց:
5.	Անդրիաս Ղուկասյան Քաղաքական գործիչ	2016 թ. հուլիսի 21-ին ձերբակալվել և օգոստոսի 2-ին կալանավորվել է: Մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով՝ զանգվածային անկարգություններ կազմակերպելը: 2017 թ. ապրիլի 19-ին փոխվել է ներկայացված մեղադրանքի ծավալը, այն ծանրացվել է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-219-րդ 3-րդ մասի 1-ին կետով, (շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ զավթելու փորձ, որը կատարվել է կազմակերպված խմբի կողմից) 34-218-րդ 3-րդ մասի 1-ին կետով (պատանդ վերցնելու փորձ, որը կատարվել է կազմակերպված խմբի կողմից) և 34-235-րդ 3-րդ մասով (ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելու փորձ, որը կատարվել է կազմակերպված խմբի կողմից): Անդրիաս Ղուկասյանի ձերբակալության և կալանքի դեմ բոլոր բողոքները մերժվել են: Հուլիսի 30-ին ՀՀ Ոստիկանության Դիտորդական խումբը Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ այցի ժամանակ արձանագրել է, որ Անդրիաս Ղուկասյանն ունեցել է մարմնական վնասվածքներ: 2016 թ. օգոստոսի 2-ին Անդրիաս Ղուկասյանը հացադուլ հայտարարեց հետևյալ պահանջով՝ «Պահանջում եմ ժողովրդից Հայաստանում հաստատել սահմանադրական կարգ և վերականգնել արդարադատությունը իրեն հասանելի բոլոր միջոցներով: Հայաստանի Հանրապետությունում: Հացադուլը տևեց մեկ ամիս: Ըստ փաստաբանի Ղուկասյանի նկատմամբ քաղաքական հետապնդում է իրականացվում և դատարանի որոշումը մեկ անգամ ևս դա ապացուցեց: Դատարանը հատուկ հարց է ուղղել Անդրիաս Ղուկասյանին, թե եթե նա ազատ արձակվի, արդյոք շարունակելո՞ւ է իր ընդդիմադիր գործունեությունը, ինչին Անդրիաս Ղուկասյանը դրական պատասխան է տվել: Ըստ փաստաբանի՝ այդ հարցի պատասխանն է, որ էական նշանակություն է ունեցել դատավորի որոշման վրա:

6.	Հովսեփ Խուրշուդյան («Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի անդամ, Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի Ղեկավար կոմիտեի անդամ)	02.08.2016 թ.-ին կալանավորվել է 2 ամիս ժամկետով: Մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով՝ զանգվածային անկարգությունների ժամանակ դրանց մասնակցի կողմից բռնություն գործադրելը, ջարդ կամ հրկիզում իրականացնելը, գույք ոչնչացնելը կամ վնասելը, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելը կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրելը: 24.08.2016 թ.-ին ՀՀ վերաքննիչ դատարանի վճռով փոխվել է խափանման միջոց կալանքը՝ 1 000 000 դրամ գրավի դիմաց:
7.	Արմեն Մարտիրոսյան («ժառանգություն» կուսակցության մամուլի խոսնակ)	02.08.2016 թ.-ին կալանավորվել է 2 ամիս ժամկետով: Մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով՝ զանգվածային անկարգություններ կազմակերպելը[270]: 17.08.2016 թ.-ին Վերաքննիչ դատարան որոշմամբ Արմեն Մարտիրոսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխվել է: Դատարանը թույլատրելի է ճանաչել նրա նկատմամբ գրավի կիրառումը՝ սահմանելով գրավի չափ՝ 1 000 000 ՀՀ դրամ:
8.	Գագիկ Միքայելյան	2016 թվականի հուլիսի 23-ին կալանքը կիրառվել է որպես խափանաման միջոց: Մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ զանգվածային անկարգությունների ժամանակ դրանց մասնակցի կողմից բռնություն գործադրելը, ջարդ կամ հրկիզում իրականացնելը, գույք ոչնչացնելը կամ վնասելը, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելը կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրելը: 2017թ. փետրվարի 2-ին դատարանի դատավճռով Միքայելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել է ազատազրկման 3 տարի ժամկետով: Նշված դատավճռի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որի շրջանակներում էլ դատարանը Միաքայելյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին

[270] Երկիր Մեդիա, Կալանավորվել են Դավիթ Սանասարյանը, Արմեն Մարտիրոսյանը, Անդրեաս Ղուկասյանն ու Հովսեփ Խուրշուդյանը, 02 Օգոստոս 2016 թվական, http://yerkirmedia.am/low/zangvacayin-ankargutyunner-kalanavorvel/

		որոշում է կայացրել՝ 2017 թվականի մայիսի 4-ին Գ. Միքայելյանին ազատելով դատարանի դահլիճից[271]:
9.	Հովհաննես Ղազարյանի	02.08.2016 Մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ զանգվածային անկարգությունների ժամանակ դրանց մասնակցի կողմից բռնություն գործադրելը, ջարդ կամ հրկիզում իրականացնելը, գույք ոչնչացնելը կամ վնասելը, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելը կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրելը: 2017թ. փետրվարի 18-ին կալանքի ժամկետը երկարացնելու որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության շրջանակներում վերքննիչ դատարանը կայացրել է Հ. Ղազարյանին կալանքից ազատելու մասին որոշում `վերացնելով խափանման միջոց ընտրված կալանավորումը:
10.	Դավիթ Հովհաննիսյան «Ոտքի Հայաստան» քաղաքացիական նախաձեռնության համահիմնադիր անդամ	29.07.2016 թ. Սարի թաղում տեղի ունեցած դեպքերի առնչությամբ 30.07.2016թ. ձերբակալվել է և 01.08.2016թ. դատարանի որոշմամբ կալանավորվել 2 ամիս ժամկետով: Դավիթ Հովհաննիսյանը մեղադրվում է զանգվածային անկարգությունների մեջ և կալանավորվել է 2 ոստիկանների սուտ ցուցմունքների հիման վրա: 2017 թվականի հունիսի 21-ին ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ փոխվել է Դավիթ Հովհաննիսյանի նկատմամբ կիրառված կալանքը, նա ազատ է արձակվել 1 մլն գրավի դիմաց[272]: Դավիթ Հովհաննիսյանը անազատության մեջ է գտնվել 11 ամիս[273]:
11.	Վահագն Ղումաշյան	03.08.2016 թ. կալանավորվել է 2 ամիս ժամկետով: Մեղադրանք է առաջադրվել «Սարի թաղում» հուլիսի 29-ին իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու մեջ: 2016 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ վերացվել է Վահագն Ղումաշյանի նկատմամբ

[271] ՄԱմուլ.am, Խորենացու փողոցում ձերբակալված Գագիկ Միքայելյանն ազատ է արձակվել, 04 Մայիս 2017 թվական, http://mamul.am/am/news/104855

[272] Հետք, Դավիթ Հովհաննիսյանն ազատ արձակվեց, 21 հունիսի 2017, http://hetq.am/arm/news/79969/davit-hovhannisyann-azat-ardzakvec.html

[273] Հետք, Դավիթ Հովհաննիսյանը ևս երկու ամիս կմնա կալանքի տակ, 23 նոյեմբերի 2016, http://hetq.am/arm/news/73021/davit-hovhannisyany-evs-erku-amis-kmna-kalanqi-tak.html

		որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը, նկատի ունենալով, որ վերացել է նրան կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը[274]:
12.	Գարիկ Առուստամյան	Գարիկ Առուստամյանին մեղադրանք է առաջադրել Քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ զանգվածային անկարգությունների ժամանակ դրանց մասնակցի կողմից բռնություն գործադրելը, ջարդ կամ հրկիզում իրականացնելը, գույք ոչնչացնելը կամ վնասելը, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելը կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրելը: Առուստամյանի պնդմամբ՝ ինքը ցույցի կամ զինված խմբի հետ որևէ առնչություն չի ունեցել, պարզապես ոստիկաններին խնդրել է ճանապարհ տալ, որ մեքենայով անցնի տուն գնա: Ոստիկանների կողմից ծեծի ենթարկվելուց հետո նա երկու օր վերակենդանացման բաժանմունքում է անցկացրել, ապա կալանավորվել: Մեկ ամիս կալանքի տակ պահվելուց հետո Վերաքննիչ դատարանի որոշմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքի մասին առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանվել է: Առուստամյանը ազատ է արձակվել, սակայն շարունակում է մնալ մեղադրյալի կարգավիճակում:
13.	Նարեկ Սարգսյան	Սարգսյանը հինգ ամիս անազատության մեջ գտնվելուց հետո 2016 թ. դեկտեմբերի 22-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի դատարանի որոշմամբ ազատ է արձակվել: Սարգսյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկումը 2 տարի 7 ամիս ժամկետով, սակայն, ՀՀ Քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով դատարանը որոշում է կայացրել պատիժը պայմանականորեն չկիրառել և սահմանել փորձաշրջան 3 տարի ժամկետով, նա դատարանի դահլիճից ազատ է արձակվել:
14.	Արման Մխիթարյան	2016 թ. դեկտեմբերի 22-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի դատարանը Արման Մխիթարյանի նկատմամբ ընտրված խանափման միջոց կալանավորումը թողել է անփոփոխ: Մխիթարյանի նկատմամբ որպես պատիժ է նշանակվել ազատազրկումը 3 տարի վեց ամիս ժամկետով:
15.	Հայկ Հովհաննիսյան	2016 թ. դեկտեմբերի 22-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի դատարանը Հայկ Հովհաննիսյանի նկատմամբ ընտրված խանափման միջոց կալանավորումը թողել է անփոփոխ, որպես պատիժ նշանակվել է ազատազրկումը երեք տարի ժամկետով:

[274] Սարի թաղում զանգվածային անկարգությունների գործով ազատ է արձակվել Վահագն Ղումաշյանը, Առաջին լրատվական, 14.09.2016 թ., http://www.1in.am/2005589.html

16.	Ալբերտ Ավագյան	Ավագյանը հինգ ամիս անազատության մեջ գտնվելուց հետո 2016 թ. դեկտեմբերի 22-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի դատարանի որոշմամբ ազատ է արձակվել: Ավագյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկումը 2 տարի 7 ամիս ժամկետով, սակայն, ՀՀ Քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով դատարանը որոշում է կայացրել պատիժը պայմանականորեն չկիրառել և սահմանել է փորձաշրջան 3 տարի ժամկետով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հավաքների ազատության ապահովման նպատակով

ՀՀ Ոստիկանություն

1. Բացառել խաղաղ հավաքների մասնակիցների նկատմամբ անհարկի ուժի և բռնության կիրառումը, անհարկի ձերբակալությունները, նրանց և նրանց ընտանիքի անդամների նկատմամբ հետապնդումները, լրագրողների և դիտորդների մասնագիտական օրինական աշխատանքի ցանկացած բնույթի միջամտությունները, ապահովել լրագրողների ազատ աշխատանքը:

2. Համազգեստ չկրող ոստիկաններին հավաքի ընթացքի նկատմամբ ներգործության միջոցների կիրառմանը չներգրավել, հավաքի վայրում ծառայություն իրականացնելիս մշտապես կրել համազգեստ և համազգեստի վրա ունենալ նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշաններ

3. Ոստիկանության համար, առավելապես այն ստորաբաժանումների, որոնք մշտապես ծառայություն են իրականացնում հավաքների անցկացման վայրերում, կազմակերպել դասընթացներ ՝ բազմամարդ հավաքների ժամանակ ոստիկանության գործունեության նրբությունների և խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրացման վերաբերյալ միջազգային փորձին և մոտեցումներին տիրապետելու, հավաքի մասնակիցների հետ շփման և բանակցելու հմտությունները զարգացնելու, ինչպես նաև ծառայության ընթացքում ոստիկանության ծառայողի էթիկայի կանոններին առավել մեծ ուշադրություն դարձնելու նպատակով:

4. Իրենց իրավասության շրջանակներում աջակցել խաղաղ հավաքների ընթացքին, իսկ օրենքով նախատեսված դեպքերում հավաքները դադարեցնելուն ուղղված գործողություններ իրականացնելիս առաջնորդվել համաչափության սկզբունքով:

5. Զեռնպահ մնալ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի կամայական մեկնաբանություններից:

ՀՀ Գլխավոր դատախազություն և ՀՀ հատուկ քննչական ծառայություն

1. Հետևել հավաքի մասնակիցների կամ լրագրողների նկատմամբ բռնության, մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու կամ իրավապահ մարմինների կողմից **պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքերին և յուրաքանչյուր դեպքի առիթով հարուցել համապատասխան վարույթ, բացահայտել խախտում կատարած բոլոր անձանց:**

2. Իրավապահ մարմինների աշխատակիցների, ինչպես նաև այլ անձանց կողմից խաղաղ հավաքների ընթացքի նկատմամբ կատարված ոչ իրավաչափ գործողությունների առիթով հարուցված գործերով ողջամիտ ժամկետում իրականացնել օբյեկտիվ և արդյունավետ քննություն:

Ոստիկանության կողմից ուժի և հատուկ միջոցների կիրառման չարաշահումների բացառման նպատակով

Հաշվի առնելով 2016թ.-ի հուլիսի 17-30-նն ընկած ժամանակահատվածում ոստիկանության կողմից թույլ տրված թե վարքագծի խախտումները թե ուժի և՛ հատուկ միջոցների կիրառման հմտությունների թերությունները, և՛ թե անձանց պատճառված առողջական վնասները, ակնհայտ է, որ իրավապահ մարմինների գործունեության շրջանակներում անհրաժեշտ են բարելավումներ:

ՀՀ Ոստիկանություն

- Ոստիկանության ծառայողի պարբերական վերապատրաստում ուժի կիրառման, զենքի և հատուկ միջոցների կիրառման կարգի վերաբերյալ:

- Ոստիկանության կայքում զետեղվեն տվյալներ յուրաքանչյուր ամիս անց կացվող ոստիկանության ծառայողների /ներառյալ ղեկավարության/ վերապատրաստումների վերաբերյալ և հրապարակային ներկայացվեն այդ վերապատրաստումներից հետո հանձնված քննությունների արդյունքները, այլ կերպ ասած, ապահովել ոստիկանության ծառայողների մասնագիտական չափանիշներին համապատասխանության գործընթացի թափանցիկությունը: Այս կերպ կապահովվի ոստիկանության գործունեության հասարակական վերահսկողությունը և հասարակական հաշվետվողականությունը:

Ոստիկանության ծառայողական քննության գործընթացի իրավական կանոնակարգերի վերանայում՝ ապահովելով ոստիկանության ծառայողին նկատողություն, խիստ նկատողություն ներկայացնելիս ապահովել նաև հիմքերի ներկայացումը՝ արաքի նկարագրությունը:

ՀՀ Ոստիկանությանը և տեղական ու միջազգային հասարակական կառույցների վերաբերյալ պատրաստել ցույցերի և հավաքների ժամանակ հատուկ միջոցների և ուժի կիրառման կրճատ, պարզ և պատկերավոր գրպանի ձեռնարկներ, որտեղ կնշվեն ցույցերի և հավաքների ժամանակ ոստիկանության ծառայողի վարքագծի այն կանոնները, որոնք առնչվում են հատուկ միջոցների և ուժի կիրառմանը՝ զետեղելով նաև այդ ոլորտի միջազգային սկզբունքները: Այս կերպ կնվազի ցույցերի ժամանակ տուժողների թիվը թե՛ ոստիկանության և թե՛ քաղաքացիների շարքերում:

ՀՀ Ոստիկանություն և Առողջապահության նախարարություն

- քայլեր ձեռնարկել զեկույցում մեջբերված ոստիկանապետի և Առողջապահության նախարարի հրամաններով հաստատված կարգերի միջև հակասությունների վերացմանը, ինչպես նաև հատուկ միջոցների կիրառման չափանիշների հստակեցման նպատակով՝ հիմնված մարդու լսողության վրա դրանց ազդեցության ուսումնասիրությունների և փորձագիտական եզրակացությունների վրա:

ՀՀ կառավարություն և Ազգային Ժողով

- իրականացնել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված ոստիկանության աշխատանքի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը,

- ստեղծել ոստիկանության ծառայողների որակավորման գործընթացը վերահսկող անկախ հանձնաժողով, որի կազմում կընդգրկվեն փաստաբաններ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Անհրաժեշտ է, որ հանձնաժողովին վերապահվի իրավունք արձանագրելու ոստիկանության կողմից թույլ տրված բացթողումները և իրավախախտումները: Այս հանձնաժողովը պետք է իրավասու լինի ինքնուրույն հարուցելու կարգապահական վարույթներ և դրանց արդյունքում կայացնելու որոշումներ՝ ոստիկանության թե՛ ղեկավարության և թե՛ սովորական ծառայողների հանդեպ պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ: Հանձնաժողովի առկայությունը կնպաստի ոստիկանության ղեկավարության կողմից ավելի զգույշ և մարդանպաստ հրամանների արձակմանը, ինչպես նաև կապահովվի ոստիկանության գործունեության հասարակական վերահսկողությունը և հաշվետվողականությունը:

Լրագրողների նկատմամբ խախտումները բացառելու նպատակով

ՀՀ նախագահ

- Որպես ՀՀ քաղաքացիների սահմանադրական իրավունքների երաշխավոր, հրապարակայնորեն քննադատության ենթարկել քննչական մարմնի գործողությունները՝ 2016թ. հուլիսին Երեւանի Խորենացի փողոցում, Սարի թաղում եւ հարակից տարածքներում տեղի ունեցած դեպքերով հարուցված քրեական գործի նախաքննության առնչությամբ եւ պահանջ ներկայացնել՝ դրան առավել արդյունավետություն հաղորդել,

ՀՀ դատախազություն

- պատշաճ վերահսկողություն սահմանել Հատուկ քննչական ծառայության գործողությունների նկատմամբ՝ ուղղված վերոհիշյալ քրեական գործի ամբողջական բացահայտմանը եւ դրա շրջանակներում ԶԼՄ-ների աշխատակիցների նկատմամբ ապօրինի խոչընդոտումներ իրականացրած ոստիկաններին ու նրանց հովանու ներքո բռնություններ իրագործած անձանց պատասխանատվության ենթարկելուն,

Հատուկ քննչական ծառայություն

- առաջնորդվելով օրենքով, այլ ոչ թե քաղաքական կոնյունկտուրայով, ցուցաբերել անհրաժեշտ անաչառություն և արդյունավետ գործողություններ իրականացնել՝ 2016թ. հուլիսյան իրադարձությունների ընթացքում լրագրողների և օպերատորների մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտողներին և բռնություններ կազմակերպողներին ու իրագործողներին բացահայտելու և նրանց պատասխանատվության ենթարկելու համար,

Միջազգային կազմակերպություններ (այդ թվում ԵՄ, Եվրոպայի խորհուրդ, USAID եւ այլն)

հետևողականություն ցուցաբերել 2016թ. հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ արտահայտած գնահատականներից բխող՝ ՀՀ իշխանություններին հասցեագրված պահանջները իրագործելու նպատակով: Ժողովրդավարության զարգացման, տնտեսական առաջընթացի և այլ նմանատիպ ծրագրերի ֆինանսավորումը պայմանավորել և փոխկապակցել նաև մարդու իրավունքների, այդ թվում խոսքի ազատության և լրագրողների պաշտպանվածության անհրաժեշտության հետ:

Անձնական անձեռնմխելիության և ազատության խախտումներ

ՀՀ Ոստիկանություն

1. 2016 թ. օգոստոսի 5-ին և 8-ին ՀՀ Ոստիկանության տարածած հայտարարության համաձայն՝ հուլիսի 19-ին Երևանի Խորենացու փողոցում և հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը «Սարի թաղում» տեղի ունեցած դեպքերի առիթով ՀՀ Ոստիկանությունում իրականացվող ծառայողական քննության նախնական արդյունքների հիման վրա ՀՀ Ոստիկանության պետի հրամանով կարգապահական պատասխանատվության են ենթարկվել ոստիկանության մի շարք ծառայողներ: Նշված հայտարարությունից պարզ չի, թե կոնկրետ ովքեր են ոստիկանության գործողություններից տուժողները, հասկանալի չէ, թե որ ոստիկանը կոնկրետ ինչ արարքի համար է կարգապահական պատասխատավության ենթարկվել, կամ հեռացվել աշխատանքից:

Հրապարակել մանրամասն հաշվետվություն հուլիսի 19-ին Երևանի Խորենացու փողոցում և հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը «Սարի թաղում» տեղի ունեցած դեպքերի առթիվ՝ անդրադառնալով ՀՀ ոստիկանության կողմից ծառայողական քննության արդյունքների հիման վրա կարգապահական պատասխանատվության ենթարկված կամ աշխատանքից հեռացված յուրաքանչյուր ծառայողի կողմից կատարված արարքի որակմանը/բնույթին:

ՀՀ Ոստիկանություն և ՀՀ կառավարություն

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմը և աշխատակարգը սահմանելու մասին» N 1672-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն.

- կարգապահական հանձնաժողովի կազմում ընգրկվելու նպատակով հասարակական միավորումների կողմից ներկայացվող հայտերը ընդունելու, քննարկելու, թեկնածուներին ընտրելու կարգը սահմանել ոչ թե ՀՀ ոստիկանության պետի հրամանով, այլ ՀՀ կառավարության որոշմամբ,
- ապահովել կարգապահական հանձնաժողովի կողմից կայացվող որոշումների պարտադիր և ոչ թե խորհրդատվական բնույթը/ կամ որոշումների պարտադիրությունը:

ՀՀ Ազգային Ժողով

3. Ներդնել ՀՀ ոստիկանության գործունեության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության մեխանիզմ (ՀՀ դատախազության, ՀՀ հատուկ քննչական ծառայության օրինակով):